



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



891.99 ቅኅተ ግንባታ

Ф-56 22.18-20.18

ନିଶ୍ଚୟ କରାଯାଏ

935 1312-15

55 161476

ОНА СЛУЖИТ НЕ ОДНОМУ, А МНОГИМ.

Возвращайте книгу в
срок, чтобы и другие
могли воспользоваться
ею.

2140

она служит не вам одному, а многим:

- 1) Не пачкайте книгу надписями и рисунками, не подчеркивайте слов. То, что полюбите в книге записывайте в свою тетрадку.
- 2) Не портите переплета. При чтении заворачивайте его в бумагу.
- 3) Не загибайте углов у страниц имейте лучше бумажную закладку.
- 4) Не перелистывайте страниц грязными и мокрыми руками.
- 5) Если у вас имеется в доме заразный больной, то заявите об этом в библиотеку при возврате книги.

КОГДА КНИГА ВЗЯТА

КОГДА КНИГА ВЗЯТА							

3

82199
41-55

պ.

ՍԻՄԷՐՆ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

5049

~~2140~~

57

ՀՆԻՑ-ՆՈՐԻՑ

40-56

ՈՏԱՆԱԻՈՐՆԵՐ

Центральная Библиотека имени Ленина

1936 г.

№

17508



Գրական-Բնիկայան
Կ. Զ. ՄԱՐԿԱՍ. ԸՆԿ.
21. II. 1914
Библиот.-Читальн.
Бак. Арм. Челов. О-ва

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905

28.08.2012
1105 VCH 0-4

60098

84703-8472

Дозволено цензурою 3 Июля 1904 г. С. Петербургъ



1792
41

ԲԱՆԱՍՏԵՂԾ

Յովհաննէս Յովհաննիսեանին

Բարեկամական յարգանաց

Ն ու է ռ

Հեղինակից

ԱՐԳՈՅ ԸՆԹԵՐՑՈՂՔ

Թոյլ տուէք ինձ երկու բանով արդարանալ Ձեր առաջ։
Մէկն այս, որ ձանձրալի չլինելու պատճառաւ, յառաջա-
բանը գրել էի կարճ՝ յիշելով իմ անցեալ կեանքից մի
երկու երեք ծիծաղաշարժ բան միայն։ Երբ որ կարդացի
իմ երկու հասկացող բարեկամների առաջ՝ նրանց կար-
ծիքն իմանալու համար, և ասացի որ սրանց նման շատ
բաներ կան, բայց չեմ ուզում երկարել, նոքա ասացին
«նչ, ոչ, սխալ ես, ընդհակառակը տղայութեան, պատա-
նեկութեան, երիտասարդութեան ժամանակներում եղած,
արդէն վաղուց անցած, գնացած բաները աւելի շատ
հետաքրքիր կլինին, և պէտք է գրել բոլորը, որքան որ
յիշում ես. կարճը համ չի ունենայ»։ Ես էլ յոգնելով
դրեցի երկար։

Մէկն էլ այս, որ ուզում էի սկզբի մի քանի տխուր
և շատերին՝ կարծեմ, անախորժ երևող ոտանաւորները
դուրս ձգել, բայց դարձեալ բարեկամների խորհրդով
իբրև հնութիւն թողի մնալ։ Խնդրեմ չմեղադրէք ինձ.
յոյս ունիմ միւսները կարդալով կզուարճանաք։

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն

Թող յառաջաբանը լինի իմ համառօտ կենսագրութիւնը, իսկ վերջաբանը վաղուց գրածներին շուտով լոյս չտեսնելու պատճառաբանութիւնը. որը փոխանակ ինձ արդարացնելու, թերեւ ցոյց տայ իմ անհոգութիւնը:

1828 թուականին հայրս՝ Գրիգոր Փիլիպպոսեան հին Բայազիտ քաղաքացի Ռուս—Տաճկական պատերազմի ժամանակ՝ նոյն սահմանադրութիւնով գնդակահար եղած, ձախ թևի շարժումից զրկուում է. (վկայական ստորագրութեամբ և կնքով գեներալ Ճավճավաձէի). հիւանդանոցում վէրքը բժշկուում է, պատերազմը վերջանալուց յետոյ փոխադրուում է Վաղարշապատ, այնուհետև հինգ տարի ապրելուց յետոյ ինձ վեց ամսական թողում է մօրս արգանդում և գնում այն աշխարհը, իսկ ես երեք ամսից յետոյ գալիս եմ այս աշխարհը. դէ, ինչ կլինի որբի դուրսութիւնը՝ մանաւանդ այն ժամանակ:

Վեց տարիս լրացած՝ յիշում եմ 1840 թուի երկրաշարժից օր ցերեկով էջմիածնի կաթուղիկէի երեքալը և հրապարակում ժողովրդի ծունկ չոքած աղօթելը, հետեւեալ օրը լսում է Արկուռի դիւղի կործանուիլը:

Ութ տարեկան հասակիս մէջ մայրս ինձ տալիս է մրգավաճառ Աթուշի մօտ աշակերտ՝ որ ինձ կարդալ սովորցնէ. գիրը ճանաչելուց յետոյ, այբ, ժէ, ճէ, ուս լաւ հնչելուց յետոյ վարժապետս բաշխեց ինձ մի բուռը չամիչ ու փշտո, կերայ և այդ միջոցը սիրեցի շատ. մի երկու անգամ նորա բացակայութիւնից օգտուելով՝ ինքս բուռն արեցի ու մաշուած արխալուղիս գրպանը լցրեցի. երևի տեսնողներից մին ասած կլինէր նորան. եկաւ դասս հար-

ցրեց ու ձեռք մեկնեց, գրպանս բռնեց՝ ասելով «էս ինչ է». ես իսկոյն բռունցքով փեշիս խփեցի, գրպանս մնաց նորա ձեռքում, փախայ, նա էլ ընկաւ յետեւիցս ու չհասաւ. մի օտը կաղ էր:

Աստուած հոգին լուսաւորէ. երախտապարտ եմ նորան իբրև առաջին ուսուցանողի. ամսո՞ս, չգիտեմ՝ գերեզմանի տեղը, գոնէ մի անգամ օրհնել տայի, համբուրէի, մխիթարուէի:

Տղայական հասակումս երեք անգամ այգալիսի գողութիւն եմ արել, մին այդ էր, մին մեր գրացի Մարանի պատրաստած ու տանիքի վերայ փռած ծիրանաչրից նոյնպէս գրպանս լցնելը, միւսն էլ մեծ պատին մեր հաւերի անոթ. մօրս ժողոված ու կողովում պահած ձուերից մի քանի սերտերն ատամիս խփելով ընտրելը՝ որ փողոցում ընկերներիս հետ ձու կռուացնէի, բայց անյաջողութեան հանդիպեցի. մայրս պարտիզումն էր, ձեռքս կողովից չհանած, տեսայ տան դրան մօտեցաւ, ես շտապեցի հեռանալ, նոյն վայրկեանին կողովը գլորուեց, ձուերի մեծ մասը գետին փռուեց, որը ողջ մնաց, որը կոտորուեց. լաւ էր օր իսկոյն միտս եկաւ «փիշտ, փիշտ, փիշտ» ասացի, մայրս ներս մտաւ, աներեկոյթ կատուի տիրոջ անիծելով սկսեց ժողովել ձուերը. և ես գլուխս ազատելով տանից դուրս թռայ:

Իսկ չորրորդ գողութիւնը պանդխտութեան մէջ, և այն երիտառարդական հասակում, որ բնաւ ներքի չէր, թօպէից կախուած էր կատարուած լինէր, բայց ինչո՞ւ լինէր և ինչո՞ւ չեղաւ, միայն կամեցողն ի դուր տեղ մեղաւ, ընթերցողը եթէ համբերութիւն ունենայ, այդ ևս նոյնպէս շուտով կիմանայ:

Մի քանի ամսից յետոյ մայրս ուղեց ինձ արհեստաւորի մօտ աշակերտ տալ, բայց քեռիքս՝ որոնց աւագը էջմիածնի տպարանապետ էր և լաւ ձև ու կար անող, իսկ կրտսերը Սինօդի ծառայող էր և դարմանալի մաքուր գրող, խորհուրդ չտուին. ես երկու տարի նրանց տանը

կար սովորելով, մօտիկ բնակող գրեաց Համգի մօտ ու վանքի այն ժամանակուան հին տաղարանը յաճախ գնալով, գալով, իսկ դուրսը շատ անգամ անգործ ընկերներէս հետ խաղով անցնելուց յետոյ քեռիքս իրանք խնդրեցին Տեղակալ Ղուկաս Արքեպիսկոպոսից և ընդունել տուին ինձ ժառանգաւորաց դպրոցում գիշերօթիկ աշակերտ։ Վերաբերուն հագայ և նստեցի պատրաստական դաստան վերջին նստարանի վերայ, այստեղ էլ այբ, ժէ, ճէ, ռա, յետոյ մի կանոն սաղմոս բաժանուած վանկերով, (հնչումը գիր կապելով) յետոյ ութ կանոն սաղմոս ամբողջ բառերով։ Անցաւ առաջին տարին դաստանութեան այս ձևերով։

Երկրորդ տարին նոյն դասարանում հետզհետէ յառաջ գնալով՝ չորս ընկերների հետ առաջնակարգ նստարանի վերայ բազմեցայ, չհպարտացայ, միայն շատ ուրախացայ։ Այդ տարին ինչ էինք սովորում, նոր կտակարան առանց մեկնութեան՝ օրպէս ընթերցանութիւն, ժամագրքից անգիր փոխասացութիւն առաւօտեան «Տէր զի բազումից սկսած մինչև երեկոյեան «խոնարհեց՛, ապրեց՛, համբարձի, կեց՛»։ Ռուսերէն азъ, буми, веда, глаголъ և ամենօրեայ գործածական բառեր «вода, хлебъ, соль» ևն. դասը լաւ չիմացողին, չարութիւն անողին երեք տեսակ պատիժներից մին, այն է՝ ծունկ չոքել, քանոնի հարուածներ կրել ձեռքի վերայ՝ կամ ճիպտոտի հարուածներ օտքի վերայ (Ֆալախկայ)։ Ուսուցիչներն էին Եղիազար վարդապետ Առինջեցի և Լազարեան ճեմարանի՝ չգիտեմ, որ դասարանից դուրս եկած Յակոբ Լազրեով Երևանցի, մականունը «օձի ագար»։

Երրորդ տարին մի քանի ընկերներով առաջին դասարան փոխադրուեցայ. այդ տեղ ուսուցանում էին սրբազան պատմութիւն, թուաբանութեան չորս գործողութիւն, ռուսերէն ընթերցանութիւն, քարէ տախտակի վերայ վայելչագրութիւն. իսկ որոշ ժամերում պատարագի արարողութիւն (ձայնաւոր) և շաբաթ երեկոյեան ժամերգութիւն, այն է՝ լոյս զուարթ, սուրբ Աստուած, սուրբ ես Տէր գորութեանց։

Մանկական անոյշ ձայնով պատարագում երգելուս համար Տաճկաստանից ուխտ եկած հայերից շատ անգամ փաքրիկ ոսկիներ եմ ստացել երգակից ընկերիս հետ միասին, որ էր երթևեկ աշակերտ վաղարշապատցի Գրիգոր Դառնակերեանց, այժմ՝ եպիսկոպոս, միաբան սուրբ Էջմիածնի։

Չորրորդ տարին նոյն դասագրքերի շարունակութիւնը, ջրօրհնեաց և Ձառկի ճրագալուցի և մի քանի յատուկ տօների պատարագում կարդացուող գրքերը անգիր, շաբաթականի ութ ձայնի սկսումաճքը և առաջին կանոնի երգեցողութիւնը անգիր, Չաժեան քերականութեան առաջին մասն անգիր։ Առաջին դասս լաւ սերտելուց յետոյ ուրախութիւնից ազատ ժամում մեծ ննջարանի յարկի տակ կանգնած փայտեայ չորս բարձր սիւներից մէկի գլուխը բարձրացայ ու այն տեղից ձեռքերս շարժելով՝ արագ արագ անգիր բլբլացնում էի «գիրն է գիծ ինչ նշան տառի, իսկ տառն է հնչումն ինչ յօգելի և հեգելի, զի յօգի ընդ այլում հնչման և հեգեալ ընդ նմա, հնչէ զկատարեալ ձայն»։ Ընկերներս ծափ տալով ու կշկշալով ծիծաղում էին, մէկ էլ յանկարծ լռութիւն տիրեց, բոլորի աչքերը դէպի ննջարանի մուտքը յառեց, ես էլ նայեմ, տեսնեմ, մի վեղարաւոր, որ էր դպրոցի տեսուչը և աւագ ուսուցիչը, այն ժամանակ վարդապետ, յետոյ եպիսկոպոս, այժմ հանգուցեալ Մակար կաթողիկոս, բարկացած դէմքով մի ակամայ հայեացք ձգեց դէպի ինձ և ասաց. «Ի՞նչ է ձայնը երկարացնելով. ես անշարժ մնացի տեղս, նա կրկնեց նոյն բառը՝ առաջուանից մի աստիճան ձայնը բարձրացնելով, ես ակամայ իջայ մինչև սեան կէտը ու պատժից վախենալով կրկին վեր բարձրացայ, նա երրորդեց այսպէս ասելով «Ի՞նչ է, թէ նչ, պատիժդ խիտ կլինի»։ Հնազանդեցայ, վայր իջայ, քանոնի տառն հարուած կերայ, մի տառն էլ իւր ծունկը կերաւ ձեռքս փախցնելիս. թէ չէ, քսան կլինէր կերածս։ Է՛, ինչ համեմատութիւն այն վարժարանի և այժմեան ձեմարանի ուսման և

այդու պատի մօտից անցնող առուակը, ցոյց տուեց բերդի պարսպի երևող մասը, հրացան արձակելու համար գլխին շինած ծակերը, և ասաց. «նորա տակից անցնում է Զանգի (հրադդան) գետը՝ որի կամրջից պէտք է անցնենք կարմիր քաղաքը, ուր քեզ ոչ ոք չէ ճանաչում. արի իմ հին գլխարկն ու կօշիկները քո նորերի հետ փոխենք, յետոյ որ այս տեղ դառնանք, էլի իմը ինձ. քունը քեզ. այս ևս կատարուեց. երբ որ կամրջին մօտեցանք, ասաց. «մի շտապիր, կաց. ես իմ քեռու տունն եմ գնում, դու բարեկամ, ծանօթ չունիս. ո՞ր տեղ մնաս, ինչ անես, լաւ կլինի յետ դառնաւ. կարծեցի կատակ է անում, երբ իմացայ շիտակ է, զարմանալով ասացի — չէ՞ որ միասին պէտք է դառնանք. «ես այսօր չեմ գալու, մի շաբաթ մնալու եմ» ասաց. — լաւ, որ այդպէս է, ինչո՞ւ չթողիր ինձ այն սայլով գնայի, դէ, տո՛ւր, ասացի, գլխարկս, կօշիկներս. ինչ պատասխան տամ մօրս, քեռիքանցս. չէր ուզում լսել, վերջը լացս կտրելու համար յետ տուեց, հագայ, էլ ոչ կարմիր քաղաք տեսայ, ոչ կանաչ, տրտնջալով դարձայ ու չնայելով յողնածուծեանս, ճանապարհի շատ մասը վազելով անցայ. բայց որչափ ուրախացայ, երբ Փարաքարի ջրաղացին մօտեցայ և տեսայ նոյն բարձուած սայլը, հանգստանալու, արածելու համար արձակուած եղները ու ջրի կողքին նստած տէրը՝ որ եմիշ (սեխ) էր կրծում. «բարո՛վ, բարո՛վ» առաց նա զարմանալով. չէ՞ դու Գրիգորի հետ էիր գնում. ինչ եղաւ, ինչո՞ւ մենակ դարձար. դէ՛ մաւ, դէ՛ առ մի կտոր եմիշ կեր, ես էլ եղները լծեմ, նստիր սայլի պոչին, ճանապարհին կպատմես. ես քաղցած էի, ամաչեցի, հաց չուզեցի, տուած եմիշի կտորը կրծեցի, շատ էր հասած, կէօը համարեա չորերիս վերայ թափեցի. լծեց, պրծաւ, որոշուած տեղը նստեցի, բոլոր անցքը պատմեցի. երեկոյեան գանդակի քաղցը հնչւումը աղօթողներ էր հրաւիրում, մտանք գիւղը, իջայ, շնորհակալութիւն յայտնեցի, յառաջ ժամ, յետոյ տուն գնացի, մօրս, քեռիքանցս հարցերին էլ պատասխանեցի, խոստա-

ցայ միւսանդամ առանց իրանց գիտութեան բան չանել, ու դորանով վերջ տուեցի:

Օրհնեալ է Աստուած. այդ օրուան փորձանքից աղատուած, ճրագավառացին մի կտոր հաց կերայ, էլ չկարողացայ երկար մնալ արթուն, մտայ անոյշ քուն. երազում մայրս ինձ ասում էր. «լաւ չէր վաճառում մնայիր, դու էլ ժամանակին վարդապետ, եպիսկոպոս լինէիր, քան թէ այդպէս պարապ փողոցները չափէիր». հետեւեալ օրը քեռիքս խօստացան ամրան վերջը ինձ տանել Երևան և իրանց ծանօթների միջնորդութեամբ ընդունել տալ Ռուսաց ուսումնարանը, այն ժամանակ «ШКОЛА». այդ խոստումը կատարուեց, իմ ուրախութեան էլ չափ չկար. թէև մայրս չէր ուզում իրանից հեռու լինիմ, բայց պիտանի մարդ դառնալուս համար ընդունեց նրանց առաջարկութիւնը՝ որն և կատարուեց սեպտեմբերի սկզբին. ուսումնարանի տեսուչ Արզանովը ինձ քննելուց յետոյ նստացրեց առաջին դասարանում ու չորս ամսից յետոյ 1853 ամի Յունվար ամսին փոխադրեց երկրորդ դասարան. դէ, ինչպէս չուրախանաս, մանաւանդ երբ 5 թուանշան ստանաս, տեսչին ու վարժապետներին սիրելի դառնաս. բայց ամեն բանին վերջ կայ, ինչպէս և իմ ուրախութեան վերջ եղաւ Այն տունը, ուր ես կենում էի Շողակաթ անուն մի այրի կնոջ խնամոց տակ, ունէր առաջին մեծ պարտեզ, որի միջից անցնում էր ջուր բաւական լայն առուով. ջրի երեսը սառած էր, գրացի տղայք պաղի էին տալիս. ազատ ժամանակ ես էլ նրանց հետ մի անգամ անդդոյշ սղղալով յանկարծ վայր ընկայ, կուսս կոտորուեց, երկու, երեք սնդի կոչուած մարդկանց ձեռք ընկաւ, բժշկութիւնը երկար տեւեց, Զատիկն էլ անցաւ, չլաւացաւ, կարմիր քաղաքը ինձ համար սև դարձաւ. մայրս արդէն վաղուց եկած էր, և ես հարկադրուած, ուսումից իսպառ զրկուած, նորա հետ վերադարձայ մեր տուն. երկու, երեք ամիս էլ այդ տեղ տանջուեցի. կարծես սրնդիքը հակառակ միմեանց աւելի վատացնում էին, քան թէ լաւացնում. ի վերջոյ

բժշկուելուց յետոյ կրտսեր քեռիս ինձ տարաւ Սինօդ-
գրագրութիւն անելու. կարճ ժամանակից յետոյ Յարու-
թիւն քահանայ Չանիբեկեանցը (այժմ հանգուցեալ) և
Ժողովրդից մի քանի պատուաւոր անձինք՝ որովհետեւ
գիւղի եկեղեցում Գրիգոր ընկերիս հետ լաւ երգում էի,
եկան Ներսէս կաթողիկոսին խնդրեցին, որ ինձ իրանց
աղայոց վարժապետ կարգէ. (մնչև այն ժամանակ գիւ-
ղում վարժարան չկար), կաթողիկոսը ինձ կանչեց, քննեց,
օրհնեց և պատուիրեց լաւ ուսուցանել, մի կողմից էլ ու-
սանիլ մինչև չափահասակ լինելս, աջը համբուրեցի և խոս-
տացայ հրամայածը կատարել:

Եկեղեցւոյ սրահում մի մեծ հին տուն կար. այդ-
տեղն էր որոշուած մինչև յարմար ուսումնարան չինելը.
մի շաբաթուան ընթացքում մօտ հարիւր տղայք թափուե-
ցին գլխիս. ես ինչ ձևով որ սովորել էի, այնպէս չէի
սովորեցնում. այլ տառերը հնչմամբ, վանկերը առանց դիր
կապելու նոյնպէս հնչմամբ, իսկ բառերը՝ որ արդէն երեք
ամսից յետոյ մաքուր արտասանութեամբ ծանր և անսխալ
կարդում էին, չէի թողում ոչ մի բառ առանց նշանու-
կութիւնը իմանալու անց կենալ. այն ժամանակուան դա-
սագրքերը Ժողովրդական բարբառով չէին, դրոց լեզուով
էին. ամսական վարձս իւրաքանչիւր աշակերտի ուսման
համար 30 կոպէկ էր որոշուած. ծնողք լիովին վճարում
էին. մահտեսի Նոային նրանց պէս չէր. ճիշտ հաշուապահ
մարդ էր. կիւրակէ և այլ տէրունական օրերը միջից դուրս
հանելով, մնացեալը անթերի վճարում էր:

Երրորդ տարում Սարգիս եպիսկոպոսը Չալալեանց,
երեւի կաթողիկոսից ուղարկուած, եկաւ վերջին փոքրիկ-
ներից սկսած մինչև առաջին մեծ աշակերտները՝ որոնք
քերականութեան առաջին մասն արդէն անցել էին, ոչ մի
բառ, ոչ մի խօսք առանց հասկանալու, քննեց և դոհ
մնաց, մինչև անգամ չէր հաւատում, որ ես ժառանգա-
ւորաց դպրոցում եմ սովորել, ասելով «այդ կարգերը,
ձեքը այն տեղ չկան». նա ինձ ուղղում էր իւր ծախսով

ուղարկել Ռուսաստան բարձր ուսում ձեռք բերելու համար,
բայց միակ զաւակ լինելով՝ մայրս չթողեց. որ բաղդ չկար,
չկար. ինչ պէտք էր արած, երանի հինդ տղայ ծնած լի-
նէր, ինձ բաղդի յաջողութիւնից չզրկէր. ինչ և իցէ, ան-
ցել է, ծերութիւնն էլ հասել է, այժմ ցաւելն աւելորդ է.
ուրեմն թող չաւելորդ մասերը գրուեն, կարճ կտրուեն:

Իմ մանկավարժութիւնը (այն ժամանակ մանկավարժ-
կօչում էին ինձպէս թերութեանը) շարունակուեց մինչև
1857 թուականը. ամառուան արձակուրդ չկար. աշա-
կերտները ծալապատիկ նստում էին եկեղեցւոյ բաց դաւ-
թում մինչ կէս օր միայն. նստարաններ չկային ոչ դուրսը,
ոչ ներսը:

Այդ թուի սեպտեմբերին Աղջաղչախ գիւղի Յով-
հաննէս քահանայն՝ որի Գառպար անուն 8 տարեկան
որդին իւր ծախսով մեր տանն էր ապրում ու սովորում,
կնոջ և 14 տարեկան աղջկան հետ եկաւ մեզ մօտ. գի-
շերը մնացին, առաւօտը ինձ և մօրս տարան իրանց հետ
Մուղնու ս. Գէորգայ վանքը. տօնի օրն էր և ուխտաւոր-
ների բազմութեամբ լի էր. հետեւեալ օրը մատաղ կերանք,
վերադարձանք տուն. իմ ուխտս ընդունելի եղած էր.
Երեկոյեան կատարուեց նշանադրութիւնս այն օրիորդի
հետ, միւս օրը ինձ տխուր թողին, գնացին. մի ամսից
յետոյ նստեցի վեգիր Յովսէփի նժայգ ձին, մէն միայն
երեկոյեան պահուն ճանապարհ ընկայ, որ գնամ նշանա-
ծիս տեսնեմ. ձին խաղալով սրընթաց գնում էր, հազիւ
կարողանում էի սանձը բռնել. «քեշիչ գեօլ» ասուած
տեղին հենց մօտեցայ թէ չէ, լսուեց հրացանի ձայն, և
մինչ ապշած այս կողմն այն կողմն էի նայում, փոսից դուրս
թափուեցին հրացանակիր ձիաւորներ. այլ ևս փախչելով
ազատուել չէր կարելի, յանկարծ գտայ ինձ շրջապատուած
ութ հոգուց բաղկացած աւաղակներով և մի հրացանի կոթի
հարուածով ձիուց վայր գլորեցայ. գլխիցս արիւնը վա-
ղում էր, այդ ժամանակ 30-40 քայլ իմ ընկած տեղից
հեռու դարձեալ հրացանի ձայն լսուեց և մի մարդ ձիու

վրայից հրացանը ուսին դետին փռուեց. իսկոյն նորա ձին ու հրացանն էլ իմ ձիու և թամբիցը կախուած առանձին կապոցով նոր հագուստիս հետ առան, թռտն դէպի հիւսիսային կողմի բլրակները. դեռ նրանք իսպառ չանյայտացած, մի հեծեալ Փարաքարի կողմից ձին որնթաց քշելով դալիս էր, ես կարծեցի աւազակներից մին անշուշտ ինձ սպանելու է դալիս, բայց երբ մօտեցաւ, յայտնուեց, որ հայ է, ոսպանուողի համագիւղացի ընկերն է. բոլոր անցքը ինձանից լսելուց յետոյ իսկոյն ձին մտրակեց դէպի Վաղարշապատ՝ թողնելով ինձ նոյն վտանգաւոր տեղը. նորա հեռանալուց յետոյ դարձեալ երևում էին Փարաքարից եկող ձիաւորներ. ես ահ ու դողի մէջ ընկած, ճանապարհից դուրս եկայ, մօտեցան, արիւնսթաթախ գլուխս տեսան, անցքը իմացան, զարմացան. Ո՞վ էին սոքա. Ասլանեանց Յովհաննէս եպիսկոպոսը և իւր ծառայն, վերջինս առաջնոյ հրամանաւ ինձ նստեցրեց իւր ձիու վերայ. փռուած գիւղի գրպանից հանեց մի սեաւ համրիչ և մի քսակ տասն րուբլի դրամով. աւազակները չէին նայել. այդ է զարմանալին. Դիակից մի վերստաչափ հաղիւ հեռացել էինք դէպի Վաղարշապատ, պատահեցանք այն տեղից եկող 10-15 ձիաւորներին, որոնք գնում էին աւազակներին ձերբակալելու, բայց երբ կարող էին հասնել կամ ինչ կարող էին անել. Մենք մօտեցանք Հռիփսիմէի վանքին, տեսանք արանց և կանանց խուռն բազմութիւն. մօրո, քրոջ և բարեկամներիս լաց ու կոծը ստիպեց ինձ ձիուց իջնել. այդ լաւ եղաւ. ծունկ չոքած նոցա հետ վանքի դրան աղօթելուց և համբուրելուց յետոյ դնացինք տուն, բժիշկ Վասակեանցը եկաւ, դեղերով գլուխս կապեց, մի շաբաթի մէջ առողջացայ:

Հոկտեմբեր ամսի մէջ մեծ քեռիս վախճանեցաւ. Դեկտեմբերին մի քանի բարեկամների ուղեկցութեամբ դնացի նշանածիս մօտ. ծնողք չորս օրում հարսանեաց պատրաստութիւնը տեսան, սուրբ Յակոբայ տօնի շաբաթ օրը մեր պսակագրութեան խորհուրդը կատարուեց տեղական եկե-

ղեցում Գեղարդայ վանքի վանահայր Միքայէլ վարդապետի ձեռքով. երրորդ օրը փառաւոր հանգիստով ճանապարհ դրին նորապսակներիս Վաղարշապատ, արեւ մայր մտնելուն պէս մենք էլ մտանք տուն, ընկանք մօրս գիրկը, համբուրեց, օրհնեց, ապա արտասուեց միտ բերելով հանգուցեալ եղբայրը. նորա հետ արտասուեց և կրտսեր եղբայրը, բոլորս էլ տխրեցանք. այդ ժամանակ հրաւիրուած բարեկամներիս հետ ներս մտաւ Չանիբեկեանց Յարուսթին քահանայն՝ որի հօգւոցը հանգուցելոց համար և պահպանիչը նորապսակներիս գլխին՝ վերջ տուեց բոլոր տխրութեանց, և թէյը խմելուց յետոյ սկսան ուտել, խմել, երգել, պարել, ուրախ ժամանակ անցնել մինչև կէս գիշեր, ապա ցրուել:

Աչքով կոյր, մտքով լուսաւոր աշուղ Շիրինը մեր թաղումն էր կենում. ես շատ սիրում էի լսել նորա քնարը և յօրինած երգերը (մուխամմազ). ունէր նա մի կոյր աշակերտ, որի հետ ես էլ ազատ ժամանակներումս սովորում էի նուագածութիւն երկու տեսակ նուագարանի վերայ — սազ, քամանչայ, վերջինը յետոյ դարձաւ ջութակ (скрипка). մեր մօտիկ դրացի փողահար (ղուռնաչի) Օհանի մօտ էլ փողահարութիւնն սկսեցի, բայց չշարունակեցի. Դպրոցում եղած ժամանակս Շիրինը եկեղեցում լսելով երգեցողութիւնս, գնում է տուն, պարսկերէն երգ է յօրինում ձայնիս վերայ. առաջին տունը սկսում է այս խօսքերով. «Բիւր թիֆլի շայիր խանայի մէվլադա օխուդի » իսկ երկրորդ տան տողերի սկզբնատառերը կազմում են անունս «Սիմէօն». դրած ունէի, չէ երևում. Չկարծեմ գոնուի մէկը, որ ինքնագովութիւն համարի առածս՝ մոռացութեան տալով, որ այդ ինքնագով մարդու առածների մեծ մասը ցոյց է տալիս նորա բազմակողմանի պակասութիւնները՝ այն է դիւրահաւանութիւնը, անհամբերութիւնը, փոփոխամտութիւնը, մի գործից միւսն անցնելը, ոչ մին չկատարելագործելը, հորիաւ և յառաջագիժողներից շատ

յետադէմ մնալը. ուրեմն ինձ վիճակուած բաժիններէ
 զորն է շատ. գովելին թէ պախարակելին. Է՛հ, այլ ևս չի
 յետ դայ անցածն ու անդառնալին, հենց այդ է ցաւալին:
 1858 թուականի սկզբին Երևանայ թեմակալի փո-
 խանորդ Ստեփաննոս վարդապետը, ապա արքեպիսկոպոս,
 ինձ հրաւիրեց իւր մօտ և առաջարկեց ուսուցչի պաշտօն
 թեմական դպրանոցում տարեկան 200 յուրըլի ռոճկով,
 որ այժմեան 1000-ին համարեա հաւասար էր: Ի՞նչ պէտք
 էր ուսուցանէի, քերականութիւն, երգեցողութիւն, վայել-
 չագրութիւն. ուրախութեամբ յանձն առի, դպրոցին մօ-
 տիկ տուն վարձեցի ու մի քանի օրից յետոյ ընտանեօք
 այն տեղ փոխադրուեցի:*)

*) Այդ առաջին բնակարանը չուտով դարձաւ մեր սգարանը.
 վերը յիշուած Գասպար անուն սրամիտ և աշխատասէր աներորդիս
 9 տարեկան հասակի մէջ հիւանդացաւ, վախճանեցաւ. ծնողք Երու-
 սագէմ էին զնացել, ժամանակին վերադարձան, մեր սուգը նորոգե-
 ցին, տխուր, տրտում տուն գնացին. ամիս չանցած տեղեկութիւն
 առինք՝ որ Լազարեան ճեմարանից թուղթ է ստացուել Սինօղում
 տղային ուղարկելու համար (երկու տարի յառաջ դիմել էինք). այս
 տեղեկութիւնը աւելի խոր խոցեց մեր սրտերը: Մի տարուց յետոյ
 զօքանչս՝ որի վերջին ծնունդն էր այն հանգուցեալը, ծնաւ, երեք
 մի նոր Գասպար. սա 4-5 տարեկան ժամանակ որբացած էր արդէն
 ծնողներէց. սա նոյնպէս սրամիտ և աշխատասէր էր. 10 տարեկան
 ուղարկեցինք նոյն ճեմարան, մտաւ առաջին դասարան, յաջողու-
 թեամբ աւարտեց ուսումը 18 տարեկան հասակում և արժանացաւ
 ոսկեգրամի պարգեւին. 5 տարի էլ համալսարանի բժշկական բաժնում
 աշխատեց, տարի ու կէս էլ «Клиника» անուանուած հիւանդանո-
 ցում պարապեց, այնուհետեւ պաշտօն վարելով յառաջ անցաւ, ու-
 սումնական աշխատութիւնը պաշտպանեց, բժշկապետ դարձաւ. այժմ
 էլ իւր ամուսնոյ և երկու որդւոց հետ բնակում է Մոսկովում, ուր
 գնացել եմ ես և այն տեղից անցել Պետերբուրգ այն ժամանակ,
 երբ նա ճեմարանի չորրորդ դասարանի քննութեան մէջն էր. վեր-
 ջացնելուց յետոյ ամբան արձակուրդին բերի հայրենիք ու ժամանա-
 կին վերադարձրի. մի անգամ էլ գնացել եմ նորա մօտ երկրորդ
 ամուսնոյս հետ այն ժամանակ, երբ նա արդէն բժիշկ էր կարգուած
 «Старо—Екатерининская» հիւանդանոցում:

Այժմեան փառաւոր դպրոցը՝ կառուցուած աշխատու-
 թեամբ նոյն փոխանորդի, այն ժամանակ դեռ չկար. մի
 երկու տարի դասատուք և դասառուք ճգնեցին եկեղեցւոյ
 արևելեան կողմի հրազդան դետին նայող քարափի վերայ
 շինուած հին և նեղ երկու սենեակներում, որոց մին դար-
 ձաւ յետոյ ժամկոչի բնակարան. երբ նոր շէնքը գլուխ
 եկաւ և այն ճգնարանից դուրս եկանք, հետզհետէ աւե-
 լացան աշակերտները և վարժապետները և ուսմունքը.
 հինգ տարի էլ այդ տեղ շարունակեցի պաշտօնս. երգեցիկ
 խումբը դրաւել էր քաղաքի բոլոր ժողովրդի լսելիքը. շա-
 բաթ, կիւրակէ և այլ մեծ տօների օրերը իրանց եկեղե-
 ցիքը թողած խմբուում էին Ս. Սարգիս եկեղեցւում: Փո-
 խանորդը շատ եկեղեցասէր և երգասէր էր. ամեն տարի
 ջրօրհնեաց և զատկին ինձ մի մի պարգևով խրախուսում
 էր. նա առանց հիւրերի ճաշել չէր կարող. ձեռք ընկած
 մարդուն բաց չէր թողում. կոնսիստորիայի անդամը նոյն-
 պէս ատենի օրերը պէտք է սեղանակից լինէին. իսկ
 նորանից ձեռնադրուած Գրիգոր Գառնակերեան և Երևանցի
 Մկրտիչ Թադէսոսեան երկու վարժապետները՝ որոնք նոյն-
 պէս լաւ ձայն ունէին և լաւ ժամասաց էին, երկար ժա-
 մանակ այն տեղ էին ապրում, ես ևս հրաւիրուում էի
 ճաշի. կիւրակէ օրերն էլ իմ պատրաստած երգեցիկ խմբին
 առանձին ճաշ էր տրուում, վերջն էլ միւրգ: Իւր պաշտօնը
 ճշգրութեամբ կատարող, ժրաջան, արի, և ժողովրդեան
 սիրելի այդ եպիսկոպոսը երկար չապրեց. դեռ ծերութեան
 չհասած, առողջ հասակի մէջ վախճանեցաւ 66 թուականի
 յունուար ամսին և թաղեցաւ Սուրբ Սարգիս եկեղեցւոյ
 հիւսիսային կողմի դրան մօտ, որի տապանադիրը նայում է
 իւր նորակառոյց դպրոցին. փոխանորդական տունը ևս
 նորա ժամանակ է շինուած: Հանգուցելոյ մահից յետոյ
 նորա տեղը առժամանակեայ եկող Գրիգոր եպիսկոպոսը
 Յովսէփեանց լսելով՝ որ ուսուցչութեան պաշտօնս ուղղում եմ
 թողնել և մատենավար լինել կոնսիստորիայում, ուր 61
 թուականից արդէն դասերից ազատ ժամերում գրադրու-

թեամբ էի զբաղուում առանց ուժկի որպէս արտաքոյ շտապի ծառայող, շարունակ ինձ համագում էր դպրոցից դեռ չհեռանալ ու քննութիւններից յետոյ միանգամայն եկեղեցուն նուիրուել՝ ընդունելով կուսակրօն հոգեւորականի կոչումն, որովհետեւ մի տարի յառաջ այրիացած էի, և խօստանում էր՝ որ ինքը կձեռնադրէ վարդապետ, բարեկարգչի պաշտօնն ինձ կյանձնէ, կոնսիստորիայի անդամ կկարգէ, կարճ ժամանակից յետոյ կաթողիկոսին կգլխէ, լանջական խաչի կարծանացնէ, և քանի ինքն այն տեղ երևանումն է, իւր մօտ կպահէ, այնուհետեւ ուր կերթայ, հետը կտանէ. ամեն անգամ տեսնելիս կրկնում էր այս խօսքերը. բայց իմ կողմից յօժարութիւն ցոյց տալ՝ որը բոլորովին կեղծ կլինէր, չէի կարողանում, քանի որ չէր զարթում իմ մէջ մի կայծի չափ սէր դէպի այդ կոչումը. և որպէս զի մի այլ անգամ նա չկրկնէ իւր առաջարկութիւնը, ասացի. «Սրբազան, միթէ մոռացել էք, որ ես դեռ չամուսնացած, վանքի միաբաններից շատերի և Ձեր իսկ (այն ժամանակ վարդապետ) յորդորանօք ակամայ ջահընկալութեան չորս աստիճան ընդունեցի (մօռայմամբ մին աւելի) Ս. Գայիանէի վանքում, ձեռնադրութեամբ Պօղոս եպիսկոպոսի Մալխասեանց. խարտավիլակն էլ դուք էիք, և ասացիք. «այ տղայ, չէ որ դու չորս աստիճան պէտք է առնէիր, այժմ հինգ եղաւ». իսկ ես տխուր պատասխանեցի. «Հայր սուրբ, 15-ն էլ որ լինի, ինձնից կթօթափեն». (վերջն էլ այդպէս արեցի քաղաքական ծառայութեան մէջ մանելու համար): Սրբազանը դարձեալ վերջ շտալով իւր առաջարկութեան, ասաց. «որ այդպէս է, երեք օր քեզ ժամանակ եմ տալիս. լաւ մտածիր, յետոյ արի, այն կամ ոչ պատասխանիր. բայց այնպէս՝ որ ապագայում չապաշաւես. էլ ձեռքդ չի ընկնի, դու գիտես. դէ, դնա, Տէր ընդ քեզ»:

Երկու օրից յետոյ երրորդ աւուր գիշերը մտածութեան մէջ ընկղմուած՝ թէ ինչպէս անեմ, որ որբազանը ինձնից դժգոհ չմնայ, քաւես փախաւ, ինձ շատ անհան-

դիտտ արեց, բայց երբ եկաւ, վերայ հասաւ, միթէ հանգստութիւն առեց. ամենևին ոչ. Երազումս տեսայ վերարկուս հագիս, վեղարը գլխիս, ցնորուածի պէս այս կողմն՝ այն կողմն ընկայ, և ինձ մեղադրելով ասում էի. «վայ, վայ, էս ինչ բան էր, որ ես արեցի, ինչու լաւ չմտածեցի, ինչու շտապեցի, այսպէս տխուր վիճակի մէջ ինձ ձգեցի». մինչդեռ երկար ժամանակ լաց ու կսծով յօստահատ տանջուում էի, յանկարծ զարթնեցի ու խեղքս գլուխս ժողովելով իմացայ՝ որ երազ էր, իսկոյն տեղիցս վեր թռայ, հագնուեցի, լոյսը դեռ չբացուած երրորդի ձայնը չհնչուած, տէր Մարգարը տեսաւ ինձ եկեղեցում ու շատ զարմացաւ. բացի նորանից ու ժամկոչից ոչ ոք չկար, փոքր ինչ յետոյ զանդակի ձայնը միւս պաշտօնեաներին և աղօթող մարդկանց ժողովեց. երբ ժամերդութիւնը վերջացաւ, դնացի սրբազանի մօտ և ներսդրութիւն խնդրելով բացասական պատասխանիս հետ պատմեցի նաև տեսած երազս. չնորհակալ եմ, լսեց առանց տրտունջ ցոյց տալու, և այնուհետեւ դադարեց առաջարկութիւն անելուց. մի քանի ամսից յետոյ վերադարձաւ Էջմիածին, վերջը Երնջակի վանքում վանահօր պաշտօն վարեց, այն տեղ էլ վախճանեցաւ. Հանգիստ ոսկերացն:

Երազում վարդապետ լինելս շատերին յայտնի եղաւ, մէկը կատակով ինձ ասաց. «Երեսդ ինչպէս բռնեց սրբազանի առաջարկութիւնից հրաժարուելու. ես էլ կատակով պատասխանեցի. «է, բարեկամ, ինչ ես ասում, Սիմէօն վարժապետ որ լինի վարդապետ, գիտես ինչ կանեն նորա քով ընկերներ՝ Աբգար,*» նահապետ, իսկոյն վեր կառնեն, կշարտեն գետ». — ինչու, ինչու: «Ես չգիտեմ, դնա իրանց հարցրու»: Այս օր լսեց, ժպտալով երեսիս նայեց, անխօս հեռացաւ:

*) Աբգարը՝ Գաղեանց տոհմանունով, զրուցի մէջ յաճախ պործ էր դնում «զ» տառը և ես զրի այդ տառը նորա անունն վերայ, այնուհետեւ կոչուեց միշտ «զԱբգար»:

Պատմական զԱբգարը ամենքին յայտնի անձնաւորութիւն էր. բարեկամասէր, ընկերասէր, առակախօս, զուարճացնող մարդ էր. նորա հետ մի թաղում երկար տարիներ ապրել ենք շատ սիրով ինչպէս հարազատ եղբայրներ. ով կամ ինչ կարող էր մեզ բաժանել միմեանցից, եթէ անի, մահը չբաժանէր. հանգիստ ոսկերացն, արքայութիւն հոգւոյն: Որդին՝ լաւ ևս ասել իմ եղբորորդին Սեդրաք Դադեանց յառաջագէմ ուսանող էր. համալսարանական ուսմունքն աւարտելուց յետոյ պաշտօնից պաշտօն փոխուելով, այժմ Ստավրօպօլի նահանգական դատարանի նախագահի օգնական է:

Նահապետ Աթանասեանցը՝ այժմ Ղևոնդ քահանայ Ս. Սարգիս եկեղեցւոյ երևան քաղաքի, հեռու թաղում էր բնակում, բայց սէրը ինչ կհարցնի այդ, լուսահոգի զԱբգարը, Շահնազարեանց Մարգարը, նոյնպէս մի քանի մօտ ընկերներ և ես շուտ շուտ հաւաքւում էինք, ուրախ ժամանակներ անցուցանում միասին:

Մի անգամ Նահապետը երեկոյեան ժամին եկաւ քնիցս զարթեցրեց ասելով. «շուտ, շուտ գնանք, ժամասացութիւնը վերջանալուց յետոյ Տէր Մարգարը քարոզ պէտք է տայ». իսկոյն ես թուղթ ու մատիտը ձեռքիս վազեցի, մտայ ժամ, երկու թուղթից յետոյ քարոզն սկսուեց. դրեցի լսածս բառ առ բառ: Ափսոս այդ քարոզը այժմ չէ երևում, մի օր լոյս աշխարհ կգայ, ընթերցողներին կուրախացնէ:

1865 թուին մատենավարի պաշտօնի մէջ էի, տարին չլրացած թողի, որ ուրիշ գործ գտնեմ, բայց իմ շատ մտերիմ բարեկամ Ստեփաննոս Նաւասարդեանցը (այն ժամանակ կոնսիստորիայում թարգման, յետոյ փաստաբան) խորհուրդ չտուեց, ասելով. «գտիր տեղ, ապա հեռացիր». լսեցի նորան և մնացի այն տեղ առաջուան պէս արտաքոյ շտատի ծառայող:

Նոյն թուին հեռագրական թելը նոր էր մտել երևան, լսողները, տեսնողները այդ գիւտի վերայ զարմանալով

երկար խօսում էին ու զանազան ծուռ մեկնութիւններ տալիս, բայց իմ բերանից ոչ մի բառ չէր դուրս գալիս. շատ հետամուտ եղայ տպուած խրատը (наставление) ձեռք բերել, օգուտ քաղել, յետոյ նրանց սխալ կարծիքներն ու դատողութիւնները ջրել, այդ նպատակիս չհասայ. էլ հանգիստ չէի գտնում, մտատանջութեան մէջ էի, որից ազատուելու համար աշխատեցի ձգել ինձ այդ գործի ծառայութեան մէջ և յաջողեցրի: Կայարանը այն ժամանակ բերդի հին շինութիւններից մէկն էր, 50-60 քայլաչափ հեռու ուսուց եկեղեցւոյ արեւելեան դռնից. կառավարիչը կամ գլխաւորը (начальник) ինձ շատ սիրով ընդունեց. տառեր, թուեր ցուցանող նշանները (точка—тире) մեքենայի վերայ խփել սովորեցրեց, նոյնպէս և այլ մասերը գործնականապէս. միևնոյն ժամանակ կարդում էի և նորա տուած խրատական գրքոյկը, այդ բոլորը տեւեց 15 օր, այնուհետեւ ամսական 15 ռուբլի փող էի ստանում, և շարունակում օրակարգս (дежурство). բերդից շուտով փոխադրուեցինք քաղաքի մէջ զբօսարանի հանդէպ գտնուող Քալանթարեանցի տունը, յետոյ գիմնազիա, այժմ դարձած վաճառականների խանութներ. ամեն բան փոխւում է աշխարհումս:

Այս ծառայութիւնը ևս, որից բաժանուել չէի ուզում, շատ էի սիրում, երկար չտեւեց. յօդացաւ (ревматизма) ասուած հիւանդութիւնը ստիպեց ինձ իսպառ թողուլ այդ գործը և գնալ Արասթումանի տաք ջրերը բժշկուելու, չնայելով՝ որ բարի կառավարիչը ուզում էր առ ժամանակեայ արձակուրդով գնամ ու գամ, դարձեալ շարունակեմ, որովհետեւ տեսնում էր միշտ, որ պարտքս ճշտութեամբ եմ կատարում:

Ջրերն ինձ օգնեցին, դարձայ և հանգուցեալ Դաբրիէլ եպիսկոպոս Այվազովսկու հետ գնացի Թէոփոսիա. մի երկու ամիս Խալիպեան ուսումնարանում մնալով և լաւ ձայն ունեցող աշակերտներից երգեցիկ խումբ պատրաստելով, յաճախում էի տպարան, որ գտնուում էր ներքին

յարկում. գրաշարութեան, տպագրութեան գործի մէջ բաւականին վարժուելուց յետոյ ստացայ Գաբրիէլ Սրբազանից նամակներ՝ մին իւր քեռերգւոյ (Մաղիրով) և միւսն իւրեան ծանօթ մի յայտնի ուստ տպարանապետի անունով և գնացի Օդեսա այդ արհեստը կատարելագործելու, որ գամ էջմիածնի տպարանի կառավարիչ լինիմ. այդ չյաջողեց տպարանապետի բացակայութեան պատճառաւ. ի դուր ժամանակ չկորցնելու համար մտայ մի կազմանոց և սովորեցի փառակազմ, ոսկեկազմ գրքեր դուրս բերելու արհեստը և առանձին մեքենայի վերայ այցեւորմա տպագրելը. շաբաթ և կիրակէ օրերը եկեղեցում երգում էի, որից շատ դո՛հ էր Թաթսիգեան Յովհաննէս աւագ քահանայն:

Մի անգամ այդ սովորական կարգը չէի պահել վերջի 25 բուրլիանոց դրամս փողոցում մի կնոջից խնձոր առնելու ժամանակ կորցնելու պատճառաւ. ինչ անէի, ում գիմէի օտարութեան մէջ. երկու օր անսուղ մնալուց յետոյ երրորդ օրը ճաշից յառաջ գնացի Թաթսիգեան քահանային անցքը պատմելու. դեռ տուն չմտած՝ որը գտնուում էր եկեղեցւոյ փոքրիկ սրահում, տեսայ այդ տեղ պարանից կախուած մօի կտորներ ապխտած (բատուրմայ). է, հիմայ ինչ արած, չէ որ ասուած է «սովածին հաց, ծարաւին ջուր». ես միայն էի, հենց ուղեցի մի կտոր այնպէս թուցնել, որ մարդ չտեսնի, յանկարծ ժամի կողքից ժամկոչը դուրս պրծաւ, հարցրի «տէր հայրը տանն է», ասաց «տանն է». ներս մտայ, զարմացած նայեց, շատ ուրախացաւ և խոստովանեց՝ որ իմ ժամ գնալու սովորական կարգը տեսնելով ընդհատուած, կարծել է՝ թէ գնացել եմ հայրենիք առանց իրան տեսնելու, առանց «մնաս րարեաւ» ասելու, և բարեկամաբար իրաւամբ ինձ մեղադրել է այդ անքաղաքավարի վարմունքիս մէջ: Այս խօսքերը լսելուց յետոյ ես էլ խոստովանեցի գլխիս եկածը և քաղցած մնալս, բայց սրանով չարդարացայ: Տէր հայրը շատ զարմանալով դարձաւ ասաց. «յառաջ զուր էի մե-

ղադրել, այժմ գտնում եմ ձեզ աւելի մեղաւոր քաղցած մնալովդ, քան թէ կուշտ գնացած լինէիր հայրենիք. մի թէ ներելի է այդ, մենք՝ քահանայքս ում հացն ենք ուտում. մեր, թէ ժողովրդի. ինչո՞ւ այդ դէպքից յետոյ ամեն ճաշի մեղ հետ չլինէիր, այժմ պարզ ասում եմ, ձեր յանցանքը քաւած կլինիք միայն նորանով, եթէ այս օրից մինչև գնալուդ օրը այդ պարտքը կատարէք». խօսքը կնքեց և հրամայեց աղջկան սեղանը բանալ: Տէր հայր, ասացի ես. — Ձեր յանդիմանութեան արժանի եմ, և ներողութիւն եմ խնդրում, բայց միևնոյն ժամանակ այս ևս պէտք է իմանաք, որ դուք իբրև հոգևոր հովիւ ժողովրդեան, նա իւր հացը Ձեզ ձրի չէ բաշխում: Դարձեալ մի բան նա ասաց, մի բան ես, խելքս կորցրած, քաղցից թուլացած, Թերևս շատ երկարէր մեր այս ձեւերով սիրալիր խօսակցութիւնը, եթէ յանկարծ վերջ չտար կազմ և պատրաստ սեղանը՝ որն իսկոյն օրհնեց տէր հայրը, երեսներս խաչակնքեցինք ու նստեցինք. պնակները բաժանող, հաց, կերակուր մատակարարող օրիորդը աչքիս հրեշտակ երևեց, մանաւանդ երբ ապխտած մօիցն էլ բերեց, կերանք, խմեցինք լիացանք, պարգևողին փառք տուեցինք, մի կէս ժամ էլ ուրիշ զրոյցներով զբաղուեցինք, յետոյ ես ոտքի կանգնեցի, շատ շնորհակալութիւն յայտնեցի, տէր հօր աջը համբուրեցի և կուշտ փորով տուն գնացի:

Արդէն 67 թիւը գլորուելու վերայ էր, և ես սպասում էի Երևանից ինձ հասնելու դրամին, որը ստանալուն պէս գնեցի կազմի գործիքներ, այցեւորմանի մեքենայ և յանձնեցի փոխադրող ընկերութեան, որ գնամ, ստանամ Երևանում: Մինչդեռ պատրաստ էի ճանապարհ ընկնելու, բաղդը ինձ օգնեց նորանով, որ Տ. Գէորգ կաթուղիկոսը Պետերբուրգից եկաւ այնտեղ, մի քանի օր հանգիստ առաւ և դեկտեմբերի 31-ին առանձին նաւով իւր ուղեկիցներին հետ ի թիւս որոց և ես ծախսից ազատ մինչև Քութայիս, վերադարձաւ Տփլիսի վրայով էջմիածին:

1868 և 69 թուականներին բաւական չահուեցայ

Երևանում գրքեր կազմելով և այցելություններ տալով, իսկ ամառը Աբասթուանի և Բորժոմի ջրերում լողանալով: Այն ժամանակից այլ ևս չէ կրկնուել 70-ի յունուարից մինչև 72-ի սեպտեմբերի վերջ դարձեալ արտաքոյ շտապի ծառայութեան մէջ էի կոնսիստորիայում, ազատ ժամերս էլ անցնում էին նոյն գործերով: 75-ին տան աւելորդ ծանրութիւնները վաճառելուց յետոյ կարեւորները հետս առի և կեանքիս մէջ առաջին անգամ՝ ֆուրգոնով ճանապարհ ընկայ, հազիւ մի շաբաթում հասայ Տփլիս, այդ տեղ այցելուութիւններ կային. այն օգուտը չէր բերում, ինչ որ Երևանում (100-ին 2 լուբլի վաստակ). ինչ յարմար ուրիշ գործ էլ չգտայ, ստիպուած 77-ին դիմեցի խնդրով տեղական կոնսիստորիային և ընդունուեցի որպէս դիւանական ծառայող: Առաջնորդն էր Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազովսկին: Այս տաղանդաւոր, հոշակաւոր գիտնականի, բարի և առաքինի հոգեւորականի մահից յատոյ՝ որի թաղումը վանաց մայր եկեղեցւոյ սրահում փառաւոր հանդիսով կատարեցաւ, կոնսիստորիայի աւագ անդամը սինօդի հրամանաւ նորա գոյքը ցուցակագրելու ժամանակ պահարանի մէջ զետեղուած բազմաթիւ ձեռագրերի մեծ մասը պատառում, թափում էր, միւս անգամք ևս իւր հետ առնադպիր Բեկջանեանցի համբերութիւնը հատաւ, սինօդին հեռագրով իմացրեց, և այն տեղից հրամայուեց՝ որ մնացեալը առանձին կապոցի մէջ դրուի, կնքուի և միւս բաների հետ փակուած արկղներով էջմիածին ուղարկուի: Առաջնորդարանի կողքից անցնող ջրաղաց բանեցնող Կուրգետի ջրամասի երեսին մի քանի օր լողում էին պատառուած թղթերը:

Սինօդի հրամանաւ 1880 թուին Նոյեմբեր ամսին կարգուեցայ Երևանայ կոնսիստորիայի ատենադպիր. այս տեղից էլ 1886 թուի ապրիլին փոխադրուեցի սինօդ դիւանապահի պաշտօնով (архивариус): Երեք տարուց յետոյ ատենադպիր Ստեփան Մուշեղեանցը դիմեց խնդրադրով Մակար կաթողիկոսին, որոյ համաձայնութեամբ և

սինօդի կարգադրութեամբ իմ պաշտօնը նորան յանձնեցաւ, նորա պաշտօնն ինչ. չնայելով որ 250 լուբլի աւելի ռոճիկ պէտք է ստանայի, այնու ամենայնիւ շատ ակամայ ընդունեցի, որովհետեւ մտքումս արդէն դրել էի անյարմար դիւանի խառն գործերը կարգաւ դասաւորելուց յետոյ զբաղուել պատմութեամբ սինօդի բացման օրից մինչև այն օրը, երբ ինքս կհրաժարուէի այն պաշտօնից, որը կարծեմ, շատ հետաքրքիր կլինէր ամենքին. բայց ափսոս, այդ մտադրութիւնս չկատարուեց:

Բարձրագոյն անունով մատուցած խնդրի համաձայն՝ որի պատճառը հիւանդութիւնս էր, և որը քննուեց Երևանայ նահանգական դատարանի բժշկական բաժնում, արձակուեցի վերջին պաշտօնիցս 1897 թուի փետրուարի 28-ին, և այն օրից ստանում եմ տարեկան 343 լուբլի կենսաթոշակ:


Ինչպէս ամեն մարդոց, նոյնպէս և իմ կեանքիս անցած գնացած օրերի յիշողութիւնները բազմաթիւ են. եթէ բոլորը գրուի, հարկւրաւոր թերթերում հազիւ պարուհնակուի, ուրեմն թո՛ղ այսքանը բաւական համարուի:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Վաղ ժամանակից կտոր կտոր թղթերի վերայ գրուած, մութ անկիւններում թափթափած ոտանաւորներս՝ որոնք չէ թէ գեղեցիկ ու գրաւիչ չափաբերական եղանակաւ յօրինուած իմաստալից բանաստեղծութիւններ են, որ իսկապէս արգիւնք են գիտուն, խելացի և հանճարեղ մարդոց գրիչների, այլ միայն կեանքի մէջ պատահած և աչքով տեսած բաների ամենահասարակ նկարագրութիւն, որ գործ է ամեն մի ինչպէս թերուսի, տկարի:

Այդ ոտանաւորների այսպէս ուշ հրատարակուելու գլխաւոր պատճառը այն է՝ որ հներից մեծ մասը կորած լինելով, փոքր մասը կամեցայ շատացնել նորերով, և ապա առաջ տպագրել 10-20 տարի յառաջ և շարունակ մինչև այժմ ստիպող բարեկամներին և ծանօթներին կամքը կատարելով: Ասացի «շատացնել». իմ կամենալով ինչպէս շատանար. հետաքրքիր պատկերները պէտք է շատացնելու նիւթ տային: Ի վերջոյ թէ որ հին ու նոր անկորուստ մնային, անշուշտ մի ստուար գիրք կկազմէին. իսպառ կորածներ ու անյայտացածներ մեծ մասամբ ծիծաղաշարժ գրուածներից են. դրանք բոլորն էլ լոյս կտեսնէին, եթէ մի տեղում հաւաքուած լինէին, բայց որ չեն եղել, պէտք է պարզն ասել—իմ անհոգութիւնիցն է. թող ուրիշները խրատուեն, ինձ պէս չանեն. այժմ ևս մի բան որ ուզում եմ գրել, իսկոյն մատիտով մի կտոր թղթի վերայ խզրըզում եմ, յետոյ կամ սորա, նորա ձեռքն է ընկնում, էլ յետ չէ դառնում, կամ մի այլ տեղում աներևութանում. դարձեալ անհոգութիւն. կարծես, եղել է այդ մի անբուժելի հիւանդութիւն:

Կան և մի քանի կիսատ մնացած ոտանաւորներ. իմ սովորութիւնն էր, ինչպէս և այժմ է, ուշս գրաւող բանընդոյն օրը և եթ գրել վերջացնել. իսկ եթէ անսպասելի մի որ և է գործ պատճառ էր լինում սկսածս ընդհատելու, որի լրացնելը եթէ միւս օրը նոյնպէս չէր յաջողում և այդպիսով շատ օրեր էին անցանում, այլ ևս ինչ կարելի էր անել, քանի որ էն թարմ տպաւորութիւնը արդէն մտքիցս թռել էր. մի քանիսը լրացնել փորձեցի, բայց տեսայ որ կարկատան է լինում, բաց թողեցի. օրինակի համար մի երկուսը դնենք այստեղ ու դրանցով էլ փակենք այս վերջաբանը:



Տանկահայի պատմաժր, իմ լսածը եջմիածնում

30 սեպտ. 1881 թ.

Քառսուն տարի ասկից յառաջ
Տաս տարեկան քրդու մը լաճ
Էջմիածնայ սեղանատան
Փոր կպահէր ուտելով թան:

Օր մը ինչպէս կպատահի,
Համը կառնու սա փլաւի,
Ալ աշպղին հանգիստ չի տար
Համեղ կերակուրին համար:

Կուզէ, կուտէ, չի կշտանալ,
Պղնձէն ալ կուզէ դողնալ.
Ասոր համար աչուն բամբաչ
Գլխուն կուգայ, կսկսի լալ:

Աղիողորմ ձայնին վերայ
Վարդապետ մը կաճապարի.
Լալուն պատճառը կիմանայ,
Տղուն կառնու խուց կտանի:

Որդեակ, ուտել կուզես փլաւ,
Կեր անոր հետն ալ տապկած հաւ.
Աս օրուքն է իմ զաւակն ես.
Ձի պակսիր քեզ խորտիկներ լաւ:

Օր մը հայր սուրբ ժամէն կգայ,
«Մճ, տղայ» կըսէ, տղայ չկայ.
Ուզած բաներ շուտ ժողվեր է
Կտրիճ տղան ու կորեր է:

Աս բարերար վարդապետը
Դռնապանին կանչեց ըսաւ....

Այսպէս ընդհատուած մնացել է երկար ժամանակ.
Թէ ինչ է ասել դռնապանին, ինչով և ինչպէս պէտք էր
վերջացնէի, դժուար է յիշել և յարմարեցնել:

Այս մէկը հսերից:

Այս մէկն էլ նորերից.

Բարճվ, վարժապետ, բարճվ, էս ուր էք.
Ձէք գալիս, դնում, մեզ մոռացել էք.
Ասաց չեշտելով պարոն Սեդրաքը
Երեկ, երբ մտայ նորա սենեակը:

Ինչ կայ, ինչ չկայ, նա շարունակեց
Ու թիկնաթուր դէպի ինձ վարեց.
Խնդրեմ, նստեցէք, մի բան պատմեցէք,
Բայց խօսյն հետն էլ աւելացրեց.

«Հը՛, երևում էք դուք այժմ տխուր.
Ես կցանկայի լսել ուրախ լուր.
Ուրեմն, դէ, շուտ, դէ, շուտ ասացէք
Ինչ որ նոր գիտէք, էլ մի մտածէք»:

Թէ ես ինչ եմ պատասխանել և ինչով է վերջացել
մեր խօսակցութիւնը, լաւ չեմ յիշում, չնայելով որ ա-
ռաջնի պէս ոչ թէ քսան, այլ մի տարի է անցել:

Կիսատները թող կիսատ մնան, աւելորդ է դրանցով
պարապելս, բայց ցաւում եմ բազմաթիւ կորածներից
մի քանիսի համար միայն, որոնք աւելի հետաքրքրական
էին, այն է՝ մի ականջանի էշ նստելս, ջուրն անցնելիս
վայր ընկնելս,—Օրթաճալում քէֆ անելս,—իմ կեանքում
մի անգամ «աղայ» լսելս ու երեք լուբլի տուգանք վճա-
րելս. նոյնպէս «Թիֆլիզի կեանք» — «Երևանի թատրոն» —
«Վաղարշապատի կեանք» — «գաղթականութիւն» — «ձիթի
ճրագ» վերնագրովք գրածներս. թողում ասել «ագուաւ,
արագիլ, էշ, ջորի, ուղտ, շուն, կատու, ճանճ, մոծակ, օձ,
կարիճ, դորտ ու սև ջրի լոք» անուանուած ձուկն: Այս
անհետացածների միջից ազատ է մնացել միայն «աղբատի
տան քաղցած մուկն»:

Ունիմ ժողոված Վաղարշապատի, Երևանի, գաւառ-
ներում բնակող հայ ժողովրդի լեզուի մէջ մտած օտա-
րազգի շատ բառեր, որոնք դեռ շարունակւում են: Դրանք
ևս լոյս կտեսնեն մի երկու արձակ գրութեան հետ:

1900 թ.





ՊԱՐՏՔ ԱՆԵԼԸ ՎԱՏ ԲԱՆ Է

(Աշուղական երգի ձևով)

Հեռու կացէք, սիւ բարեկամք, պարտք անելուց, *հէ,
վատ է, վատ,*
Հեռու կացէք պարտքի փողը տուն բերելուց, *սհ, վատ է, վատ,*
Հեռու, հեռու պարտատիրոջ գլուխ տալուց, *օհ, վատ է, վատ,*
Վիզը ծռած ինչպէս գերի բռնուն մտնելուց, *ախ, վատ է, վատ,*
Իրան տեսմ, սատանայի ձեռքն ընկնելուց *հենց վատ է, վատ,*
Ու դժոխքումը նորանով չարչարուելուց *էլ վատ է, վատ:*

Պարտքի զօրեղ ազդեցութիւն նոր նոր գեռ սառն կլինի,
Պարտապանի կերակուրը ամեն օր դառն կլինի
Ու հենց կողքին ընկած ընկեր գինու տակառն կլինի,
Բայց յետոյ տես, ինչպէս խեղճի վիճակը դառն կլինի,
Գիշեր, ցերեկ խեղճը, միտքը շփոթուած խառն կլինի.
Նորա ապրելն աշխարհի մէջ մեռանելուց, *հէ, վատ է, վատ:*

Անդուրթ պարտքը հետզհետէ մէկ էլ տեսնես ճուտեր
հանեց,
Ոսկին ոսկու, շահին շահու չափ տակիցը տուտեր *հանեց,*
Ամեն մի տուտն էլ իր վերայ մանր մանր պուտեր *հանեց,*
Առնողի տան հացը հատաւ, մինչև հաւի կուտեր *հանեց,*
Իսպառ ճարը կտրուեցաւ, մի քանի էլ սուտեր *հանեց,*
Էլ չկարաց որ աղատուի, բանտարկուելուց, *օհ վատ է, վատ:*

Պարտքը քիչ քիչ շատանալով մարդոյ վերայ սար
կդառնայ.

Անհանգչելի հուր կլինի, նորա սրտում վառ կդառնայ.
Մուրհակ մուրհակի յետեից դալով անվերջ ճառ կդառնայ.
Ժամանակը թէ որ անցաւ, հակառակ ու չար կդառնայ.
Պարտապանը պարտատիրոջ ձայնը լսել քառ կդառնայ.
Թէ մօտեցաւ, խօսեցրեց, լեզուն անբարբառ կդառնայ.
Նորա ձեռքով ի դատ վարուել, արսորուելուց, ահ, վատ է, վատ:

Պարտապանը պարտատէրից հենց կփախչի ինչպէս գողը,
Նորա երեսը տեսնելիս կհամարէ իւր գրողը.
Մարդամիջի թէ պատահեց, խեղճի սիրտը կընկնի դողը,
Կաշխատէ որ ձեռքը չընկնի, անկանելով այլոց կողը.
Նա էլ նրան է ման գալիս՝ որ գլխին տայ էն սև հողը,
Նախատինքը հասկացողին ծեծ ուտելուց էլ վատ է, վատ:

Բայց դու, Սիմոն, պարտք չարեցիր ու միշտ պարտքեր
վճարեցիր,

Ե՛կ, այդպիսի վճարներից միանգամայն զգուշացիր,
Քաշած օրերդ միտդ բեր, օգտիդ շաւղովը ընթացիր,
Հերիք մնաս դու անհաշիւ, որով պարտուց տակ մնացիր,
Բարեկամի ընտրութեան մէջ զգաստ, նաև արթուն կացիր,
Ամեն հոգւոյ մի հաւատար, վնասատուդ լաւ իմացիր,
Ինչ բանից քեզ օգուտ չի գայ, այսուհետեւ յոյժ հեռացիր,
Որ ինչ վատ է, վատ ճանաչիր, վատն ի վաղուց հենց վատ է, վատ:

18 Յունուարի 1858. Երեւան.



ՏԱԼԸ ՀԵՇՏ, ԱՌՆԵԼԸ ԴԺՈՒԱՐ

Առանց բանի վերջն իմանալ
Մէկը միւսին փող է տալիս.
Էլ չի կարում յետ ստանալ,
Հետքիցն ընկած ման է գալիս:

Թէ առնողը քաղցած էլաւ,
Վայ քեզ, տուող, վայ քեզ, տարաւ.
Դու քրտինքով վաստակեցիր,
Նա հեշտութեամբ խժուեց, կերաւ:

Թէ առնողը խարդախ մարդ է,
Ուրեմն նա քեզ ինչ պարտ է.
Թէ բանը հասաւ գանդատի,
Զուր է, խնդրեմ, մի աշխատի:

Դատաւորի դատաստանը
Պէտք է մնայ իրան տանը,
Պատժից տեսնենք ինչ դուրս կգայ,
Երբ փող չունի անպիտանը:

Բայց թէ մէկ օր նա անդինի
Մնայ, գժուած հենց կլինի,
Ու պատրաստէ նա միշտ այնտեղ,
Որտեղ որ կեր ու խում լինի:

Արաղից էլ նա անմաս չէ.
Կասէ «երբէք ինձ վնաս չէ».
Խօսեցնես, բերանիցը
Հաղար մի սուտ էլ պակաս չէ:

Ձեռն ընկածը շուտ կլափէ,
Համ կարբենայ, համ կթափէ.
Պարտատէրը տունը դալիս,
Օրը մի կերպով կխաբէ:

Խաբեբային փող տուողը
Թող հաշուէ՝ թէ տարաւ դողը.
Խաբեբայն չի հարստանայ,
Ինքն էլ հետը կաղքատանայ:

25 Յունուարի 1858. Երեսմ.



ՀԻՒԱՆԴ ՊԱՀԵԼԸ

Հիւանդապահն է հիւանդ, միշտ էլ ասուած, լսուած է,
Եւ այդ ասուած, լսուածը փորձով հենց ստուգուած է.
Խեղճ հիւանդի ուղածը այս ժամին ջուր կամ հաց է,
Միւս ժամին բոլոր աշխարհ կարծես աչքիցն ընկած է.
Յետոյ կտեսնես ցաւով նա այնքան մոլորուած է,
Որ ոչ մայր, քոյր ճանաչում, ոչ գիտում ինչ եղած է.
Էսպէս հիւանդ պահողը ամեն բանից զրկուած է.
Ոչ քուն ունի, ոչ դադար, բաժինն արտասուք, լաց է:

Հիւանդի պահապանը հիւանդի կուշտը կտրած,
Ձէ հեռանում ահիցը՝ որ մի տեղը չըլնի բաց.
Գիշեր ցեբեկ նայում է աչքերի քունը հատած,
Դարձեալ ծառայութիւնը համարում է հենց կորած.
Ինչ անում է, չէ լինում նորա սրտովը եղած.
Որովհետեւ միանգամ նորա սիրտն է դառնացած.
Հիմայ տես, նորա տէրը ինչով է մխիթարուած.
Դրսից եկողն ասում է «էդ հիւանդը մրսած է»:

Իմ թշնամին չունենայ երկար հիւանդ տեղի մէջ,
Սչքը դրած մի անգամ բժիշկների դեղի մէջ,
Իբր ժամանակին տայ, որ չընկնի շատ նեղի մէջ.
Բայց տաս, չտաս, նա սիրտդ կտապակէ եղի մէջ,
Ջահիլ հիւանդ չլինի ոչ մի մարդոյ ցեղի մէջ,
Մանաւանդ թէ սիրելի մի հատիկ զաւակի մէջ.
Այսպէս հիւանդատիրոջ սիրտն է թաղուած հողի մէջ,
Որոյ յոյսը, բժիշկը, փրկողը մի Աստուած է:

Երկրաւորից ճար չկայ, երկնաւորն աղաչելու է,
Գետնամած ծնրադրութեամբ ոտից հողն պաշելու է.
Չար թշնամու կամքիցը շատ հեռու փախչելու է,
Գործած յանցանքի համար մարդ անձը խաչելու է,
Ապաշխարեալ դառնալով «մեղայ Տէր» գոչելու է,
Այնպիսեաց անտարակոյս միշտ Տէրը այցելու է,
Այց արահ, ով Փրկիչ Տէր, զի հիւանդս մեռած է:

4 Փետրուարի 1858 Երեսմ:



ԲԱՐԻ Է ՅՈՒՍԱԼ Ի ՏԵՐ, ՔԱՆ ՅՈՒՍԱԼ Ի ՄԱՐԴԻԿ

Տեսէք, որքան է պակսել մարդկանց հաւատն ու սէրը,
Որ հազարիցը մէկը չկայ ճանաչող տէրը.
Ամենքն իսկ մոռացել են տէրունեան պատգամները,
Խաւարի հետ են փոխել հաւատոյ լոյս լապտերը.
Աստուածասէր չի լինի, սուտ է, աշխարհասէրը,
Եւ ոչ ընկերասէր, և ոչ պահող պասերը:

Հաւատ չկայ, սէր չկայ, յոյսն իսպառ վերացել է.
Մարդավայել լաւ գործոց տեղ վատը շատացել է.
Աստուծոյ դատաստանը երևի մերձեցել է,
Որ անկարգութիւնը հակառակ բազմացել է.
Վայ, երբ մէկը սխալմամբ ժամի դրան մօտեցել է,
Իսկոյն էլ յետ կդառնայ, թէ «ով է ժամասէրը»:

Կասէ զլաւ է որ շուտով առուտուրիս հետ գնամ,
 Ընկերներիցս յառաջ կրպակիս դուռը բանամ,
 Անցնողին նշանացի մօտս կանչելու ջանամ,
 Ամենքից ես աւելի այսօր օգուտ ստանամ,
 Թէ տեղն եկաւ խաբելու, հնարել ոչ ծուլանամ,
 Զի քաղցած է ման դալիս շատ ճշմարտասէրը»:

19 Փետրուարի 1858. Երեւան.



Առ վաղամեռ պատանեակ Գասպարն Տէր Յովնաննիսեան՝
 որ գնալոց էր ի Լազարեան ձեմարան, իսկ ծնողն
 գնացեալ էին յԵրուսաղէմ:

Զարթիր, զարթիր մանուկ դու ուսումնասէր,
 Զարթիր, ժամ է, սովորիր շուտ քո դասեր.
 Զարթիր, շուտով, առաւօտ է, դրասէր,
 Զարթիր, հերիք, հերիք, ննջես, երգասէր:

Զարթիր, գնահ յուսումնարան հերիք է.
 Գնահ, այն է քո կրթարան. հերիք է.
 Առ ձեռքդ սուրբ կտակարան, հերիք է.
 Զարթիր, խոցուած սիրտս իսպառ մի վնասեր:

Զարթիր, տամ քեզ նոր աւետիս խնդութեան,
 Մեկնեան ի բաց ի քէն զսուգ տրտմութեան.
 Ո՛հ, զի՛ է զի՛, զի՛ կաս դու յայդ դրութեան,
 Զարթիր ի քնոյդ, ահա, փափաղիդ հասեր:

Զարթիր, այս է աւետեաց թուղթն, ստացիր.
 Եկեալ իսկ է ի Մոսկովէն ընթերցելի.
 Ել հանդերձդ ճանապարհի զգեցիր.
 Ել և գնահ, դալդ ումեք մի ասեր:

Զարթիր, լցաւ նոյնպէս և հօրդ փափաղ,
 Որ ասէր ինձ «երբ որդւոյս համար նամակ
 Մոսկովից գայ, դու նորան այն ժամանակ
 Ճանապարհ դիր, մեր զալստեան մի սպասեր»:

18 Ապրիլի 1858. Երեւան.

ՏԽՐՈՒԹԵԱՆ ԺԱՄԵՐ

Օրս խաւարած, արեւ մթնած,
 Տարտամ ու տխուր անհուն ցաւերով
 Աշխարհիս ծովի երեսին ընկած,
 Ծփում եմ նորա խիստ ալիքներով.
 Փրկի՛չ իմ Յիսուս, փութով ժամանեա՛,
 Այս ալիքներից խեղճիս ազատեա՛:

Ահա երեսուն տարին է գնում,
 Որ ես էս ծովի միջին եմ շրջում.
 Յառաջ շատ հողմոց, լաւաց դիպեցայ,
 Բայց նաւս էր հաստատ չվնասուեցայ:
 Հաստատութեան իմ և փրկութեան Տէր
 Դու ամեն ժամ ինձ, դու և դու եղեր:

Մի քանի անգամ էս ամուր նուր
 Ուզեց ընկղմիլ հողմիցը ծովը,
 Այլ նաւաւարս խիստ ճարտարութեամբ
 Աշխատեց, պահեց խարխիւններով:
 Ամենաճարտար նաւապետ արթուն,
 Ինձ վերայ էր միշտ քո ողորմութիւն:

Ո՛հ, կամայ, կամաց փոթորիկներով
 Մինչ հասայ կէսը էս ծով աշխարհի,
 Սկսաւ քիչ քիչ նաւս հնանալ,
 Խախտուիլ, դէմ չտալ ուժգին հողմերի:
 Նորոգեան Յիսուս նաւս բեկբեկուած,
 Դողալով յայնժամ անձս աղաղակեաց:

Բայց ահա յանկարծ անթիւ իմ մեղքից
 Վեր կացան հողմունք յոյժ մրրկալից,
 Եկան մեծամեծ որոտմունքներով
 Թափուեցին ծովը ողջ տիեզերքից:
 Ո՛վ տիեզերաց արարող Աստուած,
 Դուչեցի—խնայեան, քո եմ արարած:

Թափուեցին, աւաղ, իմ լքեալ նաւը,
 Մզեցին դէպի անյոյս տեղերը,
 Սաստիկ խփեցին վտանգող ժայռին,
 Իսպառ խախտուեց գեղեցիկ նաւս:

Նրա երերուն, քանդուած մարմինը
 Ծովի անգնդում անհետ ծածկուեց,
 Մէկ լաստափայտի վերայ ես լալով
 Կացի միայնակ ջրի յորձանքում:
 Ո՛հ, օրհնեալ քո, Տէր, վճիռ տիրական,
 Օրհնեալ և քո սուրբ արդար դատաստան:

Այլ արդ ճար չունիմ, դադրած ձեռքերով
 Ծփում եմ անեղր, դառն արտասուելով.
 Չունիմ ոք տանող դէպ նաւահանգիստ,
 Կացել եմ մնացել հողմավարելով:
 Դարձն, Տէր Յիսուս, ցասումն քո խիտ,
 Ինձ մոլորելոյս լեր նաւահանգիստ:

Մարմին, քո հոգ չեմ, որ ալեկոծ կաս.
 Հոգիս միայն թէ մնայ անվնաս.
 Ծովու ճանապարհն կարճ է և ունայն,
 Բայց զարհուրելի այն ծով իսկ գեհեան:
 Ո՛հ, փրկեան գիս, Տէր, այն զարհուրելի
 Ծով գեհենիցը անվերջանալի:

Ահա, իմ վերջին աղերս, Տէր Յիսուս,
 Քեզ եմ ընծայում, դու լինիս ինձ յոյս.
 Թող լսեմ շուտով ձայնդ արարչական.
 Թող տամ այստեղ իմ կենացս վախճան:
 Եւ երբ քո փառք գաս ի դատաստան,
 Թող սր ընդունիմ քո քաղցր օթեան:

21 Յունուարի 1863. Երեւան.

Անակնկալ դէպք ի 4 Մարտի 1863 ամի յԵրեւան

Արշալոյսը դեռ չբացուած,
 Մութ խաւարով տունն էլ ծածկուած,
 Սովորական կարգիցը դուրս
 Քնիցս այսօր զարթեայ յանկարծ:

Է՛, Աստուած բարին կատարի.
 Այս լաւ երազ չէր, որ տեսի,
 Բայց արդեօք ի՞նչ պէտք է անել,
 Աւելորդ է նորից քնել:

Այստեղ միտքս եկաւ, որ ես
 Աղօթքից չառ եմ ծուլացել.
 Մեծ պատն ահա, եղել է կէս,
 Մի անգամ ժամ չեմ գնացել:

Արդէն ժամը վեցը զարկեց,
Ժամկոչը պինդ դուռը թակեց,
«Օրհնեալ Աստուած» երգը կանչեց,
Զանգակի ձայնն էլ ներս հնչեց:

Գուցէ ողորմած Տէր Աստուած,
Ինձնից պահանջում էր հայցուած.
Քրիստոսական պարտքն ստիպեց
Վերջապէս ինձ, ժամ հասցրեց:

Բաւականին հոգիս ցնծաց
Աստուծոյ սուրբ տաճարի մէջ,
Երբ լսեցի այս սուրբ պահոց
Քաղցր և անոյշ ձայնը երգոց:

Մինչև վերջը սպասեցի.
Բազմիցս ծունր կրկնեցի.
Հոգեկան բարիք Արարչից
Զերմեռանդ սրտով խնդրեցի:

Երբ որ «օրհնեալ եղերուքը»
Աւարտեց աւագ քահանայն,
Տեսի չկար իմ բարեկամ
Տէր Յարութիւն ժիր նորընծայն:

Ընկերդ ո՛ւր է, հո՛յր պատուական,
Հարցրի ես իսկոյն նորան.
Պատասխանեց թէ չգիտեմ
Գուցէ հիւանդ պառկած է տան:

Գուցէով չհանգստացայ,
Այլ աւելի շփոթուեցայ,
Մինչ համարեան կարեմ ասել,
Ժամ գնալս փոշմանեցայ:

Յետոյ, երբ փաղոցէ փողոց
Ընկած հարցանէի յայլոց,
Մէկ էլ հենց ինչ տեսայ մէկ տեղ —
Խուռն ժողով բազում մարդոց:

Քիչ մօտեցայ՝ որ իմանամ,
Հաւաքուել են ինչ պատճառաւ,
Յանկարծ մի ձայն, բառս «անդամ»
Սուր ահանջիս եկաւ, դիպաւ:

Մի քանի քայլ ևս յառաջ
Երթալով իմ կամաց կամաց,
Տեսնեմ մէկը խօսում է լաւ
Եւ միւսը վատ բերանաբաց:

Սիրտս բնաւ չդիմացաւ,
Երբ ահանջս այս բան լուաւ.
Իսկոյն մտայ ես նրանց մէջ,
Պարզն իմանալ, ինչ է այս վէճ:

Արդէն որոնք հակառակ են,
Բարձր ձայնով կաղաղակեն.
Ինչ, թող էնքան քարոզ չտար
Ու Սինօդի դուռը չերթար:

Ասացի, ինչպէս թէ քարոզ.
Քարոզ տալով պատժելո՞ւ են.
Հո՛, ասացին զլաւ չէ տալիս,
Լսողները ձանձրացել են:

Վայ ձեզ, ահանջք, ինչ էք լսում,
Քարոզ տալու համար պատիժ.
Դուք, այ մարդիկ, ինչ էք խօսում,
Յնորումձ էք՝ արդե՞օք, թէ գիժ:

Փոխան պատույ, դաւազանի,
Փոխանակ խառայ փիլոնի
Ու բացի տալուց ոսկէ խաչ,
Իրան տանեն ու հանեն խաչ:

Ա՛յ, խելացի զրոյց, ահա,
Էլ ո՞վ է գժուել որ ցանկայ
Տէրտէրութեան, հենց գերութեան,
Ինչպէս խեղճին վիճակուել ա:

Էսպէս շատ նեղացած սրտով
Դուրս եկայ էն ժողովիցը,
Գնում էի մտածելով,
Տեսի այլ ժողով հեռուիցը:

Շտապեցի և նոցա մօտ,
Տեսի ընկերք էին ծանօթ,
Ասացի «նոր լուր ի՞նչ կայ ի՞նչ»
Պատասխանեցին թէ ոչինչ:

Երբ սկսայ վշտախառն
Պատմել վերոյիշեալ բանքը,
Ասացին չէ, չէ, այդպէս չէ,
Լսիր, ասենք հանգամանքը:

«Ինչ ասում են, զուր է, եղբայր.
Միայն այս է ուղիղն արդար.
Նա առել է մէկ խեղճ մարդից
Ընդ ամենը չորս փութ շաքար»:

Բայց էս էլ գիտենք՝ որ խեղճին,
Ընկել է մէկ գլուխ բաժին.
Եւ ի՞նչ գլուխ, առ քեզ տրաքոց,
Եօթն և կէս գրուանքանոց»:

Է՛, այստեղ էլ մէկ ուրիշ պոչ....
Հաւատամ ձեզ՝ արդեօք, թէ ոչ,
Որ նա չնչին շաքարն յարգէր
Եւ իւր պատիւը անարգէր»:

Սրանք էլ էս աւելցրին.
Միրտս աւելի դառնացրին.
Էս տեղից էլ անմիջապէս
Դարձայ դէպի տուն վերջապէս:

Դեռ չհասած, պատահեցին
Երկու եղբարք ինձ փողոցին.
Բարե տալով հարցրին «ո՞ւր
Շտապում ես այդպէս տխուր»:

«Մի դուցէ Տէր Յարութիւնի
Սուգն ես պահում դու անտեղի,
Որ հայհոյելու պատճառաւ
Տեղակալը փիլոնն առաւ»:

— Օ՛հ, ճհ, նահլաթ չար սատանի.
Եղբարք, էս էլ եղաւ քանի.
Ո՞ւր է՝ տեսնեմ, նա հայհոյել,
Կամ փիլոնը երբ են առել»:

«Վահ, չգիտեմ դու տակաւին,
Մինչ յայտնի է ողջ աշխարհին,
Որ նա հայհոյել է, ծեծել
Աշտարակցի Տէր Օհանին»:

— Մարդ Աստուծոյ, ի՞նչ էք եղել,
Այսօր ամենքդ էք յնորիւ.
Նորան կասեն Տէր Յարութիւն,
Որ չգիտէ հայհոյութիւն»:

— Ի՞նչպէս լհաւատամ ես ձեզ,
Որ նա քարոզում է միշտ մեզ.
«Մի հայհոյէք, մի պարսաւէք»
Գոլով ինքն պարկեշտ և հեղձ

— Ամենքիցդ լաւ գիտէ նա,
Թէ ինչ ասել է քահանայ,
Մարդուն ինչո՞ւ էք զրպարտում
Ու ձեր հոգիք դատապարտում:

Ասացին «չէ, կողմն ես պահում
Քո անտեղի էդ խօսքերով.
Մենք չգիտէնք, ում է խաբում
Նա իւր գաղտնի արարքներով»:

— Եղբւրք, այսօր առանց էդ էլ
Ականջքս խիստ են ձանձրացել.
Ինչ կամենար, արէք շուտով,
Եւ դուք այժմ մնաք բարով:

Երբ էս տեղից էլ հեռացայ,
Անշափ սրտու՞մս զոյրացայ.
Ա՛խ, ասացի, ես ո՞ւր գնամ,
Որ սրանցից աղաւտ մնամ:

Միտքս ընկաւ մէկ էլ յանկարծ
Իմ բարեկամ Տէր-Զաքարեանց.
Շտապեցի գնալ, տեսնել,
Բոլոր անցքը նրան պատմել:

Գիտէի՝ որ շատ կցաւի
Նա էլ այս բան լսելուն պէս.
Բայց իմացայ՝ որ տանը չէ,
Սիրտս խաղառ հենց էլաւ կէս:

Ո՞ւր է, տուի հարց ծառայի.
Ասաց՝ որ այսօր գնացին
Հետ Յարութիւն քահանային
Վաղ առաւօտ էջմիածին:

Երբ պատճառն էլ հարցրի սրան,
Ասաց «չգիտեմ ոչինչ բան».
Արդէն ինքս հասկանալով
Դարձայ այս խօսքերն ասելով:

«Ապրիս, ծաղկիս դու շատ տարիք,
Ծաղկին և քո սիրուն որդիք,
Սիրելի Զաքար Իվանիչ,
Մարդ բարերար և ազատիչ»:

Տես, հենց իմացել է էս բան,
Թողել է իւր գործը խափան
Ու գնացել բարեկամին
Հանդիսանալ զօրեղ պաշտպան:

Ահա, մտերիմ բարեկամ,
Ահա, իւր ազգ սիրող անդամ.
Ի՞նչպէս չասեմ, իւր սրտում պինդ
Կնքած ունի տիրոջ պատգամ:

Մինչդեռ պիտի շատ երկարէր
Տուտը այս իմ կարճ գրութեան,
Իմացայ՝ որ գործն յաջող էր
Փառք տուեցի Տէր Աստուծոյ:

ԳԻՏԵՄ ՈՎ ԵՍ ԴՈՒ

Տեղն ու տեղը հողի ես դու կամ լուսավայլ մի հրեշտակ էդ քո ազնիւ ու բարեսիրտ, քաղաքավար բնութեամբդ. Բաբունեաց դասակարգում արժանի քեզ ոսկեղէն թագ Սիրով կրես ի գլուխ քոյին յարմարատիպ մաքրութեամբդ:

Անաղտ, պայծառ դիմօքդ արեւուն դու փախուցել ես, Բամբ թագուհեացն կիսամեռ ապշեալ մնան մաղերովդ. Գեր ի վերոյ աւեն բանից հասակաւդ ինձ սառուցել ես, Իրան ասեմ, փառաւոր ես ոտից ցգլուխ սաղերովդ:

Սուրբ ես ինքդ, սիրտդ է սուրբ և մանաւանդ հողիդ է սուրբ.

Քահանայն քեզ պէսն է արժան, ոչ թէ արատաւորները, Աւազանի որդւոց մէջ մին, տես մատունքդ որքան են նուրբ, Հայ տղայիս յետոյ ասա՝ «կտրիր համբուրելոյդ սէրը»

Անոյշ ձայնդ լսողները զմայլում են, ինչպէս և ես. Նման ձայնիդ է ձայն եղբոր քո Յակոբայ. էլ ձայն չկայ. Անունդ այստեղ պաշտօնիդ հետ պարզ ցուցանողը՝ թէ դու ով ես,

Յօդեալ տողից գլխատառքն են, սուրբ Սարգիս թող լինի վկայ:

16 Ապրիլի 1863. Երեւան.

Այս քահանայն 1853 թուի Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ Սուրմալուայ դաւառի Իդդիրմաւայ գիւղի իւր ժողովրդի հետ դաղթած լինելով, հողւոր իշխանութեան հրամանաւ կարգուում է Երեւանայ Ս. Սարգիս եկեղեցւոյ պաշտօնեայ և ժողովրդեան առժամանա-

կեայ հովիւ: Սա շատ յարգուած էր ամենքից իւր լաւ վարքով և քաղցրաձայն երգով. 1863 թուականին վերադարձաւ իւր հայրենի գիւղը ու կարճ ժամանակից յետոյ այնտեղ վախճանեցաւ. հանգիստ ոսկերացն:—Վերը յիշուած սորա Յակոբ եղբայրը՝ արդէն ի վաղուց Հմայեակ վարդապետ և այժմ՝ միաբան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի, թէև ծերացած, բայց դարձեալ նոյն քաղցրաձայն երգիչն է, ինչպէս երիտասարդ ժամանակումն էր: Սրան գրած նամակս «Հ» տառերով (1870 թ.) կարդացողը կկարդայ մի քանի թերթ անցնելուց յետոյ և կիմանայ գլխի եկածը:

ԵՐԵՒԱՆԱՅ ԲՍՀԱՆԱՅԻ

Բարեկարգ Տէր Աստուածատուր
Ասա ու շուտ աջհամբոյր տնւր.
Այր փորձառու, բան հասկացող
Ամենքին էլ հաճոյացող:

Տէր Իսահակն պարզ դատող,
Քարոզներով միշտ խրատող
Ուղիղ ճանապարհով դնալ,
Փակ դրախտի դուռը բանալ:

Տէր Ղազարն պաշտօնասէր,
Սակայն գծուծ և շահասէր.
Հենց մեռել լինի, որ թաղէ,
Կողոպուտից օգուտ քաղէ:



Մեծ Տէր Խաչատուրն բարի,
Աղօթասէր ժամին արի,
Սաղմոս, մաշտոց թէ որ կշտից
Պակսեն, էլ չի ապրի վշտից:

Բաբախանեանց Տէր Խաչատուր
Արագաշարժ և մտօք սուր,
Գիտէ գանձել բանի հնար,
Նա չի մնայ երբէք անճար:

Տէր Մինասն ուսումնական,
Աղքատ, թշուառ, անօգնական,
Եւ այդ վիճակում ձեռնող
Մի ճգնաւոր կամ վանական:

Տէր Գէորգն լաւ երաժիշտ,
Վարժ գիտէ «փառք հօր այժմ» և միշտ
Բայց մնացեալ ընթերցմանց մէջ
Բոլոր անձով կրէ մեծ վիշտ:

Տէր Յովսէփն ուսումնասէր,
Ընկերասէր և հիւրասէր,
Բայց թէ միայն ինքնահաւան,
Նաև սակաւ մի պճնասէր:

Տէր Յարութիւնն Քեանդարեանց
Զհետ երթող առաքինեաց,
Օրը խաբող, պինդ պահեցող,
Բայց շուտ յուզուող, շատ բարկացող:

Տէր Ստեփանն այր պատուական,
Քաղցրաձայն երգող շարական,
Որբոց, այրեաց խնամածու,
Զատկին տալով նրանց շատ ձու:

Տէր Գէորգն Ալափարացի
Տեղափոխեալ ի գիւտ հացի,
Արտաքուստ պարկեշտ, ամօթխած,
Իսկ ներքինը գիտէ Աստուած:

Տէր Յարութիւնն հիւրընկալ,
Ծախսերը մեծ, անակնկալ,
Լեզուով ճարտար ու վիճաբան,
Քարոզները անբնաբան:

Տէր Մարգարն երկչոտ բնութեամբ,
Վարող պաշտօնն արիւթեամբ,
Ախորժակը ամեն օր բաց
Ուտել օրհնած մատաղով հաց:

Տէր Ներսէսն բարոյական,
Իւրեան վիճակով բաւական,
Բայց անուսումն, անընդունակ
Եւ բաղաձայն է նոյն դունակ:

Տէր Պօղոսն վատնող, շռայլ,
Զուարճասէր և այլ և այլ,
Կուրծքի վերայ խաչ ոսկեփայլ
Առնէ զնա յոյժ նազաբայլ:

Տէր Սիմէօնն այր բարեպաշտ,
Միանգամայն և հնապաշտ,
Ասէ «հազնել նոր վերարկու»
Կանէ մարդուն շատ ահարկու:

Նորընծայ Տէր Ստեփաննոս
Պաշտօնակցաց մօտ լուռ, անխօս,
Գանձանակի դրամից խեղճին
Հասնում է մասն շատ չնչին:

Յիշեալ քահանաներից ոմանք խոստացան միասին
գրել նոյնպէս ինձ համար մի բան, ինչպէս որ գիտեն.
բայց բաւական ժամանակ անցաւ, ձեռքս ոչինչ չհասաւ.
և երբ ինքս մի օր խնդրեցի որ շուտ կատարեն իրանց
խոստումը, նոքա իսկոյն տալով ձեռքս մի կտոր թուղթ
ու ժառիտ, ասացին «լաւ կլինի դարձեալ ինքդ գրես,
տեսնենք ի՞նչ դուրս կգայ, յետոյ կյայտնենք մեր կար-
ծիքը»: Ես էլ հնազանդելով նրանց, գրեցի այսպէս,

Ես Սիմէօն վարժապետ
ձգարտութեան կարապետ.
Բայց աւանդ, շատ անհամբեր,
երբեմն էլ հենց անտարբեր:

Կարգացին, խնդացին, բաւական մնացին
Ու իրանց համար գրածս ուղիղ ընդունեցին:

ԾԽԱԲԱԺԱՆՈՒԹԻՒՆ

Սուրբ Սարգսի ժիր քահանայք
Թո՛ղ կատարեն թաղումն և այդ
Պատառակում ընկածների,
Նաև բանտում մեռածներին:

Իսկ միւս պատուարժան տէրաւորներ
Թո՛ղ միշտ անեն իրանց լաւ կեր
Այն ամեն առատ արդիւնքներ,
Որոց սպասեն յոյժ անհամբեր:

Այն է՝ հարուստ հոգեւորքից
Երբ հեռանայ հոգեառ հրեշտակ,
Իսկոյն շարունեն մեռելին կից
Գլխավերեն ու ոտքին տակ:

Նոյնպէս Զատիկն ու Ջրօրնեաց
Նոքա լինին թո՛ղ աչքաբաց
Գրպանն ածել գանձ անօրհնեաց
Ու վայելել մատաղի հաց:

Ով այս վճիռը չընդունի,
Նա չարաչար պատիժ ունի.
Վասն որոյ և իւրաքանչիւր
Թո՛ղ քաջ ճանաչէ պաշտօն իւր:

10 Սեպտ. 1863 թ. Երեսմ.

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ, ԱՆՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Միաբանութիւնն ի մէջ հայ եղբարց
Երբ ման էր գալիս միշտ դուռից բաց,
Ունէր ամեն տեղ շատ փառք ու պատիւ,
Ու ժողովել էր բոլոր մարդ անթիւ:

Այնպէս՝ որ հասած տեղը մի անգամ
Լինում էր ինքը նախագահ անգամ.
Ամենի միջին բարձրաձայն գոռում,
Համաձայնութեամբ բոլորին տիրում:

Սա ուր գնում էր, օգնական ընկեր
Իւրեան հետ ունէր խաղաղութիւն, սէր.
Պէտք էր որ սորան լսէին մարդիկ,
Թէև լինէին անհաշտ թշնամիք:

Ո՛չ միայն գիտունք, ո՛չ միայն ռամիկք,
Ո՛չ միայն հարուստք, ո՛չ միայն աղքատք,
Այլ իշխանազունք, մեծամեծ մարդիկ
Հարկաւ լինէին սորան հնազանդք:

Երկար չքաշեց, մէկ տեղ կիտուեցին
Մարդիկ իրար հետ խորհուրդ արեցին.
Որպէս ի նշան երախտագիտութեան
Թագ դնել գլխին միաբանութեան:

Ուստի բաւական խոր մտածելէն
Յետոյ հասկացան ինչ նիւթից շինեն,
Առան «ա» և «ն» մի լաւ կոկեցին,
«Մասնիկ աննշան» անուն կոչեցին:

Հենց պրծան թէ չէ, մեծ աղաղակով
Ձեռքերին բռնած սեւով, ճերմակով,
Այս մեծ իշխանի առաջ վազեցին,
Առօք և վառօք գլխին դրեցին:

Երբ որ կատարուեց այդ տեսակ փորձը,
Տեսան խիստ վատ է ընթանում դորձը.
Մեծ խռովութիւն տիրեց ամենին,
Ել չուզեց լսել ընկեր ընկերին:

Էնպէս իմացան լաւութիւն արին,
Բայց գլուխները տուին մեծ քարին.
Մէկն ասաց «այո՛» իսկ միւսը «ո՛չ, ոչ»
Ընկաւ իրանց մէջ սաստիկ դուռն զոչ:

Անթագ իշխանը վայր գլորեցաւ,
Իսկ թագակիրը յոտին կանգնեցաւ,
Սկսաւ մեծ ջարդ տալ յիմարներին,
Որ լաւ ծառայեն փոխուած պատկերին:

Մինչև հիմայ էլ էս տիրապետող
Իշխանից չեղաւ ոչ մէկն ազատող.
Կացին, մնացին միշտ տանջանքի մէջ,
Ամենից լսուեց գանդատ, աղմուկ, վէճ:


Ես պատահեցայ հենց էս օրերում
Երեսփոխական մի փոքր հաշոււմ.
Եւ էս հաշուառեա պատուաւոր անձինք
Ընդ ամենն էին թուով ութ հոգիք:

Երկու օր ամբողջ առան, տուեցին,
Դարձեալ հաշիւը կիսատ թողեցին.
Մի քանի անգամ թուղթ ու թանաքը
Յառաջ բերելով հենց ինձ խաբեցին:

Մէկը ասում էր. «գրիր էս տեսակ»,
Իսկ միւսը նորան լինում էր ներհակ.
Ես էլ յուսահատ թողի, գնացի,
Նստեցի տանս, այսպէս գրեցի:

«Ա՛խ, մասնիկ, մասնիկ, դու անտէր մնաս,
Որ տուիր այսքան մեր ազգին վնաս.
Չգիտեմ քեզնից ես ո՛ւմ գանդաւում
Կամ որին իբրև մեղաւոր դատեմ:

Եթէ որ ասեմ, նա է պարտական,
Ով որ յօրինեց հայոց քերական,
Ապերախտ կլինիմ ես նորա յառաջ,
Ուստի թող մնայ իմ վիշտ, իմ հառա՛չ:



ՄԱՐԴ ԵՒ ՓՈՐ

Մարդ

Աստ, տեսնեմ, աստ, այ փոր.
Ինչո՞ւ համար այս քանի օր
Բանտարկել ես դու ինձ տանը.
Աստ, քնասողդ է ո՞ր բանը:

Աստ, ագահ, ինչո՞վ պակաս
Այլ փորերից ես մնացել.
Թէ ուտիս է եղել՝ թէ պատ,
Անուշ բաներ մէջդ եմ լցել:

Կարծեմ որ մէկ պատճառ չունես
Ամենին բան խօսելոյ,
Բայց գիտեմ որ անժուժկալ ես,
Ձեռ մնալ առանց լռելոյ:

Աստ, ուրեմն, աստ, տեսնեմ
Ի՞նչ է ինձնից դանդաժանքդ.
Աստ, որ գլխիդ դարձնեմ
Քո անտեղի ունայն բանքդ:

Փոք

Վատ չի լինի, որ լուռ մնաս
Ու իմ բերանը չբանաս:

Մարդ

Ի՞նչ կարելի է լուռ մնալ
Ու էդ կոշտ խօսքիդ դիմանալ.
Եթէ որ մէկ պատճառ չունիս,
Ինչո՞ւ չես ինձ դադար տալիս:
Էս ի՞նչ, էս ի՞նչ բողոքներ են,
Որ քեզանից միշտ լսվում են....

Փոք

Հերիք չեղա՞ւ, մարդ Աստուծոյ,
Ի՞նչ ես էդպէս գիժ գիժ խօսում.
Մի՞թէ քնածն քո շինուածոյ
Մինչև հիմայ չե՞ս իմանում:

Մարդ

Ամենին չեմ իմանում,
Բայց թէ միայն ցաւն եմ զգում:

Փոք

Էդպէս պէտք է դու փոր պահես,
Որ աշխարհում երկար ապրես.
Թէ հազար ինչ որ լաւ ուտես,
Առանց նրան մարսել կարես:

Մարդ

Էն ի՞նչն է ի՞նչ, աստ, խնդրեմ,
Որ առանց էն մարսել չկարեմ:

Փոք

Էլի միտքս չհասկացար.
Մարդ դու, խաղա՞ւ յիմարացար.
Ձեռ գիտում՝ որ քաղցր ջրոյ
Տեղ սովրել եմ դառն գինւոյ:

Քանի որ է՝ որ գինու տեղ
Տալիս ես ինձ ջուր մահագեղ.
Ահա, քիչ մնաց պատուում
Եւ քո կեանքդ վերջացնեմ:

Մարդ

Շատ լաւ, պատճառն իմանում ես,
Որ այդպէս ինձ նախատում ես.
Մեծաւորս է ինձ պատուիրել,
Գինի մինչ ութ՝ որ չխմել:

Փոք

Ես քեզնից լաւ եմ հասկացել
Մեծաւորի պատուիրանը.
Նա ուրիշ տեղ չի արդելել,
Բայց թէ միայն իրան տանը:

Մարդ

Ի՞նչպէս միայն իրան տանը.
Չուղեմ լսել սուտ, սուտ բաներ.
Թէ տանը եւ թէ դռանը
Կարգած ունի նա լրտեսներ:

Փոք

Օ՜ք . . . մի կարգաւ գլխիս առակ.
Չունիմ լսելու ժամանակ:

Մարդ

Մեծաւորի պատուէր առակ
Կարծում ես դու, ով անառակ:

Փոք

Ո՛չ թէ առակ պատուիրանն է,
Այլ քո յիմար խօսքը տալն է.
Երբ որ հիմայ փնտուում ես,
Ասա, տեսնեմ, մեղքը ումն է:

Քեզ ասացի զգոյշ կացիր,
Գինի բառը մի մոռացիր.
Այլ դու, ընդհակառակն օրը,
Մէկ կուժ ջուր մէջս կապեցիր:

Էդ անսովոր խմելիքը
Միթէ կարող եմ ես տանել.
Աղիքներս սկսել են
Արդէն ինձնից վրէժ առնել:

Մարդ

Աման, այ փոր, աման, այ փոր.
Ահա, մնաց մի քանի օր.
Խնդրեմ մի քիչ քեզ պինդ պահես.
Կգայ շուտով գինին հօր:

Փոք

Հը՛մ . . . զուր ես խնդրում ինձանից.
Ասում եմ քեզ հիմիկուանից—
Ես արդ անդօր, գինին հօր.
Սնշուշտ կվախեմ նրանից:

Մարդ

Ի՞նչ ես ասում, աման, պինդ կաց.
Շատը դնաց, քիչը մնաց.
Նրանից դու թէ վախենաս,
Գերեզմանի դուռ կբանաս:

Փոր

Հիմայ շատ դառն կը թուի,
Ուստի պէտք է ջուր խառնուի:

Մարդ

Այն, թէ կլինի դառն,
Դործ կգնենք բարեխառն:

Փոր

Միայն լինի շատ մաքուրը,
Ինչպէս գինին, նոյնպէս ջուրը.
Զակուսկին էլ հետը յարմար,
Որ գայ ուտող խմողի դուրը:

Մարդ

Սիրեմ դքեզ, փոր պատուական.
Ո՞նց չի լինի շատ դուրական.
Դինի աղնիւ ու անպղտոր,
Զակուսկին էլ թթու սխտոր:

Փոր

Ինչ անում ես, դէ, շուտ արան.
Խօսքը կարծէ քանի փարայ.
Երկու կաթիլ ջուրը, գիտե՞ս.
Այժմ միջից ինձ կանէ կէս:

Մարդ

Դիտեմ, գիտեմ, դու հանգիստ կ'աց.
Զայն մի հանիր, իսպառ լուռ կ'աց.
Շուտով կանեմ ես ջուրը պաս,
Որ դու մնաս միշտ անմխաս:

Ի՞նչ եմ անում ես խառնուրդը,
Որ ծիծաղեն թուրքն ու քուրդը.
Որքան կուզես, մաքուր գինի
Ածեմ, կուլ տամ, լաւ կլինի:

Այն էլ թանգագինն ու շատ թունդ,
Որ ուտելիքը չանեն բունտ.
Ջրախառն, թոյլ գինիքը
Թող վայելեն կին մարդիկը:

Փոր

Հոգեակ, եթէ այդպէս քաջ ես,
Բաս լաւ, երբ կբարեհաճես
Այդ հեղուկը իմ մէջ ածել,
Եւ ջուրը իսպառ հալածել:

Մարդ

Միամիտ կաց վաղը կերթամ,
Մեծաւորիս թղթով կտամ.
Նա ողորմած է՝ միշտ գլթած,
Կուղէ տեսնել մեզ միշտ արբած:

Փոր

Մատաղ, այդ լաւ աչքալոյս է,
Եւ ինձ համար մէկ մեծ յոյս է.
Բայց դուցէ չհամաձայնեց
Ու անպատուութեամբ դուրս արեց:

Մարդ

Ո՛չ, վաղը շաբաթ օր է, փոր ջան,
Որ մինչ այդ օրն է մեր պայման:

Փոր

Ուրեմն անշուշտ խմելու ենք:

Մարդ

Անպատճառ որ կոնժեկու եմք:

Փոր

Ո՞ւմ կենացը.

Մարդ

Մեծաւորի.—

Փոր

Կեցցէ, կեցցէ մեծաւորը.

Տէր ողորմի նորա հօրը:

12 Յունիսի 1864. Երեսմ.



ՌԱՓԱՅԷԼ ԽՕՋԱՅԵԱՆՑԻ ԿՕՇԻԿՆԵՐԸ

Ո՛վ Ռափայէլ Խօջայեանց, եկէք, դուք ինձ լսեցէք,
էդ ձեր անտաշ ու անձև կօշիկներէից հեռացէք.
Որքան ձեզ ծառայեցին, խնդրեմ, բաւ համարեցէք.
Կարօտ աղքատներ չատ կան, գէթ նրանց ողորմեցէք:

Թէ ո՛չ, դրանք ձեր գլխին մի օր փորձանք կրերեն.
Իշխանաց, դատաւորաց առջև երկար կգերեն.
Զի իւրեանց հնութիւնով դրանք մեծ ձայնի տէր են.
Քանի բան բանից չանցել, ճար տեսէք, հեռացուցէք:

Աչքս բացել, տեսել եմ էդ կօշիկներ ձեր հագին.
Թէ կռապաշտներ լսեն, գալով կը երկրպագին.
Ինչպէս հինօրեայ ապրանք թանգ է էս ժամանակին.
Իրանց կարկառանքներով տանից դուրս չըպրտեցէք:

Հին ժամանակ կար մի մարդ, ունէր ճիշտ դրանց նման
Քսան տեղից կարկառած, ծանր, կոպիտ ոտնաման.
Դուք նորա ժառանգը չէք, անվայել է ձեր անուան.
Ինչո՞ւ էք տիրապետում, լուծէք ու արձակեցէք:

Կօշիկներիդ համբաւը ծեր Քաղըմ ողորմածիկ
Լսելով, մեռած տեղից կենդանացել է հիմիկ.
Փայտը ձեռին շուռ է շուռ ման է դալիս ոտքօրիկ.
Քանի այստեղ չէ հասել, օր յառաջ ձեզ վրկեցէք:

Այդ նշանով նա ձեզ հետ վէճ, դատաստան կբանայ.
Այնպէս բան կյօրինէ՝ որ աշխարհ կղարմանայ.
Զեղնից այդ կօշիկները տուգանքներով կտանայ.
Սէրն Աստուծոյ, հենց հիմայ ձեր ոտքիցը հանեցէք:

Ողորմելի Քաղըմին թողէք որ կրկին դառնայ,
Դառնայ անդարձ յաւիտեան տեղումը հանգստանայ.
Հաղար ու մի անէծքով չգայ բերանը բանայ.
Այդ անպէտ կօշիկները կրակ դրէք այրեցէք,

Մոխիրն էլ խոր թաղեցէք:

Նա այդպէսների ձեռքից մեռաւ յոյժ կարօտաւոր,
Զրկուեց իւր բոլոր գոյքից, իւր տուն թողեց սղաւոր.
Եթէ կուզէք իմանալ նորա տապանագիրը,
Կարդացէք ներքոյ դրեալ երկտող արձանագիրը:

«Այս է տապան Քաղըմի ծերոյն հարիւր ինն ամաց,
Որ ի կեանս ծառայեաց կէս փթանոց գոյդ կօշկաց»:

6 Յոյնիսի 1864. Երեսմ.



Երեւանայ Կոնսիստորիայի մկրտաւ յայտարարութիւնը

Քաջայայտ է ողորմած Ատենակալացդ՝ որ ես Կոնսիստորիայի հաստատութեան օրից՝ այն է 1837 թուականից սկսեալ ցայսօր իմ կտրիչ ծառայութիւնս շարունակում եմ անընդհատ միանգամայն, ինչպէս իմ հին աւուրց ծառայակից արխիւարիւս պարոն Քնքուշեանցը Աստուածակոյս կողմանէ կվկայէ, որի ազդաբանութիւնը եթէ լաւ քննենք, կարծեմ երկուսս էլ մի օջաղի ժառանգ կհամարուենք, պատճառը որ՝ սրանից 60 տարի յառաջ նորա հարուստ պապոնց տան մախմուռ քաթիպաներ ու սամուր քուրքեր ձեռք մկրատը ես ինքս լինելով, իմ արժանաւորութեանը համապատասխանող վկայականով դուրս եմ եկած ու հենց էս պատճառաւ էլ նորա ազդանունով է վերտառութիւնս և նորա հետ միասին մտած այս դիւանատունը, վարում ենք իւրաքանչիւրս մեր իսկական պարտաւորութիւնը զարմանալի ճշտութեամբ, բայց հարցնող կայ արդեօք՝ թէ ինչպէս ենք կորցրել մենք մեր բոլոր ոյժ ու կարողութիւնը այսքան երկար ու ձիգ ժամանակներում կամ լաւ ևս ասել մեր աւելորդ ծառայութիւններում, ահա, ոչ նորա գլխին մաղ ու աչքին լոյս է փայտել և ոչ իմ ատամին սրութիւն, մէկ խօսքով քանի ու քանի Ատենակալներ, Ատենադպիրներ, պաշտօնակատարներ, գրագիրներ, հաշուապահներ, անհաշուապահներ ևն, ևն, որոց անուանքը մի առ մի չեմ յիշում այստեղ, եկել են ու գնացել, իսկ մենք հաստատ հիման պէս կանք ու մնում ենք դեռ մեր հնութիւնով, մեր խոնարհ հպատակութիւնով, ու նա զոնէ մխիթարուել է աստիճան ու ռոճիկ ստանալով, բայց ես ձրի մշակս չունիմ և ոչ մի արտօնութիւն, ի վերջոյ նա ինքը ինձնից պակաս հարտար լեզուի տէր չի, ինչպէս կուղէ, թող խօսի, բայց ես իմ

ցաւովս միայն տնքամ, որին և աղաչեմ այժմ ուշ դարձնէք:

Մինչև 1857 թուականը, այն է ճգնաւորակերպ Յաւորայ ռեգիստրատորութեան օրերը՝ որ դեռ Վաղարշապատումն էինք, որ մինն ասեմ, թէ քանի անխիղճ ծախսարարների ու ռեգիստրատորների ձեռքին դեղերուել ու չարչարուել եմ, բայց էլի անարտունջ գործ դնելով բոլոր ջանքս, մեծ համբերութեամբ ամեն բան տարել եմ այն յուսով, թէ ահա շուտով Երեւան կփոխադրուի դիւանատունը, և ես այնտեղ իմ հնութեամբս մեծ պատուով կյանձնուեմ պարոն Քնքուշեանցի արխիւր, ուր միայն հին ու նոր գործերը զննելով, կամաց կամաց կծածամեմ անհաւատարիմ գրիչներէ ներմուծեալ անճշտարտութիւնները, այլ ընդհակառակը Երեւան մտած օրիցս դարձեալ իմ նախկին և ներկայ պաշտօնովս մի քանի անգութ ռեգիստրատորներ փոխեցի ու որի ձեռքն ընկայ, աղաչեցի, պաղատեցի, խնդրեցի, որ իմ բերանից մէկ էսպէս թուղթ գրի, ներկայացնեմ, ոչ մինը չլսեց ձայնիս. վասն զի մին քան զմին ապառաժից պինդ սիրտ ունեցող մարդիկ էին և կարծես իմ աղգիս հետ անհաշտ թշնամիք, իսկ այժմ ընկած եմ մէկ երբեմնական վարժապետի ձեռքի տակ, որ թէև Աստուծոյ օրհնած հողի, բայց մի փաղը էլ անհամբեր բնաւորութեան տէր, այնպէս՝ որ թուղթը ուղիղ չկտրելուս կամ Աստուած հեռի արասցէ, ծածածակուս ժամանակը բարկանում է և իսկոյն ինձ գետին խփում. թէև նա մեղաւոր չէ՝ որ գործին չեմ պիտոյանում ինչպէս հարկն է, սակայն ես էլ ինչ մեղաւոր եմ, որ օրերս անց եմ կացրել, հնացել, ժանդոտել, մաշուել, ծուռել, բթացել ու հենց էն է մնացել միջիցս երկու կտոր ընեմ ու անիրաւ, քարասիրտ ծախսարարի ձեռքից ազատուեմ, որ խնայելով ծախսին մի նորը չի առնում ու յաւիտեան իւր մահտեսութիւնն իմ հնութեանը պարտական մնալով, ինձ չի պատուում ու հանգստութիւն տալիս:

Ուրեմն, ով իրաւաբատ Տեսնք, իմ մաշուած բերա-

հովս Կաղաչեմ, ի սէր իմ անաչառ թրին և վրէժխնդիր
եղբայր դանակին լինի, դատ արէք արդար, և ինձ շուտ
արձակելով խուզող պաշտօնիցս, բարեհաճեցէք շնորհել
իմ բազմամեայ ջեմեռանդ ծառայութեան վկայագիրը,
և թոյլ տուէք որ տանեմ, կցեմ արխիւում գտնուած բո-
լոր ազատականաց գործերի քամակիցը՝ որոնք կատարուած,
կնքուած են իմ ժամանակիցը:

Բագմաշաս ծերունի մկրտս Քննութեանց

21 Մայիսի 1965 ամի. Երևան.

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԱՌ ՍՈՒՍԱԿ

Ազնիւ սոխակ, քաղցրիկ սոխակ,
Հայաստանի սիրուն թռչնակ,
Ասա, տեսնեմ, ուստի՞ կուգաս
Թռչկոտալով այդպէս արագ:

Քո երգերդ, սոխակ, այսօր
Մէկ այլ իմն տխրութիւն խոր
Թափանցում են իմ սրտիս մէջ,
Ինչպէս մէկ սուր սլաքաւոր:

Ասա, տեսնեմ, ո՞վ բարեկամ,
Ճշմարիտը ինձ քո պատգամ.
Ի՞նչ լուր ունիս իմ հայրենի
Աշխարհիցը դու էս անդամ:

Աշխարհ ասեմ, ո՞հ, Հայաստան,
Ուր հայութեան սուրբ գերդաստան.
Ուր հողը սուրբ, ուր ջուրը սուրբ,
Սուրբ ամեն վայր և անդաստան:

Անդ է իմ քաղցր հայրենիք,
Անդ իմ եղբարք, քորք, ընտանիք,
Անդ լաւ ծանօթք, սերտ բարեկամք,
Բոլոր հարազատք, սիրելիք:

Ինձ ո՞վ արեց թափառական,
Բախտին գերի պանդխտական.
Ա՛խ, հայրենեացս աւերակներ,
Եղէք դուք ինձ հրաւիրակներ:

Թո՛ղ դամ, հանգչիմ ես ձեր ի ծոց,
Հերիք, որքան այրէ զիս բոց.
Գիտէք, որքան դառն է դժուար
Լինել անտուն, անտէր, օտար:

Թո՛ղ որ լսեմ ձայնն իմ եղբարց,
Թո՛ղ համբուրեմ գերեզման հարց.
Թո՛ղ մի ծանօթ ժպիտ դէմքով
Ինձ ասէ թէ «եկար բարով»:

Թո՛ղ տեսնեմ շուրջս պատած
Սերտ բարեկամներ կարօտած.
Չէ, գոնէ մի լուր առնէի,
Յետոյ աստ հանգիստ մեռնէի:

Այլ ինձ ո՞վ լինի սուրհանդակ,
Սրտիս բաղձանքին օժանդակ.
Ո՞վ իմ սոխակ, դու ազատ ես,
Դու ինձ նման չես ի վանդակ:

Սիրեմ զքեզ, էլ մի մնա,
Շուտ թռիւր, նոցա մօտ գնա.
Քո երգախառն ձայնովդ
Ինձնից շատ շատ բարով արա:

Ասան, տ անքեղ շուտով նամակ,
Թանգ է վայրկեան մի ժամանակ.
Տխուր սրտիս սփռփանքն է
Սպիտակ թուղթն ու սե թանաք:

Գնան, սոխակ, գնան, սոխակ,
Հայաստանի սիրուն թռչնակ.
Ասան ծնողիս «պանդուխտ որդիդ»
Ե՞րբ կլինի քո սուրբ գրկիդ»:

Գնան, սոխակ, գնան, սոխակ,
Հայրենեաց քաղցրախոս թռչնակ.
Միակ սէրս այնտեղ դռնի,
Իմ բարեւով տունը մտնի:

Գնան, սոխակ, թռնի, սոխակ,
Իմ աշխարհի աղնիւ թռչնակ.
Իմ սիրելի բարեկամաց
Իմ վիճակս ասան դու բաց:

Թռնի, սոխակ ու սլացի,
Երկար ուղիդ արագ անցի.
Վաղը դու ինձ արշալուսին
Պատգամաբեր հանդիսացի:

2 Յուլիսի. 1866.

ԼԻՔԸ ՏԿՃՈՐ

Ուռած փորիդ, ցցուած պորտիդ,
Դբուած միջքիդ, դուզ շլլընքիդ,
Երկար ու ձիգ ձիգ կողերիդ,
Տուգ, տուգ պճեղներիդ,
Մեծ անունիդ, զօրութիւնիդ
Եւ պառուական բնութիւնիդ
Տամբ համբոյր ծունր կրկնելով,
Ձի արբուսցես մեզ քո լուով:

Դու բնակարան երանելի,
Բնակողն ի քեզ միշտ տօնելի.
Որոյ անունն է սուրբ գինի,
Որոյ տունկը օրհնեալ լինի.
Որոյ տնկող ըմպող Նոյը
Էր երջանիկ առաքինի.
Ուստի և մեք զսա ուղղակի
Արբոյր «սա նորին օրինակի»:

Ուրեմն լին, ո՞վ սանահէր,
Լիքը լիքը մեր բաժակներ.
Խմենք, կարդանք միշտ օրհնութիւն,
Խնդրենք Նոյին արքայութիւն.
Որ սորան մշակեց, տնկեց,
Յետոյ մեր գլխին կտակեց.
Վասնորոյ միշտ կուլ տանք ազատ
Մեք ժառանգներս հարազատ:

26 Յուլիսի. 1867 Աբասուման.

ՀԱՅՐ ՀԱՄԱՅՆԱԿԻՆ

Հայրենի հեղձուցիչ հեղեղատներէն հարեալ, հզօրագոյն հողմերէն հարուածեալ, հնական, հնապաշտ, հնամուհ...րէն հալածեալ. հեռասահման հողում հաստատուն հաւատով հաջի հռչակուելու համոզուած հանդիսացեալ, հապա հեղահամբոյր, հռչակաւոր, հայրենասէր Հայրիկին հանդիպելով հայկական հարազատ հոգւով հրահանգեալ, համաշխարհական հրապուրիչ հրճուանքներէն հրաժարեալ, համեմատ հոգեւանդ հարցասիրութեանդ հրապարակաւ հոգւոր հովուութեան հրաւիրեալ, հետեւաբար հաւանական հեռատեսութեամբ հետիոտս հէք հայրենիք հասեալ, հերուն հետէ հարստահար, հնացեալ հազուստով հրապարակօրէն համբերեալ, հուսկ հաշտարար հովուակցի հրաշալի հրապարակախօսութեամբ հանգէս հանեալ, հազիւ հազ հոգւոր հարց համախմբում համաթուեալ, համօրէն հայազգին հաղորդագրեալ, Հայաստանում հրատարակեալ, հայրենիքում համբաւեալ, համայն հայրենակիցներէն հիւրընկալեալ, հանրական Հայրապետի հրամանաւ հայորդւոց համարձակ հայկաբան համարեալ, հասարակութեան հսկող հովիւ հաստատեալ, հաւատոյ հոգեշահ հանգանակին հոգւորապէս հրահանգող հանդերձեալ, հոյլք հերձուածողացն հզօրեղապէս հերձեալ, հեթանոսական հետքերը հալածելու հետազօտեալ, հրաշագործ Հօտապետի հաւատարմագոյն հօտն հեղութեամբ հոգւորեալ, հրեղինացն հաւասարեալ, համայնիցն Հօր հաճոյացեալ, համանման հանճարաւոր, համբաւաւոր, հասարակաց հովանաւոր Հայրիկին հաւատ, հայ, հայրենիք, Հայաստան հնչելով հաւատարմութեանդ հարկն համանգամայն հատուցեալ, հրեշտակակրօն հայր Հմայեակ:

Հաւատարիմ հայերից հաւաստեաւ հասկացայ հոգեմաշ հարկահանների հոգւոր հօրդ հինգ հարիւր հազար-

դեանի համարեա հասած հինաւորց հաւաքուած հարկերը հանդերձ հպարտ հրամայական հարուածներով հատուցանել հարկադրելը՝ հակառակ հայոց համեստ հոգեւորականութեան:

Հիմայ հարկաւոր համարիմ հարկառու հայրութեանդ հաստատապէս հաւատացնել, հենց հայոց Հայրապետի հաճութիւնը հասուն, հմուտ, հարուստ, համողիչ հայցուածովդ հայթայթես, հեշտեաւ հասանիս հարկատուութեան հոգսից հանգստացնող հրովարտակի:

Համբերատար հօրդ հանապաղ հլու, հնազանդ հայորդի:

5. Հոկտեմբերի. 1870 Հայկազն.

Հանճարաւոր Հմայեակ հօրն հասանի Հախլիքիս.

ՀԱՂԱՐԾՆԻ ՎԱՆՔԻ ԶԱԴԻՐԸ

Ահա մի չադիր մեծ և փառաւոր,
Քսան ութ երկար ու ծուռ սիւնաւոր,
Տնկած Հաղարծնի մեծ վանքի դրան,
Որ կոչի ըստ դրոց իբրու թէ վրան:

Գոյնզգոյն քրդի քեչէքով պատած,
Վերուստ մինչ ի վայր խառն կարկատած.
Լուսամուտք նորա անթիւ, անհամար,
Որ միշտ տեսանես պարզ երկնից կամար:

Թէ երկինք թափեց մի թեթեւ հեղեղ,
Այնտեղ կտեսնես սաստիկ ջրհեղեղ.
Թէ որոտալով արձակեց կարկուտ,
Գլուխ պահելու չունիս ել ու մուտ:

Թէ հանեց մի ճայթ հանդերձ կայծակով,
 Լոյս կթափանցէ հաղար մի ծակով.
 Թէ յանկարծ ջրանց, բրդեց առատ ձիւն,
 Սար կձևանայ ամեն մի անկիւն:

Թէ օր ցերեկով կէտուեցին ամպեր,
 Նստիր, կեր, խմիր, քնիր ու հաժքեր,
 Թէ պարզեց օդը, արեց տաք արև,
 Փախիր, մի մնա, տնւր մնաս բարև:

Թէ յանկարծ մենակ ոտքդ դուրս դրիր,
 Ինչ որ պատահի, պատիժդ է, կրիր.
 Կատաղի շներ՝ որ մսից պաս են,
 Օտարականի արեան կապանեն:

Թէ ներս, դուրս անես մութը գիշերներ,
 Որ կողմից ուզես, կբացուին դռներ.
 Թէ լուսին, աստեղը փայլին երկնքում,
 Կարգն ու դրէ նորա քնջերքում:

Թէ տասն աշտանակ շարես չորս կողմը.
 Հերիք է նրանց մի բարակ հողմը.
 Թէ Աստուած չանէ, լինի փոթորիկ,
 Չես տեսնի վրան, այլ օդապարիկ:

Ահն մի հրաշք, մի նոր տեսարան,
 Ուր ոչ մի կողմից չիք պատսպարան.
 Չգիտեմ սորան էլ ի՞նչ անուն տամ,
 Բացի կոչելուց փորձութեանց դարան:

Ի սէր Քրիստոսի, հայր Պօղոս, արի,
 Ընդունիր որդւոյդ խորհուրդը բարի.
 Քանգէ ու ցրուէ այս քրդի աւար,
 Քո ձեռքով կանգնէ մի նոր տաղաւար:

Թէ ոչ, աղաչեմ, տնւր ինձ արձակում,
 Թնդ Աստուած տայ քեզ բարի վայելում.
 Հիւրասէր հօրդ այսքան ինչ վաւեր
 Քո Սիմէօնից բաւ է ի նուէր:

18 Դեկտեմբերի 1871. Հաղարձիմ.



ՍՊԻՏԱԿ ՄԻ ՄԱԶ

Սպիտակած մի ծուռը մազ
 Թղաչափ երկար հաղիւ հազ
 Յցուած էր մէկ թուխ մօրքի մէջ,
 Խիստ անյարմար, անձև, անսաղ:

Բայց էս մէկ հատ մազը չնչին,
 Որ կպած էր տիրոջ դնչին,
 Ո՞վ կկարծէր, էնքան խաս էր,
 Որ սաղ մօրքից դերադասէր:

Բարեկամի մէկը յանկարծ
 Համարեց իր մտքում մեծ վարձ.
 Մի թաս խմեց, քէֆը քոքեց,
 Քաշեց էս ծուռ մազը պոկեց:

Դու ոչ մեռնիս, ինչ խեր, ինչ վարձ,
 Իսկոյն այստեղ բացուէց մեծ հարց.
 Երկու բարեկամի մէջը
 Շարունակուեց անվերջ վէճը:

Մօրքատէրը չարակամի
 Տեղ դրեց սերտ բարեկամին.
 Բերանը խիստ արձակ բացեց,
 Գլխին հաղար անէծք ածեց:

Դեռ սորանով չկշտացաւ,
Քանի մնաց, խիստ տաքացաւ.
Մէկ անպիտան մաղի համար
Ասաց, ինչ որ մտքիցն անցաւ:

Վերջը սաստիկ յուսահատուեց,
Զրկուել կեանքից բարւոք դասեց.
Գոռաց, գոչեց, գոյնը փոխեց,
Քափ ու քրտինքն իրան կոխեց:

Մի քիչ յետոյ էլ չխօսեց,
Քթից նուազ արիւն հոսեց.
Զեռք ու ոտքը այնպէս դողաց,
Կարծես գլխին մի սուր շողաց:

Նա պ'նդ խփեց մէջքը պատին,
Յետոյ աջ ձեռք ճակատին.
Կամաց կամաց խելքը մաղուեց,
Տեղն ու տեղը վայր գլորուեց:

Խեղճ բարեկամն էս միջոցին
Գլուխը քաշ, ձեռք ծոցին,
Շատ դարմանքով աչքը չռած
Մնացել էր սպռած, սառած:

Ահ ու դողով հաղիւ մի բան
Խօսեց նա իբրեւ փաստաբան.
Բայց արի, տես դու փորձանքը,
Ո՞րքան ծանրացաւ յանցանքը:

Սուտ նուաղած մօրքատէրը
Միտ բերելով մաղի սէրը.
Կայծակի պէս թռաւ տեղից,
Բռնեց խեղճի ջուխտակ բեղից:

Ո՞նց ես հիմայ դիմ քոքահան
Անեմ սրանք, հիվ անպիտան.
Լաւ չէր գլուխդ կտրուէր,
Քան թէ էն մի մազս պոկուէր:

Ասաց ու ձգեց չարաչար,
Պահանջելով իւրն անդադար.
Թէ չէր պատժել իրան թունդ հազ,
Գուցէ թողնէր նորան անմազ:

Ո՞վ էր լսել, տէր իմ Աստուած.
Մարդ մի մաղով սիրահարուած
Այն աստիճան, որ հասցնէր
Բարեկամին այսքան հարուած:

22 Սեպտեմբերի 1871. Երեւան.



Ի՞նչ է արդեօք մտածում նա,
Որ հաւաքած ունի շատ փող,
Բայց թէ ժլատ, ագահ, զրկող.
Որ կոչուում է աղայ, հարուստ,
Բայց աղքատի պէս իւր ապրուստ.
Որ ունի կալուածներ, մեծ տուն,
Բայց չէ կշտանում տան կատուն.
Որ ունի ցեցի բաժին գոյք,
Բայց չէ հոգում անձին պիտոյք.
Որ կոյր բաղդով շրջապատուած,
Բայց հագին շապիկ կարկառած.
Որ միշտ պատրաստ է հիւր լինել,
Բայց անպատրաստ հիւր ընդունել:

Որ ուտում է պաս օր բանջար,
 Բայց ցանկանում եղբորը չար.
 Որ պահանջում է միշտ բարիք,
 Բայց չէ լցնում մէկի կարիք.
 Որ թողում է որդւոցը դանձ,
 Բայց կրթութեան հոգսն առնում զանց,
 Որ օգնութեան անձեռնհաս,
 Բայց իւր օգտին շուտ ձեռնհաս.
 Որ յօժար է մնալ անկին,
 Քան թէ ողորմել տնանկին
 Որ՝ ափսոս, կորցնում բոլոր շահ,
 Երբ ճաշակում է դառն մահ:

Ի՞նչ է արդեօք մտածում նա,
 Որ ծերացել է անժառանգ,
 Բայց հիմնում նոր նոր ապարանք.
 Որ ապրում է ճօխ, զարդարուն,
 Բայց անցել իւր կենաց դարուն.
 Որ փարթամ ու փառքերով լի,
 Բայց թէ անձը ցաւերով լի.
 Որ կերակուրն է համադամ,
 Բայց բերանում չկայ ատամ.
 Որ մահիցը հեռանում է,
 Բայց անկտակ մեռանում է:

9 Դեկտեմբերի 1871. Երեւան.

Ի՞նչ է արդեօք մտածում նա,
 Որ ինքն է հովիւ, քահանայ,
 Բայց սրբութեան հետ չընթանայ.
 Որ կարգուած է տեօուչ և դէտ,
 Բայց անարժան, կոյր և տգէտ.
 Որ աւանդապահ խորհրդոց,
 Բայց պատիժ խորհրդեան որդւոց.

Որ ամեն օր գնում է ժամ,
 Բայց խիղճն անմաքուր յարածամ.
 Որ կարգում է աւետարան,
 Բայց չէ կատարում պատուիրան.
 Որ յայտնապէս սողմոս քաղում,
 Բայց ընկերից ծածուկ գաղում.
 Որ պարծանքով պահում է պաս,
 Բայց գործքերը այլոց փաս.
 Որ միտ ուտելն արհամարհում,
 Բայց զրկանքը վարձ համարում.
 Որ ձեռնում Աստուածոտէր,
 Բայց փառամով, արժաթառէր.
 Որ զգեստովը սրբափայլ,
 Բայց անզգեստ կեղեքիչ գայլ.
 Որ կեղծելով խոստովանող,
 Բայց բնաւին չաղաշխարող.
 Որ ի բեմին պատարագող,
 Բայց խորանից յափշտակող.
 Որ վարդապետ կոչուող և տէր,
 Բայց կատարող Յուդայի դէր.
 Որ քարոզող խաղաղութեան,
 Բայց պատճառող խռովութեան.
 Որ ձեռքն ունի հովաւկան ցուպ,
 Բայց նորանով փսրում է գուփ.
 Որ կաճատե իւր կանգնումն,
 Բայց յարատե դլորումն:

Ի՞նչ է արդեօք մտածում նա,
 Որ անուանուում է փառաբան,
 Բայց շահախնդիր, ստաբան.
 Որ քիչ հասկանում, շատ խօսում,
 Բայց խեղճերին մէկ մէկ օրսում.

Որ ինքը իւր վերայ անյոյս,
 Բայց տալիս է շատ մեծ մեծ յոյս.
 Որ ասում է կարգն է այսպէս,
 Բայց կատարածը այլապէս.
 Որ վարձը կանխիկ ստանում,
 Բայց գործը յետոյ չէ տանում.
 Որ ինքն անձանօթ օրէնքին,
 Բայց մեղադիր հանգամանքին.
 Որ պատրաստում է սուտ վկայք,
 Յափշտակել օտարի կայք.
 Որ միշտ խարդախ ճանապարհով,
 Կամի առնել կեանքն ապահով.
 Որ իւր բոլոր աշխատանքը
 Է մեռցնել խղճմտանքը.
 Որ այսպիսի մի գործավար
 Մի օր կերթայ ներքին խաւար:

Ի՞նչ է արդեօք մտածում նա,
 Որ քննիչ է և դատաւոր,
 Բայց դատերն են վտանգաւոր.
 Որ ձեռին միշտ գիրն օրինաց,
 Բայց գործ դնում ըստ իւր կամաց.
 Որ պատկեր է թագաւորի,
 Բայց կուսակից մեղաւորի.
 Որ յայտնի չէ սիրում կաշառ,
 Բայց գաղտնի այն իւր լաւ պաշար.
 Որ դատապարտում մի անմեղ,
 Բայց դուրս գալիս ինքը չքմեղ.
 Որի միայն պսակն ու վարձ
 Յաւիտենից կորուստն անդարձ:

ԳԻՒՂԱՅՈՒ ՎԻՃԱԿՆ ՈՒ ՈՂԲԸ

Աղքատ, թշուառ գիւղացին
 Ի խնդիր պատառ հացին
 Աշխատում է զօրն ի բուն
 Եւ կէս գիշերը անքուն:

Նա սև հողին չէ խաբում,
 Սերմը տալիս է ինքը.
 Նա բերում է տուն թափում
 Իւր ճակատի քրտինքը:

Եղբ բարձած հօ, հօ, հօ,
 Յորեն, գարի կամ հաճար
 Տանում է մօտիկ քաղաք,
 Հանել այնտեղ ի վաճառ:

Ո՛չ զէնք ձեռին, ո՛չ վահան,
 Ո՛չ սրտումը դող մահուան,
 Այլ ուսն առած փայտ բարակ,
 Անցնում է դաշտից արագ:

Գնաս բարով, խեղճ Գիրգոր,
 Ճանապարհդ լաւ դիտէ,
 Թէ արեդ ո՛ր կմտնի,
 Այդ միայն Աստուած գիտէ:

Աւազակն իր ուղած տեղ,
 Քաղաք մտնես և թէ գեղ,
 Դաշտում լինիս, թէ սարում,
 Իր վատ պաշտօնն է վարում:

Ուրեմն նա անարգել
Պատրաստ է յափշտակել
Եղբւրեանս կամ անբեռ.
Թէ քաջ ես, կանց դու անմեռ:

Թէ չէ, վա՛յ քո սև օրին,
Վա՛յ քո խեղճ որբուկներին.
Վա՛յ քո պառաւ, ալեոր
Որդեկորոյս հօրն ու ժօր:

Օր կանցնի եւ օր կգայ,
Աշխատաւոր տուն չի գայ.
Սուգ ու շիւան, լաց ու կոծ
Բոլոր սրտեր կանեն խոց:

Ի՞նչ տխուր այս տեսարան.
Մեծ, փոքր շարան շարան
Նստած ողբ են յօրինում,
Որ լսող չի դիմանում:

Ա՛խ Գիրգորիկ, Գիրգորիկ,
Ի՞նչըխ ապրինք սգուորիկ,
Արի դու չուր լուսաբաց
Թաղի քու խէր ու մէրիկ:

Գիրգորիս արև խաւրաւ,
Էնոր տուն խիմքից աւրաւ.
Մեռնիմ ջիւան արևին,
Էն անյայտ գերեզմանին:

Ա՛խ, որդի ջան, քոռնամ ես,
Քեզիկ թմալ մոռնամ ես.
Մախը տանի ինձպէս խօր
Քեզիկ կուրսի, դըռ կամ ես:

Մեղայ քեզ, տէր, քեզ մեղայ,
Խաղար բերան, քեզ մեղայ.
Որդուս ձեռաց բուռ խողին
Յօրի ես արժան չեղայ:

Խող հենց ինձ պէս ժօր գլուխ.
Սրտէս չանցնի էս դառ ծուխ.
Տարէք զիս ծով թալեցէք,
Դառն աշխրբից խալսեցէք:

Ա՛խ, լերդ իմ մէջ տրորվաւ,
Միրտս ու ջիգեարս խորվաւ.
Սև էղնէր էն օրուան օր,
Որ մէրիկս ինձ ծունկ չօքաւ:

Ա՛խ, Գիրգորիկ, Գիրգորիկ,
Չօրնայ քու անբաղդ քուրիկ.
Ա՛խ, որ քարի տակ թաղուար,
Քեզնէ մեզ խասրաթ թողար:

Ա՛խ, Գիրգորիկ, Գիրգորիկ,
Աշխատաւոր իմ էրիկ.
Քեզիկ ղուրպան, քեզ հէյրան,
Ո՞ր ջուր ընկնի քու կնիկ:

Ա՛խ, Գիրգորիկ, Գիրգորիկ,
Մեզի շատ սիրող հէրիկ.
Վճիկ կպախայ ըստով դէն
Քու զաւկներ մանտրտիկ:

Ա՛խ, Գիրգորիկ, մեր դրկեց,
Թշնամին քեզ դո՞ր խրկեց.
Ա՛խ, վա՛խ, դու որ թեխ գացիր,
Քու քիւֆլաթ ջուր թափեցիր:

Խերիք սգաք, ձեզ մատաղ,
Խերիք սրտեր զնէք դաղ,
Խերիք կսկիծ ու մոմուռ
Ձեզ էղնի աղի ճմուռ:

Պակսեց Գիրգորի արև,
Ապրի ճժերի արև.
Էս աշխարհ վո՞վ կմնայ
Ու էն աշխարհ չի գնայ:

Ծնունդ օր մի կմեռնի,
Ձեր գլուխը սաղ էղնի.
Խաբար արէք տէրտրոջ գայ,
Գիրգորի խոքին խոքայ:

Չուր եփ էդպէս ծով բերան
Նստէք, լաք էրան—էրան.
Դէ, փշուր մը խաց կերէք,
Ղուաթ էղնի ձեզ յեքուան:

Թուաւ, գնաց Գիրգորը,
Տան խաստատ սին Գիրգորը.
Աստուած խոքուն օղորմի,
Դուշման պատժի գայ օր մի:

24 Փետ. 1872. Երեւան.

Ծ Խ Ա, Խ Ո Տ

Դարչելի ծխախոտ,
Անպիտան, չնչին խոտ.
Դիտեա դու ճրքան փող
Շինումեա մոխիր հող:

Դիտեա թէ քանի մարդ
Բաղդաւոր, ճոխ, հպարտ
Քո անշէջ կայծով վառ
Արեցիր խեղճ թշուառ:

Քանիսն էլ ստացաւ
Քեզանով թորացաւ
Ու կենաց արեւից
Տարածամ զրկուեցաւ:

Անիծուի քո արմատ,
Չորանայ քեզ պէս բոյս,
Որ քո ծուխ դառն ու վատ
Սիրեց մինչ անմեղ կոյս:

Արդեօք ինչ զօրութիւն
Կայ ձգտող քեզանում,
Որ այսքան մոլութիւն
Շատացաւ աշխարհում:

Ազգերի մեծ մասը
Քո սէրին է գերի.
Ձգում է իւր փնտր
Բայց կամաւ դեգերի:

Թէ հարուստ գործ չածէր
Քո տեսակ թանգագին,
Նա դուցէ մտածէր
Մեծ օգուտ տալ ազգին:

Թէ աղքատ բերանից
Չհանէր քո ծուխը,
Էլ ձմեռն իւր տանից
Չէր պակսի ածուխը:

Թէ գիտուն վարժապետ
Համարէր քեզ անպէտ,
Կապրէր դո՛հ իւր բաղդից
Եւ ազատ թոքախտից:

Թէ որ քեզ ուսանող
Պատանին չսիրէր,
Նա առողջ կաղմածքով
Գիտութեանց կտիրէր:

Թէ գրագիր քո գլանակ
Հաստ ու գէր չշինէր,
Գուցէ մի ժամանակ
Նա հացի տէր լինէր:

Թէ մշակն իւր վաստակ
Չտար քեզ ծախողին,
Նա իբրեւ նապաստակ
Չէր պառկիլ չոր հողին:

Թէ քո դառն հոտից
Միշտ զգուէր կնիկ մարդ,
Կբուրէր նորանից
Հոտ ինչպէս դարնան վարդ:

Թէ քո ծուխ թունաւոր
Կուլ չտար ալեօր,
Նա ամեն իրիկուն
Կունենար հանգիստ քուն:

Մի խօսքով, ով որ քեզ
Իւր գրպանը կածէ,
Նա կողբայ դառնապէս.
Ուստի թո՛ղ մտածէ:

ԷԶՄԻԱԾՆԻ ՀԻՒՐԸՆԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Խեղճ վարդապետ էջմիածնի,
Վաղուց կարօտ կաթ ու մածնի.
Չտեսանէս զվեհարան
Առատ խորտկաց շտեմարան:

Գնձ, խնդրիր ինչ որ կամիս.
Կեանքդ շատ, շատ՝ քանի ամիս.
Համբերելուդ վերջը ի՞նչ է,
Կրկին յաշխարհ պիտի ծնանիս:

Հազար անգամ քեզ եղժևկ, վա՛շ,
Որ լինում ես զուր հալ ու մաշ.
Տեսնեմ ո՞վ է ձեռքդ բռնում
Քո տանն ուտել մի հալալ ճաշ:

Մէկ տան մէջը երբ է լսուած,
Թէ կայ այնպէս կանոն դրուած,
Որ մինն ուտէ լաւ տապակած,
Իսկ միւսը միշտ չոր ցամաք հաց:

Աչքդ լաւ բաց, խեղճ վանական.
Եւ իրաւունքդ ճանաչէ.
Խօսիր իբրեւ այր խոհական,
Թո՛ղ հակառակողն ամաչէ:

Չէ դու որդի ես հարազատ
Սուրբ Աթոռի պէս մեծ տանը.
Խօսիր ուղիղ, խօսիր ազատ,
Որ կարդ ընկնի ամեն բանը:

Քո մտած օրից այդ սուրբ վանք,
Միշտ ունեցել ես աշխատանք.
Ո՞վ քեզնից բան պիտի խնայէ,
Թէ ունենաս ուտելու ջանք:

Երևի ես սխալուում եմ
Յիշելով «աշխատանք» բառը.
Թէ ո՛չ, ի՛նչ կայ, ես այլուում եմ
Տեսնելով քո վիճակ դառը:

Ահա մի չոր կաշիդ մնաց.
Նստիր ու քո սե օրը լաց.
Կամ թէ խօսիր, մինչ երբ լռես.
Բռնութեան դարն անցաւ, գնաց:

Ի՞նչ լռութիւն օտարոտի,
Երբ մեռնում ես դու անօթի.
Իսկ վեհարանում հենց շատ բան
Աւելանալուց կհոտի:

Այն աւետարան քո գրկում,
Որ ամենիս հոգին փրկում,
Մի՞թէ հօրը թոյլ է տալիս
Օձ տալ օրդուն ձուկ խնդրելիս:

Խորթ է այն հայր, և վատ և չար,
Որ տայ հացի փոխանակ քար.
Իսկ հարազատ հայր կբաշխէ
Որդւոց ամեն ինչ հաւասար:

Մտիր վստահ դու վեհարան,
Բաց մէկ մէկ բոլոր պահարան.
Աչքդ բարին տեսնի, հայր սուրբ,
Ի՞նչ չես գտնի սուրբ և անսուրբ:

Կեր սիրածդ ախորժակով,
Եւ ուրախացիր բաժակով.
Գուցէ դէմքդ պայծառանայ,
Նուազ մարմինդ գիրանայ:

Հաւատա՛ ինձ, խեղճ վանական,
Քո եղբօրդ աշխարհական.
Թէ որ տեղդ կնստես լուռ,
Շուտ կհասնես դու մահուան դուռ:

«Որ համբերեսցէ, նա կեցցէ»
Ասաց Յիսուս մեր Փրկիչը,
Այլ «համբերողը մի կեցցէ»
Ասէ այժմ կորուսիչը:

Ձեմ մոռանայ այն կիրակի,
Որ ծառայիդ տուիր հրաման
Գնալ պլան *) վաղվաղակի,
Բերել քեզ կաթ մի փոքր աման:

Գնաց, եկաւ ձեռք դատարկ,
Սրտիս մէջ խփելով թունդ զարկ.
«Տղայ, ինչո՞ւ կաթ չբերիր»,
Յուսահատուած դու հարցրիր:

Ի՞նչ էր տուած պատասխանին.
«Վերակացուն ասաց չկայ,
Հազիւ միայն վեհարանին
Կբաւէ կաթն ամեն օրուայ»:

*) Ներսէս Ե. կաթուղիկոսի օրերում անասնոց գոմերը որ
գտնւում են Ս. Գայիանէի վանքի արևմտեան պարսպին կից, պլանով
չինուած լինելու պատճառով, այն ժամանակուանից պլան ասել և
հասկանալ նոյն շինուածքը սովորութիւն է եղած Եջմիածնի միա-
բանների և թէ դուրսը աշխարհականների մէջ:

Այն ժամանակ յետ ծալելով
Մէջքդ, մի խոր հառաչեցիր,
Եւ տանդ մէջ հիւր լինելով,
Կարծեմ փոքր էլ ամաչեցիր:

Խեղճ կուսակրօն, յիրաւի որ
Դու վատառողջ էիր այն օր:
Հազից էլ ունէիր գանգատ.
Նորա համար կամէիր կաթ:

Արդե՞ք տուել էր քեզ վնաս
Սուրբ Գէորգայ շաբաթապաս
Կամ շաբաթ օր կերպր, ասա,
Սեղանատան շատ հարիւրայ:

Այն հառաչանքդ, պարզ ասել,
Նիզակի պէս սիրտս ծակեց.
Չկարացի էլ բան խօսել,
Խեղդող լացը բերանս փակեց:

Ճարահատեալ տխուր սրտով
Քեզ թողի ու շուտ հեռացայ,
Բայց յայտնել քեզ ցաւս այս թղթով,
Ոչ զանց արի կամ մոռացայ:

Այժմ խնդրեմ տեղեկութիւն.
Տեսնո՞ւ արդե՞ք գլխիդ մի ճար.
Թէ անձնասպան համբերութիւն
Ասում է քեզ «դեռ կնց դադար»:

Եթէ այդպէս, արդ խնդրեմ ես,
Ո՞վ կենդանի դու նահատակ.
Որովհետեւ փոյթ սպասէ քեզ
Գերեզմանիդ մութը յատակ:

Ուստի հայցեա՛ դու ի տեառնէ,
Ձի չար իշխանք յազդէն մերմէ
Ընդ մարմնաւորս և հոգեորք
Բարձցին փութով յայսմ աշխարհէ:

3 Հոկտեմբերի. 1873 Երեւան.

Գ Ա Շ Ն

Իմ սիրելի բարեկամ, աղնիւ Վասակ.
Արդէն օտար կամքի տակ չէ քո հասակ.
Յիշիր այն օր, թէ ինչպէս ձեր յարկի տակ
Մենք միմեանց հետ սուրբ պայմանով արինք սակ:

Ես իմ ուխտիս վերայ հաստատ եմ կանգնած,
Ես անխարգախ սիրում եմ միշտ ուտել հաց.
Թէ քո խօսքն է նոյնպէս իբրեւ սուրբ օրէնք,
Ուրեմն այս դործ վերջացած է, չիք ինչ նենգ:

Ես քո կալուածք կառավարող դործունեայ,
Դու արդիւնքը հանգիստ վայելող գոնեա.
Ես բարի ու չար մարդկանց ձեռքում գործիք.
Դու քո ձեռքը ձգած դեպի մի օձիք:

Ես ի մօտոյ իշխանաբար հրամայող.
Դու ի հեռուստ վեհանձնաբար միշտ նայող.
Ես հետս ունող մեծ գրպան կասկածով լի,
Դու շուտ տեսնող քո քսակն արծաթով լի:

Իմ դաշնագիր քեզ հետ մէկ ու սրբազան,
Ուրիշներից ինձ տրուածը զանազան.
Ինձ հաշուատու քանի՞ անձինք օն և օն,
Բայց քեզ միայն հաւատարիմ Սիմէօն:

1 Յունիսի 1874. Երեւան.

Երեւանայ նոր կազմուող վանահայրական ընկերութեան
նուիրուած «Գողթան մանկսի» երգի ձայնով

Դու ազնիւ ընկերութիւն
Ունեցիր սերտ միութիւն,
Վեր առ բաժակն ու մաղթիր միշտ
Քեզ երկնից յաջողութիւն:

Կեցցէ միշտ ընկերութիւն,
Կեցցէ և սուրբ միութիւն.
Կեցցէ, կեցցէ, ու միշտ կեցցէ
Ընկերութիւն, միութիւն:

Արթուն կ'օց, ուղիղ դատիր,
Լաւը սիրիր, վատն աւիր.
Այնուհետեւ քեզ հետ է տէր,
Յառաջ գնա՛, մի վհատիր:
Կեցցէ միշտ ևայլն:

Յառաջ դէպի քո նպատակ.
Ընկերութիւն չէ կատակ,
Աստուծով քո չար թշնամին
Լալով կընկնէ ոտքիդ տակ:
Կեցցէ միշտ ևայլն:

Ոյժ ստացիր դու յանկարծ,
Տասն տարին է մեծ հարց.
Ազատ ասպարէզ բաց արա՛,
Միշտ կատարիր տարեդարձ:
Կեցցէ միշտ ևայլն:

Ո՛վ Տէր Աստուած դու պահիր
Ամուր կապն ընկերութեան,
Ու միշտ քաղցր աչօք նայիր
Նորա այս սուրբ միութեան:
Կեցցէ միշտ ևայլն:

Նոյն ընկերութեան նուիրուած «Բաժակներ առնունք,
Եղբա՛րք» երգի ձայնով

Նորակազմ Երեւանեան
Բարեմիտ ընկերութիւն
Թո՛ղ կոչուի Արարատեան.
Կեցցէ նորա միութիւն:

Կեցցէ ասե՛նք, միշտ կեցցէ,
Կեցցէ այս ընկերութիւն.
Կեցցէ գոռանք, միշտ կեցցէ,
Կեցցէ սէ՛րն ու միութիւն:

Սա թո՛ղ մինչ տասն տարի
Լինի գործունեայ, արի.
Վերջին օրը քաջապէս
Փառքով դուրս գայ ի հանդէս.
Կեցցէ ասե՛նք ևայլն:

Սա թո՛ղ լցնէ իւր բաժակ,
Որքան ունի ախորժակ.
Մինչև տակը դատարկէ
Ու վատերը անարգէ:
Կեցցէ ասե՛նք ևայլն:

Օրհնիր այս խումբ, ով Աստուած,
 Քեզնով լինի կազմուրում.
 Արդարութեամբ վաստակէ
 Ու քաղցելոց բաշխէ հաց:
 Կեցցէ ասեւր միշտ և այլն:

10 Սեպտեմբերի 1874. Երևան.

Ն Ո Ր Պ Ա Ն Ս Օ

Պարոն պարտնոյ, դերձակ, վարպետ, ուստայ, աղայ
 Մելիքսէթ.
 Նոր հասկացոյ որ քո վարպետն է նախահօր որդի Սէթ.
 Հնութիւնը գովելի է, ամեն տեղ ունի մեծ գին,
 Բայց քո ձեռն հնութիւն հնութեանց, իւր հնութեամբ
 Թանգագին:

Ինչ խոստացար մի թոփ շալից արձակ պալտո դուրս բերել,
 Վերջը տեսար՝ որ մի թիւը սուր մկրատդ է կերել.
 Այս պատճառաւ մի ամբողջ օր բազարն ընկած չափեցի,
 Բայց իսկական կտորիցը ոչ մի տեղ չի ճարեցի:

Ճարահատեալ երկու մանէթ ի դուր ջուրը դրեցի,
 Հազիւ մի հատ գոյնը բռնող կարած վարտիք գնեցի.
 Ինչ և իցէ պակսութիւնը հոգաց նորա մի թայը,
 Իսկ էն միւսը տեսնենք վերջը պէտք է դառնայ ում փայը:

Կամ մկրատիդ շնորհքովը դարձեալ արա ուրիշ թե,
 Կամ թէ գտիր մի մարդ հագնող երկու ոտքով այնպէս ձե.
 Կամ մտածիր նոր մօղայով կարել այնպէս մի գլխարկ,
 Որի անուն հեղինակից կոչուի «Մելիքսէթեան պարկ»:

Այդ նորահնար գլխարկին էլ թէ ուղեհաս թանգ ծախել,
 Պէտք է անշուշտ մէյդանի մէջ մէկ ձողի ծէրից կախել.
 Ու թէ նորա հետ միասին ձագն ու լիֆէն անես քաշ,
 Ահա մի փառաւոր բայդադ, նորա կէս գին քեզ փեշքաշ:

Կամ այս արա կամ այն արա, տես վերջապէս մի չարայ,
 Որ էդ անտէր թայ շալուարից հանես քանի մի փարայ.
 Թէ չէ, հազիր ինքն է տոպրակ, մէկ բերանը պինդ փակիր,
 Աշուղ, դարվիշ անցկենալիս մէկի գլուխը կապիր:

Դիցուք էս էլ չյաջողեց ու ոչինչ չի դոյացաւ,
 Բաս անց անենք էն մի ցաւը, որ է մեծ պալտոյացաւ.
 Էլ ինչ պալտո շնորհակալ եմ՝ քեզանից տասնապատիկ,
 Որ արդարեւ ըստ խոստմանդ աշխարհուս է մի հատիկ:

Երբ էս պալտոն ջրօրհնէքի մօտ օրերին հասցրիր,
 Հազար ու մի դովաւանքով նորան կուս հագցրիր.
 Ու ես թէ քեզ ցոյց տուի բոլոր աւել պակասը,
 Բայց դու դարձեալ պաշտպանելով գովեցիր ամեն մասը:

Երկար խօսելս աւելորդ էր, ակամայ խոնարհեցի,
 Ու վարձդ իսկոյն քսան արծաթ արասին համարեցի.
 Էս պալտոյով ես դուրս եկայ ջրօրհնէքի իսկ օրը.
 Ով տեսաւ, մի պոչ կպցրեց, արդեօք թուեմ ես ո՞րը:

Մէկն ասում էր՝ էդ ինչ բան է, փեշերը կարճ, պոչն երկար.
 Միւսն ասում էր՝ «ո՞վ է տուել էդպէս սիրուն ձե ու կար»
 Մէկն ասում էր՝ «պա՛, պա՛, պա՛, պա՛, ինչ շատ խոս փոթ
 ունի»

Եւ միւսը թէ «այ, հայ, տեսէք, դեռ ուրիշ էլ կոթ ունի».
 Մէկն ասում էր՝ բերա՞վ, ուստայ, ինչ լաւ ձե ես իմացել
 Եւ միւսը թէ «կարծես մէջքը չափաշաղով են բացել».
 Մէկն ասում էր՝ լայնութիւնը շատ է երկարութիւնից».
 Եւ միւսը թէ «էդ կախում է ձեռքի խամութիւնից».
 Մէկն ասում էր՝ ջեբերն ինչ շատ վերեւիցն են բաց արած».
 Եւ միւսը թէ «թիկունքի ծալն ինչքան խորիցն է կարած»:

Մէկն ասում էր ճերմիր ասել, որ պալատը վատ է
կանգնում»
Եւ միւսը թէ «Աստուած սիրես, հանիր, էդ հնց էս հագնում».

Մէկն ասում էր «բարով մաշես, էդ պալատն ո՞վ է կարել»
Եւ միւսը թէ «տեսէք, տեսէք, ինչպէս, խարաք են արել».

Մէկն ասում էր «տողարակի պէս կախ է ընկնում յետեից»
Եւ միւսը թէ «գուզ տեղ չունի, բացի եախիցն ու թեից».

Վերջապէս ով ինչպէս տեսաւ, էնպէս դատեց ու գնաց,
Հազիւ միայն ծոցաձիւրի գաղտնիքը մօտս մնաց:

Ուստայ հիմայ ինքդ դատիր, սրանք ճշմարիտն են ասում,
Թէ չեն հասկանում, զուր տեղը ձեռագործդ են բամբասում.
Թէ կամենաս, էս մարդիկը ցոյց տամ մէկ մէկ, տար սուղը,
Թո՛ղ հաստատեն չափած, ձեւած, կարած պալատիդ փուղը:

Բայց ամենից լաւը, ես քեզ բարի խորհուրդ կտայի,
Որ ուղղակի մեր երկուսի օգտին միայն կնայի.
Այն է՝ վեր սու պալատն ձեռքդ, լաւ քննիր սխալմունքը,
Ու վերջ տալով էս գրուածքին, ուղղիր նորից աչք, ունքը:

24 Սեպտեմբերի 1874- Երեսն.

Ֆ Ո Ւ Ր Գ Օ Ն

Էսիր, խնդրեմ, ճանապարհորդ բարեկամ,
Էսիր, ես քեզ մի օգտակար խորհուրդ տամ:
Վասն զի նա կարէ օգնել ուրիշին,
Ով որ բանի փորձն անել է միանգամ:

Եթէ վռաղ մէկ բան կամ գործ դու չունես,
Մանաւանդ թէ ինքդ էլ շատ համբերող ես,
Ուրեմն ամեն դժուարութեան յաղթելով
Հանդարտ հոգւով փութդօն նստել կարող ես:

Բայց թէ գիտես, համբերութիւն չունիս շատ,
Ինչքան կուզէ, լինիս առողջ տղամարդ,
Իմացիր որ կրեբես անձիդ մէկ ցաւ,
Այն էլ լաւ է, չլինի բարակացաւ:

Պատճառը որ փութդօնի մէջ սեպհական
Կամքի տէր չես, ճանաչիր դու սայլապան,
Որ ուզածի պէս վարում է ինքնիշխան,
Հայ լինի նա, հրէայ, թուրք թէ մալական:

Սրանք բոլորն էլ մէկ մէկուց կամապաշտ,
Կոչտ ու կոպիտ, խտտաբարոյ են անհաշտ.
Ու միաձև են վարվում ամենի հետ,
Ազնիւ լինի, ռամիկ, գիտուն թէ ագէտ:

Փոյթ չէ սրանց, ծառայ ես դու կամ տէր ես,
Հարցիդ կտան միշտ պատասխան սառներես.
Աննչան է սրանց մօտը պատիւ, յարգ,
Կմեղանչեն, եթէ փոխեն սովոր կարգ:

Խնդիր, աղերս, հրաման, երկիւղ սպառնալիք
Սրանց համար ոչինչ, բայց թէ խաղալիք.
Դէ, համեցիր, էսպէս յանդուգն ու վատթար
Մարդկանց հետ դու գնահանվեր ճանապարհ:

Սա ի՞նչ վերայ գրեց քեզի կոչում:
Որ միւսանգամ փութդօնի մէջ չմտնեմ.
Շատ ապրանքով բեռնաւորուած միշտ այս ապր,
Ամենայն տեղ թափառում է ծանրաբայլ:

Երկու օրուան ճանապարհը մի շաբաթ,
Շաբաթուանը դոնէ ամբողջ մի ամիս
Հաշուիր ու գնահատեալիստ յուսահատ,
Ու հպատակ սայլապանիդ, ուր կամիս:

Կամ յանձնը ան ամեն տեսակ նեղութիւն
Ու նրա հետ սահմանից դուրս լուծիւն,
Կամ էժանից թանգ բան չկայ ասելով,
Մի մատնուիր կամաւ դէպի գերութիւն:

Կան թէև շատ անհոգ, անտարբեր մարդիկ
Կամ անձնուրաց գլուխ զրկող մահտեսիք,
Որոնք սակաւ ծախսի համար լուռ ու մունջ
Միշտ ֆուրգօնով ման են գալիս անտրտունջ:

Բայց շատերը զուրկ են այս յատկութիւնից.
Չեն գիմանում չարաչար բարկութիւնից.
Երևի թէ խելքների շատութիւնից,
Կամ թէ կուզես, ասա «պակասութիւնից»:

Ներսէս է քեզ փոքր ի շատէ գրպանդ,
Թո՛ղ ֆուրգօնը, գնա սրընթաց կառքով.
Թէ ո՛չ, խնայիր աղքատիկ գրութեանդ,
Վեր կ'աց, գնա կամաց կամաց դու ոտքով:

Պատասպարուիլ ֆուրգօնի բաց յարկի տակ
Կամ թէ ցրտի, անձրևի, փոթորկի տակ,
Միևնոյն է, կտեսնես դու շարունակ
Հազար ու մի փոփոխական եղանակ:

Յերեկուան մեծ մասը կեղտոտ դփօրներում
Մինչ ձիերն են փութելով դարին կտրում,
Ստիպուած ես տաղականալով դու մնալ,
Իսկ գիշերը ահով ճանապարհ գնալ:

Դեռ շատ տեղ էլ պէտք է ոտով անց կենաս,
Որ ֆուրգօնին փոքր ինչ թեթեւութիւն տաս.
Բայց թէ ձիերն են շատ յոգնած, վաստակած,
Հնազանդուիր տանել բեռդ շալակած:

Թէ ֆուրգօնչին, թէ ֆուրգօնը վերջապէս
Չարչարում են, մարդու կեանքը անում կէս.
Ես չեմ տեսել հսպէս մի սայլ անպիտան,
Որին պէտք է կոչել անհանգիստ տապան:

Որովհետև ինչքան կուզէ աշխատես,
Ինչքան կուզէ տեղդ յարմար պատրաստես,
Արդէն մէկ կամ երկու ցնցում, հերիք է.
Քեզ աւելի վատ վիճակում կտեսնես:

Այս տապանը իւր տեղիցը շարժելիս
Հենց իմանաս՝ սար ու ձոր է փուլ գալիս.
Որոտաձայն դղրդալով, գոռալով
Գնում ընդ քարշ մեծ մեծ քարեր շուռ տալով:

Բոլոր մարմնով տարուբերվում, գեղերվում,
Յետ ու յառաջ, աջ ու ահեակ օրօրվում
Ճռնչալով, ճռճռալով, ճօճալով,
Գլուխ գլխի տալով դանդաղ գլորվում:

Մեծամարմին այս տապանի անդամներ
Ունին ուժգին երաժշտական ձայներ,
Որոնք մէկ տեղ կազմելով խառն օրկեստր,
Խլացնում են մարդու առողջ ականջներ:

Մեկնել բոլոր ձայները առանձնապէս,
Դժուարին է, բաղմամբիւ են ու պէս պէս.
Գուլակոցն է ամենից շատ զգալի,
Ու նորա հետ շառաչիւնը սոսկալի:

Այս տապանը իւր բարձրութեամբ, մեծութեամբ
Պարտաւոր է ամենայն խոնարհութեամբ
Ճանապարհ տալ բոլոր անցնող կառքերին,
Մինչ զի դատարկ փոստայի սայլակներին:

Յառաջ քան թէ մտնել այս տապանի մէջ,
Պէտք է սորվել, ինչպէս առնել ել և էջ.
Հեշտ չէ անփորձ նորա վերայ բարձրանալ,
Եւ անվտանգ նոյնպէս այնտեղից վայր գալ:

Զարմանալի ձևով վեր փքուած գետնից,
Ճանապարհդ փակուած է չորեք կողմից.
Ներքեիցը անխնայով, ձիերով,
Իսկ վերեւից կամարակապ ճաղերով:

Վայ էն մարդուն, որ անվարժ է կամ դանդաղ.
Անշուշտ կերթայ նա իւր տունը ոտից կաղ.
Երբ սա այսպէս պատիժ տուող է սաստիկ,
Նորա բան չէ, ով չգիտէ գիմնաստիկ:

Այս տապանի ճարտարարուեստ հեղինակ
Շատ բաների եղել է հմուտ, տեղեակ.
Ուստի իւր այս ձեռակերտը կաղմելիս
Չէ մոռացել տալ զանազան կերպարանք:

Նեղ յատակից կամաց կամաց լայնանում,
Զորս ակների վերայ մեծ տաշտ ձևանում.
Իսկ նորանից վերեւ բարակ կտաւեայ
Ծածկոցի տակ վանդակաձև բարձրանում:

Ուրեմն, ով դու ճանապարհորդ բարեկամ,
Դարձեալ ասեմ, լսիր, քեզ լաւ խորհուրդ տամ.
Թէ գրպանդ չէ ներում գնալ կառքով,
Գնա ոտքով, խաղաղ, հանգիստ, անվրդով:

3 Հոկտեմբերի 1875. Տիփլիս.



Նուէր Մամուլեանց Տէր Յովսէփին իւր բարեկամ Սիմեոնից

«Գինի շատ կայ, աման չկայ.
Ով իշտահ ունի, բարով գայ»
Ասում է մեր Տէր Յովսէփը
Ու բաց անում խալիսի քէփը:

— Լաւ է ասում տէրտէրը.
Պէտք է լսել պատուէրը.
Ուրեմն եկէք կատարենք,
Շատ խմենք ու շատ պարենք:

«Գինի շատ կայ, աման չկայ,
Ինձ խմելու էլ ջան չկայ,
Բառ հնց անեմ, մոլորուել եմ,
Դարդից էրուէլ, խորովուել եմ:

«Ա՛խ, ո՛ւր ես ջահելութիւն
Յետ դարձիր, տո՛ւր զօրութիւն,
Որ գինու հոգին հանեմ,
Հեշ մէկին մուննաթ չանեմ»:

— Հայր պատուական, դարդ մի անի.
Հէշ մէկին մուննաթ մի անի.
Մենք մեր ոտով ամեն ճաշի
Կգանք, կխմենք, կտանք տաշի:

— Դու քէփդ հենց քօք պահի,
Գինի շատ տո՛ւր, մի խնայի.
Կոնծենք, ասենք՝ Տէր Աստուած
Կարգիդ միշտ հաստատ պահի:

«Գինի շատ կայ, ու տեղ չկայ,
Էժան առայ, ինձ մեղ չկայ,
Աստուած սիրէք, թէ աղբէր էք,
Խնդրեմ առէք չորս հատ բօշկայ»

«Ա՛խ իմ քաղցրիկ լաւ մաճար,
Ին է մնացել վերջիդ ճար,
Որ քեզ խմել տամ մութիւթայ,
Վերադարձ էլ տաք քուֆիթայ»

— Լաւ ես ասում, հոգուդ մատաղ,
Էդ վճիռը կատարիր վաղ.
Չունքի գինին շատ թաղայ է,
Քուֆիթէն նրան լաւ մաղայ է»

— Կեցցես դու, հայր պատուական,
Որ մտածում ես լաւ բան.
Թո՛ղ լինի նոյնպէս ձուկը
Գեղարքունի կամ իշխան»

«Գինի շատ կայ, կարաս չկայ,
Քուռը կածեմ, կարգս վկայ,
Էս ինչ բան էր, որ ես արի,
Վիզը կտորի հենց պատճառի»

«Ա՛խ, կոլոլ կոլոլ բօշկէք.
Գլորուելով ներս եկէք,
Գինին ձեր մէջ մեծ ծապրով
Անցկացնեմ շուռալով»

— Չէ, չէ, Տէր Հայր, չէ հարկաւոր.
Բօշկէն ինչ է, ահա իմ փոր.
Ինչքան կուգես, լից, կտանէ.
Սա է մի անյատակ ջրհոր»

— Աջիդ դուրբան, տէրտէր ջան.
Ո՞վ կիմնայի քեզնից ջան.
Քեալլէս ծակիր, ծապրին դիր,
Լից մինչ վերին աստիճան»

9 Հոկտեմբերի 1875. Տիֆլիս.

ԶՂՋՈՒՄՆ

Ո՛հ, երանի՜ Ձեզ, Տէր Մուշեղ հայրիկ.
Երջանիկ էք դուք, հաղար երջանիկ,
Ըստ որում խղճով, հոգւով ու սրտով
Անդորր էք, հանգիստ, խաղաղ, անվրդով»

Իսկ ես անբախտս մի ծանր յանցանքով
Անզգոյշ, անսանձ լեզուի կրակով
Այրվում եմ, այրվում, չեմ գտնում հանգիստ.
Իմ տկար անձին այս պատիժն է խիստ»

Թէ ինչ պատիժ է, արդէն դուք գիտէք.
Կաղաչեմ մեկնել ինձ մի ստիպէք.
Բայց թէ ասացէք, դեռ պիտի երկնր
Թողնէք՝ որ տանջուեմ այսպէս խղճահար»

Անցեալ կէս տարուան ձեր ապաշխարանք
Ձեզ համար միայն էր քաղցր սփոփանք.
Պատճառ՝ որ անմեղ էիք ձեր գործում,
Ներքին ձայնը ձեզ չէր յանդիմանում»

Բայց ես դուրս եմ խղճի սուր խայթոց,
Լսողներն էլ ինձ առնում են քարկոծ.
Ա՛խ, երբ կգայ օր՝ որ տեսնեմ հանգած
Իմ սրտիս մէջը արծարծւող այս բոց»

Չկայ խղճի պէս ազդու, հզօր բան.
 Ես հասկանում եմ համառօտ այսքան.
 Այլ թող նա մեկնէ սորա զօրութիւն,
 Ով բնազէտ է կամ աստուածաբան:

Երկար ինչ խօսեմ, ով հայր պատուական.
 Չար լեզուն արեց ինձ ձեզ պարտական.
 Այս սխալն իմ կեանքում եղաւ առաջինն,
 Աստուծով նոյնպէս կլինի վերջինն:

Սակայն դժուար է և անտանելի
 Իսկապէս այժմեան իմ դրութիւնը.
 Ընկած եմ մի ցանց անելանելի,
 Ձեզնից է միայն իմ փրկութիւնը:

Բարեկամական պարտք կատարելով՝
 Երեկ դուք եկաք մեր առնն օրհնեցիք.
 Բայց շատ զարմացաք մի խօսք լսելով,*)
 Առ որ ինձ մի լաւ յանդիմանեցիք:

Այդպէս էր արժան, ձեզնից շատ դուհ եմ,
 Ըստ որում տեսիք վարմունքս անխոհեմ.
 Բայց դորա պատճառն էր մի կառավար,
 Որ լաւ չէր սանձել իւր զոյգ երիվար:

Մաղաչափ մնաց, նորա կառքի տակ
 Վերջին շնչումս առնէի կտակ.
 Էս անցքից յետոյ սաստիկ շփոթուած
 Տուն էի եկած, երբ դուք ներս մտաք:

*) Արդէն երկու ժամ յառաջ Տէր Յովսէփ քահանայն տունն օրհնել էր, և ես յիշեցի այս իմ վաղեմի ծանօթ Ղևոնդեանց Մուշեղ քահանային, երբ խաչ ու աւետարանը ձեռքին տուն մտաւ:

Չկարծէք թէ այս չնչին պատճառաւ
 Ուզում եմ ձեզ մօտ ես արդարանալ.
 Քաւ լիցի, ինչպէս մի անխելք պառաւ
 Չեմ կարող մեղքս երբէք ուրանալ:

Այո ես ձեր դէմ պարզ մեղանշեցի,
 Եւ ձեր աղնիւ սիրտ վիրաւորեցի.
 Այժմ խնդրում եմ ես խոնարհաբար
 Ներել ինձ, ով հայր, ողորմածաբար.
 Ներել ի սէր այս ծննդեան սուրբ տօնին,
 Շնորհել թողութիւն ձեր Սիմէօնին:

7 Յունիսի 1876. Տփլիս.

ԻՄ ՄՕՐՈՒՅԸ

Ցանցառ մօրուք, շատերից ես քո գովասանքդ լսեցի,
 Նորտ համար էլ չորս ամիս ազատ բուսնել քեզ թողեցի.
 Ամենայն օր գերիդ դարձած, մեծ խնամքով փայփայեցի.
 Մինչ նորաձև մօրուքների համարեա կարգում դասեցի:

Շիտակն ասեմ, ինձ բաւական ուրախութիւն պատճառեցիր,

Երբ մատնաչափ չանիս վերայ դուրս ցցուելով երկարեցիր.
 Մանաւանդ թէ Թիֆլիզի մէջ ինձ մի օգուտ էլ տուեցիր,
 Որ սափրիչի քերթող ածլուցն ու ծախսիցը ազատեցիր:

Բայց ափսոս, որ այս օգտի հետ ուրախութիւնս կարճ տևեց,

Ըստ որում ով ինձ բարեկեց, քեզ անշնորհք անուն տուեց.
 Մաքուր փրփրրան սապոնն էլ քեզ փափկութիւն չպարգեւեց.
 Բնութիւնը, արդեօք ինչո՞ւ քեզ հետ թշնամաբար վարուեց:

Մի խօսքով դու ամեն տեղ ինձ քեզնով ծաղրածու
չինեցիր.
Բարեկամաց, օտարաց մէջ քեզ հետ խայտառակ արեցիր.
Մէկ տեղ արմատով չորացար, միւս տեղ բուսար՝ բայց
ցանուցիր,
Փշի նման բիզ բիզ կանգնած, ոչ մի ծայրդ չձուեցիր:

Հազար մօլուքներ եմ տեսած մետաքսի պէս բարակ,
կակուղ,
Որը երկար ու որը կարճ, խուճուճ, մուճուճ ու գոյնը թուխ.
Որը հենց խիտ անտառի պէս ծառածառոտուած, բայց
անպտուղ,
Իսկ քո օրինակիդ մէջը ոչ նուրբ թել կար, ոչ դալար ճիւղ:

Մեծ ու փոքր, ով քեզ տեսաւ, իմ երեսին տնազ արեց,
Որը մօտեցաւ, համարեց, որը ձիգ տալով չարչարեց.
Որն էլ սուտ տեղը գովելով՝ իբր սիրտս մխիթարեց,
Ում դիմեցի փափկացնող քեզ մի դեղ ու դարման չարեց:

Էլ ճար չկար, կրկին անգամ քաշ տուի քեզ սափրիչի մօտ,
Նա իւր ձեռքի գուլ ածիլով վեր արեց քեզ ինչպէս չոր խոտ.
Երկու շահին ուրախ ուրախ առաւ, ձգեց մի խոր անօթ,
Ու ինձ էլ չհեծնելը մէկ, վեր դալն եղաւ երկու ամօթ:

15 Ապրիլի 1876. Տփլիս.



ՊՕՂՈՍԵԱՆ ԶՈՒՐ

Դալարագեղ լանջդ սիրեմ,
Հաղարծնի սուրբ վանքի սար.
Որ ծառ, ծաղկունք, աղբերակունք
Խնամես ծոցիդ մէջ հաւասար:

Քանի վտակ քո լանջերից
Փրփրալով թափումես ցած,
Որովք և միշտ կեանք ես տալիս
Շուրջդ պատող օտար աղչաց:

Ներիր, ով սար, չեմ նախանձում.
Առատ ջուրն է նոցա ապրուստ,
Ու քեզ բնաւ չեմ անիծում,
Զի լաւ պարգեւ ես մեզ յերկնուստ:

Բայց ասա, քեզ ինչ կպակսէր
Քաջ Պօղոս հօր գօնէ ի սէր
Բնական կարգով նոցանից մին
Տայիր նորա մենաստանին:

Այժմ այդ ջուր, լանջիդ վերայ՝
Որ հնչելով արագ սողայ,
Ամենեին չէ քո պարծանք
Պօղոսի մատն անդ կշողայ:

Մատն՝ զոր յայդ ջուր նա կորոյս,
Յատակից միշտ տալիս է լոյս.
Ո՛հ, այդ ջուր սուրբ, նուիրական
Թող լինի սատար իմ հոգւոյս:

Լինի ինչպէս հոգւոյս սատար,
Նոյնպէս սրտիս իսկ մխիթար,
Քանի աչքս բաց կտեսնեմ
Նորա ընթացքը անդադար:

Որ քարավէժ իջանելով
Միշտ պտուտէր երկանաքար,
Ու առատ ալիւր հանելով
Աշխատաւորներին հաց տար։
Հայ եղբայրներ, արդեօք չգնայք
Ականատես լինել վկայք։
Այս չէ միայն հայր Պօղոսի
Տասչորս տարուան վաստակած կայք։
Եկէք, տեսէք, շատ գանձեր կան,
Եւ ոչ այսչափ, և ոչ այսքան,
Կան և կացցեն միշտ յաւիտեան
Նովաւ կանգուն յանմահ արձան։
Վառուած սիրովն Աստուածային
Այս եռանդուն մարդն երկրային
Ունի դեռ ևս նպատակ
Թողուլ ազգիս շատ յիշատակ։
Հայաստանում կան շատ վանքեր,
Ոմանք են շէն, ոմանք աւեր,
Զորեքտառան ամօք յառաջ
Վերջիններից մինը սա էր։
Սորան գտաւ հայր Պօղոսը
Թուրքաց խաչանց եղած փարախ,
Հալով գրկեց, երկրպագեց,
Յոյր և ի ծոց հանգչիլ ուխտեց։
Վերադարձաւ Մայր Աթոռը,
Ընկաւ ազգիս հօր ոտքերը,
Յայտնեց սրտի խորին բաղձանք
Գալ դարգարել մաւցուած այս վանք։
Տէր Մատթէոսն Վեհափառ
Լսեց սոյն հօր ձայնի բարբառ,
Յոյժ սիրելով խնդիրն յարգեց,
Տանս Աստուածեան տնտես կարգեց։

Որոյ և իսկ սուրբ կոնդակաւ
Ուրախ յայս սուրբ վայրս եկաւ,
Յորմէ հեռէ մեծ սէր եցոյց,
Տիրոջ տաճար պայծառացոյց,
Զասեմ՝ և զինքն անմահացոյց։

Անհարգատ մարդկանց ձեռքով
Այն ինչ շատ շէն յաւեր դառնան,
Հայր Պօղոսի շնորհիւ այսօր
Փայլին վայրքս նման գարնան։

Սա մէն միայն անօգնական
Ապաւինած Մօր Տիրական,
Արար, առնէ բազում կալուածս
Հաղարծին վանից սեպհական։

Այս կենդանի նահատակի
Անուան հետ և դործ իւր ձեռաց
Թող դարուց դարս յիշատակի
Ի կենդանի Հայ որերաց։

Բայց դարձեալ քեզ ասեմ, ով սար,
Երբէք արածդ մի մոռնար,
Հայր Պօղոսի հարուած դու միշտ
Յիշէ ու կրէ սրտումդ վիշտ։

Որ անձամբ եղաւ քարընկեց,*)
Ինքն էլ հետը ցած գլորուեց
Կուրծքիցդ երկար ձորովն ի վայր,
Ուր արիւնշաղախ կայր, մնայր։

*) Զրի ճանապարհը արգելող ժայռը վառողով կոտորող վարդապետների ճաշելու ժամանակ վանահայր Պօղոս վարդապետը շտապով ինքն է կատարում նրանց դործը և բացուող քարերի հետ ցած գլորուելով՝ ուշաթափ ընկնում մի քանի տեղից վիրաւորուած և աջ ձեռի բոյժ մատի կէսը կտրուած։

Վէմ գայթակղութեան էր այդ քար,
Զոր շարժելու հնար չկար.
Շարժեց շարժողը վերջապէս՝
Ու տուեց մեզ ջուր փրկարար:

«Ո՛հ, հայր Պօղոս, ո՛հ, հայր Պօղոս.
Հոգիդ վասն մեր բարեխօս».
Լալով մշակք աղօթէին
Մարմինն բարձեալ բերէին:

Մահ չէր վճռած այս անմահին,
Որին շատ դորձք կոպասէին.
Իբրեւ քաղցր ի քնոյ զարթեալ,
Երբ տաճարի դուռը բերին:

Թագաւորի մի քաջ զինուոր
Կռուի դաշտումը վիրաւոր
Երբ ընկնում է յանկարծակի,
Ստանում է վարձն արժանի:

Սա երբ աջոյ մատն կորոյս,
Ոչինչ վարձուց չդրեց յոյս.
Այլ աւելի մեծ աշխուժով
Գործերն յառաջ տարաւ ուժով:

Անգնւթ սար դու, բոլոր մարմնովդ,
Ստուար գլխովդ, ստորոտովդ
Հայր Պօղոսին ես պարտական,
Քանի նորին նշխարք դեռ կան:

Սնոր դու, սիրուն զարդարուած սար,
Ամեն սարերից յոյժ խոնարհ.
Վաղն այդ բոլոր զարդերիդ տեղ
Կտեսնուի միայն չոր քար:

Գագաթիդ բազմաճիւղ ծառեր՝
Որ արդ փակում են քո աչեր,
Մէկ ժամանակ կացնաբերան
Կերթան, կդառնան տան գերան:

«Վայ քեզ, խեղճ սար, վայ քեզ, մերկ սար.
Վերջը դու այդ փառքին հասար».
Ամեն տեսնող պիտի ասէ
Ու վատութիւնդ բամբասէ:

Արդեօք յայնժամ պիտի զղջաս,
Պարզ տեսնելով քեզ մերկ, տկուր,
Եւ քարերիդ միջից վազող
Զուր Պօղոսեան ոլոր մոլոր:

Պիտի զղջաս և լսո, որ դու
Չես տուել այդ ջուր կենսատու.
Այլ Պօղոսի հանած բերած,
Որ բուժիչ դեղ է տկարաց:

Ուրեմն յառաջ, վրակ յառաջ,
Փափագողացդ ել ընդ առաջ.
Լէր միշտ յարբումն զովարար,
Առողջութեան մատակարար:

Յառաջ հոսիր միշտ աննուազ,
Ափունքներիդ մէջ վազ ի վազ.
Ծառոց, ծաղկանց ուղջունելով,
Սառն աղբերց հետ միանալով:

Յառաջ հոսիր դու, միշտ յառաջ,
Քեզ օգնական Պօղոսեան աջ,
Ուր որ երթաս, ուր դադարիս,
Մի մոռանար այն անձն քաջ:

Անձնանուէր սոյն պաշտօնեայն՝
Տէր, դու պահեան ինքդ միայն:
Վասն ուրբ տաճարիդ փառաց
Արա զսա երկայնակեաց:

30 Օգոստոսի 1876. Հաղարծին.

ԴՊՐՈՅԻ ՄԱՆԿԱՆՅ ԲԵՐԱՆԻՅ

Ողորմած հայրեր,
Գթասիրտ մայրեր
Բարի էք եկել
Մեր դպրանոցը.
Ձեզ առաջնորդող
Զօրաւոր ոգին
Գիտեմք, է միակ
Ազգային սէրը:

Ձէ այս առաջին
Ձեր այցելութեան
Պատու և արդիւնք՝
Որ վայելում ենք,
Եւ որ փոխարէն
Մեր մանուկ սրտից
Ձերմ աղօթք առ Տէր
Վերառաքում ենք:

Ձեր այցելութիւն
Մեզ մեծ խրախոյս է,

Մեր աշխատութիւն
Ձեզ համար յոյս է.
Այցելէք մեզ շատ,
Այցելէք մեզ միշտ.
Ձեր այցելութիւն
Առանձին եռանդ
է զարթեցնում
Մեր սրտերի մէջ

Դարուց շրջանում
Բիւրաւոր ծնունդք
Ապրել ծերացել
Անհետացել են,
Բայց ոմանք իրանց
Լաւ լաւ գործերով
Պատմող էջերում
Անմահացել են:

20 Մայիսի 1884. Երեւան.

ՀԱՅՐԸ ԻՒՐ ԱՆԳՈՐԾ ՈՐԴՈՒՆ

Ի՞նչ բանի ես, իրդեակ, Մարգար.
Մինչ երբ մնաս դու գիծ ու չար.
Եղիր խելացի ու համեստ,
Ընտրիր քեզ համար մի արհեստ:

Կամ սովորիր այբ, բեն և գիմ,
Որ վերջը դառնաս մեծ հեքիմ.
Կամ աշակերտիր դարբնութեան,
Որ շինես լաւ խով ու գութան:

Որդիք

Ձէ, չեմ լինի հեքիմբաշի.
Կտրել կտան մեռլի կաշի.
Ու չեմ դառնայ նոյնպէս դարբին.
Պէտք է խփել խոփին զարբին:

Հայրը

Ուրեմն ուսիր ձայնից նօտեր,
Որ լինիս դու աւագ տէրտէր:

Որդիք

Ձէ, չեմ ուզում տէրտէր դառնալ,
Ու ամեն օր վաղ ժամ գնալ:

Հայրը

Ուրեմն թող դերձակ Ձաքար
Սովորցնէ քեզ ձե ու կար:

Որդիք

Ձէ, չեմ գնալ ես դերձակի.
Ասեղը մատս կը ծակի:

Հայրը

Ուրեմն տամ քեզ զարգարի,
Որ ծառայես ազնիւ քարի:

Որդին

Ձէ, չէ, ես չեմ ուզում երբէք
Աշակերտել փեշաքարի:

Հայրը

Ուրեմն եղի՛ր դու զուռնաչի
Կամ դափաչի կամ էշակչի:

Որդին

Ձէ, չեմ ուզում ու չեմ սիրում,
Դրանց ոչ մին լաւ փեշակ չի:

Հայրը

Բաս ինչ կուզես, դու, չար տղայ,
Փուշ, անպիտան, վատթար տղայ.
Հիմայ հնց ես գլուխդ ջարդեմ...
Մեղայ քեզ, Տէր, մեղայ, մեղայ:

Որդին

Ի՞նչ ես զուր չարանում, այ հէր,
Արհեստ սորվելու չունիմ սէր.
Լաւ չի լինի, ինքս ինձ համար
Ընտրեմ վիճակ բնութեանս յարմար:

Ես չեմ ուզում մի գործ գործել,
Կամ նորա վերայ մտածել.
Այլ ուզում եմ լինել մեծ մարդ,
Չունել բնաւ ցաւ, վիշտ, հոգ, դարդ:

Լոկ պատուէր տալ, հրաման հանել,
Սմենայն ինչ պատրաստ տեսնել,
Ուտել, խմել, ցնծալ, բերկրել,
Երկար քնել, երկար ապրել:

Ապրիլ, ապրիլ, շատ ծերանալ,
Օր ըստ օրէ զուարթանալ.
Միով բանիւ խաղաղ, հանգիստ
Եւ անվրդով կեանք վարել միշտ:

24 Մայիսի 1884. Երեւան.

Նուէր մեծապատիւ Միքայէլ Արամասեանցին նորա ձեռնով
պատրաստուած գինին վայելող խմբից ու կառավարչից

Կառավարիչ

Շողշողում է կարմիր գինին բաժակում.
Ամբարիշտ է, ով նրան չէ ճաշակում
Բաժակ բաժակի տալով
«Շըխի, չըխի, չըխի, չըխի»
Ներդաշնակ ձայնով:

Խումբ

Այո, այո, ամբարիշտ է, ամբարիշտ.
Հեռու, հեռու մեղնից այնպէս ոգին միշտ:

Կառավարիչ

Հաղար այդպէս «հեռու» կրկնել լոկ խօսքով
Չունի արժէք, պէտք է կատարել գործով:

ԽՈՒՄՐ

Այո՛, այո՛, ճշմարիտ է, ճշմարիտ.
Ճոյց տալ գործով, հնազանդ ենք հրամանիդ:

Կառավարիչ.

Ուրեմն եկէ՛ք, անմիջապէս մենք, մենք, մենք
Մէկ էլ չըխկ, չըխկ անենք բաժակն ու քամենք,
Շըխկ, չըխկ, չըխկ, չըխկ,
Քամենք, մինչև վերջին կաթիլը քամենք,
Մեր սիրելի Միքայէլին կեանք մաղթենք:

ԽՈՒՄՐ

Այո՛, այո՛, կեանք, կեանք, դարձեալ կեանք մաղթենք:

12 Սեպտեմբերի 1884. Երեւան.

ԱԶՔՆԵՐՍ ԼՈՅՍ

Դարունը բացուեց,
Իրան հետ բերեց
Բնութեան զարդեր՝
Ծաղիկներ, վարդեր
Կարմրազդեցիկներ,
Պէս պէս բոյսիկներ,
Դալար ոստիկներ,
Կանաչ թերթիկներ,
Կոկոմ պտղիկներ,
Թաւշեայ խոտիկներ,

Նոր նոր ծիլիկներ,
Ծծկան գառնիկներ,
Խայտող ուլիկներ,
Սիրուն թռչնիկներ,
Ծիծռանց խմբիկներ,
Ծիւ ծիւ ծիտիկներ,
Սուլիչ սարեակներ,
Երգող սոխակներ
Ու դեղձանիկներ.
Այլ և հետ սրանց

Ոմն Սիմոնեանց
Կարապետ անուն
Անընակ, անտուն,
Հաւատքից շեղուած,
Հայերից նեղուած,
Եւ Քոչոյ կոչուած,
Ամենքից սիրուած,
Արքն պատմականք,
Միշտ թափառականք,
Իրանց ծաղրածու,
Նոր հաւաքածու
Ծակ կօշիկներով,
Ծուռ գլխարկներով,
Կէս ասիացու,
Կէս եւրոպացու
Հին հաղուստներով,
Հաստ գօտիներով,

Ձեռաց ցուպերով,
Ուսոց պարկերով,
Մէկը տնքալով,
Շրջագայելով,
Քարոզ կարդալով,
Իւր հաց մուրալով,
Եւ այդ վիճակից
Միշտ բողոքելով,
Իսկ միւսն երգելով,
Գինի խմելով,
Ուրախ պարելով,
Ծափահարելով
Եւ գոհ իւր բախտից
Օրերն անցնելով:

6 Հոկտ. 1886. Վաղարշապատ.

ՀԻՆ ՍԻՆՕԴ

Էջմիածնի Սինօդն Հայոց
Խախուտ, խոնաւ մի շէնք է հին.
Նոյնպէս մօտի հին հիւրանոց,
Ուր հաշիւ չկայ մկներին:

ՀԻՆ ԴԻԻԱՆ ՍԻՆՈԴԻ

Թէպէտ ամեն շէնք սուրբ էջմիածնում
Հնացել, կարօտ են նորոգութեան,
Բայց չես գտնի այդ հների կարգում
Այնպէս հին, ինչպէս Սինօդի Դիւան:

Թէև ընդ ամենն անցել է մէկ դար
Այս տան շինութեան օրից մինչ ցայս վայր,
Բայց ով նորա հին պատկերը տեսնէ,
Հազարամեայ դոլ անշուշտ կկարծէ:

Բոլոր մասունքը այս հին շինութեան
Թէ արդ սրալիսի դրութեան մէջ կան,
Նկարագրեմ ահա մի առ մի,
Զթողլով պակաս եղածից տառ մի:

Երկու սենեկից բաղկացած այս տուն,
Ուր մկներն ազատ բացել են շատ բուն,
Ունի հողաշէն պատեր լայնանիստ
Մինչ երեք կանգուն, բայց ոչ հաստատուն:

Իսկ սոյն պատերի ստուար ծեփերը՝
Որք կօրցրել են իրանց գոյները,
Զրգողութիւնից ուռած, բարձրացած,
Մեծ կտորներով թափւում են միշտ ցած:

Բացուելով այսպէս պատերում խոցեր,
Նրանց մէջ հանգչում են կարիճներ, օձեր
Ու տեսակ տեսակ խոշոր ու փոքրիկ,
Երկար ու կարճիկ վազկան միջատներ:

Սենեակներից մին հողէ յատակով,
Իսկ միւսն էլ փտած, մաշուած տախտակով
Զուրկ են յաւիտեանս և յաւիտենից
Աստուծոյ տուած լոյսից, արևից:

Ըստ որում նրանց դուռն ու լուսամուտ
Բացել է շինող վարպետը հմուտ
Հենց դէպի հիւսիս, կարծես՝ գիտութեամբ,
Որ լինին, որ են միշտ խոնաւ ու մութ:

Այժմ մնում է ցոյց տալ սեպհական
Հարստութիւնը պատմական այս տան
Իրանց իսկական պատկերներովը,
Որք ահաւասիկ կարգաւ յառաջ գան:

Յիսնամեայ հին գործը, մատենք, օրագիրը,
Որք քաղցած մկանց համար են լաւ միրգ,
Հանդերձ իրանց հին մեծ գզրոցներով
Ծածկուած են փոշեայ հաստ վարագուրով:

Մի սանդուղք փայտեայ, բարակ, նեղ, երկար,
Ընդ որ բարձրանալ թէև չէ դժուար,
Բայց ձեռքիդ բռնած մեծ կապոց գործոց,
Գտիր, թէ քաջ ես, իջնելու հնար:

Մի հնոց, ինչ հնոց, հողեայ մի բլրակ,
Որ իւր կեանքումը չէ տեսել կրակ,
Խիստ ուռած, փքուած, կուրծքը ընդլայնած,
Տան կէսը բռնած, կայ անշարժ կանգնած:

Հնացեալ այս տան լաւ դարդն է միայն
Քաջ գործարարի հին ու նոր ոստայն,
Որով ծածկել է առաստաղն ամբողջ
Ու խեղդել բիւրք բիւրոց ճանճ, մոծակ, ողջ ողջ:

Վատ զարդ չէ միայն ծլվլլան, սիրուն
Ծիծեռնակների շինած երկու բուն,
Որ վաղուց նրանք այս տան յարկի տակ
Թողել են ինչպէս մի թանգ յիշատակ:

14 Դեկտ. 1887. Վաղարշապատ.

Ի դիւանապանէ Սիւնդի առ պ. կարգապահն եւ
ծախսարարն դիւանասան նոյն Սիւնդի

Գոհ եմ Ձեզանից, Յովակիմ աղայ,
Որ միշտ հոգ ունիք ընկերի վերայ.
Նոյեմբեր ամսին տաք տեղում ապրել,
Երևի, ինձ համար դեռ ևս վաղ ա:

Յիշում էք արդեօք, յիշում, եղբայր, դուք
Այն հազար ու մի նախատինք ու թուր,
Որ ամառն իմ վերայ սերտ կարկտի պէս
Հենց թափում էիք և ասում այսպէս:

«Այ մարդ, քնիւր ես դու, երկնից, թէ պողպատ.
Միթէ քո անձիդ թշնամի ես վատ.
Մինչև երբ նստես այդ սառն, խոնաւ
Դիւանում, ուր շուն չի ապրիլ բնաւ:

«Հերիք է, հերիք, խեղճ ես, հասկացիր,
Այդ օթեանից շուտով հեռացիր,
Թէ ոչ, դու գիտես, էնպէս իմացիր,
Որ քո գերեզմանդ ինքդ փորեցիր»:

Բայց ընկերական այդ բարի խրատ
Ինձ տալիս էիք այն ժամանակ շատ,
Երբ առատօրէն քրտինքն ինձանից
Վաղում էր արդէն խիստ սաստիկ շողից:

Իսկ հիմայ որ ես նոյն օթեանում
Տալիս եմ շնորհ ու չեմ տաքանում,
Ինքս եմ ամեն օր տաք տեղի համար
Ձեզ դիմում, խնդրում, անհանգիստ անում:

Եւ դուք թէպէտ ինձ մի այլ տեղ փոքրիկ
Առաջարկում էք մնալ մինչ զատիկ,
Բայց հաւատացէք, չհասած մեծ պատ,
Այն տեղ կգտնէ մարդը իւր օրհաս:

Ըստ որում շունի յարմար մի հնոց,
Որի մէջ փայլի վառ կրակի բոց.
Իսկ սորան ներհակ բաց պատուհաններ
Տալիս են ազատ ճանապարհ հողմոց:

Ուրեմն ազաչեմ, դուք մի հնար
Ինձ ազատելու ցրտից չարաչար.
Շուտով տուէք ինձ մի տաք օթեան,
Մինչդեռ չէ արեւ դիւանն իմ դիւան:

23 Դեկտեմբերի 1887. Վաղարշապատ



ՅՈՎԱԿԻՄ ԱՂԱՅ

Հաճութեամբ պարոն ատենադպրի
Այս երկտող նամակ յինէն Ձեզ գրի,
Որպիսին գուցէ և տհաճ թուի,
Բայց ճարն ինչ, գործին պէտք է վերջ տրուի:

Հարկն արդ պահանջէ, եղբայր պատուական,
Ունել զիւանում սեղան մշտական
Հայնութեամբ միայն մէկ և կէս կանգուն,
Իսկ երկայնութեամբ մինչև վեց կանգուն:

Այդ սեղանն այնքան շատ է հարկաւոր,
Որ չէ կարելի ձգել օրէ օր.
Ուստի կ'իսնդրեմ շուտ տալ պատրաստել,
Այնու Սիմօնիդ գործոց նպաստել:

28 Դեկտեմբերի 1887. Վաղարշապատ.

ՅՈՎԱԿԻՄ ԱՂԱՅ

Շնորհեցէք՝ խնդրեմ,
Մի դադ կտաւ հին,
Որ սրբեմ, մաքրեմ
Սեղանից փոշին:

Ձեր Ա. Փ.

Բողոք գրասեղանի ասեմադպրի Սիմօնի

Սրբազա՛ն Հարկ Ասեմակալ

Քսան տարին արդէն անցաւ,
Որ քաջում եմ հազար մի ցաւ
Այս հոգեւոր դատարանում
Եւ թէ դուրսը, այլ տեղերում:

Ո՞ր մինն ասեմ, ո՞րը թողնեմ.
Ձեր ոտների տակի հողն եմ.
Եղէք խղճալոյս կարեկից,
Ազատեցէք ինձ տանջանքից:

Աշխարհումը ամեն մի իր
Ունի իւրեան վիճակն ընտիր.
Իմս էլ այս էր, որ գրէին
Ու ջնջէին իմ վերայ գիր:

Սակայն հետս վարուել են խիստ
Ու չեն տուել բնաւ հանգիստ.
Ուր որ ասես, քաշքաշել են,
Տանջել են ինձ ու մաշել են:

Երբ մեռել է մէկ միաբան,
Տարել են ժամ վասն օծման՝
Դադաղ բարձողն եղել եմ ես
Մինչ ի տեղին նորա թաղման:

Երբ մէկն ունեցել է հաճոյք
Պատրաստել իւր տանը խնձոյք,
Բաժակների հարուած պէս պէս
Կրող սեղանն եղել եմ ես:

Երբ ուզել է մէկը մի մեկս
Խփել ձեռքը չհասած տեղ՝
Նորա ոտից ես յենարան
Նզել եմ մինչ գործի վախճան:

Երբ բացուել են շատ սեղաններ
Էջմիածնի հիւրանոցում,
Կատարել եմ և ես իմ գեր
Դանուելով նրանց միջում:

Երբ քնել է սաստիկ արբած
Դիւանատան հերթակալը՝
Ես եմ եղել մինչ լուսաբաց
Նորա ճըռռան մահճակալը:

Միով բանիւ քսան տարի
Չեմ տեսել ես օր ու բարի.
Երբ չեն դրել իմ վերայ դիր,
Շինել են ինձ էշ բեռնակիր:

Իսկ այժմ թէ ինչո՞ւ համար
Իբրեւ անպէտ ու անյարմար
Ընկած եմ դուրս անարգաբար,
Յայտնեմ ահա խոնարհաբար:

Երբ ես վերջին անգամ, ոչ վաղ,
Տուի հողին մի այլ գաղաղ,
Դարձայ, չառին ինձ իրանց մօտ,
Իբրեւ բուրոյ մեռելի հոտ:

Ես սկսայ ինձ պաշտպանել
Եւ նրանց էլ ապահովել
Ստելով, ոչ նոյն իսկ դիակ,
Այլ թէ դադաղն էր յիմ շալակ:

Մանաւանդ որ չէր իմ մեղս.
Ես կուզէի մնալ տեղս
Որպէս սեղան միշտ դրութեան,
Քան թէ հասնել այս դրութեան:

Շատ ասացի, շատ կրկնեցի,
Ոչ որ չեղաւ ինձ ունկնդիր.
Մէկ էլ յանկարծ այս լսեցի
«Մահակ, սրան տար, դուռը դիր»:

Եւ դուք, ով տեարքդ հողւորք,
Արդարասէր քաջ դատաւորք.
Տեսնում էք իմ այս խեղճ վիճակ,
Բայց ցուցանում ձեզ անդիտակ:

Ուրեմն այս է վարձն արժանի
Աշխատասէր ժիր մշակի.
Ուրեմն այս է քսան տարուան
Ծառայութեան իսկ յոբելեան:

Ողորմեցէք, արդ աղաչեմ,
Ձեր սուրբ գարշապարը պաշեմ.
Թէ ոչ, կորած եմ յաւիտեան,
Ահա ասիկ իմ վերջին բան:

11 Յունիսի 1888. Վաղարշապատ.



Թ Ա Ն Ա Ք

Յայտնի լինի ամենեցուն,
Որ Սինօդի դիւանատուն
Ձգայ ամեն իրաց սղութիւն
Իսկ թանաքի առատութիւն:

Նորա ամանները բոլոր
Թէ մեծափոր, թէ փոքրափոր
Ամեն առաւօտ իրիկուն
Լցվում են թաթաղուն, զեղուն:

Սեղանների երես ու տակ,
Սենեակների բոլոր յատակ
Կարծես բղխում են շարունակ
Անհատ, աննուաղ սև թանաք:

Երբ պէտք լինի քեզ գրել գիր,
Գրիչդ ուր կուգես, թաթախիր.
Աչքդ խփած լինի թէ բաց,
Ուղածդ կառնուս անկասկած:

17 Մարտի 1888. Վաղարշապատ.



ԿԱՏՈՒՆԵՐԻ ԱՄԱՐԱՆՈՅ

Ընթերցող, պարոն դատաւոր,
Խնդրեմ զգատ պատշաճաւոր.
Վանքումը կան մեծ մեծ կատուք,
Որոնք բնաւ չեն բռնում մուկ.
Այլ խցերում ուտում միս, ձուկ,
Ինչպէս, կարծեմ, գիտէք և դուք.
Քաց յայսմանէ կաթն են լակում
Ու կուշտ փորով խաղում բակում,
Եւ հենց այս իսկ ժամանակում
Ամենքն իրանց դռներ փակում,
Հանգստանում են տնակում.
Կատուններն էլ սովոր չուաքում,
Չեն դիմանում դուրսը տաքում,
Ուստի միմեանց շուտ հաւաքում
Գալիս արխիւս են բնակում,
Իրանց կերածը դատարկում,
Որի ամենաթունդ հոտից
Մինչ զի մկներն են սատակում
Ու ծեփերը որմոց ճաքում.
Բաս մարդու գլուխ հնց չի տրաքում:

20 Յուլիսի 1888. Վաղարշապատ.



ՍԱՐՍԱՓԵԼԻ ԵՐԱԶ

Փետրվարի ութ գիշերն երազում
Տեսի հաւաքուած սատանայ բազում
Դիւանի շուրջը, որոնցից ոմանք
Այս կողմ և այն կողմն էին վազվազում:

Խիստ սարսափեցայ ու զարհուրեցայ,
Յետոյ դառնալով փախչիլ կամեցայ,
Բայց խսկոյն մէկը անիծուածներից
Հասաւ, պինդ բռնեց իմ բազուկներից:

Ո՞րք երթաս, ասաց, այդպէս շտապով.
Քեզ ենք սպասում մենք այստեղ խմբով.
Դէ էլ մի նայիր ապշած, շուարած,
Ե՛կ դուռն արխիւիդ այս բոպէիս բաց:

Լեզուս կարկամեց, խօսիլ չղօրեց,
Ոտքերս թուլացան, յառաջ չընթացան.
Չիմացայ թէ ինչ արեց սատանան,
Յանկարծ ինձ գտայ արխիւի դրան:

Տեսնեմ, ինչ տեսնեմ այստեղ, տէր Աստուած,
Անթիւ մեծ պստիկ սատանայ շարուած
Դետնի երեսին պատերի գլխին
Այլակերպ, անկերպ, սև սև մին քան մին:

Ո՞վ էք, ուստի՞ դայք և ինչ դուք կամիք,
Մեծապատիւ տեարք, քանք, հզօրք, արիք.
Ասացի նրանց խոր գլուխ տալով
Ու բոլոր անձով սաստիկ դողալով:

Սատանանք ենք, ճարտարապետներ,
Պատրաստող պէս պէս տանջանարաններ
Դժոխքի խորքում, մութը աշխարհքում,
Ուր զետեղուած են շատ մեղաւորներ:

Աշխարհիս ամեն մի անկիւն թռանք,
Ամեն շէն ամեն աւերակ տեսանք.
Բայց քո դիւանի պէս անկերպարանք
Արտաքին կողմից ոչ մին չգտանք:

Երեկ երեկոյ մենք դորա մասին
Հաշիւ տուեցինք մեծ սագայէլին.
Նա շատ հաւանեց և արժան դատեց
Հանել նկարը ըստ ձևոյն ներքին:

Այժմ եկել ենք յատուկ այս դործով
Նոյն մեծ իշխանի սաստիկ հրամանով.
Դէ, բաց քո դիւան, որին յար նման
Հարկ է մեզ շինել նոր տանջանարան:

Որովհետեւ պիտ շուտով իջանի
Այնտեղ ու տանջուի մի մեծ մեղաւոր.
Եւ չկայ այժմ նորան արժանի
Դժոխքում մի այլ տեղ յարմարաւոր:

Այս որ լսեցի, մազերս երկիւղից
Կանգնեցին գլխիս փշի պէս ցից ցից.
Հազիւ կարացի ծոցիս դրպանից
Հանել բանալին, կախել դրանից:

Ապա ծունկ չորքած լալով, ողբալով
Խնդրեցի ինձ ևս դժոխք չտանեն...
Վեր կաց, վեր, ասաց, խօսքս կտրելով
Բոլորից խելօք ու մեծ սատանէն:

Վեր կաց, դուռը բաց ինքդ քո ձեռքով,
Դժոխք գնալը լինում է գործքով:
Դրախտն էլ հենց նոյնպէս, այդ դու լաւ գիտես:
Մենք անիրաւ չենք մարդիկներ լինելու:

Այլ մենք ընտրում ենք բարին ու չարը
Ու վերջինն ածում ներքին խաւարը,
Ուր լիցի լալ և կրճել ատամանց
Մշտնջենաւոր, անվերջ և անանց:

Վայ, վայ, Տէր Աստուած, մտքումս յիշեցի,
Սրա մեզ բարի, էս ինչ լսեցի:
Միթէ մարդիկը անիրաւ են՝ չար
Սատանաներից, ու խղճով տկար:

Յետոյ ձեռքս առի բանալին դրան,
Որ բանամ դիւան, միտս եկաւ մի բան.
Ասացի, խնդրեմ, թոյլ տաք ինձ դնալ
Նախ իմ մեծերից առնուլ հրաման:

Դէ, քսան րոպէ քեզ շատ ժամանակ,
Զիցէ մեզ հետ դու անես խաղ, հանաք:
Իրաւանց թէև ընդդէմ չենք դնալ,
Բայց նոյնն էլ պահել մենք յետ չենք մնալ:

Վազեցի իսկոյն Ատեանը մտայ,
Դեռ վաղ էր, այնտեղ ոչ ոք չգտայ,
Դիւանատունը շտապ դիմեցի,
Ատենադպրին անցքը պատմեցի:

Դը ... դը ... դը ... հնչեց ու լեզուն կապուեց.
Զեռքի նշանից միայն իմացուեց,
Որ կուգէր ասել «գնա՛, դուռը բաց»,
Թող լինի նրանց կամքը կատարուած:

Մի ակնթարթում թռայ այն տեղ ես,
Մտէք պատրաստ է, մտէք, ահա ձեզ,
Ասացի նրանց դուռը բանալով,
Ընդ որ և մտին աղաղակելով:

Այ, այ, այ, ընկերք, շատ ուրախանանք,
Շուտ առնենք նկարն ու շուտ հեռանանք.
Այսպէս մի օթեակ խաւար դժոխքում
Անշուշտ կունենանք առաջին կարգում:

Այո, ուղիղ է, ձայն տուին լսողք.
Այս տեղ էլ չկայ լոյս, արևի շողք.
Եւ զարմանք մի մեծ, որ մարդոց ձեռքը
Քան զմեզ ճարտար շինում են դժոխք:

Այս ինչպէս պատեր, պատուհան, դռներ,
Քանի՜ հազար ծակ, խայթողաց բներ,
Ինչպէս անսպառ գետնի թացութիւն
Ունող խիստ նեղիչ բնաւորութիւն:

Օ՛, տեսէք, օդն էլ ինչ ծանր է, ճնշող,
Մեղաւորին լաւ հալող ու մաշող.
Շուտ ամեն մէկս գծենք մի մի մաս.
Մեզ է սպասում Սադայէլեան դաս:

Ե՛կ, խեղճ մարդ, ձայնեց ինձ մեծ սատանայն.
Այս դժոխքից յետ չէ քոյդ դժոխքն այն.
Գնա՛ համարձակ, առ արքայութիւն
Եւ գտիր ընդ միշտ քեզ հանգստութիւն:

Ո՛ղջ լեր, ասացի ես լիաբերան
Եւ խոնարհաբար մատուցի իրան
Նոյն իսկ դիւանի նկարագիրը,
Որ գրած էի անցեալ ձմեռան:

Իսկոյն բաց արեց, բարձրաձայն կարդաց
 Ի լուր աշխատող բոլոր ընկերաց,
 Որք իրանց ձեռաց գործը թողնելով,
 Ծափահարեցին աղաղակելով:

Այ, ինչ լաւ, ինչ լաւ, բանը վերջացաւ.
 Այդ գրով արդէն մեր թերին լցաւ.
 Շտապենք գնալ շէնքը ձեռնարկել,
 Մեծ յանցաւորին այն տեղ բանտարկել:

Դէ, մնաս բարով, ո՛վ դու բարի մարդ.
 Էլ չենք տեսնուի, թռչում ենք մենք արդ.
 Ի սանդարամետ առ մեր հզօր պետ,
 Պահանջած գործը տանելով մեզ հետ:

Հենց այս լսեցի, գետինը թնդաց,
 Դուռը դղրդաց, օդը որոտաց.
 Բարձրացան ի վեր սոսկալի ձայներ,
 Յանկարծ զարթնեցի, տեսայ երազ էր:

8 Փետրուարի 1889. Վաղարշապատ.



ՏԵՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԳԼԽԱՐԿԸ

Գլխարկ ասեմ, ինչ գլխարկ.
 Մի ահագին մօրթուց պարկ,
 Որի մէջ բաց ի գլխից
 Կան շատ բաներ ո՛չ դատարկ:

Ջարմանալի այս գլխարկ
 Արտաքին ձեռքն անարգ
 Ունի ներքուստ առանձին
 Պահեստների սարգ ու կարգ:

Սրանք են հին կոնդակներ,
 Նամակներ ու մուրհակներ,
 Մանաւանդ ճիւղագրութեան
 Զանազան օրինակներ:

Նոյնպէս է այլ թղթովք լի
 Այս գլխարկ զարմանալի,
 Որին մարթ է սոյն առթիւ
 Կոչել շարժական արխիւ:

Մեծ ծանրութիւն է կրում
 Գազաթը խեղճ տէրտէրի,
 Ուստի ծոցումն է պահում
 Մի մասը այն թղթերի:

Միայն գովելին է այն,
 Որ ուղածդ առժամայն
 Հանում է նա գրպանից
 Կամ շարժական դիւանից:

Երանի՜ թէ այս տողեր
 Գրողին շուտով յաջողէր
 Տեսնել Սինօդում մի օր
 Այնպէս դիւան կարգաւոր:

13 Սեպտեմբերի 1889. Վաղարշապատ.



ՀԱՐՈՒՍՏ ՄԱՀՏԵՍՈՒ ԽՐԱՏԸ ԻՒՐ ՄԻԱԿ ՈՐԴՈՒՆ

Պետրոս, սրգի, լաւ նշան չի, որ դու շուայլ ես ձեռնաբաց.
Ձեռնաբացի վերջն է ման դալ ոտաբոբիկ ու գլխաբաց.
Ես տեսել եմ իմ աչքովը հազարաւոր օրինակներ.
Թէ չես ուզում մեռնել քաղցած, փողի հետ միշտ բարեկամ
կ'անց:

Լսիր, սրգի, ինչ ջահել որ ականջ անի մեծի խօսքին,
Նորա տաշտից չի պակսի հացն ու գրպանիցն արծաթ, ոսկին.
Բայց ինչ ջահել որ մեծանայ ինքնագլուխ ու անխրատ,
Իմացիր որ վերջի օրը նորա համար կլինի վատ:

Չունի մէկը էս քաղաքում քո հօր չափով մալ ու դովաթ.
Բայց տեսել են կերակրուած նորա տանը մի խեղճ աղքատ.
Օղորմածիկ հէրս, սրգի, պատմեց մի օր ինձ մի հեքաթ,
Ասեմ, լսիր ուշի ուշով. էս հեքաթի օգուտն է շատ:

Մի մարդ ունէր երկու որդի, մէկը շուայլ ուտող, խմող.
Միւսը ցամաք հացով ապրող, սաստիկ ժլատ ու փող սիրող...

Որդին հօր խօսքը ընդհատում է

Ձէ, չէ, հայրիկ, էլ մի պատմի, չեմ հետևի ես էն միւսին.
Նա յատկապէս ծառայել է հօգւոյ և մարմնոյ փեսային.
Տանջանքով փող է ամբարել, կեանքը քաղցին զոհ է տուել,
Որ էն կեանքում դատապարտուի անձնասպանի հետ միասին:

Հայրը վճացած ասում է

Լսիր, սրգի, հեռու չերթանք, քո քեռին էլ քեզ պէս
ապրեց,
Կերաւ, խմեց և ում ասես, միշտ կերցրեց ու խմցրեց.
Բայց վերջը ինչ վիճակի մէջ ողորմելին մեռաւ թաղուեց,
Ինքդ նոյնպէս շատ լաւ գիտես, որ պատանի փող չթողեց:

Որդին յօստահատուած իսկոյն դուրս է ընկնում, ըն-
կերներին որոնում, մի քանիսին դռնում, ճաշարան տանում,
նրանց հետ միասին լաւ ուտում, խմում, յետոյ այն տե-
ղից գինետուն գնում, մի տկճոր լիքը գինի դուրս բերում,
նոյն ընկերներով տուն վերադառնում, խմելով, պարելով,
այսպէս երգելով.

«Ձկայ, չկայ գինու նման
Աշխարհումս ուրիշ լաւ բան.
Դա է միայն, դա է միայն
Ամեն ցաւոց դեղ ու դարման»:

Ընկերները շարուած դրան, ինչ որ մի բան իմանում
են, իրար երեսի նայելով, իսկոյն և եթ հեռանում են,
իսկ Պետրոսը խմած, արբած, տկճորը պինդ պինդ գիրկն
առած, տուն է մտնում աչքերն ուռած, դռնում յանկարծ
հայրը մեռած, ինքն էլ մնում ապշած, սառած:

12 Մայիսի 1890. Վաղարշապատ:

ՄԻԱՅՆ ԻՒՐ ԱՆՁԻՆ ԲԱՐԻՔ ՅԱՆԿԱՅՈՂԻՆ

Յանկացածդ մէկ չի, տասն ու մէկ չի, մարդ.
Ո՞ր մին լցուի, պատասխանիր դու ինձ արդ.
Ասում ես միշտ լինիս առողջ ու զուարթ
Ու չունենաս քո կեանքումը ո՛չ մի դարդ:

Լաւ ես ասում, բայց դեռ յառաջ դու սրբիր
էս աշխարհի երեսիցը պէս պէս ցաւ,
Յետոյ գլուխդ որ քարին էլ կուգես դիր,
Չի ներգործի ցուրտն ու տաքը քեզ բնաւ:

Աստու՛մ ես շատ երկար ապրես աշխարհում,
Տեսնես ամեն գործիդ յաջող կատարում.
Առատ ոսկի, արծաթ շահիս զօրն ի բուն
Ու գիշերն էլ ունենաս շատ հանգիստ քուն:

Լաւ ես ասում, բայց ամենքն էլ քեզ նման
Որ այդ ասեն, այդպէս փափագ ունենան,
Ու կատարուի ամեն փափագ մի առ մի,
Կգտնես դու մշակ մի, կգայ տունդ ծառայ մի:

Ո՞վ քո բեռներ կշալակի, կտանի,
Ո՞վ քեզ համար դաշտում ցորեն կցանի.
Առանց հացի ի՞նչպէս կարող ես ապրել.
Իսկ գերեզմանդ ո՞վ յանձն կառնու բրել:

Մշակ, ծառայ, աղայ, աղքատ թէ հարուստ
Միմեանց օգնում, միմեանց տալիս են ապրուստ.
Հա՛, ուզում ես ուրիշները քեզ օգնեն,
Բայց քեզանից ո՛չ մի օգուտ չբաղեն:

Ձէ, չէ, դու զուր մի տանջուիր այդ փափագով.
Վաստակիր, կեր, դո՛հ կացիր քո վիճակով.
Ոչ հարուստը կապրի առանց աղքատի,
Ոչ մշակող աղքատն առանց հարուստի:

Դարձեալ կասեմ վիճակովդ դո՛հ կացիր.
Երջանկութիւն դորա մէջն է, իմացիր.
Հարուստ մարդոց շատ են ցաւերն ու հոգսեր.
Այդ ցաւերի մէջ ձգողն է ոսկու սէր:

Իսկ եթէ որ ոսկի դիզողն է ժլատ,
Նորա վիճակն աւելի շատ վատ է շատ.
Հանգիստ, գաղար ու քուն չունի այդ ի՞նչ կեանք,
Որ կրում է դժօխային իսկ տանջանք:

Վայ նրան, վայ, հազար անգամ վայ նրան,
Որ կանգնած է այժմէն դժօխքի դրան.
Լսիր պատմեմ մի այդպիսի ժլատի
Կեանքից մի բան, որ կասկածդ փարատի:

Այդ ժլատը ունէր շատ փող հաւաքած,
Բայց ամեն օր կերածն էր չոր ցամաք հաց.
Ահ ու դողի մէջ էր, յանկարծ մի կորուստ
Չպատահի, ինքն էլ կեանքից տայ փախուստ:

Գիշերները նա բանում էր տոպրակներ
Ու համարում նրանց միջի ոսկիներ.
Մի անգամ էլ՝ գուցէ սխալմամբ, նա գտաւ
Մի հատ պակաս, խեղճ գլխիցը կորաւ:

Էլ այդ թշուառ արարածը ի՞նչ անէր.
Ինչպէս ապրէր, որ ինքն իրան չսպանէր.
Գնաց պարտէզ, պարան ծառից պինդ կապեց,
Վիզը ձգեց, իսկոյն իրան ցած կախեց:

Տեսնող դրացին վազեց, պարանը կտրեց,
Ու խեղդամահ լինելուց շուտ ազատեց.
Թէ ի՞նչ կառնու իւր այդ բարւոյ փոխարէն,
Դժուարին է գուշակելը կանխօրէն:

Երբ սթափուեց թշուառ մարդը վերջապէս,
Դրացու հարցին պատասխանեց նա այսպէս
«Աշխատանքով փող հաւաքել, կորցնել,
Էլ ի՞նչ ապրել, աւելի լաւ է մեռնել»:

Իսկ երբ դրացու աղբու խօսքերն այդ մարդին
Համոզեցին՝ որ կեանքիցը թանգագին
Ոչինչ չկայ, ամեն կորած յետ կգայ,
Բայց թէ կեանքը, միայն կեանքը յետ չի գայ,

Այն ժամանակ տալ աղառարարին
«Շնորհակալ եմ, որ գործեցիր այդ բարին.
Ազատելով ինձ մահից, ազատեցիր և մեղքից,
Բնաւ, երբէք չի անցնի այդ իմ մտքից»:

«Օ՛, մանաւանդ մի լաւ խօսք էլ ասացիր,
Ու նրանով ինձ շատ մեծ յոյս տուեցիր.
Այն է՝ ամեն մի կորած բան յետ կդայ.
Թող իմ փայլուն կորած ոսկին բարով դայ»:

«Ինչ և իցէ, այդ կպարզէ ապագայն,
Միայն թող նոր վրաս չտայ ինձ ներկայն.
Ուրեմն արի, իմ պարանիս գինը տուր,
Որ անխնայ կտրել է քո դանակ սուր»:

6 Նոյեմբերի 1891. Վաղարշապատ.

ՅԱՆԿԱՐԾ ԲԱՆՏԱՒՈՐՈՒԱԾԻՆ

Զուր ես խնդրում, մարդ, դառն է ապագայդ.
Թռչում է արագ երջանիկ ներկայդ.
Այժմեան քո բոլոր ծափ, ծիծաղ, հրճուանք,
Ո՛չ այլ ինչ, թէ ոչ, սգոյ հետեանք.
Այսօր քեզ բաղդը օգնեց դիպուածով,
Վաղը կճնշէ մի այլ հարուածով:

11 Նոյեմբերի 1891. Վաղարշապատ.



ԴԱՏԱՐԿ ՏԿՃՈՐ—ՁԱՏԿԻ ՇԱԲԱԹ ՕՐ

Ի՞նչ բանի ես դու նման,
Երբ դատարկ ես, տկճոր ջան.
Այդ պատկերիդ պէս տգեղ
Չկայ կարծեմ ուրիշ բան:

Երկար վիզդ կռացած,
Լայն կողերդ նեղացած,
Փորդ մէջքիդ պինդ կպած,
Ողջ անդամով չորացած:

Քեզ ամեն մի սիրող հայ
Լալով կասէ վայ, վայ, վայ,
Լաւ էր թէ կոյր ծնէի,
Քան քեզ այդպէս տեսնէի:

Ատելի ես, ով տկճոր,
Ընկած այդպէս ցամաք, չոր.
Սիրելի ես, պաշտելի,
Երբ փորդ է գինւով լի:

Ուրեմն, տիկ, աղաչեմ,
Կռանամ, պորտդ պաչեմ.
Ե՛կ դու, կեանքիս խնայիր,
Փորդ միշտ լիքը պահիր:

Այո, պահիր փորդ լիք,
Պահիր, պահիր մէջքդ զիք,
Տոտիկներդ տուղ, ձիդ,
Ո՛վ տիկ, լաւ տիկ, գեղեցիկ:

Առանց գինւոյ կեանք չկայ,
Ներկայ վիճակդ վկայ.
Խմիր, տիկ ջան, նոր կեանք ան,
Կլկլոցիդ հան բարբառ:

Բերանդ բաց, տկճոր ջան.
Մատաղ գնամ քո անուան.
Բաց, բաց, լցնեմ գինի նոր,
Կրկին կակղի քո չոր փոր:

Ձայնդ կտրիր, այ կնիկ.
Ի՞նչ գաթայ, ի՞նչ փախլաւիկ.
Ինչ պէտք է միայն այս տիկ
Տեսնել շուտով տուզ, լիք:

Չուզեմ ես քո կաթ, մածուն,
Քո սեր, կարագ, կարմիր ձուն,
Նշով, չամչով քո փլաւ
Կամ դրանց սէս ուրիշ լաւ:

Չուզեմ, չուտեմ այն ամեն,
Քո ճաշակի ինչ որ են,
Ինչ որ աղի, թթու չեն,
Ինչ որ դառը, կծու չեն:

Կեր բարեհամ միայն դու,
Տո՛ւր ինչ կծու կամ թթու.
Տո՛ւր տկճորի բաց լուլից
Թափուած գինի փրփրալից,
Որ լաւ զատիկ կատարեմ,
Երգեմ, ցնծամ ու պարեմ:

27 Մարտի 1893. Վաղարշապատ.

ՉԱՏԻԿ, ՄԻ ՀԱՏԻԿ

Բարով եկար, հաղար բարով, սուրբ զատիկ.
Ամբողջ տարուայ տօների մէջ մի հատիկ.

Այո, զատիկ, մի հատիկ,
Որ լոբու տեղ պարգևեցիր մեզ գառը,
Բերիր գարուն, վանեցիր ձմրան սառը,
Ձարգարեցիր անդ, անդաստան, անտառը.
Օ՛հ, ի՞նչ սիրուն, գեղեցիկ տեսարաններ.
Ի՞նչ քաղցր օրեր, թանգ ժամեր.
Փառք սուրբ յարութեան քո, Տէր:

28 Նոյն Մարտի.

ԽՆԱՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ

Ա. գիւղացին ինչպէս խնամախօս մտնում է
Բ. գիւղացի իւր ճին ծանօթի տունը

Բարաջողում, խնամի Գիւր.
Ա՛յ դու հաղար բարով, Նիկո.
Էդ ո՞ր խաչիցն էր սիրտ արիր,
Մեր օջաղը դու ոտ դրիր:

Մրսած կըլնես, դէ, համեցիր
Քուրսու տակը, լաւ տաքացիր.
Հենց լաւ վախտին եկար, Նիկո.
Քեզ հետ կուտենք թաղայ լօքօ:

Հըլա յառաջ ասան, պրծիր.
Էդ ինչ քար էր որ գլորեցիր.
Հալբաթ զաֆիլ փչեց քամի.
Մենք որ տեղից էլանք խնամի:

Նիկո.

Հենց խնամի, որ կաս ու կաս.
Խօսքս հանաք դու չիմանաս.
Եկել եմ դուզ, աղջիկդ ուզեմ,
Քենակալիս մեծ տղին տաս:

Հօ գիտես դու էս սհաթին
Քանի փեշակ ունի ձեռին.
Համ փափախի, համ փինաչի,
Համ դափաչի, համ զուռնաչի:

Գիւն.

Թող էդ չորսից մէկն իմանար,
Ու աւելի լաւ իմանար,
Քան թէ ասեն «հաղար փեշայ»
Էս խօսքի հետ էլ «քեամմայեա»:

Նիկո.

Է՛հ, բան չունես, շատ էլ ասեն,
Շատ էլ խօսեն ու բամբասեն,
Դու բանի տեղ հեշ մի գնի.
Դարդեր մարդու կիսասեն,

Թող շատ փեշակ ես գիտենամ,
Տեսնեմ սոված ճնց կմնամ.
Էս փեշակը թէ չբանի,
Էն մէկէլը, հօ, կբանի:

Ով ինչ կասի, մի հաւատա.
Մենակ զուռնի խերն էլ շատ ա.
Ասենք էդ էլ հենց գէն կենայ,
Տղէն ամեն բանով չէն ա:

Տուն, տեղ, գու, եղ, գոմէշ, գաւթան,
Էծ, ուլ, հաւ, ճիւ ու կով կթան,
Դեռ սրանցից էլ սաւահի
Կայ մի քանի փարայ, շահի:

Էլ ինչ բան ա մնում պակաս,
Հենց էն, որ ինձ դրուստ խօսք տաս,
Գնամ բաղար հարսնացուի
Համար առնեմ շոր խամ ու խաս:

Գիւն.

Լաւ, որ էդքան հունարների,
Էդքան մալ ու մըքի տէր ա,
Ձոկել հարուստ աղջիկների
Միջից տկորն, էդ ինչ խեր ա:

Նիկո.

Էդ մի ասի, ինչ ա էլել.
Քեզ ու գեօրայ մարդ ես դու էլ.
Մի երկու հետ ասան համբայ,
Տես, քանի մարդ կտայ ճամբայ:

Էս գեղի մէջ անուն ունես,
Շատերից էլ լաւ տուն ունես.
Առանց փողի ու բաժինքի
Աղջիկըդ ճնց դուս կհանես:

Լսողները կղարմանան,
Բերանները մեծ կբանան.
Արի, խղճա դու աղջրկան,
Մի խնայի նրանից բան:

Հենց օրն էգուց ճաշից յետոյ
Տղին կասեմ, դնա, Պետո.
Տէրտէրին բեր, մէկտեղ երթանք,
Մատնիք նշանիդ օրհնել տանք:

Երբ գլուխ դայ էդ լաւ հանդէս,
Դէ, արի ու մեր քէֆը տես.
Սաղ օրը հենց պար կըռնենք,
Հա կթռնենք, հա, կթռնենք:

Գիւն. Շատ լաւ, համա հենց ամեն բան
Դու ես ասում, այ աղբէր ջան.
Բա չունի նա հէր մէր ու քիւր,
Պապ, տատ, քեռի, հօքիւր, մօքիւր:

Նիկո. Մէրն էլ ուզում էր դար ինձ հետ,
Ասի «դժար թէ անցնես դետ.
Ծեր կնիկ ես, դու կաց տանը.
Ես կխօսեմ ամեն բանը»:

Գիւն. Բալբայ շիւ ա իմ Շուշիկը.
Բալբայ թիւ ա իմ Նուշիկը.
Ո՛չ տղէն ա նրան տեսել,
Ո՛չ էլ տղի ծեր նանիկը:

Նիկո. Ձէ, մի անգամ ժամ գնալիս
Տղէն տեսել ա Շուշիկին,
Մօրը դադար էլ չի տալիս,
Թէ նա պէտք ա ըլնի իր կին:

Գիւն. Դրուստն ասեմ, աղբէր Նիկո.
Ես չեմ ըլնի խնամի Դիքո.
Շատ մարդիկ ինձ ասել են որ
Հնազանդ չի Պետոն իր հօր:

Դրա համար տանից տեղից
Քչուած կենում ա դուրս գեղից.
Հենց իմանանք իմ տեղ դու ես,
Որ էս լսես, բաս ինչ կասես:

Տես, աղջիկս էլ շատ շահել ա,
Տղէն երսունից աւել ա.
Արի, թողնենք էդ ուրիշ օր,
Կշտացնենք հիմիկ մեր փոր:

Ա՛յ կնիկ, Մաքո, ուր ես, հաց բեր.
Կուգես, դու էլ հենց մեզ հետ կեր.
Հաղարից մէկ պատահել ա
Իմ շատ վաղուցուայ լաւ ընկեր:

Դէ, մօտ արի, մի ամաչի.
Քու հօր տեղն ա՝ ձեռը պաչի
Ու թռի, բեր տաք տաք բոքոն,
Հետն էլ խաշած թաղայ լօքոն:

Բեր բողկ, պանիր, սխտոր ու սոխ,
Մի դաստայ էլ աղ դրած բոխ.
Թէ որ կարաս, ձեռաց մի ճուտ
Էլ խորովի, հասցրու շուտ:

Գինի չկայ, տուր թունդ արաղ.
Խմենք, մեր քէֆ թող ըլնի չաղ.
Կարաղ, մածուն, չալ հաւի ձուն
Մեր ինչ բանն ա, կեր մենակ դուն:

Լաւ չեմ ասում, Նիկո աղբէր.
Մենք էն կուտենք, ինչ մեր պապեր...
Դէ, հէր օխնած, ասա հա, լաւ,
Սուս ես կացել, քեզ ինչ էլաւ:

Ձէ, տեսնում եմ, դու տխուր ես.
Ախր մի տես, մի տես, ուր ես.
Գիքոյի տուն ու ախրութիւն.
Քէֆ արա թէ՛ ինձ կսիրես:

Նիկո. Աստ, խնդրեմ, անց քէֆ անեմ,
Որ քէֆի աեղ չթողեցիր.
Խեղճ քենուս ինչ խաբար տանեմ.
Դէն կնց, սիրտս դու կոարեցիր:

Գիւն. Բաս որ եղպէս, դէ, ինձ լսիր,
Էլի ինչ որ կուգես, խօսիր.
Տղայ չունես, աղջիկ չունես.
Էրնակ հենց քեղ, դարդ էլ չունես:

Ախրը մենք ենք մի հատ աղջիկ,
Մի հատիկ էլ տղայ պատիկ.
Պէտք ա դու հեշտ բան չիմանաս,
Ու զուր տեղը չնեղանաս:

Քեղ ասացի թողնենք եղ բան.
Թողնենք մնայ ուրիշ օրուան.
Միթէ եղպէս շուտ մոռացար
Ու նեղացար, այ Նիկո ջան:

Ձէ որ շատ աղդ ու տակ ունենք,
Օխտը հենց հօր աղբէր ունենք.
Մի քանի օր չէս համբերի,
Նրանց հետ էլ խօրհուրդ անենք:

Աղջիկ, տղայ պսակելը,
Նրանց կապել ու զուգելը
Ծանդը բան ա. ասեց մի օր
Ժամում մեր տէր Առաքելը:

Երկու շաբաթ թող անց կենայ,
Բանից մի բան կատարանայ.
Հիմի նստիր, կեր ու խմիր,
Ձան աստ ինձ ու ջան լսիր:

Դէ, Նիկո ջան, դէ, քէֆդ բաց.
Խմում եմ քու պայծառ կենաց.
Միշտ անպակաս, անհատ տեսնես
Քիսումդ փող, տաշտումդ հաց:

Ուրախ սրտով ու սաղ ջանով
Անցկացնես օրեր բարով.
Աստուած քեղ էլ մի դաւակ տայ,
Մխիթարուես հոգւով, մարմնով:

Նիկո. Օհ, բերան չէր, հենց տաճար էր.
Ախ, ինչ կըլնէր, շուտ կատարէր
Էն ողորմած տէր Աստուածը
Էդ քո բարի խնդրուածը:

Ես էլ հիմի լաւ իշտահով
Կխմեմ հենց էս ասելով.
«Բարով դու էլ քու պապի պէս
Օխտը որդւով սեղան նստես»:

Գիւն. Ասէն, դու էլ լաւ օրհնեցիր,
Թափ էլ թափուղ կուլ տուեցիր.
Համա ձերօնց, մերօնց կենաց
Պուռնկդ առար ու թողեցիր:

Դէ, բան չկայ, վայելիր հաց,
Աստ հիմի ուրիշ կենաց.
Էսպէս քափով ու պարզ արաղ
Ձկայ, ման դաս էս գեղը սաղ:

Նիկո. Ձէ, աղբէր ջան, շատ խմեցի,
Էլ մի ածի, ես հարբեցի.
Հասաւ վախտը տուն գնալու.
Մի քանի բան կայ հոգալու:

Հիմի քենիս աչքը չուած
Սպասում է լաւ խաբարի.
Կնիկս էլ վաղ սուփրէն փռած
Կանչում է, մարդ, ուր ես, արի:

Էլ չի գիտում, կուշտ կերել եմ.
Թունդ արաղով փորս էրել եմ.
Դէ, դու կուիւ, շամաթէն տես...
Չեմ ուշացել ես դեռ էսպէս:

Դէ, Դիքո ջան բարով մնաս.
Խնդրեմ, չանես հասը չհաս:

Գիֆո.

Դէ, Նիկո ջան, բարով գնաս.
Խնդրեմ բաշխես աւել, պակաս:

9 Սեպտեմբերի 1897. Վաղարշապատ.

Քաղցած մուկը աղֆասի քան ման է գալիս գտնել մի բան.
Աղֆասն էլ այդ նկատում է եւ այս խօսքերն ասում նրան

Ի՞նչ ես օրոնում, ինչ ես քրքրում.
Ի՞նչ կայ մեր տանը, այ մուկդ նիհար.
Եթէ սովածմահ լինել չես ուզում,
Շուտով դուրս գնա, տես գլխիդ մի ճար:

Մեր տանից այն կողմ կայ մի հարուստ տուն.
Գնա, այն տեղ դիր մշտական քո բուն.
Այն տեղ ամբարած կան ցորեն, գարի,
Որ վաճառում են ամենայն տարի:

Նոյնպէս մեծ պաշար կայ իւղի, պանրի,
Բրնձի, ոսպի, այլ և մրգերի.
Տանձի, խնձորի, չամչի, ընկուզի,
Նուշի և այլոց, ինչ սիրտդ կուղի:

Դէ, գնա, խեղճ ես, այնտեղ փոր պահիր,
Երկար տարիներ այն տեղում ապրիր
Քո փոքրիկ, կայտառ, սիրուն ձագերով,
Ու այդպիսիք շատ ցկնիր ու ցկնիր:

Օր մի այս մեր տան չորս անկիւնները
Շրջապատեցին ժիր մրջիւնները.
Եւ այնուհետեւ նրանց նշանը
Չտեսանք տանը, ոչ էլ դրանք:

Ուրեմն պարզ է՝ որ լաւ քննեցին
Մեր վիճակն ու շուտ թողին, գնացին.
Նրանց չափով էլ չունես մեկ դու, խեղճ,
Որ գտնես գլուխ պահելու մի ելք:

Ես մշակ մարդ եմ, ունիմ ընտանիք՝
Մի կին, չորս աղջիկ, մի տղայ փոքրիկ.
Սրանց վերայ էլ աւելացրու
Մի քաղցած կառու, մէկ էլ մի շնիկ:

Առաջինները դեռ չեն կշտանում
Ինձնով ձեռք բերած օրական հացով.
Իսկ վերջինները հազիւ են ապրում
Չոր ցամաք հացի սակաւ փշրանքով:

Լաւ իմացիր, մեկ, չեմ հալածում քեզ.
Քո օգտիդ համար ասում եմ յատուկ.
Գնա օր յառաջ տեղդ պատրաստիր,
Առատ պաշարով կեանքդ ապահովիր:

Երևում ես դու արդէն ուժասպառ.
Ձեմ ուզում այս տեղ լինիս շնչասպառ.
Ես առհասարակ պաշտպան եմ եղած
Երկչոտ, խեղճ, անզօր, քաղցած կենդանեաց։

Հնար ունենամ այդպիսեաց համար
Մի ապաստարան կշինեմ յարմար,
Որ ազատ միան տանն փորձանքից,
Թշնամու ահից ու հալածանքից։

Ինչպէս և այստեղ հենց քո թշնամին,
Փորը միշտ քաղցած, որսորդ մեր կատուն
Մի օր քեզ յանկարծ իւր սուր առամին
Ձոհ անելու է, կարեւ փրկուել դուն։

Թէև ամեն տեղ և այն հարուստ տան
Յեղիդ թշնամի շատ կատուներ կան,
Բայց որոնք կուշտ են լի մառաններում,
Քեզ պէս որսերին էլ չեն մօտենում։

Մուկն այս խօսքից յետ անյայտանում է,
Իսկ աղքատն ապշում ու զարմանում է
Թէ ինչպէս իրան առածը լսեց,
Կեանքը վտանգից փրկեց, ազատեց,

17 Սեպտեմբերի 1897. Վաղարշապատ։



ԷԼԻ ԻՄ ՄՕՐՈՒՔԸ

Շատ անպէտք ես, դու, մօրուք.
Քո երեսին հաղար թուք.
Սեից սիպտակ փոխուեցար,
Դարձեալ յարգանք չունեցար։

Քսան տարուց էլ աւել,
Ա՛խ, այն օրիցն է անցել,
Երբ սափրիչին տուեցի
Քեզ ինչպէս չոր ցախաւել։

Այն ժամանակ քո վիճակ
Ծաղրելի էր, խայտառակ.
Ի՞նչ նախատինք չտարայ
Իմ բնութեան հակառակ։

Ընթերցողը գրքուկիս
Արդէն քեզ լաւ իմացաւ.
Այժմ էլ հանգիստ չէ հոգիս.
Գլխիս դարձել ես մեծ ցաւ։

Երկու ամիս դեռ չկայ՝
Քեզ թողել եմ երկարել,
Դարձեալ գտնում չեմ վկայ,
Թէ՛ արժան է քեզ պահել։

Կարծում էի՝ ով տեսնէ
Ձիւնի նման փայլուն քեզ,
Անշուշտ մտքում նա կասէ.
«Շատ փառաւոր մօրուք ես»։

Բայց տես դու իմ վատ բախտը,
Անփոփոխն ու անխախտը.
Ասում են որ դուր չես գայ,
Թեկուզ ընկնես դրախտը:

Ի՞նչ կլինի—ինքդ քեզ
Դարման տանես ու փափկես,
Ուղածիս պէս ծաղուելով
Ինձ թուք մրից աղատես:

Է՛հ, լսողն էլ հենց կասէ
«Դիւիցդ դուրս ես տալիս.
Մօրուքիդ բանը փաս է,
Դա ի բնէ չէ խալիս»:

Բաս օնց անեմ, օւմ դիմեմ,
Որ ինձ ցոյց տայ մի հնար.
Եթէ գրեաց ընդունեմ,
Արդեօք կանէ նա մի ճար:

Գամ, հենց այդ էլ մի փորձեմ.
Վատ չի լինի, ես կարծեմ.
Իսկ թէ եղաւ անյաջող,
Նոր բան էլ ի՞նչ մտածեմ:

Հա՛, դեռ ուրիշ բան էլ կայ.
Այնուհետեւ կմնայ
Ապաւինել երազի,
Որ դեղ ասեն կոշտ մազի:

Բայց թէ և այդ անօգուտ
Անցնի, մօրուք, դու անդուլթ.
Իմացիր, մեծ անէծքով
Կը շրպարեմ քեզ խոր ծով:

Այո՛, ես պինդ ուխտում եմ,
Մինչ աշխարհում ապրում եմ,
Այլ ևս քեզ չթողնել
Իմ երեօին ցից լինել:

Հենց երեկ մեծ խնջոյքում
Շատերն էին անարգում
Ասելով ինձ «ամօթ է,
Ի՞նչ ես գտել այդ մօրքում»:

«Դուրս վերայ՝ եկ, թքիր
Ու միանգամ դէն ձգիր,
Թէ չէ, մեր քէֆ կըքենք,
Իեղձ ես, մէկ մէկ կպօկենք»:

Անշուք մօրուք, լսեցի՛ր,
Էլ չեմ ասում պինդ կացիր.
Գիտես, արդէն ուխտել եմ,
Շուտ կլինիս ցան ու ցիր:

21 Ապրիլ 1898. Վաղարշապատ.

Փ Ո Շ Ի

Ա՛խ, փոշի, փոշի, ձեռքիցդ օւր փախչենք,
Ո՛ւր գնանք հանգչենք, օւր երթանք թագչենք.
Ամեն տեղ ես դու, կաս, մնաս միշտ դու,
Անօգուտ, անշահ, անպէտ իրդ դու:

Վա՛հ, ի՞նչ ասացի, սխալ է կարծեմ.
Ես չփոթուեցայ, մի լաւ մտածեմ...
Անպէտ իսկ այն է, որից չի դուրս գայ
Ո՛չ շահ, ո՛չ ֆրաս... բայց այդպէս բան կայ:

Է՛հ, այս ինչ փորձանք բերեցի գլխիս.
Տեսնեմ, ինչպէս եմ տակից դուրս գալիս.
Թերևս չկայ ոչ մի անպէտ իր,
Դէ, քննիր, զննիր, դէ, ո՞րն է, գտիր:

Աշխարհիս վերայ գոյութիւն ունող
Բոլոր մարմնոց մայր պիտանին է հող.
Ճշմարիտն ասած, այդ մարմինները
Ունին իրանց լաւ յատկութիւնները:

Հնա, ունին նոյնպէս լաւի հետ և վատ,
Բայց դու, ո՞վ փոշի, դու իսկ ես անհատ
Քո բոլոր վատթար յատկութիւնովդ,
Քո փրատակար գոյութիւնովդ:

Սխալ դատեցի, երբ անշահ, անպէտ
Բառեր կապեցի ես քո անուան հետ.
Բայց լաւ էր իսպառ անպէտ լինելիւ,
Քան փրատակար անուն կրէիր:

Ո՞ր մինը յիշեմ քո փրատների՝
Հասցրած մարդոց, անասունների,
Կանաչ տունկերի, դալար բոյսերի,
Նուրբ ծաղիկների, նոր պտուղների:

Ո՞ւր չես մտնում դու, ինչ չես գտնում դու.
Բաց են քեզ համար ամեն փակ դռներ,
Ամեն նեղ ծակեր, քիթ, բերան մարդու,
Աչք, ականջ, կսկորդ, կուրծք, աղիք, թոքեր:

Բայց թէ հենց քեզնից է թոքախտութիւն
Կամ թէ՛ չգիտեմ, այլ հիւանդութիւն,
Ափսոս, բժիշկ չեմ, որ մանրամասն
Ցոյց տայի ես քո տուած փրատն:

Նոյնպէս և ափսոս, որ բնադէտ չեմ,
Որ ճիշտ քննութեամբ քեզ լաւ ճանաչեմ.
Արտաքին կողմից եմ միայն նայում,
Աչքով տեսածս միայն վկայում:

Ուրեմն դարձեալ թող շարունակեմ.
Քո արարքներով քեզ խայտառակեմ.
Ա՛խ, գիտես, ուրքան զղուեցնող ես.
Ձեռքիցս թէ գայ, քեզ լաւ կլծակեմ:

Ախտոտում ես դու ամենայն նիւթեր,
Ոչնչացնում զանազան հիւթեր.
Մաքրել սրբելով դու չես վերջանում.
Պահ մի դնում ես ու վերադառնում:

Ամենաթեթեւ շարժումից շուտ շուտ
Բարձրանում ես դու, անում ել ու մուտ
Մէկ տեղից միւս տեղ շատ արագ, արագ,
Թողլով հետքերդ տեղ հաստ, տեղ բարակ:

Իսկ երբ գալիս են ուժգին հողմերը,
Թռչում ես մինչև կապոյտ ամպերը.
Ծածկում փողոցների, պարտէզների, տների,
Այգիների, դաշտեր, բարձր բլուրների:

Երանի՜ փոքր ինչ ծանր լինելիւ,
Տեղիցդ շուտով վեր չելանելիւ.
Կան մարմինք թեթեւ և արագաշարժ,
Բոլորից միայն դու ես դիւրաշարժ:

Քո այդ օրինակ թեթեւ շարժումից
Փոշոտում են միշտ այս և այն կողմից
Ոչ միայն անշուք խրճիթներ, տներ,
Այլ մինչև անգամ շքեղ պալատներ:

Մի խօսքով՝ փոշի, չոնիս ոչինչ լաւ.
 Իրաւ եմ ասում, չեմ մեղանշում, քաւ.
 Վնասակար ես ոտից մինչ գլուխ,
 Այժմ էլ առաջիս կանգնած ես զինչ ծուխ:

Ձէ, չէ, մարդկային բոլոր հնարներ,
 Բոլոր իսկ դիւտեր ու մեքենաներ
 Ձեն կարող քո դէմ կռուել, քեզ վանել.
 Անշուշտ քեզ յաղթող պէտք է անուանել:

Անջնջելի ես, անսպառելի,
 Ձեա ոչնչանալ ժամից աւելի.
 Այն էլ տներում, մաքրած տեղերում,
 Ապրելով ազատ առաստաղներում:

Իսկ դուրսը տեղ տեղ քեզ հալածողը,
 Գետնի երեսին պինդ կպցնողը
 Երկնքից թափուող անձրևն է մենակ,
 Եւ այդ էլ՝ հարկաւ, մի կարճ ժամանակ:

Ի վերջոյ կասեմ կրկին և կրկին,
 Որ հասցնում ես քնաս ահագին.
 Այո, վստահ եմ, աշխարհ ամենայն
 Անշուշտ կլինի ինձ հետ համաձայն:

19 Յուլիսի 1898. Վաղարշապատ.



ՄԱՐՏԻ ՂԱՆՁԻԼ

Օ՛հ, Օ՛հ, զանձիլ, ջան, զանձիլ.
 Բարով եկար դու ծիլ, ծիլ.
 Քեզ շրկողին ձեռք բերեմ,
 Մատները պինդ համբուրեմ.
 Քեզ էլ տաք տաք գլուխով,
 Նորա կենաց դատարկեմ
 Մի շիշ լիքը հին գինի,
 Որ քէֆս տեղին լինի:

18 Մարտի 1899. Վաղարշապատ.

ՆՈՐ ԲԱՅԱԶԻՏՈՒՄՆ ԵՄ ԸՆՏԱՆԵՑՔ

7 Յուլիսի 1899

Ամսոյս մէկին երևանից,
 Իսկ երկուսին Ելենովկից
 Առաւօտեան մենք դուրս եկանք,
 Ճիշտ կէս օրին այստեղ հասանք:

Յողնած, ջարդուած մինչ իրիկուն,
 Սարքեցինք տուն, մտանք ի քուն.
 Արշալուսին վաղ զարթնեցինք,
 Երեք ֆունտ գառն դնեցինք,
 Կատուն տարաւ ու վայելեց,
 Մեզ ձուկ միայն բաժին թողեց.
 Պէտք է ասել շատ լաւ արեց,
 Զգուշութեան մի դաս տուեց:

Գոհ ենք տանից, տանուտէրից,
Տան տիկնոջից, տան վարձողից.
Մօտ են շուկան, սառն աղբիւրներ,
Բանջարանոցք, ուռենիներ:

Երրորդ օրը ժամ գնացինք,
Արեւատեանց այցելեցինք.
Վարդահաղարեանք չէին ի տան.
Կպարէին հարսանեաց տան:

Մեր ուղեցոյց կոչել կամէր,
Թոյլ չտուինք, ճաշի ժամ էր.
Օրեր շատ կան, դարձեալ կերթանք,
Մեր շատ սիրոյ սղոյն կտանք:

Երեք քրդեր են մտանում
Քարվանսարէն, իջևանում.
Մէկը գիշերն է սպանւում,
Երկուք միւս օրն են բանտարկւում:

Դաշտերն այրվում են արեւից.
Վաղ չեն խմել ջուր անձրեւից.
Ժողովուրդը մատաղ արեց,
Անձրեւ փոքր ինչ շաղահարեց:

Պատարագից յետոյ այդ օր
Խաչ խաչվառով ելան թափօր
Հարուստ աղքատ դասակարգեր,
Սովորական ինչպէս կարգ էր:

Բայց քահանայք չգնացին,
Նրանց մատաղը չօրհնեցին,
Եւ դորանով էլ բոլորին
Իրանց դէմ խիտ գրգռեցին:

Եկեղեցւոյ դասապետը՝
Հայր գործակալ վարդապետը
Միայն գնաց, մատաղն օրհնեց,
Ժողովրդին միթարեց:

Քահանայից այնպէս վարման
Պատճառն էր շատ չնչին մի բան.
Թողում եմ այդ անբացայայտ,
Նուա կլինի աշխարհին յայտ:

Նորա իրանց այդ վարմունքով
Ժողովրդի բողոքանքով
Պաշտօններից դադարեցան,
Արդիւնքներիցն էլ զրկուեցան:

Նոցա տեղը շուտով եկան
Երկու տէրտէրներ գիւղական,
Որոնք կերթան տեղերն իրանց
Վարդավառից երկու օր անց:

Անվայել է քահանային
Նախ պահանջել վարձ պաշտօնին,
Ապա գնալ, կատարել այն.
Չի տանի այդ հասկացող հայն:

Հինգերորդ օրը փութապէս
Արեւատեանց ժիր Յովհաննէս
Ուղևորուեց Տփլիս քաղաք,
Յետոյ լսուեց մի աղաղակ:

Ի՞նչ է, ի՞նչ է, ի՞նչ պատահեց,
Ո՞նք այս հարցին պատասխանեց.
«Արեւատեանց Դաւթի որդին
Դաշնակահար եղաւ դաշտին»:

Եւ արդարեւ կէս ժամ չանցած,
Կողքով բերին, իջուցին ցած,
Իսկոյն հասաւ վերաբոյժը,
Գործ դրեց իւր բոլոր ոյժը:

Չարագործը է մի հպարտ
Եւ անպիտան երիտասարդ.
Օր ու գիշեր որսնեցին,
Հաղիւ դտան, բանտարկեցին:

Չուր չի անցնի բժշկի ջանք.
Վիրաւորեալ շուտ կառնու կեանք.
Վիրաւորող երկար տանջանք
Պէտք է կրէ, չատ են յանցանք:

(Յուլիսի 15)

Հետզհետէ շոքն աւելնում
Է կէս օրին և մեղ նեղում.
Պէտք է տանից դուրս ելանել
Մինչ արևի մայր մտանել:

Մեր սրահում կապած չնիկ,
Որի անունն է տուտուշիկ,
Ամբողջ ցերեկ արևի տակ
Տոչորվում է, չունի բնիկ:

Մոծակ չկայ, այնքան ճանճ կայ,
Որքան ամբողջ գաւառում կայ.
Այս քաղաքը չէինք տեսած,
Շատ գովասանք էինք լսած:

Ասում էին շոք չէ անում,
Փռչին քամով չէ վերանում.
Ամառն այնպէս է անցանում,
Ինչպէս աշունն երևանում:

Ասողները սուտ չեն ասել.
Երաշտութեան շունչն է հասել
Շատ տեղերի և այս տեղին,
Որք կարօտ են լաւ հեղեղին:

Բոլոր մարդիկ՝ թէ այր, թէ կին
Աչքեր ձգած դէպի երկին,
Խնդրում են տալ մի յորդ անձրև,
Տեսնում են միշտ պայծառ արև:

Այդ ջերմեռանդ աղօթողներ,
Արտասուելով աղաչողներ
Մոռանում են ուժեղ քամին
Յորդ անձրևի մեծ թշնամին:

Մի օր երկինք նայեց երկրին
Ու հրամայեց սև ամպերին
Շուտ հաւաքուել, ծածկել արև,
Մի քանի ժամ թափել անձրև:

Երևեցան իսկոյն ամպեր,
Հետն էլ քանի մի կաթիլներ,
Դու ոչ մեռնես, յանկարծ քամին
Քնից զարթնեց այդ ամպերին
Կտոր կտոր արեց, վանեց,
Փռչին գետնից ի վեր հանեց.
Մի քառորդ ժամ այդ երևոյթ
Դարձոյց քաղաք աներևոյթ:

Փողոցներում փռին շատ է.
Ամեն վատից էլ դա վատ է.
Առաւօտից մինչ երեկոյ
Փակուած ենք տան, անձրև ոչ գոյ:

Չորացել են անջուր արտեր.
Շատ սակաւ են ջրարբի խոտեր,
Այն ինչ առատ այդպէս բարիք
Եղել են միշտ ուրիշ տարիք:

Երկչոտ ամպեր հաւաքւում են,
Բայց հողմերից հալածւում են.
Աստուած ինքը գլխայ մարդոց,
Նմանապէս խեղճ անասնոց:

Եկեղեցւոյ դասում մի օր
Տեսի գազաթ մի ալեւոր
Դեռահասակ աշակերտաց
Երգիչ խմբի շարքը մտած:

Ո՞վ է կարծիկ այն ծերունին.
Այդպիսիք էլ պաշտօն ունին.
Հարցի իմ մէջ և ասացի՝
Խմբապետ է, երևի, հին:

Փոքր ինչ յետոյ այդ խմբապետ
Հասակակից ընկերի հետ
Խմբի միջից բաժանուեցաւ
Բաց և ազատ կողմը անցաւ:

Խաբուած էի, շատ զարմացայ,
Պարզ տեսանել ես ցանկացայ.
Մի տղայ իսկոյն ուղարկեցի,
Նրան ժամից դուրս կանչեցի:

Այդ կարծեցեալ ծերունի մարդ
Էր պատանեակ մի շատ զուարթ,
Ամբ տասն երեք նոր լրացած
Քոյրն էլ իւր պէս իսկ ծերացած:

Գլխի հերքը մետաքսի պէս,
Արտևանունք և յօնք նոյնպէս
Սպիտակ են, ոչ մի հատիկ
Չկայ միջին սևահատիկ:

Թէպէտ և կան ուրիշ տեղեր
Շատ շիկահեր երեսաներ,
Բայց այնպիսի սպիտակ հեր
Չունին անգամ ծերունիներ:

Խեղճ պատանեակ բոբիկ ոտքով,
Հին հագուստով, հին գլխարկով
Համեստ կանգնած, ամաչում էր,
Եւ նայում ինձ աչքի տակով:

Իմ կոչելով եկաւ նոյն օր
Տղայի հայր, պատմեց բոլոր
Իւր կեանք, ապրուստ, վիճակ դառն,
Արհեստ թողած, գլուխ խառն:

Եթէ լինէր նորա օրդին
Մի այլ ազգի մարդոյ օրդին,
Մեծ քաղաքում ցոյց կհանէր,
Չեռք կբերէր շատ դրամներ.
Նա էլ կարէ, բայց անճար է:

Մանուկ տղայ մի վեց ամաց
Դեռն է մտնում կամաց կամաց,
Էլ այն տեղից դուրս չէ գալիս,
Հասնում է մայր ողբում, լալիս,
Գլխին տալիս:

(Յուլիս 18)

Շատ բան ի գիր կայ առնելու,
Փամեր պէտք են գործ դնելու.
Այս երկիրն էլ մտել է արդ-
նոր ձեւերով նոր արդ ու զարդ:

Քաղաքակիրթ աշխարհ հեռու
Կայ մեղանից դեռ շատ հեռու.
Կգան, կանցնեն դեռ շատ դարեր,
Այն չի լինի աշխարհը մեր:

Ո՛ւր են նորա լեզու, ուսում,
Խեղճ է երկիր մեր այդ մասում.
Բայց պակաս չէ հագուստներով,
Եւրոպական նոր ձեւերով:

Այո, միայն այդ մի բանում
Հայ նոր սերունդն է զարգանում.
Արականը ոչ այնքան դեռ,
Որքան որ շատ իգական սեռ:

Նա իւր լեզուն պարզ չգիտէ,
Բայց հազնել, վարժ ասել գիտէ
«Շլեւապա, տալմա, պելերինկա,
Եւ ուտօնդա, և մանտիլկա»:

Հարուստ, աղքատ հայրեր, մայրեր
Իրանց փոքրիկ երեխաներ
Այդ ձևով են մեծացնում,
Նորանց վիճակ դառնացնում:

Եւրոպայի մեծ գիտութիւն
Չունի հզօր ազդեցութիւն
Առհասարակ մեր կողմերում
Այնպէս, ինչպէս նոր ձեւերում:

Նորա ազդու այդ իսկ հրաւեր
Շատ շատ տներ կառնէ աւեր.
Լաւ է վարել կեանք պարզ, համեստ,
Ու ձեռք բերել ուսումն, արհեստ:

Ա՛խ, ինչ անեմ, ես ո՛ւմ դիմեմ,
Ի՞նչ հնարներ գործադրեմ.
Վարդապետ չեմ քարոզ խօսեմ,
Փողովրդին դառնամ, ասեմ:

«Ո՛վ սիրելիք, բարի եղէք,
Այդ ճանապարհ շուտով թողէք.
Մտաղ սերունդ արու և էդ
Գիտութեանց մէջ կրթել տուէք»:

Վարդավառ. (Յուլիս 25)

Այսօր ճաշի մեզ հրաւիրեց
Արեւատեանց տոհմի երեց
Մեծապատիւ Նաւասարդը,
Մեր առաջին ծանօթ մարդը:

Ճաշից յետոյ որոտացին
Ամպեր ու լաւ ողողեցին
Խիստ չորացած դաշտ և բլուրք,
Շատացրին և սակաւ ջուրք:

Ամբոխը շատ մխիթարուած
Շուտ շուտ նայում էր բարձր ու ցած
Ու շարունակ ասում, կրկնում,
«Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ Աստուած»:

(Յուլիս 30)

Երբորդ օրը վարդավառին
Վերը յիշուած լաւ հեղեղին
Արժանացաւ ծարաւ երկիր.
Հազար բերան փափք Անեղին:

Ամեն փողոց ընկած մի գետ.
Տանում էր քար, աւազ իւր հետ.
Այդ ընթացքը երկար տեւեց,
Քանի տուն էլ ջրով լցուեց:

Երեք շաբաթ յառաջ թէ գար
Այդպէս անձրեւ, մեծ շահ կտար.
Արդէն ցորեն, խոտ հնձուած են
Սայլով բերուած ու դիզուած են:

Դարձեալ կտայ բաւականին
Օգուտ արօտից տեղերին.
Մնասուններ կարած են դեռ,
Հնձած խոտն էլ կուտեն ձմեռ:

Այսպէս հեղեղ յետոյ միւս օր,
Նաև նորա հետեւեալ օր
Ամպերի խիստ գոռօցներով
Եկաւ, անցաւ փողոցներով,
Ծանր քարեր գլորելով
Ու լճեր տեղ տեղ կապելով:

Անձրեւ վանող խոր ընած է,
Մեղմ դեփիւռ տեղը բռնած է.
Փոշին տղմի մէջ խրուած է,
Պարզ դետ սաստիկ պղտորուած է:

Մարդիկ յառաջ նայում էին
Ի վեր ու միշտ ասում էին.
«Ո՛ւր էք փախել, ամպեր, դուք ո՛ւր,
Ե՞րբ պէտք է գաք, թափէք ձեր ջուր»:

Բայց հիմայ նոյն խնդրող մարդիկ
Ասում են «դէ, հերիք, հերիք,
Փախէք ամպեր, եկէք հողմեր,
Սրանց տարէք ուրիշ կողմեր»:

Ի՞նչ անեն՝ որ այդպէս չասեն.
Չէ որ պէտք է կալեր կալսեն.
Առանց էն էլ բերք պակաս են,
Խեղճեր մինչև երբ սպասեն:

Դարձեալ ամեն ինչ իւր նախկին
Լաւ կամ թէ վատ իսկ վիճակին
Կհասանի, ու մանաւանդ
Թէ ինչն է վատ, տես դու աստ, անդ.
Տիղմը փոշի շուտ կգառնայ,
Ու քամու հետ կբարձրանայ:

(Օգոստոս 1).

Ծանր Յուլիս ամիսն անցաւ,
Տաւարի ցաւ միայն չանցաւ.
Շատ չի մնայ, այդ էլ կանցնի,
Կգայ այլ ցաւ, այն էլ կանցնի.
Բայց երբ մարդը մարդոյն ցաւ, վիշտ
Կհասցնէ, շուտ չի անցնի:

Այսօր մէկն է Օգոստոսի,
Տօն չէ Բագոսի, Վարոսի.
Այլ մեծ օր է Տէրունական,
Սուրբ պահելն է օրինական:

Ինչով է այդ օրէնք պահուում,
Ի՞նչ գործ գործելն է արգելուում,
Եւ ինչ գործելն է թոյլ տրուում,
Այստեղ շատ պարզ են նկատուում:

Տես բոլոր այս փակ կրպակներ,
Տես բաց, ազատ, հրապարակներ,
Տես թէ ինչէր են կատարուում,
Տես թէ ինչէր են երևուում:

Աղմկալից ժողովք մարդոց,
Վատ հայհոյանք, տուր ու դմբոց,
Յետոյ, յետոյ դաշոյն, դանակ
Ու հեշտ բացուող ատրճանակ:

Կրպակները փակած պահել,
Դորանով ինչ օրէնք պահել,
Լաւ չէ գործով հենց զբաղուել,
Քան մեղքերի մէջ շաղախուել,
Հանգստեան օրն է հրեաներին,
Այդ չէ տուած մեր հայերին:

(Օգոստոս 3.)

Հայր և աղջիկ արտ են գնում,
Իրանց ցորեն հնձում, դիզում,
Աղջիկ պահապան է մնում,
Հայրը շուտով տուն է դառնում,
Սայլը լծում, այն տեղ քշում,
Զարմանալով նայում, ապշում,
Ո՛չ աղջիկ կայ, ո՛չ ցորենի գէղ,
Խեղճ մարդու կեանք լինում է կէս:

Դատարկ ձեռքով, դատարկ սայլով
Վերադառնում է տուն լալով,
Աղջիկն այնտեղ է գտանում
Ու պատմածից անցքն իմանում,
Որ ինքը դեռ տուն չհասած,
Ոմն սայլի վերայ նստած
Շտապ շտապ մտնում է արտ,
Ինչպէս իրան ուղարկած մարդ,
Աղջկայ հետ դէզը բառնում,
Նստում դէպի քաղաք դառնում,
Նորան ոտքով տուն ուղարկում,
Տանում ուղած տեղ դատարկում:

Շատ աւելորդ է օրոնել,
Ո՞վ է անունդ այն տեղ գրել,
Այդ բաներն են սովորական,
Այնքան էլ չեն զարմացական:

(Օգոստոս 7.)

Ի՞նչ պատահեց վեցերորդ օր,
Յանկարծ փոշին ծածկեց սար, ձոր,
Յետոյ ճայթիւն, յետոյ անձրև,
Յետոյ հեղեղ, յետոյ արև,
Կալ կալսողներն էլ կասէին
«Եկար արև, հաղար բարև»:

Զտեսնուած փոթորիկ էր,
Անցեալներից շատ սաստիկ էր,
Յետ մզում էր պատուհաններ,
Փոշին առատ լցնում տներ:

(Յգոսես 12.)

Մեծ խումբ տիկնանց, օրիորդաց,
Երեկ կէս օրից յետ գնաց
Սովորական ուխտատեղին
Հագուստներով կարմիր, դեղին:

Այսօր մեղմ է եղանակը.
Օրերի մէջն է միակը.
Արժէ դուրս գալ և զբօսնուլ,
Երբ մտանէ արեգակը:

Այդ ժամանակ էլ թէ դուրս գաս,
Ո՞ր կողմ գնաս, որ դո՛հ մնաս.
Հենց շարունակ կանցնէ նախիր.
Դէ, աստ փախիր, դէ, անդ փախիր:

Ձանձրացնող, նեղացնող
Ձէ այնքան այդ նախիրն անցնող,
Որքան փոշին, դորա փոշին
Ամեն մարդու զգուեցնող:

Ձբօսներու տեղեր յարմար
Ձկան այստեղ մարդկանց համար.
Լոկ անուամբ կայ մի զբօսարան,
Ուր չիք ծառոց, ծաղկանց շարան:

Բարձր բարձր ուռի ծառեր
Լաւ շարուած են ջրաշատ տեղեր.
Բայց չեն դրանք հասարակաց.
Այլ են կալուածք մասնաւորաց:

Ձարմանալին այս է միայն,
Որ այդպիսի արձակ և լայն
Պարտէզներում տներին կից
Ձկայ այլ ինչ, բացի խոտից:

Այս տեղի չափ երևանում
Ուռիք բնաւ չեն բարձրանում.
Ուրեմն այս հող նմանապէս
Կանեցնէ ծառեր պէս պէս:

Խօսում էի մէկի հետ ես,
Նա ձեռք մեկնեց ասաց «տես, տես»
Այն կողմի սար, որ ահա դեռ,
Կան գլխին դեռ ձիւնի շերտեր»:

Դէ, լսիր ու մի ծիծաղիր,
Շատ ծիծաղից մի նուաղիր.
Հազիւ հազիւ ինձ պահեցի,
Դարձայ նորան այս ասացի.
«Եթէ դորա Արագած մայր
Եւ վիթխարի Արարատ հայր
Դորա պէս ոյժ գործ դնէին,
Ամբողջ նահանգն ի՞նչ կանէին.
Կարծիք չկայ. ամեն բերքից
Ձուրկ անապատ կգարձնէին»:

Ո՞վ է փորձել, ասա ինձ դու,
Տնկել այստեղ ծառ պտղատու.
Խնձորենի, ծիրանենի,
Սալորենի, ընկուզենի,
Լաւ դեղձենի, լաւ տանձենի,
Լաւ թթենի, լաւ նռնենի
Եւ այլ ծառեր շատ թուերով
Անուշահամ պտուղներով,
Ու տեսել՝ որ չեն զօրացել,
Աշխատանքը զուր է անցել:

Ո՞վ է փորձել, վարել, ցանել,
Սիսեռ, բակլայ բուսուցանել.
Սեխ, ձմերուկ, վարունգ նոյնպէս,
Եւ այլ և այլ բերք սրանց պէս.
Յետոյ տեսել, որ չեն բուսել,
Զուր ժամ ու դրամ է կորուսել:

Տեղական սովորութիւն. (Օգոստոս 21)

Անհրաւէր մէկ միւսի տուն
Գնալ երբեմն յայցելութիւն
Մինչև անդամ աղգակցաց մէջ
Զկայ՝ կարծես, սովորութիւն:

Իսկ երբ լինում են հրաւէրք,
Հրաւիրուած բոլոր ընկերք
Այնպէս են ճաշ վայելում տան,
Խնչպէս վանքի սեղանատան:

Ո՛չ ձայն, ո՛չ երգ, ո՛չ երգարան,
Ո՛չ պար, ո՛չ էլ մի նուագարան,
Ահա քեզ լաւ ուրախութեան
Ու զուարճութեան հանդիսարան:

Ճաշել ենք տանն Արևշատեանց,
Նոյնպէս և տան Վարդհաղարեանց.
Սեղանքն էին լի բարիքով,
Տեսակ տեսակ ուտելիքով.
Որքան կամիս, ախորժակով
Կեր ու խմիր, գնահ, քնիր:

Բայց թէ «խաչեր» ասուած տեղում
Յաճախ ժողովներ են լինում.
Տօն օրերին դափով, զուռնով
Ուտում, խմում, երգում, պարում:

Այս ընդարձակ և պատուական
Տեղին, ուր լաւ ուռիներ կան
Եւ սառն աղբիւր անմահական,
Մի պարօնի է սեպհական:

Անյայտ լաւերից աւելի
Երկու յայտնիքն են գովելի.
Մաքուր, պաղ ջուր, կենսատու օդ.
Ուրացողին հաղար ամօթ:

Քարն աղբիւրի վերայ դրուած
Այսպէս է վաղ փորագրուած.
«Երբ հանդիպես զբօսնելու
Եւ դաս աղբիւրս դիտելու,
Խմիր ջրից աւազանիս
Եւ ողորմի անւր շինողիս:

18—70»

ԳԻՒՂԱՅՈՒ ԿԵԱՆՔԻՅ

Ո՛չ շատ հարուստ, ո՛չ շատ աղքատ տներից մին
Շինուած երկու յարկից՝ ո՛չ նոր, ո՛չ էլ շատ հին,
Գտնուում է մի մեծ գիւղի մի լաւ տեղում,
Ուր մեծ, փոքր տասն ութ անձինք են բնակում:

Երկու մեծեր, Աւետ, Շողեր են ծնողներ,
Միւսներ իրանց տղերք, դստերք, հարսներ, թոռներ.
Բոլորի էլ անունները ասեմ, ահա,
Աւագ օրգուց մինչև փոքրիկ աղջիկ, տղայ:

Յաթո, Պետո, Սողոմ, Սեթո, Նաւո, Յարո,
Վանո, Կարո, Շուշիկ, Եղսան, Սոնա, Մարո,
Զաւո, Զանո, Մաքո, Հեքո, չորս տղերք հասած,
Ամուսնացած, որոնցից մին այրիացած:

Վերին ներքին յարկերի մեծ սենեակները
Քոնաժ ունին տան բազմաթիւ անդամները.
Մի փոքրում ես վարձով մնացի ամբողջ ամիս.
Կերածս էր ձու, կարագ, մածուն ու այծի միս:

Վերին յարկը ունի բալկոն նեղ ու երկար,
Փոքրեր այնտեղ միշտ վազվզում, բռնում են պար.
Այդ բալկոնի առաջին կայ փոքրիկ մի բակ,
Նրանից դէն բանջարանոց, դոմ ու մարագ:

Բակի երկու կողմերում կան մի հացատուն,
Մի խոհանոց, մի ցախատուն, մի հաւաբուն.
Իսկ մէջ տեղում կայ մի ջրհոր բաւական խոր,
Որ շատ բանի պէտք է դալիս. բայց շուրջն է չոր:

Ծարաւ հաւեր ամեն տեղ էլ հենց մտնում են,
Ինչ գտնում են, էն ուտում են ու ծրտում են
Թէ տներում, թէ բալկոնում և թէ բակում,
Ուր տաւարներ առանց էն էլ շատ են թրքում:

Բանջարանոց ունի ծառեր մի քանի հատ
Տուող չոր, ծիրան, խնձոր, բալ ու փշատ.
Երեք տեղից ճանապարհ կայ ել ու մուտի.
Ով ինչ կուզի, թող մտնի ու քաղի ուտի:

Այդ տեղ յաճախ մտնում են և անասուններ՝
Հորթեր, կովեր, եզներ, էշեր ու գոմէշներ
Առաւօտեան եօթ ութ ժամին նախիր գնալիս,
Երեկոյեան նախրի միջից տուն դառնալիս:

Ի՞նչ են անում տան մեծ, փոքրեր այդ ժամանակ.
Թփփթալով բալկոնիցը իջնում են բակ.
Մէկը միւսին ասում է չուտ, դէ, շուտ հասիր.
Կովեր, հորթեր մտան մարգեր, դէ, դուրս քշիր:

Ա՛յ տղայ, Վանո, ռեհան կերաւ էն մեր չալ եղ.
Ի՞նչ ես կանգնել, վաղիր, գնա դուրս արա թեղ.
Աղջի Զաւո, աղջի Մարո, հասէք շուտով.
Խիարի թումբ տրորեցին գոմէշն ու կով:

Յարո, Եղսան, էշը կրծեց պորինջանը.
Շուտ քշեցէք, այ, սատկի հենց դրա ջանը.
«Տօ, դէն գնա, այ էշ, քեզ եմ ասում, չո՛շ»
Յարոն ասում ու կրծում է ձեռքի չոր լո՛շ:

Վաղիր, Կարո, քուչի դուռ բաց, գնան շուտ հանդ.
Ինչ կայ, չկայ, արին դրանք հենց քարուքունդ.
Հասիր, Սոնա, թխսեր, ճուտեր, հաւ ու աքլոր
Քջըջեցին սոխ ու սխտոր կանաչ բոլոր:

Գնա, Զանո, գնա, ծածկիր գոմի դուռը,
Պատիկ հորթը դուրս չկայ ու կրծի նուռը.
Դէ, այ տղերք, այ աղջրկերք, մուղաթ կացէք,
Նախիր գալիս բախչի բաց տեղեր փակեցէք:

Նաւո, Յարո, թռէք գոմի կտուր, դէ, թեղ.
Էս գիժ քամին ցրուեց խոտի էն պստիկ դէղ.
Կորիր, այ էշ, հերիք էգբան վռաղ, վռաղ
Հա թաւալես, հա վեր կենաս ու զոզուաս:

Զաւո, գնա, տես, թէ տանն է հացթուխ Գեարան,
Ասա, խօսք է տուել գրտնակ քաշող Մայրան,
Որ դայ ունցի մեր խմորը վաղն առաւօտ.
Ինքն էլ թող շուտ գայ, թխի հաց ժամ վեցին մօտ:

Կարկատելուց պրծար, այ հարս, դէ, շուտ հագիր
Ու լուացքի ինչքան չոր կայ, դի՛փ հաւաքիր,
Որ յէգուց ջուր թոնրի վերայ տաքացնես,
Լուացքն անես, երեխանցն էլ լողացնես:

Սոնա, գնա, սուփրեն քցի, քուֆթէն էփուեց.
 Վերթամ, մայրիկ, ոտս դիպաւ, կաթը թափուեց.
 Այ, անպիտան, քուռի պէս ես հենց ման գալիս.
 Կաթը մածուն մերելու տեղ շուռ ես տալիս:

Եղսան, գնա. քաղիք կոտիմ ու բողկաթեր,
 Լուս, շուտ բեր, նստիւր մեզ հետ, տաք քուֆթէն կեր.
 Հայրիկդ եկաւ, եղբայներդ էլ հիմայ կգան.
 Գործ շատ ունեն. շուտ կճաշեն ու շուտ կերթան:

Աշխատաւոր տղամարդիկ ցերեկ տան չեն.
 Այգում, դաշտում ամառն իրանց լաւ կտանջեն.
 Իրիկունը յոգնած կգան, օֆ, օֆ կանեն,
 Տաք տաք սպաս կուշտ կխմեն ու կքնեն:

Կալ ու կուտի ժամանակն էլ գիշեր ցերեկ
 Հանգիստ չունին, աշխատում են տաս տասն երեք
 Խալվար ցորեն հանել, բերել, տունը թափել,
 Կէսը ծախել, կէսն էլ թխել, նստել, ուտել:

Այո, հանգիստ նստել, ուտել ոչ թէ ցամաք,
 Այլ նրա հետ մի օր կաթնով, մի օր կարագ,
 Մի օր տոլմայ, մի օր սեր ու թանով սպաս,
 Մի օր բողբաջ, մի օր պանիր, սոխ ու պուտ:

Կիրակի օր շատերն են հենց ուտում քուֆթայ,
 Պաս օր բանջար, սիսեռ, լոբի բոլոր մուֆթայ.
 Այծի, ուլի միսն են միայն առնում փողով,
 Ու խառնուրդով եփում, ուտում ախորժակով:

Բացի երկրագործ մարդկանցից շատեր գիւղում
 Առուտուրով, արհեստներով են զբաղուում.
 Առաջիններ ձմեռն իրանց ցուրտ տներում
 Գարնան, ամրան մէջ ձիւք բերածովն են ապրում:

Առաջիններ թէ վերջիններ պահասարակ
 Ձմեռն են հենց գնում, տեսնում ժամ պատարագ.
 Ձմեռն են շատ դափով զուռնով քէֆեր անում,
 Տօներ տօնում, նշան դնում, պսակ դնում:

Սակաւաթիւ պարագ, անգործ մարդկանց համար
 Միւսնայն է ձմեռ, դարուն և թէ ամառ.
 Աշխատողները կաշխատեն, նրանք կուտեն
 Ու կխմեն, լաւ կպարեն, ուրախ կապրեն:

Արբեցողներ, կուտարարներ էլ պակաս չեն.
 Ամեն տեսակ անկարգութեան մէջ շատ քաջ են.
 Ո՞ր տեղ չկան սրանց նման կեանք վարողներ.
 Մեղաւոր են միայն իրանց թոյլ ծնողներ:

Մեղաւոր են, որ տղի տղայ ժամանակին
 Իրանք են միշտ հնազանդում նրա կամքին.
 Այդ վարմունքով իբր թէ սէր են ցոյց տալիս,
 Վերջը զղջում, հառաչում են, նստում, լալիս:

Երջանիկ են, շատ երջանիկ հենց այն մարդիկ,
 Որոնք փոքրուց ճանաչելով իրանց պարտիք,
 Աշխատում են ճակատի դառն քրտինքով
 Ուտել հացը, լցնել տունը շատ բարիքով:

Կեանքի որոշ մասեր շատ են, եթէ գրուեն
 Դրանք բոլորն էլ մի առ մի, շատ կերկարեն.
 Կարդացողներ արդէն կարդալով գրուածներ,
 Կիմանան և նրանց նման չգրուածներ:

ՈՒԺԵՂՆ Է ՈՐ ՄԻՆ.

ԱՆՁՐԵՒ ԹԷ ՔԱՄԻՆ

Արի, արի, անձրև արի.

Գալի բարի, հազար բարի.

Արի, դաշտեր լաւ ողողիր,

Հերիք, որքան ծարաւ թողիր:

Դէ, դէ, փախիր, քամի, փախիր,

Աստուածանից մի քիչ վախիր.

Թող սեւ ամպեր որոտալով

Թափեն անձրև շոշաւով:

Փախիր, քնն հեռու աշխարհ.

Այնտեղ, ուր կան շատ սար ու քար.

Թող մեր արտեր կուշտ ջուր խմեն,

Առատ ցորեն տան մեզ պաշար:

Ահա, լսուեց ամպի դռուց.

Կարիր քամի քո վովուց.

Տուր ճանապարհ յորդ անձրևի.

Կայրէ բոյսեր տօթն արևի:

Է՛հ, է՛հ, քամի, ի՛նչ ես անում.

Ինչո՞ւ շուտով չես հեռանում.

Եթէ այդպէս մի ժամ մնաս,

Դու մեզ կտաս շատ մեծ փառ:

Այդքան էլ ոյժ մի գործ դնիր.

Քիչ դադարիր, մի քիչ քնիր,

Կամ կարելով մեր անն ու վախ,

Դնա՛, անցիր գլուխդ կախ:

Էլ մի շարժուի մի ձախ, մի աջ.

Լսիր մարդկանց ողբն ու հառաջ.

Շատ յորդ անձրև պէտք է նրանց.

Խեղճ են, լսիր. քաշիր քո սանձ:

Օ՛հ, շատ յամառ ես դու, քամի,

Դու անձրևի խիտ թշնամի.

Քեզ գլխով շատ զուր է, զուր.

Դու տուող չես կաթիլ մի ջուր:

Ահա ամպեր անձրևաբեր

Քո մեծ ուժով իրանց կապեր

Կտրատելով բաժանում են,

Արագ արագ հեռանում են:

Չէ, չէ, քամի, լաւ չարեցիր՝

Որ անձրևից մեզ զրկեցիր.

Ասա՛, ուրիշ դու ի՛նչ բանի

Կարող ես լինել պիտանի:

Խորտակում ես ծովում նաւեր,

Յամաքում փոշին հանում վեր.

Փչում, բորբոքում ես հրդեհ,

Լափել տալիս մեծ մեծ տներ:

Շատ են, շատ են քո փառներ.

Ո՞ր մին թուեմ, այ տնաւեր.

Թէ կայ, ասա՛, ի՛նչ ունիս լաւ՝

Բարձրացնող ուժիդ համբաւ:

Բայց մի վերուր քո այդ ուժով.

Քեզ յաղթողն էլ կգայ շուտով,

Թափել կտայ առատ անձրև,

Դու կմնաս շատ ամօթով:

Ի՞նչ չէ անում մարդկանց հաւատ,
Բաւական է ջուր մի գաւաթ,
Որ բերեն մեծ Մասիս սարից՝
Սուրբ Յակոբայ աւազանից:

9 Ապրիլի 1901. Վաղարշապատ.

Մ Օ Դ Ա

Ի՞նչպէս, ի՞նչ կերպ դովեմ ես քեզ, մյ մօդա.
Որ մարդ չասէ «խօսքդ յետ մն, ամօթ ա.
Գանձ կլանող, տուն աւերող էդ մօդան
Մի՞ թէ այդպէս արժանի է դովութեան»:

Կասեն, կասեն, այն, գիտեմ, որ կասեն,
Գովողիդ շատ վատերի կարգ կդասեն.
Ուրեմն ես էլ տեսմ ինչ որ ուղիղն է,
Թող քո սիրոյդ գերիներն ինձ բամբասեն:

Բայց թէ ո՞վ են քեզ սիրողներ, պաշտողներ,
Եւ թէ ո՞վ են քո ստուերից փախչողներ.
Առաջինքը շատ են, չունին համար, թիւ,
Իսկ վերջինքը՝ ամսոս, յոյժ սակաւաթիւ:

Եթէ միայն կրթուած, հարուստ, մեծատուն
Տիկնայք քեզիով զբաղուէին զօրն ի բուն,
Չէի ասի ես քո չաւը կամ վտուր.
Ով կամենար, թող նա անէր քո դատը:

Բայց քանի որ տուն չկայ՝ որ չմտնես,
Քեզ յարգանքով ընդունողներ չգտնես,
Ի՞նչպէս լռեմ, չասեմ ես քո արածը,
Որ խլում ես աղքատ ընտանեաց հացը:

Քանի որ դու խեղճերին չես խնայում,
Հարուստների պէս էլ նրանց ես նայում,
Չասեմ, անգութ, փոքր ինչ դու խիղճ ունեցիր,
Այդ խեղճերից, թշուառներից հեռացիր:

Քանի որ միշտ ամեն տանից խմբերով
Դուրս ես բերում տիկիներ թանգ դարդերով,
Չանարգեմ քեզ, չտամ երեսիդ ապտակ,
Որ ձգում ես նրանց ծանր պարտքի տակ:

Քանի որ մի դրութեան մէջ չես մնում,
Շուտ շուտ փոխւում, նոր կերպարանք ես առնում,
Չանիծեմ քեզ, որ դորանով շատերին
Թողում ես դու քաղցած պատի տակերին:

Օրիորդներ, հարսներ մինչ երբ դեղերուն.
Խեղճեր ո՞ր մի օրինակիդ հետեւեն.
Մարդկանց վերայ անտանելի դու բռն ես.
Կապրեն հանգիստ այն օրից, երբ կմեռնես:

Բայց չէ, երբէք դու չես մաշուի, հնանայ.
Քո պատկերդ միշտ նորոգուած կմնայ.
Միայն դու ես, որ կաս այդպէս ու մնաս,
Ու նիւթապէս ամենքին էլ տաս վնաս:

Միայն նրանք՝ այն խելացի հարուստներ,
Որ սիրում են դիւրագին պարզ հագուստներ,
Նրանք միայն քո այլայլուող երեսից
Հեռու են միշտ և ազատ քո վնասից:

Չլինի՞ թէ մէկն էլ դուրս գայ, ինձ ասէ.
«Մօդան լեզու որ ունենայ, ի՞նչ կասէ.
Թող մօդասէրք իրանց չափը ճանաչեն,
Կեանք պահպանեն, չաղքատանան, չամաչեն»:

7 Մայիսի 1901. Վաղարշապատ.

ՀԵՆՅ ԱՄԵՆ ՄԱՐԳ ԷԼ ԻՐԱՆ ԱՐԱԾԻՆ Է ՀԱՒԱՆՈՒՄ

Անցնում էի փողոցով, լսեցի ձայն մի կնոջ՝
 Որ ասաց ընկերուհուն կամ հարազատ իւր քրոջ.
 «Դու շատ միամիտ ես, քոյր, չգիտես, չես իմանում,
 Որ հենց ամեն մարդ իրան արածին է հաւանում»:

Այսքան միայն լսեցի, արագ արագ հեռացայ,
 Բայց թէ բանը ինչո՞ւն էր, տխուհ, որ այդ չիմացայ.
 Մտածմունքի մէջ ընկած, դնում էի գլխակոր,
 Լսեցի ձայն ողջունի, ասողն էր հայր տէր Գրիգոր»:

«Հը՛, բան հօ չե՞ս կորցրել» ողջունի հետ նա կցեց.
 Եւ կարծես հենց այդ հարցով նա ինձ մի լաւ հարուածեց.
 Հայր պատուական, ասացի, շատ տեղին էր ձեր հարուած.
 Այո՛, բան եմ կորցրել ու մնացել մոլորուած»:

«Ասա՛, ինչ ես կորցրել, դուք է այն ես եմ գտել».
 Ձէ, ինչպէս էր դուք գտել, երբ մաքիւս մէջ չէր մտել.
 Ասացի ու յայտնեցի այն կնոջից լսածս,
 Նոր հասկացաւ տէր հայրը թէ ինչ է կորցրածս»:

«Շատ ուղիղ է, ասաց նա, երկու գերձակ հենց այսօր
 Վիճում էին՝ թէ ո՞րը լաւ է ձեռում, կարում շոր.
 Մէկը միւսի արածին պակասութիւն էր դնում
 Ու մէկն իրան միւսն իրան արածին էր հաւանում»:

Պատահեցաւ Վահանը, լսեց տէր հօր պատմածը,
 Ինքն էլ պատմեց այդ օրուայ իրան աչքով տեսածը՝
 Թէ երկու փառասկան կուռում էին իրար հետ,
 Մէկը միւսի ապրանքը համարելով շատ անպէտ»:

Անց էր կենում Պետրոսը, սա էլ եկաւ, մօտ կանգնեց,
 Բեղերը պինդ ոլորեց, յետոյ վշտացած պատմեց՝
 Թէ ինչպէս Ջարդար տատը խեղճ հարսին ծեծ էր տալիս,
 Ասելով «ձեռքիցդ ինձ պէս լաւ բան ու գործ չի գալիս»:

Մեղ ծանօթ մի պաշտօնեայ կառքի մէջ միայն նստած
 Երևանից էր գալիս, մեղ տեսաւ, շուտ իջաւ ցած.
 «Բարով, բարով, ասաց նա, ինչ կայ այստեղ ձեզանում».
 Պատասխանին այս եղաւ. «այն կայ, ինչ որ ձեզանում»:

«Է՛հ, մեղանում ոչինչ լաւ չկայ հենց բացի վատից»
 Ասաց այս մարդն ու պատմեց իրան դառն վիճակից,
 Թէ ինչպէս իւր աւանդը կերաւ աւանդապահը.
 Դոնէ խնդրած մի մասն էլ չէ դարձնում աղահը»:

Երբեմն ինքը միայնակ, երբեմն միջնորդներով
 Խոյրում է շատ, աղաչում, մինչ անդամ ծունկ չոքելով,
 Բայց ապարդիւն է անցնում, ոչինչ պոկել չէ կարում.
 «Օ՛հ, ինչ անամօթ մարդ ես», այս է լսում, հեռանում»:

Այս զրկանք՝ որ կրում է այն աղահ մարդու ձեռքից,
 Այդ բաւական չէ իրան, լսում է միշտ ամենքից.
 «Ուտողները խելօք են, տուողներն անխելք, յիմար».
 Դէ, արի՛, դու այս խօսքը զրկանքիդ հետ սիրով տար»:

Ասաց, գնաց պարոնը՝ արաասուքը թափելով,
 Իսկոյն մենք էլ ցրուեցանք շատ տխրելով, ցաւելով.
 Աղահ մարդու արածը չէր նման ամենեկին
 Էն միւսների արածին, այլ մեծ յանցանքներից մին.

Ուրեմն այդպէս անողն էլ,
 Արածին է հաւանել»:

Սղկից վերջ լսածս զարմանալի չէր այնքան,
 Որքան որ կարդացածս երեկոյին նոյն օրուան*)
 «Ինչ ես եմ՝ անում, լաւ է, ինչ դու ես անում, վատ է».
 Կասկածողը թող կարգայ, ու կասկածը փարատէ»:

* 7 Յունիսի.

Տպուած է այդ «Մշակի» հարիւր տասն ութ համարում.
Հենց առաջին երեսում, բանասիրական բաժնում.

Զարմանալի, այո՛, շատ, որ ուրիշներ բանաւոր
Իսկ պարոն Լէօ նոյն բան յայտնեց նոյն օր գրաւոր.

Յաւում եմ շատ՝ որ այն օր

Եւ այն օրից մինչ այսօր

Անյայտ մնաց ինձ մի ձայն,

Այո՛, միայն հենց մի ձայն:

10 Յունիսի 1901. Վաղարշապատ.

ՆՈՐ ԴԱՐՍԱԳԼԽԻ ԱՄՍՈՒՆ

Դժոխք, տանջանք թէ կան միայն այն կեանքում,
Ինչո՞ւ այս տեղ տոչորւում ենք խիստ շոգում.
Պէտք է տանջուեն մեղաւորներ այն տեղում,
Բայց տանջւում են և արդարներ այս տեղում:

Դատաստանից յառաջ պատիժ կամ թէ վարձ
Ո՞վ է լսել, թո՞ղ այս հարցը մնայ հարց.
Պատասխանին մի օր կտան քննողներ
Ու կիմանան մեղ պէս պատիժ կրողներ:

Ի՞նչ ասացի, ինձ ո՞ւր տարար, այ՛ ամառ.
Ձեմ հասկանում, ինչ եմ գրում գլխով վառ.
Թո՞ղ մի փոքր ազատ շնչեմ, խեղճ եմ ես.
Ո՛չ միայն ես, խեղճ են ամենքն էլ ինձ պէս:

Էս ինչ տօթ է, դեռ չէ անցել յունիսը,
Բաս ինչ կանէ, որ գայ զօրեղ յուլիսը.
Ի՞նչ էք լսել, սարեր, մի քիչ հով արէք,
Ո՞ւր էք անպեր, անձրեւ բերէք, զով արէք:

Ափսոս, ափսոս, թռաւ, գնաց մայիսը,
Կարմիր վարդի, սիրուն ծաղկանց ամիսը.
Նորա տեղը բռնել ես դու, այ՛ ամառ.
Մեզ վառում ես քս կրակով բոցավառ:

Մեզ նեղողը քո անշափ շոգ չէ միայն.
Ունիս բերած և խայթողներ այս և այն.
Ամենից շատ զղուելի ճանճ ու մոծակ,
Որ շրջւում են խուճը խուճը արձակ, համարձակ:

Միով բանիւ, չունինք հանգիստ, դադար, քուն.
Զարչարում է մինչև անդամ և մեղ լուն.
Շատերի տան շատ փայտօջիլ նաև կան.
Մորմ և կարիճ էլ կան, բայց ո՛չ շատ ոյնքան:

Թո՞ղ ենք, չունինք ոյժ հոգալու մեր կարիք.
Կէս ևս անում, ամառ, կեանքի մեր տարիք.
Զմրան ցուրտը ճնշող շոգիդ հակառակ
Կեանք է տալիս, ճշ, ինչ լաւ օդ, եղանակ:

Յրտիցը միշտ պաշտպանուելու հնար կայ,
Բայց շոգիցը աղատուելու ինչ ճար կայ.
Մի կողմից էլ փոշին է մեր թշնամին,
Մանաւանդ երբ նրան շարժում է քամին:

Թէև շատ են, ամառ, շատ են քո բարիք,
Բայց դրանց հետ հասցնում ես դու չարիք.
Քանի մարդիկ վիրաւորում են իրար
Դաշտերի ջուր սակաւ լինելու համար:

Խեղճ երկրագործք ինչ ցաւ ու վէրք չեն տանում.
Դեռ շատերն էլ արեւահոյ են լինում.
Էլ ինչ ասեմ, ամառ, անխիղճ, ահաւոր.
Ձես հարցնում դու արդար ու մեղաւոր:

Դէ, թնդ նրանք կրեն տանջանք քս շողում,
Որոնք յետոյ պէտք է տանջուեն դժոխքում,
Բայց թէ ինչո՞ւ զուր տեղ ճնշուեն քս մոթում,
Որոնք հանգիստ պէտք է ապրեն գրախառում:

23 Յունիսի 1901. Վաղարշապատ.



Վաղարշապատի եկեղեցւոյ երեսփոխանի
ընտրութիւնը

Վարդապետի կիւրակէին,
Մեզ տապալիզ խիստ շոր օրին
Պէտք էր մարդիկ հաւարակէին,
Երեսփոխան նոր ընտրէին:

Հրաւիրաթերթ մաքուր տպում,
Արդէն ինձ էլ էր ուղարկուած,
Բայց մոռացայ գնալ այն օր,
Համարեցի ինձ մեղաւոր:

Լաւ էր, յետոյ իմացայ ես,
Որ չեն գնացել շատերն ինձ պէս.
Որոշուեցաւ միւս կիւրակէ,
Չմոռացուեց այդ, ի հարկէ:

Կեանքիս մէջ մի անգամ միայն,
Մասնակցեցի ես ընտրութեան,
Բայց երանի՜ մոռանայի
Ու այդ օրն էլ չգնայի:

Մեզ մտքին եկեղեցին
Ու դռները պինդ փակեցին.
Երեք ամբողջ ժամեր անցան,
Աղմուկները չվերջացան:

Հայր գործակալ հաշիւ կարդաց,
Յետոյ ընտրութեան կարգն առաց.
Իսկոյն բարձրացան շատ ձայներ՝
Թէ պէտք է քննել հաշիւներ:

Տէր հայր նրանց ասածն յարգեց,
Ու կատարել առաջարկեց
Շուտով երկու ընտրութիւններ՝
Երեսփոխան, հաշուատեսներ:

Դարձեալ ձայներ շատ բարձրացան,
Բոլորն իրար խառնուեցան,
Աղմուկների տեղ չեն ժամեր,
Այլ են դրսի հրապարակներ:

Աղմուկ տակաւ է անորոշ.
Ասեմ, ահա, օրոշ օրոշ՝
Ղժժոց, վժժոց, ճչոց, գոռոց,
Հարայ, հրոց ու բորբոռոց:

Դէ, արի ու բան հասկացիր՝
Ժամումն ինչպէս բանտում կացիր.
Սաստիկներին լսող չկայ.
Աղատուելու ժամ երբ կգայ:

Հողիւ փոքր ինչ դադարեցին,
Ընտրութիւններ կատարեցին,
Բայց թուղթը շատեր չստորագրած,
Դռներ բանալ պահանջեցին:

Ազատ շնչելու ճար չկար.
Կարծես ամենքն էին տկար.
Իմ գլուխս պատուում էր,
Շուտ վայր ընկնել ինձ թւում էր:

Փորձում էին կոտրել փակեր.
Ջարմանալի աղաղակ էր.
Հազիւ դռները բացուեցին,
Մարդիկ խումբ խումբ դուրս թափուեցին:

Պարսպի դռներ փակ էին.
Պէտք էր թղթեր ձեռագրէին.
Այդ էլ հազիւ հազ կատարուեց,
Ժողովն երեք ժամին ցրուեց:

Ես այդպէս բան չէի տեսած
Ու ոչ քից չէի լսած.
Վաղ ինձ, եթէ իմանայի,
Անշուշտ տանը կ'մնայի:

17 Յուլիսի 1901. Վաղարշապատ.

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ 13-Ի ՇՈԳՐ

Առաջի քո, այ օգոստոս,
Իբրեւ միջնորդ և բարեխօս
Կամ, ահա, ես, խնայիր մեզ,
Քո խիստ շոգից աղատիր մեզ:

Յունիսի շոգ ես գրեցի,
Յուլիս զօրեղ անուանեցի,
Իսկ քո անուն չիչեցի,
Դորանով շատ մեղանչեցի:

Կարծում էի մեղմ կլինիս,
Իբրեւ ամրան վերջին ամիս,
Բայց երևի, դու բարկացար,
Որ երկուսից ջերմով անցար:

Մեղայ, մեղայ, չհասկացայ.
Սնմիտ էի, նոր իմացայ,
Որ երկուսիցն էլ աւելի
Դու ես այդպէս սարսափելի:

Քո ջերմութեան աստիճանը
Ճաշին քսան և հինգ տանը,
Իսկ արևի տակ բարձրանում,
Մինչև յիսունն է հասանում:

Երեկ յիսունից էլ անցար,
Այսօր փոքր մի վայր իջար.
Այդ իսկ օրէնքն է աշխարհի.
Բարձրանողը կխոնարհի:

Դոնէ եթէ օրը այդպէս
Մի աստիճան դու վայր իջնես,
Շուտ հով կանես, բայց հպարտ ես,
Յիսունից չես ուղում պոկուես:

Գուցէ այդ ջերմ բնական չէ.
Հիւանդ ես դու, քեզ էլ տհաճ է.
Եթէ այդպէս, պէտք է խնդրես
Շուտ անձրև դայ, բժշկէ քեզ:

Այդ աստիճան ջերմ որ ունես,
Միայն դու ես՝ որ տանում ես.
Ծանր, թեթև հիւանդներ կան.
Չանես քո ջերմ փոխադրական:

Ես էլ թէ քեզ, թէ մեզ համար
Մաղթեմ, որ պարզ երկնից կամար
Շուտով ծածկուի սև ամպերով,
Երկիր թրջուի սառն անձրևով:

Այժմ քամին դադարած է,
Արևն իւր ոյժ կտարած է.
Երբ երևի ամպի նշան,
Իսկոյն կգայ քամին փշշան:

Կգայ ոչ թէ հով անելու,
Այլ թէ ամպը շուտ վանելու.
Ծառերն իրար գլխով տալով,
Փոշին օդի մէջ խառնելով:

Ա՛խ, այդ քամին, ա՛խ, այդ քամին,
Ամրան անձրևի թշնամին.
Ե՛րբ կհասնեն աշնան օրեր,
Կապեն դրան, տանեն ձորեր:

Ա՛յ օգոստոս, հոգեվարք ես.
Լաւ կլինի խնդիրս յարգեա,
Յոյց տաս դու քեզ խոնարհ և հեզ,
Բարձրից վայր դաս, փրկեա քեզ, մեզ:

Վաղարշապատ.



ԱՇՆԱՆԱՄՈՒՏ

Աշունն եկաւ, անձրև բերեց,
Մեզ հով արեց, նոր կեանք տուեց.
Ամպ հալածող քամին ուր է,
Ո՞ր ծակ մտաւ, հը՛, ախուր է,
Որ լսել է ու թոյլ տուել
Ամպերին դալ, լաւ անձրևել.
Երևի թէ ունի մի ցաւ,
Որ նա այդպէս անյայտացաւ:

Թէ փախչում է աշնան օդից,
Ո՞նց չխաշուեց ամրան տօթից.
Դո՛նէ մի մի անդամ թոյլ տար
Զովայնող սառն անձրև դար.
Բայց այդ չարեց, համը հանեց,
Գնաց եկաւ, ամպեր վանեց.
Ստեղծուած է դա հենց՝ կարծես,
Այդ գործի համար յատկապէս:

Անցեալներից էլ աւելի
Այս ամառն էր սարսափելի.
Շատ են երաշտի փնտռներ,
Դարադլիսի պատուհասներ.
Ո՞ր մին տեսմ, էլ մլուկներ,
Էլ միջատներ, դաշտի մկներ,
Էլ կարկուտի աւերածներ,
Էլ ժանտախտի կոտորածներ:

Դարավերջի ամառ լաւ էր.
Թեթև էին եղած ցաւեր.
Եղանակիցն էր՝ երևի.
Հով էր շնորհիւ սառն անձրևի.

Դաշտերի բերք առատ էին,
Ամբարոզներ էլ շատ էին.
Այժմ էլ շատ են հին բերք նորից՝
Դուրս են բերւում ամբարներից:

Վաղարշապատ.



ԱՇՆԱՆ ԱՆՁՐԵԻ

Կաթիլներդ, անձրև, ամրան օրերում
Ոսկի են, ափսոս, շատ չեն երևում,
Որ իրանց փայլով դաշտեր զարդարեն
Ու տուած արդեամբ մեզ մխիթարեն:

Դուրս պատճառն է այն քամին անդուծ,
Որ չէ թողում քեզ տալ երկրին օգուտ.
Խեղճ արտատէրեր, երբ տեսնում են ամպ,
Քեզ են սպասում մեծ ուրախութեամբ:

Շատ անգամ ես իմ աչքովս եմ տեսել,
Ուղել ես թափուել, չոր դաշտեր ջրել,
Բայց քամին բնից շուտ դուրս է պրծել,
Իւր ոյժ տարածել ու քեզ հալածել:

Հիմայ ուր է այդ ոյժ տարածողը.
Դու ինքդ ես դարձել նրան հալածողը.
Ամբողջ մի շաբաթ թափւում ես, թափւում,
Նորա նշանը էլ չի երևում:

Անձրև, ես քեզ միշտ սիրել եմ, դովել
Ու քո թշնամի քամու դէմ կռուել,
Բայց չափաւորն է լաւ ամեն բանի.
Անչափութիւնը վնասներ կանի:

Այդ դու լաւ գիտես, էլ ինչ ասեմ ես.
Աչքդ բաց արա՛ ու արածդ տես.
Ամառուան վատթար, անպէտ փոշու տեղ
Կան փոշոցներում շատ լճեր ու ցեխ:

Այդ ասեմք ոչինչ, քանի՞ հին տներ,
Դռներ, մարազներ, պատեր, պարիսպներ
Ու նոր կառուներ լաւ հեղեղուել են,
Խախտուել ծակուել են, շատ տեղ փլուել են:

Այդ էլ դեռ ոչինչ, քանի՞ աղքատներ,
Անճար մարդիկներ ու խեղճ մշակներ
Յուրա խրճիթներում ընկած, կուչ եկած,
Չեն կարում դուրս գալ, ճարել օրուան հաց:

Աշուն ձմրան պէս դողալով նստած
Տանը որ մնան, կմեռնեն սոված.
Դէ, հերիք է գաս, թո՛ղ գնան վարեն
Դաշտում գութաններ, սերմանեն ցորեն:

Բամբակներ բոլոր դեռ չեն ժողովուած.
Նրանց տէրերը շատ են վրդովուած.
Հերիք է, հերիք, դէ, երթաս բարև,
Թո՛ղ բացուի երկինք, թո՛ղ փայլի արև:

Կէս ժամ չես գալիս ամրան շողերին,
Տուտդ չես կտրում աշնան օրերին.
Տալով հենց վնաս չբաղուած այգեաց
Ու լաւ պատժելով անհոգ այգետեսարց:

Խնդրում եմ, խնդրում, շուտով հեռացիր,
Եկող ամառուան վերայ մտածիր.
Դու այն ժամանակ միայն պէտք ես շատ.
Թո՛ղ այժմ մարդիկ չանուանեն քեզ վատ:

«ՇԻՐԱԿ» ՕՐԱՅՈՅՅՆԵՐ

1902 թուականի

Բարով եկար Շիրակեցի
Օրացոյցներ պատի, ծոցի.
Հաղիւ այժմ ձեզ գիրկս առի,
Ուրախացայ, կարօտս առի:

Անցեալ տարի չարժանացայ
Տեսնել մէկիդ, շատ տխրեցայ.
Բայց չէր իմ մեղ, այլ Տիգրանին,
Որ ուշ գիմեց ձեր կազմողին:

Ինչ և իցէ, անցեալն էանց.
Ինձ համար էք թանգադին դանձ.
Երազի դէմ բացուել է վէճ.
Տեսնեմ, ուրիշ ի՞նչ կայ ձեր մէջ:

Ձէ, չէ, լաւ է էս յաւելում...
Ձէ, էս էլ հենց լաւ է դրում...
Բն էս, բն էս սրբան լաւ է...
Օհ, ոհ, էս, էս, էս շատ լաւ է...

Վահ, էս մէկը թարս է տպում.
էս կանաչն էլ թարս է տպում.
էս էլ, էս էլ նմանապէս,
էս կարմիրն էլ թարս է նոյնպէս:

Ըհը, էս էլ մի ուրիշ բան.
Ամբողջ տառեր, վանկեր չկան.
էս շնորհքը կարողինն է.
Իսկ էն թարսը՝ բն, որինն է,

Տանեմ, ցոյց տամ այս Տիգրանին,
Տայ ինձ լաւ և պիտանին.
Դէ, շուտ գնամ ես միւսներէց,
Կիլիկիէն իրար ձեռից:

Բարով, Տիգրան, մոռ, լաւ հայիր,
Տեղն ուրիշ տնւր, մի խնայիր.
«Շատ լաւ, ձեզ եմ թողում ընտրել.
Հինգ օրինակ յետ են բերել»:

Ուրեմն այստեղ շուտով նայեմ,
Լաւի համար լաւ վիայեմ.
Ահա, Տիգրան, ահա նոր բան.
Նմաններին սա չէ նման:

Թարս ու շիտակ այստեղ էլ կան.
Բայց թէ ինչով է աննման,
Ցոյց տամ, տեսնես ու հաւատաս,
Իմ բերածս դարձեալ յետ տաս:

Տես ամիսներ՝ թէ ի՞նչ կարգով
Դասաւորուած են ճաշակով.
Տես, իմացիր դործողներին
Գործած գործերն արժանագով:

«Յունուար, օգոստոս, սեպտեմբեր,
Յետոյ փետրուար, հոկտեմբեր.
Յետոյ սեպտեմբեր, հոկտեմբեր,
Յետոյ մարտից մինչ գեկտեմբեր»:

Չարմացնող, հիացնող
Ձեն միայն լաւ—լաւ բաները.
Այլ են նաև աչքից անցնող
Այդ լաւերի ներհակները:

Պարզ է, որ ես աշխատողին՝
Օրացոյցները կաղնողին,
Այն է՝ պարոն Ափինեանին
Չեմ մեղադրում ամենեւին:

Ասում եմ իւր օգտի համար,
Ո՛չ որ ձրի նորա համար
Եւ ոչ մի գործ չէ կատարում:
Անշուշտ վարձ է նա վճարում:

Պէտք է միայն որ հոգ տանէ,
Պակաս, պոռառ դուրս չհանէ.
Դուցէ ինքն էլ է գանգատում,
Ինքն էլ ուղղել է աշխատում:

Փոքրիկ օրացոյցն էլ ունի
Անճաշակ ձեւեր մի քանի.
Տեղ տեղ այս կամ այն յաւելուած
Ամուր կապով խոր է խրուած:

Էլ մանրամասն չեմ ասում.
Եկող տարուան եմ սպասում.
Յուսամ տեսնել բարեփոխուած.
Թող գործողաց օգնէ Աստուած:

7 Յունուարի 1902. Վաղարշապատ.

ԾԵՐՈՒԹԻՒՆ

Տասն տարի անցել է հենց այն օրից,
Երբ լսեցի մի ծերունու բերանից.
«Է՛հ, շատ ոչինչ, ոչինչ բան է ծերութիւն.
Կորցնում է ամբողջ մարմնոյ զօրութիւն»:

Մինչև անցեալ դարավերջ չեմ զգացել
Ծերոյս վերայ ներդրութիւն ծերութեան.
Այս նոր դարի սկզբիցն եմ իմացել,
Ինչ էր միտքը խեղճ ծերունու ասութեան:

Բացատրեմ մէկ մէկ, լսէք, հասկացէք,
Ծերութիւնը մի անարդէք, յարգեցէք.
Ծերը ձեր է, ջահելն էլ կծերանայ,
Էն ժամանակ ձերի զաւրը կիմանայ:

Ծեր է կոչում մարդ յիսնամեայ հասակից.
Նեղող մի բան չունի իրան յարակից
Բացի երկու արտաքին նոր զարգերից,
Որաց մինը փայլուն ակնոց քթին կից:

Իսկ էն միտք ինչ է, ամենքդ էլ դիտէք.
Թէ չդիտէք, ասեմ, խնդրեմ, լաւ դիտէք.
Սպիտակ մաղ սև մաղի հետ խառնուած,
Երկու գոյնով գլուխ սիրուն զարդարուած:

Այդ զարդերով տասն եօթ տարին լաւ անցաւ,
Տասն ութի մէջ երկու բան էլ աւելցաւ.
Մէկն է փոքր ինչ թիկնամիջի թուլութիւն,
Միւսն է շատ շատ բաների մոռացութիւն:

Բայց թէ լաւ էր ողջ թիկունքով կորանալ,
Քան թէ այս - այն կարեւոր բան մոռանալ.
Որ լինում է յուսահատութեան պատճառ,
Եւ այդ միայն, այդ ինձ տանջում չարաչար:

Հնա, մոռացած բան միտս եկաւ, ասեմ շուտ,
Ասեմ, ինչ որ ճշմարիտն է և ոչ սուտ.
Այդ է ձեռիս դողալը դիր գրելիս,
Ու նիրհումը միայնակ դիրք կարդալիս:

Ուրեմն ունիմ ծերութիւնից չորս պարզեւ,
Մինը ծանր, իսկ երեքը շատ թեթեւ,
Այս ծանր, շատ ծանր ցաւ ինձ համար
Մոռացումն է. ում դիմեմ դորա համար:

Ներհումն ինչ ցաւ, հանգստութիւն է տալիս.
Ջահերների վերայ էլ է այդ գալիս.
Դորանից ես գանգատ չունիմ՝ բնաւին.
Չեմ ասած ու չեմ ասի ես վատ լաւին:

Ինչ և իցէ, կանցնի, կերթայ ծերութիւն,
Նորա տեղը կգայ շուտ զառամութիւն.
Էլ ինչ ցաւեր ասես, որ նա չբերի.
Այժմ շատեր եղած են նորան դերի:

Մինչև ութսուն, մինչ իննսուն տարեկան,
Այլ և ամբողջ դար անցրած մարդիկ կան,
Որը այժից խալաւ ընկած, թուլացած,
Որը մարմնի կիսով գետին կռացած:

Որն անատամ փլփլթալով բան ասող,
Որը ծանր ականջներով չլսող,
Որը մօտիկ լաւ չտեսնող աչքը բաց,
Որը շարժուող այնպէս, ինչպէս մարդ արբած:

Որը գծուար մարտող կերած կերակուր,
Որը պահող կեանք ուտելով թանապուր.
Որն անարիւն կմախք դարձած, չորացած,
Որը երկար կեանքից խալաւ ձանձրացած:

Որը հազից միշտ գանգատող, քուն չունող,
Որը ան, փն, քաշելով հենց մահ խնդրող.
Որը տարով տեղումն ընկած տնքալով,
Յաւերին դեղ, դարման խնդրող ողբալով:

Այս որերին վերջ տուող որեր չկան.
Որերն այսքան թնդ համարումն բաւական,
Կարգացողներ այս որերից կիմանան,
Որ զանազան տեսակ որեր դեռ շատ կան:

15 Յունուարի 1902. Վաղարշապատ.

1902 թ. Յունուարի 19 լուսացող գիշերուան երազս
Վաղարշապատում

Ո՞վ է տեսել այսպէս երազ, Տէր Աստուած.
Ո՞վ է կրել երազումն ինձ պէս հարուած.
Դրեմ շուտով, այդ ինձ հանգիստ չէ տալիս.
Այդ հուրն անշէջ սրտիցս դուրս չէ գալիս:

Երազներից յետոյ երբ որ զարթնել եմ,
Քսանից մին հազիւ կիսատ պատմել եմ.
Մնացածներն իսկոյն կորել են անհետ,
Ի դուր մաքով ես ընկել եմ նրանց հետ:

Երանի՜ թէ այն շատերի հենց նման
Անհետանար երազն իմ այս գիշերուան.
Վաղուց էի ես շատ տխրած, վրդովուած,
Երազն էլ նոր հասցրեց ինձ խիստ հարուած:

Ա՛խ, ան, Թորգոմ, իմ գլխին ինչ ցաւ բերիր.
Անիծուիս դու... վահ, վահ, մեղայ, ինձ ներիր.
Մոլորուել եմ, ինքդ էլ լաւ ես իմանում,
Որ հասցրած հարուածիդ չեմ գիմանում:

Թէ կատարեմ ես քո տուած պատուէրը,
կանցնեն արդեօք ինձ տանջող այս ցաւերը,
Փորձեմ, տեսնեմ, տակիցը ինչ դուրս կգայ,
Գուցէ ճարը այդ է, ուրիշ ճար չկայ:

Ձլինի թէ հիմի էլ եմ երազում...
Ձէ, արթուն եմ, միտքս է նորա... հետ վազում.
Պատմեմ, ահա, երազի անցը մի առ մի,
Ձթողնելով պակաս այդ անցքից բառ մի:

Լճի ափին զբօսնում եմ ես տխուր,
Մի անձանօթ ձեռքին բռնած փայլուն սուր,
Մօտ է գալիս, բարձրաձայն ինձ բարևում,
Ասում «ո՛ւր ես, վաղուց եմ քեզ որոնում»:

Հարցնում եմ, ո՞վ էք, խնդրեմ, սասցէք,
Եւ դուք նոյնպէս իմ ով լինելն իմացէք,
Ապա թէ բան կայ յայտնելու, յայտնեցէք,
Լսելու բանն էլ ինձանից լսեցէք:

«Ճանաչում չեմ, ահա, ձեռքիս սուրը տես,
Գիրը կարդայ եւ իմացիր ով եմ ես.
Չունիմ, չունիմ որոշ մի բան յայտնելու.
Ես յատկապէս եկել եմ քեզ պատժելու»:

«Բայց պատժելուց յառաջ ասեմ՝ ամօթ քեզ.
Որ դու հայ ես, հայի լեզուին պաշտպան չես.
Այս սուր սրիս նոքա զոհ են գնացել,
Որոնք քեզ պէս անտարբեր են մնացել»:

«Անպիտան է, անարդ է նա ու վատ է,
Որ մայրենի քաղցր լեզուն իւր կատէ.
Հայ լեզուն հայն վարժարանից հանում է,
Քեզ պէս մարդն այդ համբերութեամբ տանում է»:

Խնդրեմ, ինձ էլ թոյլ տաք երկու խօսք ասել.
Ի՞նչ կարող էք դուք ինձանից սպասել,
Ի՞նչ իրաւունք, ինչ ձայն ունիմ այդ դործում.
Ինչո՞ւ այլոց մեղքն իմ վերայ էք բարձում:

«Այդ հարցերով արդարանալ կարող չես.
Պատասխանը՝ ահա, տամ որ ամաչես.
Եղելու թիւնն այդ դործի երբ իմացար,
Բողոք բառնալ զանց արեցիր, մոռացար»:

«Յատուկ պարտքդ էր ի լոյս հանել այդ գրով,
Որ առաջիկ չկանգնէի այս սրով.
Այո, պարտքդ էր դրով յայտնել հայադանց,
Ո՛չ թէ լինել անփայլ, անհոգ, պարտազանց»:

«Դուրս համար եկած եմ հեռաստանից
Իրաւունքով վրէժ առնուլ քեզանից.
Բայց տամ պատուէր, եթէ այժմ կատարես,
Պատժից ազատ, ապահով կեսնը կվարես»:

«Պատուէրս այս է, որ այժմ շուտ տուն գնաս,
Գրիչդ առնուս, ինչ կայ՝ դրես, շուտ դառնաս,
Թուղթն իմ ձեռք տաս, որ ես ես դառնամ շուտ
Ու տարածեմ արեւելքից արեւմուտ»:

Դարձեալ խնդրեմ, թոյլ տաք երկու խօսք ասել.
Ես սովոր չեմ սրան, նրան բամբասել.
Մինչև դործի ստուգութիւն չիմանամ,
Ո՛չ կդրեմ, ո՛չ էլ բերան կբանամ:

Երբ լսեցի հայ լեզուի դասեր չկան,
Երեսփոխանն է իւր թէ պարտական,
Հետեւեալ օր անձամբ նրան ղիմեցի,
Լսածս իրան մեղադրելով պատմեցի:

Նա մի առ մի իւր արածները թուեց,
Ու նրանցով իրան արդար ցոյց տուեց.
Էլ ինչ արած, յետ դարձայ կասկածելով,
Մեղաւորին հենց մի լաւ անիծելով:

Եկեղեցւոյ հաշուից դուժար մի չնչին
Արգելում է տալ հայ լեզուի ուսուցչին.
Ժողովուրդն էլ ինչո՞ւ համար է լռում,
Ո՛չ պահանջում, ոչ էլ ինքն է վճարում:

«Շատ լաւ, այդ էլ բաւական է, դրով տներ,
Թող տարածուի դոնէ այժմէն այդ իսկ լուր,
Մինչև ինքզ՝ պաշտօնիրում եմ դարձեալ ես,
Քննես, զննես, յանցաւորը լոյս հանես»:

Կատարեցի այն առաջին պատուէրը,
Ասաց «քո կեանք համարիր իմ՝ նուէրը».
Ասաց իսկոյն անյայտացաւ այդ մարդը՝
Թորգոմ անուն, սուրն էր միակ իւր զարդը:

Թորգոմ թռաւ, զարթնեցի խոր քնիցս,
Տեսիլքից մի բառ չթռաւ մտքիցս.
Սրի վերայ փորագրուածն էր այսպէս.
«Ես Թորգոմեան Թորգոմի սուրն եմ, լաւ տես»:



ՉՄՐԱՆ ՓՈՇԻ (1902 թ.)

Ո՞վ է տեսել յունուար ամսում
Ձիւնի տեղը փոշին դրսում.
Տարօրինակ է այս ձմեռ.
Սորա նման եղած չէ դեռ:

Փողոցով մի էշ անցնելիս
Փոշին օտքից գլուխն է տալիս.
Իսկ երբ կառք է արագ անցնում,
Ինչպէս ծուխ է բարձրացնում:

Շատ անհոգ են տնտէրեր՝
Թէ ջահելներ և թէ ծերեր.
Լաւ է նրանց փոշի կուլ տալ,
Քան ծարաւի փոշուն ջուր տալ:

Եղանակովն է իսկ դարուն
Այս ձմեռ փոշւով զարդարուն.
Հրաման տրուած է լաւ հսկել,
Փողոցները ջուր սրսկել:

Այդ հրամանը շուտ կատարուեց,
Իմ սիրտս շատ մխիթարուեց.
Երանի՜ թէ այդ իսկ հրաման
Ազատէ մեզ փոշուց ամրան:

Վ.աղաւաղապատ.

ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏ

Ամեն ամառ անվերջ գանգատ է լսում
Շատ բերանից վաղարշապատ մեծ գիւղում.
Բայց այս անգամ՝ դեռ չը հասած ամառը,
Այդ գանգատը գարնան մէջ է սկսում:

Ձրի համար է լինում այդ գանգատը,
Շահում հարուստն ու զրկում է աղքատը.
Այժմ զրկուողներն առում են «ինչ հնար
Գտնենք, որ էլ չլինինք հարստահար»:

«Հարուստն իրան այգին, պարտէզն ու արտը
Շուտ շուտ ջրել կայ, փող ունի մարդը.
Բայց ցորենի կամ բամբակի մեր արտեր
Ծարաւի են մնացել միշտ ու անտէր»:

«Առանց հողի էլ լաւ կապրի հարուստը,
Բայց մի կտոր հողից է մեր տպրուստը.
Հերիք, մինչ երբ մնանք մեռք խեղճ ու անճար.
Մինչ երբ տանջուենք հարուստներից չարաչար»:

«Աղքատներն թուով նրանցից շատ են.
Լաւ ջրբաժան ընտրել այժմէն աշխատենք,
Որ մեր արտեր ջրուեն, առատ հաւնձ տան մեզ,
Անցեալի պէս չլինին արեւակէզ»:

«Ինչո՞ւ մէկի հողը ջրուի հինգ անգամ,
Իսկ միւսինը դժուարութեամբ մի անգամ.
Հերիք քնենք, զարթնենք փոքր ինչ խելքի գանք,
Այսուհետեւ էլ չկրենք մենք զրկանք»:

«Հենց ինքներն ենք միշտ հասցնում զրկանք մեզ,
Ձրկողների առաջ կանգնած խոնարհ, հեղ.
Պարտական ենք մարդկանց յարգել ու պատուել,
Դորա հետ էլ մեր իրաւունք պաշտպանել»:

«Հարուստ, աղքատ հաւասար ձայնի տէր են.
Ինչո՞ւ պէտք է աղքատները համբերեն,
Երբ հարուստներ իրանց շահն են պահպանում,
Առատ ջրով, առատ բերք են ստանում»:

«Չէ, չէ, եկէք, զրկուածներն միանանք,
Մենք էլ, ջրի տուած բերքով լիանանք.
Բաւական է, որքան անձայն մնացինք,
Ի զուր անջուր հողից փսաւ կրեցինք»:

Լեզուով հեշտ է այդպէս ասել, խեղճ մարդիկ.
Ասելով էք կատարում դուք ձեր պարտիք.
Դեռ չգիտէք դուք աշխարհի օրէնքը,
Ո՞վ ո՞ւմ առաջ վայր է դնում իւր զէնքը»:

10 Ապրիլի 1902. Վաղարշապատ.

ՊՈԶԱՒՈՐ ՀԱԳՈՒՍ

Ասացէք, խնդրեմ, ինչ բան է կնոջ
Երկար հագուստից կախուած երկար պոչ.
Ո՞վ է մտածել, ո՞վ այդ ձեւ տուել,
Որ ամեն տեղ էլ լաւ է ընդունուել»:

Երեւելի գիւտ, գեղեցիկ հագուստ,
Ձմալեցնող մարդիկներ հարուստ,
Ինչպէս լաւ աւել փողոցներ որբող,
Թաթախուած փոշում ներքուստ, արտաքուստ»:

Եթէ անցնում են կանայք խմբերով,
Երկար պոչաւոր այդ լաւ զարդերով,
Փռչին ծածկում է մինչ գլուխները,
Էլ չեն երևում սիրուն դէմքերը:

Ես խորհուրդ կտամ խելօք այր մարդկանց,
Այդ ձև հազուադէպ արդելել կանանց,
Որով թէ միշտ և թէ նիւթական
Վնասից նորա ազատ կմնան:

Այնքան չեն ծախքը կարճ հազուադէպերի,
Որքան լինում են այդ երկարներին.
Ինչո՞ւ մի բանից կրել միշտ փառ
Ու կամաւ լինել միշտ նորան դերին:

Փռչու համար վաղ արդէն դրած եմ,
Նորա փառներ մի մի թուած եմ.
Ով չէ կարգացել, թող կարգաց, դատէ,
Ասածս հերքէ կամ թէ հաստատէ:

4 Սեպտեմբերի 1902. Վաղարշապատ.

ԱՆՓՈՂ ԳԱԶԱՐ

Այսօր առաւօտ քնացի բաղար,
Տեսայ՝ բերած են բեռներով գաղար.
Պարոն Դիտը ընտրեց լաւից լաւ
Ու երկու շահով մի լիտր առաւ:

Մաքուր, սպիտակ շորում պինդ կապեց,
Իրան հետ բերած աղի ձեռք տուեց.
Յետոյ ասաց ինձ. «Եթէ պէտք է ձեզ,
Առէք, միշտ չի գայ լաւ գաղար էսպէս»:

Երբ լսեց, որ կէս լիտր կառնէի,
Բայց չկար մօտս ոչ շոր, ոչ շահի,
Իսկոյն երկուսն էլ գրպանից հանեց,
Բարեկամաբար դէպի ինձ մեկնեց:

Իմ ուղած չափն էլ կշռուեց, կապուեց,
Փորրիկ տղային նոյնպէս յանձնուեց.
Երեքս իրար հետ դէպի մեր տներ
Վերադառնալու արեցինք քայլեր:

Պարոն Դիտին ասացի հանաք—
Ի՞նչ լաւ կլինէր ամեն ժամանակ
Հարկաւոր եղած ամեն մի բանն էլ
Յաջողէր այսպէս անփող ձեռք բերել:

Նա էլ ինձ ասաց քաղաքավարի.
«Շատ լաւ կլինի, թէ որ կատարուի».
Այս խօսքից յետոյ տեսանք միասին
Մի շահի ընկած գետնի երեսին:

Իսկոյն դորանով պարտքս վճարուեց,
Ինքն էլ զարմացաւ, թէ ո՞նց կատարուեց.
«Էս լաւ նշան էր» ասաց ժպտալով,
Եւ այդ նշանով լաւ յոյսեր տալով:

7 Նոյեմբերի 1902. Վաղարշապատ.



ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ, ԹԷ ԶԱՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Մի կոյր աղքատ մարդ գզգզուած շորով,
Ծակ կօշիկներով ու քաղցած փորով
Հարուստի գրան երկար ժամերով
Կանգնած, խնդրէր հաց լալով, ողբալով:

Հազիւ վերջապէս փակ դուռը բացուեց,
Հարուստը տանից դուրս եկաւ, նայեց
Կոյրի երեսին, և իսկոյն խեղճին
Փայտի հարուածով գետին դլորեց:

Մի անցորդ տեսաւ հարուստի այս դործ,
Ինքն էլ շատ յաջող արեց ուրիշ փորձ.
Շուտ նորա վերայ յարձակուեց, ասաց.
«Դէ, էս բոպէիս քսակդ ինձ մօտ բաց»:

Հարուստը մնաց ապշած, շուարած,
Բերանից մի բառ հանել չկարաց.
Յարձակուող քաջը նորա դրպանից
Հանեց ոսկիներ, թռաւ այն տեղից:

Թռաւ. նա դնաց շատ արագընթաց.
Եւ իսկոյն դարձաւ կառքով սրընթաց.
Աղքատին տարաւ, տեղը հասցրեց,
Այն ոսկիներով կեանքն ապահովեց:

Հարուստից խել, աղքատին օգնել,
Վճռական կերպով դորան ինչ ասել
Կամ ինչ անուանել—բարի թէ չար դործ.
Դժուարանում եմ ես պատասխանել:

ՄԻ ԿՈՊԵԿԱՆՈՅ ՃՈՒՏ

Անցեալ տարի օգոստոսի տասն երեքին
Փողոցումը տեսայ մի աղայ՝ բռնած ձեռքին
Շատ սպիտակ ու շատ փոքրիկ հաւի մի ճուտ,
Խաղացնում էր դլխի, ուսի վերայ շուտ շուտ:

Ա՛յ աղայ, հերիք, էդ խեղճ ճուտին մի չարչարի.
Տա՛ր իրան մօր թևի տակ դիր, եղիր բարի.
Ասացի ես, նա էլ ասաց ինձ ժպտալով.
«Էս լաւ ճուտը ծախում եմ ես էժան դնով»:

Ա՛յ աղայ, չորս, հինգ օրուան ճուտ է, էդ ո՞վ կառնի.
Դիցուք առնի, յետոյ տանի, որ ինչ անի.
Անմայր պահել, մեծացնել հեշտ չի լինի.
Խեղճ ճուտիկը մի օր կատուի զոհ կլինի:

Ձէ, տեսնում եմ, խօսքս բանի տեղ չեմ դնում.
Ես ասում եմ, դու խնդում ես ու լուռ մնում.
Որ էդպէս է, թո՛ղ ազատեմ էդ խեղճ ճուտին.
Դէ, շուտ ասան, ո՞րքան արժէ, ո՞րքան է դին:

«Շատ չեմ ասի, մի կսպէկ տուր, էս ճուտն ան, տանր.
Ա՛յ, շատ սիրուն դլուխ ունի, դեռ ոչ կատար.
Ա՛յ, տես, ինչպէս սիրուն կտուց, աչքեր ունի,
Ի՞նչ սպիտակ, սիրուն փետուր, օտքեր ունի»:

Ուզած փողը տուի, առայ դոված ճուտը,
Շուտ տարայ տուն, իսկոյն տուի ջուրն ու կուտը.
Էս որը ճուտին ես մայր դարձայ, խնամեցի,
Վանդակի մէջ կաքաւից էլ լաւ պահեցի:

Մեր տան տիրոջ շատ հաւերի շատ ճուտերը
Լինում են դող կատունների անոյշ կերը.
Այդ պատճառաւ նա համարեա թէ դայրացած
Մի առաւօտ ճուտը ձեռքիս տեսաւ, սասց.

«Մի փայփայի ճուտիդ էդքան. դա էլ մի օր
Կրնինի քաղցած կատուի ճանկը, կմտնի փոր.
Մեր ճուտերի տափից մէկն է հազիւ մնում,
Դու էդ մէկի կեանքի վերայ յոյս ես դնում»:

Սա իւր վճիռ այսպէս դրեց ու հեռացաւ.
Իմ ինամըսով ճուտը ապրեց ու մեծացաւ.
Քառասուն էլ ձու տուեց մեզ, դադարեցաւ.
Ահա, այսօր նորա ամեակը լրացաւ:

Վաղը երկրորդ տարեդարձն է, թնդ շատ ապրի,
Ուտի, խմի, առողջ ման դայ, ցաւ չկրի.
Մի անգամ նա հիւանդացաւ, շատ տխրեցայ,
Հետեւեալ օր առողջացաւ, ուրախացայ:

Ամուսինս մի օր տասց. «մինչ երբ պահենք.
Մորթենք, մաքրենք, լաւ տապակենք, նստենք, ուտենք».
Վահ, վահ, այ կին, ինչ ես ասում, ինչ մորթիր, կեր,
Նրան պահիր կեանքիդ ընկեր:

Այս տասն օր է, որ եկել ենք մենք Բիւրական.
Չբերեցինք մեզ հետ հաւը մի տարեկան.
Մեր տան տիրոջ բարի որդիք ինձնից էլ լաւ
Կպահպանեն, կուտացնեն նաեւ փլաւ:

Այստեղ մինչեւ ամսիս վերջը հազիւ մնանք.
Յուսամ, որ օր Վաղարշապատ վերադառնանք,
Իսկոյն նրանք ուրախ ուրախ յառաջ կդան,
Իրանց պահած հաւը առողջ ձեռքս կտան:

Այժմ հաւի անցեալ կեանքից ասեմ կարճ բան.
Ո՞վ կկարծէր, թէ կկրթուի էդ հաւն անբան.
Բերած օրից «ծիկօ» անուն ես դրեցի,
Մի ամսի մէջ քանի մի բան սովորեցրեցի:

Երկու ամսում «արի, գնա, նստիր, վեր կնց,
Թռիր, կանգնիր ձեռքիս վերայ, շուտ իջիր ցած,
Կուշտ կեր, խմիր, հետս ճեմիր, բունդ մտիր,
Լսելուն պէս կատարում էր ծիկօն ընտիր»:

Երեք ամսում շատ բաներում վարժուեց ծիկօն,
Լսեց, եկաւ, աչքով տեսաւ մեր Մամիկոն.
Նոյնպէս շատեր եկան, տեսան, ուրախացան,
Շատ սիրեցին, դուրդուրեցին, վերադարձան:

13 Օգոստոսի 1903. Բիւրական.

ՀԻՆ ՊԱՏՇԳԱՄԲ (բալկոն)

Բիւրականի մի հին տան
Հին պատշգամբն անպիտան
Ունի բարակ սիւներ ութ
Ճեղքուած, ծուռ մուռ ու խախուտ:

Ութ սիւներ էլ նրանց տակ
Շատ թոյլ գլխից մինչ յատակ
Նոյնպէս բարակ ու ճեղքուած,
Այս կողմն այն կողմը թեքուած:

Վանդակները շարժում են,
Շատ թոյլերը թափւում են.
Փայտերն էլ թոյլ նրանց կից
Շուտ կանջատուն սիւներից:

Անտաշ, կապիտ տախտակներ
Կարճ, հաստ, երկար, բարակներ
Անհաւասար են շարուած,
Մէկը բարձր միւսը ցած:

Պինդ էլ մեխուած չեն դոնէ.
Վտանգաւոր բալիօն է.
Յանկարծ թէ վայր ընկնի մարդ,
Անշուշտ կուտի մի լաւ շարդ:

Այդ բալիօնի բերանը
Դէպի գետինն է կախուած.
Տակի նեցուկ գերանը
Հաղիւ պահում է կանգնած:

Վտանգաւոր ասացի
Ու վտանգն էլ մեկնեցի.
Տան տէր խօսքս թող յարդէ,
Նոր ի նորոյ նորոգէ:

20 Օգոստոսի 1903. Բիւրական.

«ԼՈՒՆ ՈՒՂՏ ԵՆ ՇԻՆՈՒՄ»

Պատանեակ էի, մէկից լսեցի
«Լուն ուղտ են շինում» շատ ծիծաղեցի.
Ասաց «դէ, հերիք, հերիք ծիծաղես.
Հենց ապտակ կտամ, որ կնուաղես»:

Պատասխանեցի — «նոց չծիծաղեմ.
Սուտ բանից՝ ասան, ինչ օգուտ քաղեմ.
Լուն որ ուղտ դառնայ, ուղտն ինչ կդառնայ.
Փոքրիկ լուն ուղտի բեռը «նոց բառնայ»:

«Դու չհասկացար, շատ միամիտ ես.
Դեռ մինչև հիմայ էդ էլ չգիտես,
Որ մարդը մարդուն մի բան է ասում,
Նա հինգ էլ մէկի վերայ է դառում»:

«Յետոյ այդ հնգի վերայ տանն ու հինգ
Դալով շատանում, դառնում հարիւր հինգ,
Ու հետզհետէ բերանից բերան
Ընկնելով չփը դառնում է գերան»:

— Ո՞նց չծիծաղեմ, դէ, ասան, խնդրեմ,
Սուտն ու ուղիղը ես ինչպէս չընտրեմ.
Ասենք՝ թէ չփը կմտնի բերան,
Բայց ինչպէս մտնի ահագին գերան»:

«Է՛հ, սուս կանց, սուս կանց, դահլայ ես տանում.
Ո՛չ բան ես լսում, ո՛չ բան իմանում.
Ես քեզ ասում եմ էս փոքրիկ քարը
Մարդիկ շինում են էն բարձր սարը»:

— Ես էլ ասում եմ ասածդ է անչափ.
Ձի դառնայ երբէք քարը սարի չափ.
Ամեն բան իրան չափ սահմանն ունի.
Ճշմարտի տեղը սուտն ո՛վ կընդունի»:

«Է՛հ, չարժէ, չարժէ էլ քեզ բան ասել.
Միթէ մինչ հիմայ դեռ դու չես լսել,
Որ մի ձուի գող՝ չունող սրտում դող,
Վերջը դառնում է յայտնի ձիադող»:

— Էդ ուրիշ բան է, էդ միշտ կլինի,
Բայց ես ասում եմ՝ լուն ուղտ չի լինի,
Նոյնպէս քարը սար ու չփը գերան.
Ձեն կարող դառնալ փակիր քո բերան»:

— Դու պէտք է ասես մի բան լսում են,
Աւելցնում են, պակսեցնում են,
Ու մինչև անգամ իսպառ կորցնում,
Տեղը մի ուրիշ բան են մտցնում:

— Օրինակ, քեզնից մէկը խօսք լսէ,
Գնայ ուրիշին ուրիշ կերպ ասէ,
Դորանով խօսքը կ'ընդաշնջուի,
Մէկը կ'ախրի, միւսը կ'հրճուի:

«Հիմայ ինչ ասեմ, որ խելք ունենաս,
Որ լաւ մտածես, անշուշտ կ'իմանաս,
Որ ես էլ խօսքը փոխուելու համար
Մի այլ օրինակ բերում եմ յարմար:

«Երբ որ ասում եմ լուսն ուղտ են շինում,
Ո՛չ թէ իսկապէս լուսն ուղտ է լինում,
Այլ փոքր բանը խօսքով մեծանում,
Ստաւացներով ստեր շատանում:

«Հիմայ հասկացար, եղբայր պատուական.
Ել ոչինչ չկայ տարակուսական.
Ձեմ էլ յօրինել «լուսն ուղտ» ինձանից.
Լսել եմ այդպէս հազար բերանից»:

— Այո, հասկացայ և ընդունում եմ,
Ընդունելուս հետ և խոստանում եմ
Լուսն ուղտ, քարը սար շինելը ատել,
Բանի իսկն ասել, իսկը հաստատել:

1 Սեպտեմբերի 1903. Վաղարշապատ.

Ինչպէս շատերին արդէն վաղուց յայտնի է, և ինչպէս
ցոյց է տալիս «լուսն ուղտ են շինում» գրածս, շատ ան-
գամ մէկի ասած խօսքը բերանից բերան անցնելով ու
հետզհետէ փոխուելով, բոլորովին այլ կերպարանք է

ստանում. հենց այդ պատճառաւ էլ ես ինչ որ ուրիշներից
լսում եմ, ոչ ոքի չեմ ասում մինչև հաստատ աղբիւրից
տեղեկանալու սուտ կամ ճշմարիտ լինելն այն բանի. բայց
փորձից օգուտ քաղելով, այսօր (1 Սեպտ.) ուխտեցի
այսուհետև այդ էլ չասել ու մինչև անգամ աչքովս տե-
սած, իրօք եղած, կատարուած բաներից շատն էլ չասել,
որպէս զի լուսն ուղտ չշինուի, ուղտն էլ լուսն:



ԻՄ ԽՆԴԻՐԸ

Ո՛վ սիրելի եղբայրներ, խնդրեմ խնդիրս ընդունել,
Լսած ամեն բաներին շուտով հաւատ չընծայել.
Լսածների տառնից մին հազիւ ուղիղ է լինում.
Արդէն գիտէք, թէ ինչպէս ոմանք լուսն ուղտ են շինում:

Ստեր կան՝ որ մնաս են, ստեր կան, անմնաս են.
Դռնէ վերջին տեսակից ասողները հենց ասեն.
Սուտ կամ ուղիղ ասածներ թող լսողներն ստուգեն,
Յետոյ լաւը ու վատը իրանց տեղերում դասեն:

Լաւ չէ զրաբանութիւն, լաւ չէ զրադատութիւն.
Ինչո՞ւ մտնէ մարդկանց մէջ սիրոյ տեղ ատելութիւն.
Ինչո՞ւ միմեանց զրպարտենք, միմեանցից դատապարտուենք.
Սուրբ պատուէրը պինդ պահենք, միմեանց սիրենք ու
պատուենք:



Պատրաստ եղած ոտանաւոր և արձակ զբաժներս
արտադրուելուց յետոյ անյայտացած հներից գտնուեցին
հետեւեալ երկուսը «Երիտասարդութեան ժամանակ օտա-
րութեան մէջ» և «Տէր Մարգարի քարոզը»:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Շատ շնորհակալ եմ, սիրուհի, որ խնդիրս կատարեցիր.
Հենց սկսայ հետդ խօսել, անմիջապէս ինձ սիրեցիր.
Դորանով էլ այն օրիցը դու իմ սէրս գրաւեցիր,
Գերի արիր քո դրանը, գիշեր ցերեկ չարչարեցիր:

Մի ժամանակ դու շարունակ այնպէս հետս լաւ
վարուեցիր,
Մինչ մօտիցդ մի րոպէ էլ հեռանալս չուզեցիր.
Օր աւուր շատ սէր ցոյց տալով՝ շատ վստահութիւն տուեցիր,
Եւ այդ աշխոյժ վառ սիրովդ ինձ հետդ պինդ պինդ կապեցիր:

Երբեմն պարզ օրինակով վսեմ մտքերդ յայտնեցիր,
Եւ երբեմն աչքով, յօնքով նշանացի հրամայեցիր...
Ա՛խ, քո բոլոր շարժումքիդ մէջ ինձ մեծ հաւատ ընծայեցիր,
Բայց ափսոս որ իմ բաղդիցը մի փուչ բանով կասկածեցիր:

Քեզ մի անգամ ես մի առակ պատմեցի շատ զմայլեցիր,
Եւ միւս անգամ մի այլ առակ, գուցէ սխալմամբ, յոյժ
տրտմեցիր.
Էլ ինձանում կեանք չմնաց, դու տեսնելով շփոթուեցիր,
Կրկին շուտով անոյշ դէմքով կարեկցաբար ինձ նայեցիր:

Մի կերպարանք փոփոխելով, կարծեմ ոչինչ չհասկացիր.
Բայց համարեա թէ ինձ մահուան քրտինքի մէջ ողորկեցիր.
Երբ որ բանը այսպէս գնաց, ես լռեցի, դու խօսեցիր
Այնքան, մինչև հանաք հանաք իմ առականերս մեկնեցիր:

Այդպէս ձեւեր բանացնելով բաւականին սիրտ տուեցիր,
Մէկ էլ դարձայ առականս, ախորժանօք դու լսեցիր.
Այս առակի մեկնութիւնը երբ նայնպէս տալ յօժարեցիր,
Սրտիս կասկածը քեզանից, յայնժամ ի բաց փարատեցիր:

Լեզուիցս մի խօսք թուցրի, կարմրելով ծիծաղեցիր,
Օտեցայ ձեռքդ սեղմեցի, սիրով տարար, համբերեցիր.
Սուրբ ճակատիցդ մի քնքոյշ համբոյր առի, ընդունեցիր,
Մի համբոյր էլ հետեւաբար լոյս երեսիդ դրոշմեցիր:

Թէ ուրանամ, կիւրանամ, այնքան արժան համարեցիր,
Մինչ էս այրուած շրթանցս համբոյր կուրծքիդ վերայ էլ
կնքեցիր.
Կոյս օրիորդ, ա՛խ, ի՞նչ ասեմ, ինձ նոր աշխարհ դու ծնեցիր,
Ու մի նոր կեանք, մի նոր հասակ, մի նոր արեւ պարզւեցիր:

Իրաւն տսեմ, մինչև այդտեղ դու կարգը լաւ պահպանեցիր,
Այնուհետեւ գայլի գլխին աւետարան դու կարդացիր.
Ճարս կտրած՝ խոնարհութեամբ ունկն դրի ինչ ասացիր,
Մինչև քո սիրտն էլ ցաւեցաւ, խոստումներով յուսադրեցիր:

Այո, այդպէս ճարտարութեամբ համոզելով ինձ յաղթեցիր,
Բայց բնութեան օրէնքիցը այնքան էլ դուրս չգնացիր.
Յիշիր այն օր, որ առանձին մի վարդ տալով՝ ի՞նչ պատմեցիր,
Ինձ էլ քեզ պէս ճանաչելով, նոյն զգացման տէր իմացիր:

Քար էլ լինէր, չէր դիմանայ, այսքան երկար որ տանջեցիր,
Ու վերջապէս մի դրութեան, մի սահմանում չմնացիր.
Հիմայ ասա, հոգեակ, ինչո՞ւ, ինչո՞ւ, կրկին դու սառեցիր,
Միթէ այսքան միջոցումը դեռ ինձ դու լաւ չփորձեցիր:

Այդ խորամանկ վարմունքիցը արդեօք ինչ օգուտ
բաղեցիր,
Որ առանց մէկ բուն պատճառի ինձ հալեցիր ու մաշեցիր.
Մի խօսքով քո ձեռքովդ ինձ մի խոր գերեզման փորեցիր,
Ու անխնայ նորա մէջը կենդանի մեռած թաղեցիր:

Աստ, տեսնեմ, քեզ ով տուեց մէկ այդպիսի իշխանութիւն,
Որ իմ գլխին փորձես քո այդ աննպատակ տէրտէրութիւն,
Ուրեմն ասեմք այսուհետեւ ողորմած տէր, ձերդ հայրութիւն,
Շնորհաւոր նոր պատիւդ, կարգդ, փառքդ, տոնք օրհնութիւն:

Թէ այդպէս էր, նախ և առաջ պէտք է տայիր տեղե-
կութիւն,

Որ ամօթով, պատկառանքով ճանաչէի ձերդ մեծութիւն,
Որ ես լալով ի ծունկ գալով, խնդրէի ձեզնից թողութիւն,
Եւ դուք ինչպէս ողորմած տէր ցոյց տայիք ինձ սէր,
գթութիւն:

Ուրեմն ահա, ոտքդ եմ ընկած, տես թէ որքան
խոնարհութիւն,

Ապա մի թող ինձ կիսամեռ, տոնք վերստին կենդանութիւն.
Տոնք, աղաչեմ, կենդանութիւն, նորոգութիւն և յարութիւն,
Որ գամ, քեզ հետ միաւորուած գտնեմ յաւիտեան
փրկութիւն:



ՏԵՐ ՄԱՐԳԱՐԻ ՔԱՐՈՉԸ

Սիրելի՛ ժողովաւոր.

Բարձր Սրբազան առաջնորդի սարսափելի հրամանն ա,
որ էլ մկրտութեան՝ այսինքն կնունքի խորհուրդը ճաշից
յետոյ չկատարուի, ծամ լինի: Սիրելիք, ինչ ասեմ. յայտնի
լինի ձեր հրամանոց, թէ ինչպէս մօնդերը, այսինքն երևե-
լի դրբաց մարդիկ արևելքումը տեսան Քրիստոսի լուսա-
թաթախ աստղը երկնքումը ու զարդանդեցին. բայց շուտ
էլ միտքները բերին պատճառը, շատ ուրախացան ու ե-
րեսների վրայ ընկած գետինը համբուրեցին. զորօրինակ
ինչպէս որ տեսնում ենք, հիմայ էլ կան մեր մէջ էնպէս
մարդիկ, որ պապական կամ թէ տատական իրանց մնացել ա
հմայիլ թուզթ՝ այսինքն Սոգոմոնի կամ աշխարհօրէն
ասեմք—ոամ քցիլ. նրանով տեսնում ենք որ ինչպէս կո-
րած բաները գտնում են, այսինքն թէ ջրի միջին, թէ
քարի տակին, թէ հողում, թէ կրակում պահած տեսակ
տեսակ զարդեր, ակնեղէն, արծաթեղէն, ոսկեղէն ու ո՞ր
մէկն ասեմ, ուրիշ ուրիշ շատ թանգագին բաներ, ինչ որ
պատահի: Բացի որանից տեսնում ենք շատ վարպետ՝
այսինքն դիտուն, ուստայ մարդիկ էլ թէ ինչպէս նետ են
գնում, այսինքն թէ մէկի սաները քամին որ բռնում ա,
կամ Աստուած հեռու տանի, ընկնաւորում ա, կամ ուրիշ
հիւանդութիւն, անգամալուծութիւն պատահում, գնում
են նետ գնիլ տալիս ու էն սհաթին հրաշագործ նետը
աղօթքի զօրութիւնով պտտում գալիս՝ ա էն սրբի վրայ
կանգ առնում, որ տեղ որ մարդ պաի իր ուխտը կատա-
րի, այսինքն խնկով, մոմով, ժամոցով ու մատաղով գնայ
էն սրբի դուռը, ծունկ չորի, արտասունք թափի, ապաշ-

խարի, այսինքն դարձ գոյ, որ էն ցաւիցն աղատուի, ինչպէս որ շատերի բժշկութիւնը մեր աչքով տեսել ենք, խոստովանիմք և հաւատամք:

Ահա, սիրելիք. մի ուրիշ օրինակ էլ ասեմ ձեր աստուածասիրութեան. օգորմի ձեր անցաւորաց՝ իմ տատին. փոքր ժամանակս նրա մօտ շատ հիւանդներ էին գալիս, որը մի կաժ էր տալիս, որը մի աղլուխ, որը մի փարշ ձէթ, ու երեք օրուայ մէջ ինչ գժուար ցաւ ասես, լուսահոգին բժշկուում էր: Նա հինգ շնորհքի տէր էր, իմ աչքովս եմ տեսել, այսինքն աստուծոյ գլխացաւի՝ որ է աչքով տուածի, աղօթել. մկնատամի չախմախ տալ, դող ու էրոցքի կամ թէ ճլերք ընկածի կուռը օլորած բամբակով կապել, զաթի կտրել ու մէկ էլ կորած բանի համար թիզ բաց անել. սրանցից ոչ մէկը ուրիշից նա չէր սովորել, բոլորն էլ օգործածիկին տուած էր էրազում: Հիմայ էս ժամանակին ուր են էնպէս հաւատով արդար հոգիք, որ էնպէս շնորհք ունենան. վայ մեղ. ասենք թէ շատ մարդիկ էլ իրանց հաւատով էրազում փահլեվանութիւն են առնում կամ եօթ տարի սուրբ Կարապետի պատ պահելով զանազան մուրազի են հասնում, վասնորոյ թէ էսպէս, թէ էնպէս, ամեն մարդ մի շնորհք ունի, այսինքն որ շնորհք չունենանք, սոված կմնանք:

Ուրեմն էսպէս էլ էն երեք մօնքերը էնքան իմաստուն մարդիկ էին, որ աստուծոյ ծնունդը քննեցին, իմացան՝ որ նշանակ էր Քրիստոսի ծննդին, վասնորոյ նրա ետեւից ընկած գնալով, գնալով հասան մինչև Բեթղեհեմ քաղաքի եզրը, որ է զրազը, ու հենց էնտեղ տեսան յանկարծ էս լուսաթաթախ աստղը երկնքի երեսին կանգ առաւ, իրանք էլ կանգ առան. այսինքն երկար ժամանակ մտիկ տուին՝ որ իմանան ինչ պտի ընի աստուծոյ վերջաւորութիւնը, որ կանթեղի պէս ճլուակ էր ընկել, ու մէկ էլ ինչ, Աբամայ մութը կօխեց թէ չէ, էն պայծառ աստղը կէժակի պէս թըմը մսուրքը. յետոյ ուրիշ շատ աստղեր իրար քամակից քուլայ — քուլայ վեր թափեցին

այրի կտուրը. էն ժամանակ բոլոր քաղաքը լուսի մէջ մարդու աչքերը արևի պէս ծակում էր, և էն ժամանակ՝ որ մթնում մոլորուած մնացել էին էն երեք թագաւորները՝ այսինքն Մելքոն, Գառար և Բաղդասար (խաչակնքելով) շուտ հասան այրի դուռը ու երեսները գետնին քսելով չորաչոր մտան ներս, բայց ինչ տեսան, նորածին թագաւորը մօր գրկին երեսը արեգակի պէս ֆռֆռում էր, էն սհաթին իրանց քաղցր ձէնով սկսեցին երգել ու ծլվլալ «այսօր տօն է ծննդեան աւետիս». յետոյ բաց արին իրանց հետ բերած ընծայքը՝ այսինքն ոսկի, կնդրուկ և զմբուռ: Էս ուխտադրութիւնը որ կատարեցին, շուտ դուրս եկան, գնացին թագուն իրանց տները՝ որ մարդ չիմանայ ու իրանց գլխին մի բան չգայ:

Ահա, սիրելիք, էսպէս էլ մենք պէտք է զգոյշ մնանք՝ այսինքն ամեն ժամանակ Աստծու պատուէրը և կամ մեծաւորի հրամանը լսենք, կատարենք, որ Յովհաննու տեսիլքից մեր վրայ էլ կաթի. թագաւորի ու Աստծու հրամանը մէկ ա, ինչպէս Մատթէոս սուրբ առաքեալը գրում ա «որում հարկ, զհարկ, որում պատիւ զպատիւ». այսինքն հարկս հարկաւորաց, պատիւս արժանաւորաց, կամ թէ շատ է աւուրն չար իւր, ամէն. օրհնեալ էք և օրհնեալ լինիք:

Հա, սիրելիք. էս էլ ասեմ ձեր աստուածասիրութեան, որ վաղը սուրբ խաչի տօն ու պաշտում պատարագի օր ա, ով որ յօժար կամքով հարկ ունի հոգալու, այսինքն ինչ որ սրտից բխում ա, վասն իրան ծնողաց հոգու խաթրի համար ժամ ա ուզում անի կամ մատաղի հացկերոյթ կամ թէ օգործաթաս, գովելի բան ա. թող իրիկնեց գայ, օրհնած աղ տանի, որ յետոյ ժամանակ չեմ ունենայ, այսինքն բոլոր գիշեր իմ սաղմօք քաղեմ, լիսը որ բացուի, նշխար գործեմ, մատաղագլուխ էլ ի հարկէ ինչպէս որ կարգն ա, օրհնքն ա, ձեր աստուածասիրութեանը յայտնի ա, էրիքը՝ որ է նախնեաց դրած պատուիրանքը, այսինքն ով չի պահի, զուր օձը նրան կկծի. զգոյշ կենաք, համբար-

քով ժամկետին պահ տաք, որ «ուտեսցուք, խմեսցուք, զմահ տեսան պատմեսցուք», ինչպէս Մովսէս և Ահարօն մեզ օրինակ թողեցին. և դուք անմահ պատարագից մասն ու բաժին ունենաք, և ընդ սրբոցն դասակակից և պսակակից մեծով ու փոքրով. վասնորոյ դարձեալ կրկնեմ՝ որ նախնեաց պատուիրանքը չմոռանաք, որ և արժանի լինիք միշտ ուխտադրութեան, մատաղի, խաչալուայի հանդերձ քահանայով, դպրով ու եկեղեցու բոլոր աշխատաւորներով, ամէն. օրհնեալ լինիք, Տէր ընդ ձեզ:

1863 p.

ՄԻ ՔԱՆԻ ՅԱՆԳԱՒՈՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐ ՆԱՄՍԿՆԵՐ ՀԻՆ — ՆՈՐ

Երևանից,
Վաղարշապատից.

Հա՛յր ուսեր եւ դսեր, նախապէս ընկեր.

Շնորհաւոր անուշիկ Աշոտիդ ի չգոյէ ի գոյ, յանշնջութենէ ի շնչաւորութիւն, ի կապից յազատութիւն, ի խաւարէ ի լոյս, յանդիտութենէ ի գիտութիւն, ի լուսութենէ ի լալկանութիւն, ի նեղ և յանձուկ բնակութենէ ի լայն և յընդարձակ աշխարհ՝ սաղ ստլամաթ դալը, ընդ որ ուրախ եմ հոգւով:

Եղբայր, առաւօտ առաւօտ խնամախօսները գլուխս տարել են. ասն, խնդրեմ, ինչո՞վ սրանց բաւականութիւն տամ, գլխիցս ռադ անեմ:

Մեր սիրելի, թանգագին ընկեր «ղՍ.բգար» կոչուած Արգարն ասում է «աչքդ լոյս. բարեխօսութեամբ բարեւէր բարեկամի Պ. Բ. ձեռնագրեալ ի քահանայ, դայ ի տուն քո ի փարատել անտի զցաւս, և լուացեալ զաղտեղութիւն մարմնոյ նորածին մանկանդ, առնել զնա արժանի որդեգրութեան սրբոյ երրորդութեան. ուստի վաղվադեան, աճապարեան, փութան, ել ընդ առաջ պատուարժան նորընծային,

Առատ ընծայիւ համբուրեան զաջ նորին,
Ա՛ռ, ընկալ զնա ի գիրկս քոյին,
Գեղգեղեան զերդ մեղմ ի քոյդ օրկորին,
Ներբողեան զճառ ի բարբառ ազգային,
Այրեան, տապակեան զսիրտ լսողին,
Բոլորեան դու պար ընկերօք քոյին,
Մայժ զնա ի դաւիթ հօր երկնաւորին,

Արդէն իսկ փութով ի մէջ տաճարին
 Բազմեցն փառօր յոսկեհունդ գահին,
 Եւ իջեալ ի ծունր առաջի բեմին,
 Մաղթեալ ի Տեառնէ զինչ պէտք են նմին.
 Փառք տո՛ւր ընտրողին, փառք միջնորդողին,
 Փառք ձեռնադրելոյն ընդ ձեռնադրողին,
 Որ վերջին զառաջինն ի կարգէ ստորին
 Բարձրացոյց այսօր ի գասս վերին:
 Ապա դու առեալ զամբօս մեծ ընդ քեզ,
 Ածել ի տուն քո մի առներ անտես,
 Ուր ի նախակազմ սեղանոյդ վերայ
 Ուրախ և զուարթ կատարես հանդէս,
 Շամպանիա գինի և խերես, մաղեր
 Բաց շառաչելով զինչ հարուստ տան տէր,
 Թո՛ղ ամենեքեան գոհ անտի ելցեն,
 Զի մի ասացեն «Նահապետն աղքատ էր»:

22 Փետրուարի 1870.

ՍԻՐԵԼԻՒՆՈՒՐԷՆ.

Թիֆլիզումն ես, Մանգլիզումն ես, թէ ո՛ւր ես, չգիտեմ,
 միայն գիտեմ, որ տխուր ես, և այդպէս էլ մեզ վըշտակից
 ես արել քեզ, բայց ինչ օգուտ, երբ մահն անգութ
 է հարցնում ոչ լաց, ոչ կոծ, ոչ վիշտ, ոչ խոց, միշտ
 տարել է ու տանում է ամեն ծնունդ, ամեն սնունդ, հայր
 Աղամից, մայր Եւայից սկսած. ուրեմն սիրելի, աշխարհն
 է հայելի, մարդկանց պատկերներ շատ կամ քիչ ժամեր
 մէջը կերևան ու կանհետանան. եթէ որ այդպէս, խորհուրդ
 հուրդ կտամ քեզ մոռանալ յանկարծ զնացածն անդարձ,
 թողուլ մաշող վիշտ, ուրախ լինել միշտ Աշխէն — Թուշիկով

ու Մարջանիկով. Աստուած բարերար տարիներ երկար
 պահէ, պահպանէ նրանց քեզ համար, քեզ նրանց համար,
 ամէն:

Բազմաշխատ Պալեանի կենսաթոշակի համար դրած
 եմ նամակ կրկնակի, նա ինքն էլ յուսով գիմեց քեզ
 այսօր մի կարճ նամակով, որ առնես շուտով իրեն ապա-
 հով. այդ գործն անկատար թէ՛ և չի մնայ, բայց ուշանա-
 լով փոր չի կշտանայ, ասո՛ւ, ինչ եղաւ, ասո՛ւ, ո՛ւր մնաց.
 պէտք է մարդուն հաց. հենց ես էլ, դու էլ, մեզ հետ
 շատերն էլ փորձած, տեսած ենք, նեղութիւն կրած ենք:

ՍԻՐԵԼԻՒՆՈՒՐԷՆ.

Դու ինձ ասում ես, «ինչո՞ւ լռում ես, գրիչդ սրիր,
 մի նամակ գրիր»: Շատ լու ես ասում, քաջ ես այդ մա-
 սում. ինձ պէս տկարից ինչ ես սպասում եմ նմանում է
 դրել ու ջնջել, ինձ շատ օգնում է խմել ու ննջել. կգայ
 ժամանակ, դու էլ գործ, նամակ դէն կշարտես, կեանք
 կպտրտես: Կեանք անցեալի պէս երբէք չկարծես, անցաւ
 մարմնական, հասաւ հոգեկան: էլ ես չեմ նայում սեահող
 երկրին, ուր մարդիկ խումբ խումբ ցնծան ու բերկրին.
 աչքս ձգել եմ երկնակամարին, ուր արեւ, լուսին և աստեղք
 փարին: Չեմ այցուհետեւ մանկանց վարժապետ. այլ ու-
 ղիղն ասած, քաջ աստեղագէտ. քննում եմ նրանց, զննում
 եմ նրանց, տեսնում եմ՝ որ կան հաստատուն, անանց,
 իսկ աշխարհն ունայն, ունայն, ընդունայն, յոր մարդիկ
 համայն կրեն անն ու վայն, մանաւանդ թէ հայն... Աստուած
 հրաշալիաւ. լուր դու մեր բարբառ, կրկին տո՛ւր փորձում
 Աղամայ որդուն իւր հօր ճաշակած, ան, այն պտղի ծառ:
 Բայց ինչ եմ ասում, դարձեալ կխաբուի և խիստ քո
 ցասում վերան կթափուի: Ուրեմն գործ քո մնայ անփո-
 փոխ, մարմին հոգեդէն թո՛ղ հենց դառնայ հող: Օ՛հ, ե-
 րանի ձեզ վերնոցդ անմահից, էհ, վայ ներքնոցդ, որ դո-
 ղաք մահից: Ասեմ այսքան ինչ, այլ ևս ոչինչ:

Ուրիշ բան խօսենք, ինչ կայ, դուրս հոսենք: Մեռնին
օրհնուեց, կաթսայն վայր դրուեց, տաք տաք համբուր-
ուեց, ժողովը ցրուեց. երկրագեղեցիկն, վանքն այցելե-
ցին, հինգ ժամ մնացին, շատ բան գիտեցին, յիշատա-
կարանք ծոցից հանեցին, ինչ որ կամեցան, նշանակեցին.
դարձան ճեմարան, ճաշ վայելեցին, լի զգացումներով ճա-
ռեր խօսեցին, մեր վարդապետներ ու վարժապետներ
լաւ թարգմանեցին. ապա դո՛հ սրտով այն արգոյ հիւրեր
մեկնեցան, անցան, Մասիս բարձրացան, ուր մէկը թողեց
իւրեան մահարձան:

Դիտես այդ արդէն, բնաւ կտակած չիք. առն, զուճրթ
են Մարջանիկ, Թուշիկ, Նոյնպէս Աշխէնիկ, և դու Ռուբէ-
նիկ: Առէք մեզանից համբոյր քնքուշիկ, քաղցր և անու-
շիկ, տուէք այդպէս էլ Պուօշեան Պերճին, Պերճեան Պուօշին
և Պերճանուշին և մօրն Անուշին և մեծ ու փոքրիկ երե-
խաներին: Յովհաննիսի տուն լինի հաստատուն, իրանց շատ
ողջոյն տան սիրով անհուն: Մաշան հեշտ ծնաւ աղջիկ մի
սիրուն, մօրքոյրդ ամիս մի հսկում էր արթուն:

Դէ, ցտեսութիւն. Աստուած ամենիդ տայ առողջու-
թիւն. այս է Սիմօնիդ անվերջ օրհնութիւն:

2 Հոկտեմբերի 1897.

Սիրելի՛ Ռուբէն.

Դիտեմ, գիտեմ, զարմացած ես,
Մինչև անգամ զայրացած ես՝
Որ անցել է շատ ժամանակ,
Չես ստացել մեզնից նամակ:

Բայց թէ պէտք է լաւ իմանաս
Օգուտն անձիդ նոյնպէս ֆրաս,
Ու պատճառը դեռ չբննած
Ի զուր տեղը չնեղանաս:

Հազար ինչ էլ որ գրէինք,
Ինչքան թուղթ էլ որ մրէինք,
Ասումեմ՝ քեզ ուղիղն, արդար,
Ոչինչ արժէք պիտ ունենար
Այդ տեղ դարձած մեր թանգ հիւրի,
Մեր պատուական լաւ բնկերի,
Մեր սիրելի եղբօր Պերճի
Արագ լեզուով պատմածների
Առաջ. այո՛, քաջ է նա, քաջ.
Դիր ճակատին մեր տեղ մի պաշ.
Պաշտպան լինի իրան սուրբ խաչ
Եւ մանկանցն Հգօրի աջ.
Եկաւ, ուղածն առաւ, դարձաւ,
Դրել ինձ պէս հենց ծուլացաւ:

Թերեւս այժմ էլ ասես «վահ, տճ»,
Բաս քաջ Պերճի գալուց յետոյ
Ինչո՞ւ չէիր մի բան դրում,
Մեզ մի փոքր մխիթարում:

Ահա հարցիդ պատասխանը.
Լօխր գլխիս եկած բանը.
Կենսաթոշակն իմ ուշացաւ,
Մնամ տխուր նստած տանը:

Մօրաքոյրդ միշտ ասում է
«Աստուած վերջը բարի անի»
Ինքն էլ յուսով սպասում է
Թոշակն առնի, տայ մինթանի:

Էլ ինչ ասեմ, ցտեսութիւն.
Մեզ էլ ձեզ էլ համբերութիւն.
Բարով գտնենք շուտ մեր գրկին
Անդրանիկին ու փոքրիկին.
Աստուած լսէ ու կատարէ
Մեր սրտերը մխիթարէ:

Դու գրում ես ոտանաւոր,
Ես գրում եմ ոտանաւոր.
Արդեօք որն է յարմարաւոր.
Պերճը լինի թող դատաւոր:

Փեսայդ, քենիդ ողջունում են միշտ փոխադարձ.
Սորա համար՝ ասան տեսնեմ, ինչ է իմ վարձ:



Հ. բարեկամիս.

Ո՛ւր ես բարեկամ, դու լաւ բարեկամ.
Քեզ սպասելով եղայ արիւնքամ.
Եթէ շուտով գալ ինքդ ոչ կարես,
Ասան, խնդրում եմ, որտեղ գտնեմ քեզ:

Այս առաջին չէ, այլ թէ շատ անգամ
Եղել ես հեռու, ով դու բարեկամ.
Բայց արդեօք ինչո՞ւ այժմս ինձ համար
Առանց քեզ չկայ հանգիստ ու դադար:

Ես բնաւ երբէք չեմ փախչում մահից.
Ձեմ սարսում, դողում նորա խիտ ահից.
Միայն չեմ ուզում նորա ճանկն ընկնեմ,
Մինչև քեզ տեսնեմ ու կարօտս առնեմ:



Ազնիւ բարեկամ, հազիւ ժամանակ
Գտայ գրել Ձեզ, ահա, այս նամակ.
Առէք մօրքուրիդ և իմ շատ բարև.
Թող լինի երկար Ձեր կենաց արև:

Նոր լուր ինչ գրեմ, արդէն գիտէք լաւ,
Թէ մեռնօրհնէք որ օրը եղաւ.
Գուցէ չգիտէք վերջին օրերում
Պատահած մի անցք այս մեր կողմերում:

Քուրդ աւազակներ արեցին աւար,
Քշելով սարեր շատ ոչխար, տաւար.
Օգնութեան հասնող խեղճ պրիստաւը
Հինգ տեղից եղաւ զուր գնդակահար:

Նորա մարմինը այստեղ բերեցին,
Յետոյ Երևան տարան թաղեցին.
Իսկ վիրաւորուած գրագիր մի հայ
Դեռ կայ կենդանի՝ հառաչելով վայ:

Չկայ Ձեզ անյայտ ուրիշ նորութիւն.
Գրիչն էլ չունի այնքան զօրութիւն
Եւ թոյլ չէ տալիս իմ առողջութիւն,
Որ հին անցեալից տամ տեղեկութիւն:

Միայն մեր կողմից կարող եմ ասել,
Բիւրական թէև մեզ չէ վնասել,
Բայց և չէ օգնել ոչ մի լաւ բանով.
Մեր լսածի չափ չէր այնտեղ շատ հով:

Օգոստոսի վեց փախանք Երևան,
Միւս առաւօտը իմ ընկեր Եւան
Գնաց գիւղն առ իւր յղի քեռորդին,
Ու գրկեց երրորդ նորածին որդին:

Սեպտեմբերի չորս եկանք մեր տունը,
Եւան կորցրած հանգիստն ու քունը,
Ինչ որ կար չկար քարուքանդ արեց,
Սրբեց ու մաքրեց, լաւ կարգի բերեց:

Կամիմ նամակս կարճ վերջացնել,
Երկարելով Ձեզ չձանձրացնել,
Բայց ինչպէս թողում չատ կարեւորը,
Ի՞նչպէս մոռանամ անցած լաւ օրը:

Միշտ յիշում ենք մեր անմոռանալի
Թանգագին հիւրեր Ձեզ մեզ սիրելի.
Թող լինի նոցա ուխտն ընդունելի
Եւ հայցուածները Տիրոջ հաճելի:

Անցաւ ամառը, եկաւ աշունը,
Մօտ է ձմեռը, հեռու գարունը.
Անհամբեր սրտով Ձեզ սպասում ենք.
Ե՞րբ արդեօք պէտք է համբոյրներ առնենք:

Հոկտեմբեր 19—97.

Սիրելի Յովհաննէս,
Ոչ այլ ոք, այլ ես
Պինդ գրկելով քեզ,
Համբուրելով քեզ,
Բերկրութեամբ սրտի
Տեսանելով քեզ
Ուրախ և զուարթ
Բացուած ինչպէս վարդ,
Ասեմ չնորհաւոր
Տօնդ փառաւոր:

Այդ տօնի հետ կից
Կեանքիդ դարելից

Կեանքիդ ընկերով,
Ժիր որդիքներով,
Լաւ թոռնիկներով
Ու հարսիկներով
Դու շրջապատուած
Բարեաւ կատարես.
Լսէ Տէր Աստուած
Ձօր խնդրեցի ես
Քո սիրոյդ գերիս՝
Սիմէօն ծերունիս:

Յունուար 14. 1899.

Պատուական և պատուապահ ազնիւ տիկին Տիրուհի.
Բարեսիրտ, բարեհամբաւ, բազում տիկնանց թագուհի.
Հայասէր, հայրենասէր, հանրածանօթ հայուհի,
Տաղանդով, եռանդով լի, չունող Ձեզ ընկերուհի:

Քաջ գիտեմ Ձեր արժանիք, մի մի թուել աստ կարեմ,
Ճանաչողք կասեն ո՛չ, ո՛չ, զի գիտեն ես տկար եմ
Ո՛չ այնքան ուշ ու մտքով, որքան յոգնած իսկ մարմնով.
Հաստատող բանիս այն, որ չեմ զբաղւում պաշտօնով:

Թո՛ղ տուէք յիշել և մին ի Ձերոց շատ արժանեաց.
Այն է՝ Դուք պարտաճանաչ էք միշտ ըստ իմ լաւ կարծեաց.
Բայց մի լուր գուցէ սխալ, երեկ հասաւ ականջիս,
Իբր թէ՛ գալ այս ձմեռ Վաղարշապատ ո՛չ հաճիս:

Հաւատալ ոչ վստահիմ, զի բնաւին չիք կարծիք,
Որ, այն, չէք զլանալ կատարել Ձեր սուրբ պարտիք,
Եւ յանկարծ բազմած կառքիդ դղրդիւնը տհաճին
Կաւետէ բարի գալուստ Ձեր ամուսնոյն թանգագին:

Յայնժամ նա մխիթարուած, տխուր կեանքից
ազատուած,
Կընդունէ Ձեզ գրկաբաց ու կասէ «Փառք քեզ, Աստուած,
Որ ունիմ պարտաճանաչ այսպէս ընկեր սիրելի,
Շարգելի և պաշտելի, հաճելի և դովելի»:

Ի՞նչ կարծիք, որ և մի օր կատարելով իւր հաճոյք,
Բարեկամ մարդոց համար կպատրաստէ լաւ խնճոյք.
Ընդ որս սեղանակից նաև անշուշտ կլինի
Ձեզ միշտ յարգող Սիմէօն, որ կուլ կտայ պարզ գինի
Ձոյգիդ պայծառ թանգ կենաց,
Սսելով շատ սրտաբաց
Ո՛վ աղնիւ, բարի հոգիք.
Լերսւք ողջ, երկայնակեաց:

Ծնորհակալ եմ, բարեկամ,
Ծնորհակալ հարիւր անգամ,
Որ զրկեցիք զէյթուն թաղայ
Ինձ համար լաւ գինու մաղայ:

Ախորժակով վայելեցի,
Լի բաժակներ դատարկեցի
Ձեր թանգագին, պայծառ կենաց,
Թո՛ղ երկարէ այդ կեանքն Աստուած:

Իմ ճաշակիս բանը չէ ձուն,
Իւղն ու կարագ, կաթն ու մածուն.
Ես կսիրեմ չորն ու ցամաք,
Աղին, թթուն, դառն, կծուն:

Հենց տուն մտայ տօնիս օր,
Ասաց «տօնդ շնորհաւոր.
Ա՛ռ այս բաժակ քեզ ընծայ,
Լից, դատարկիր ու ցնծա՛»:

Ասաց, մեկնեց իւր ձեռքով
Քաղցրաժպիտ հայեացքով
Աղնիւ տիկին Տիրուհին
Այն նուէրը թանգագին:

Ընդունեցի գոհութեամբ,
Ձբաղունցի քննութեամբ.
Կաղմուածքը իմացայ,
Հիացայ ու բերկրեցայ:

Խմիր գինի, խմիր ջուր,
Շատերին էլ խմել տուր,
Ապա ծախիր, ծոցդ դիր,
Դարձեալ հանիր ու գործ դիր:

Ունի այս լաւ յատկութիւն,
Ձունի բնաւ ծանրութիւն.
Կոտրուող չէ, մաշուող չէ,
Ձի ապակի կամ հող չէ:

Լցնել, քամել այս բաժակ
Նուիրողի թանգ կենաց,
Բաց է միշտ իմ ախորժակ.
Բաւ է միայն պատու հաց:

Փետրուար 14. 1899.



Դամա պարի, աղնիւ, բարի.
Ապրիլը ուրախ բազում տարի.
Չհանդիպիք բնաւ չարի,
Լինիք յաղթող և միշտ արի:

Ամէն, ամէն, ասեմ ամէն.
Ձեր հաւատն լինի Ձեր գէն
Միակ պաշտպան և ապաւէն,
Եւ ազատող վատէն, չարէն:

Աշխատասէր Ձեր ամուսին
Յոյժ ծանր լուծ բարձած ուսին,
Տքնում, ճգնում է զօրն ի բուն.
Չգիտէ ինչ է հանգիստ քուն:

Նատը գնաց, քիչը մնաց.
Շուտ կձգէ այն լուծն ի բաց
Ու կփութայ դալ Ձեզ գտնել,
Հանգիստ առնուլ, մխիթարուել:

Ընդունեցէք, Ձեր մօրքուրից
Եւ Ձեր պարի կաւալերից
Սոյն երկտողով շատ շատ բարե,
Երկար փայլէ կեանքիդ արե:

Թող ընդունէ նոյնպէս և Ձեր
Ուղեկիցը շատ ողջոյն մեր.
Աստուած իրան միշտ օգնական,
Հովանաւոր և պահապան:

Արգոյ բարեկամ, պարոն Կարապետ,
Բարեհաճեցէք տանել ինձ Ձեզ հետ
Ի Բաքու քաղաք, տեսնեմ մի անգամ
Իմ պարի դամին ու մի բոլ պար դամ:

Իսկ թէ չէք տանի, երբ տեսնէք բարով,
Տուէք մօրքուրիդ և իմ շատ բարով.
Մենք ամսոյս վերջին միտք ունինք գնալ
Ի Նոր-Բայազիտ, մինչ աշուն մնալ:

Իմ բաժին ծանրաց մի տիկ լիք գինի
Եւ այն թանգ բաժակ միայն կլինի.
Որ Ձեր երկուսի պատուական կենաց
Դատարկեմ, պահեմ միշտ կոկորդս թաց:

6 Յունիսի 1899.

Ա. Գ. Ն. ի՛ւ բարեկամ.

Փոքր ինչ ես թոյլ և տկար եմ.
Ի՞նչ լաւ գրեմ, ինչ երկարեմ.
Ինչո՞վ նամակս զարգարեմ.
Ի՞նչ բանով Ձեզ մխիթարեմ:

Է՛հ, լաւ թէ վատ ինչ օր էլ կան,
Ասեմ լուրեր Ձեզ տեղական
Ապրիլից մինչ մայիսի կէս
Դաշտերն եղան արեւակէզ,
Խեղճ անասունք նիհարացած
Գնում դալիս էին քաղցած.
Հին խոտն էլ շատ թանգ էր ծախուում,
Ունող շահում, չունող զրկում.
Յետոյ եկան յորդ անձրևներ.
Էլ հին խոտը ո՞վ կգնէր:

Արդ՝ ուրախ են բոլոր հայ, թուրք,
Որ բաւական անձրեւջուրք
Կանաչ, կապոյտ նոր բոյսերով
Ձարդարեցին դաշտ և բլուրք:

Հացի գինը պակասում է.
Ամբարատէրն էլ ասում է
«Երանի՜ թէ լաւ կարկուտ դար,
Ֆորենի գին շատ բարձրանար.
Ամբարիս դուռ բաց անէի,
Մեծ կշեռքը կախ անէի.
Խալվարն երկու հարիւր թուրով
Իսկոյն ի վաճառ հանէի»:

Իսկ քաղցածներ ասում են «Տէր,
Ողորմած Տէր, միշտ գթած Տէր.
Բաց քո ողորմութեան դռներ.
Արևի հետ տո՛ւր անձրեւներ.
Բազմացրո՛ւ բոլոր բերքեր.
Ձօրացրո՛ւ մեր թոյլ ձեռքեր,
Հնձենք առատ նոր ցորեններ,
Հները թո՛ղ ուտեն մկներ»:

Մէկն այս կասէ, մէկն այն կասէ.
Տէրը որի՞ ձայնին լսէ.
Մէկի ուղածն էն միւսին
Ձէ որ չափազանց փափ է:

Երեք անգամ ուժգին մրրիկ,
Էլ լնչ մրրիկ, մեծ փոթորիկ
Երկնից մինչ երկինք բարձրացաւ,
Մեծ մեծ ծառեր, ջարդեց, անցաւ:

Ոմն հիւանդ հին միաբան
Հաւաքեց իւր տան ամեն բան,
Ինչպէս հենց դոյք ժողանդական
Տարաւ ի տուն հայրենական:

Վեհը չէ աստ յէջմիածին,
Գնացել է ի Հաղարծին,
Որ և շուտով կգայ այս վանք,
Յետոյ կերթայ Սաղմոսավանք:

Երկու հոգի ուսանողներ
Արսէն, Բագրատ վարդապետներ
Կոչուած են աստ ի Մոսկուայէն,
Կարծեմ, գիտէք սոքա ով են.
Դեռ եկել է առաջինը.
Կգայ շուտով և վերջինը:

Էջմիածնի հին գինետան
Ու հանդէպի նոր սառցատան
Մէջ տեղ շինւում է բաղանիք.
Արդէն հասած է մինչ տանիք:

Վեհափառը վերադարձաւ.
Տօն Հռիփսիմեանց կատարեցաւ.
Գնալու է Խոր Վիրապ վանք,
Դառնալու է կրկին յայս վանք.
Յետոյ ինչպէս վերն ասած եմ,
Երթալու է Սաղմոսավանք,
Որ նորոգուած այն տեսանէ,
Անդորրութիւն անդ գտանէ:

Շատ ողջոյններ, օրհնութիւններ
Տան Ձեզ երեք սրբազաններ.
Սրանց հետ էլ մի սարկաւազ
Աւագների միջից աւագ.
Վերջնոյս թոյլ է տրուած զնալ
Հանքային ջուրն լողանալ:

Յուսիկ հայր սուրբ շատ հիւանդ էր.
Այստեղ նորա համար բանտ էր.
Փոխ առաւ մի քանի թուաման,
Ելաւ, գնաց Արասթուաման:

Այս բոլորը մօտիկ տեղից,
Մի լուր էլ տամ հեռու տեղից.
Առաջնորդը Աստրախանի
Շուտ Օդեսա կհասանի:

Միտքս ուրիշ բան չէ գալիս.
Ձոհրաբ բողոքում է, լալիս,
Թէ վանքն իրան շոր չէ տալիս,
Հայր սուրբն էլ գինի չէ տալիս:

Վաղն առաւօտ դուրս ենք գալու.
Ձունիմ ոչինչ էլ գրելու.
Հնա, միտքս եկաւ ուրիշ նոր բան,
Գրեմ ու թուղթ գնեմ գրպան:

Եկել է մի կոյս խելագար.
Պէտք է մնայ այնքան երկար,
Մինչև լցնէ գրպան ոսկւով,
Բժշկուելու երթայ Մոսկով:

Ընդունեցէք բոլորդ մեր
Շատ սիրով լի շատ բարոյներ.
Օհ, երանի թե առնէինք,
Մի օրով Ձեզ հիւր լինէինք:

Պարոն Սեդրաք, մեծ վարժապետ,
Եւ բնագէտ, և լեզուագէտ.
Շնորհաւորեմ երկտող գրով,
Լայնածաւալ սրտով, սիրով
Արդիւնաւոր ուսուցչութեան
Մեծահանգէս Ձեր յորելեան.
Ձեր որդիքն էլ ժամանակին
Բարով հասնեն այդ վիճակին:

2-27 1900.

— ❦ —

ձանապարհորդ բարեկամներիս.

Գնաք բարով, գաք բարով
Ծաղկած դաշտով ու սարով.
Ո՛վ պատուական բարեկամք,
Ձեզ հետ միշտ ճիրով խնամք:

— ❦ —

Ա. ր. գ. յ բարեկամ.

Ձմեռն անցաւ, գարունն եկաւ, մեր Գուրգէնը շատ
դարմացաւ, որ ինձնից Ձեզ նամակ չեկաւ, նա չգիտէ թէ
ինչով եմ ես զբաղուած. ազատ ժամերս երկու բանի են.
նուիրուած. մէկն է երկար յառաջաբան, միւսը համառօտ
վերջաբան. ժողովում եմ վաղուց գրուած, այս տեղ այն
տեղ անխնամ ցրուած բոլոր ոտանաւորներս, որոց շատերն
անյայտ կորած. գոնէ որքան պատրաստի կան, թող խաւա-
րից այժմ լոյս գան. ծախքը սրանց տպագրութեան յանձն է
առնում Խանազատեան պարոն Գէորգ Երեանցի, խօսքը
մերժել չկարացի. Լաւ կլինի տպուի պրծնի հենց էս տարի,
էլ չմնայ եկող տարի, որ սկիզբն է նորոգ դարի. կարծեմ
դուք էլ կհաւանէք ու կտաք Ձեր խորհուրդ բարի:

Ուրիշ ինչ կայ, որ ինչ գրեմ. էլ էն գիւղը, էն գիւղացիք. էլ էն վանքը, էն վանքցիք. աւելի լաւ կհամարեմ, յատուկ իմ պարտքս կատարեմ, խնդրելով Տէր Աստուածանից տալ Ձեզ և Ձեր թանգ ընկերին, Ձեր սիրելի զաւակներին առողջութիւն, յաջողութիւն և Ձեր ցանկացած բարութիւն, ամէն:

3 Ապրիլի 1900.

Սիրելի՛ Գեորգ, ազնի՛ւ սանահէր.

Շնորհաւոր տօնդ, ընդունիր իմ սէր, կեր ընդ բարեկամս, անք և ուրախ լեր. Իսկ ես կմաղթեմ առ բարերար Տէր Տալ քեզ սիրունիկ գառնիկ գանգրահեր, Որով կատարեալ լինի քեֆը մեր:

Այսօր Մինասին խմբով կսպասեմ, Թէ չեկաւ, ամեն տեղ կբամբասեմ. Ճշմարիտ մարդ եմ, ուղիղը կասեմ, Ընդ ուխտադրութեան նորան կգասեմ:

26 Սեպտեմբերի 1900.

Ա.զնի՛ւ բարեկամ.

Շատ երազ էի տեսած, բայց ուղիղն ասած, այսպիսին չէի տեսած և ուրիշներից էլ չէի լսած. ահա ասեմ գլխիցն սկսած. է՛հ, որքան ուզում եմ դէն չպրտեմ այս յանգերը, չի լինում, չի լինում. դարձեալ գալիս եմ, ցցում առաջիս դրանց անշնորհք պատկերները, ու խափանում կամ փոխում գեղեցիկ կարգաւ դասաւորելի նիւթոց մտքերը. Դէ, դէ, կորէք, գնացէք, յանգեր, ընկէք ձեզ

աւելի սիրողների ճանկեր, թող էլ չգառնան ինձ մօտ ձեզ պէս բառերն ու վանկեր:

Ահա այս է երազում ձեզ գրածս. «ի վաղուց հետեի բաց թողեալ է իմ զբուն բառբառն գրոց՝ զոր սիրէի յոյժ և ուսուցանէի այլոց: Աւաղ անցաւորիս, անցան, գնացին աւուրքն այնքիկ անգառնալի: Արդ՝ փորձեցից, գրեցից, տեսից ո՞րչափ ինչ հիւսել կարացից, թերեւ ըստ չափ և ըստ սահման լաւագունիցն ի քերթողաց և ի հայկաբանիցն անցից և առաջի նոցին յամօթ և ի նախատինս կացից. յայնժամ իւ իւրիք ի ձեռաց նոցին զիս զտկարս աղատեցից» (ճհ, ճհ, այս տեղ էլ յանգերը եղան ցից):

Առաւօտը զարթնեցի, երազս իսկոյն գրեցի ու գուշակեցի՝ որ այդ օր կստանամ անշուշտ Ձեր նամակ, և արդարեւ ստացայ, սիրով ընթերցայ ու շատ զարմացայ, որ գուշակութիւնս այդպէս կատարուեց, քոյրիկդ էլ շատ մխիթարուեց. չէր հաւատում թէ կկատարուի, մարջ եկանք, որ տարուի. ահա իմ տարած գինւով լի շիշը չորեցունցդ թանգագին կենաց շատ ուրախ ուրախ ես դատարկում եմ, խորոված սուկին տաք վայելում եմ:

Անչափ շնորհակալ եմ զոյգիցդ՝ սիրալիր նամակներ գրողներիցդ: Ընդունեցէք և դուք բոլորից փոխադարձ ողջոյններ սիրալից: Չկայ այս տեղ հետաքրքիր նորութիւն. բայց կայ միայն անձրևի առատութիւն. ամեն տեղ է այդ երկնային բարութիւն: Էլ ջութակը չեմ ածում. գիտէք ինչ եմ մտածում, դամ ես ածեմ, դուք պարէք ու միշտ ուրախ կեանք վարէք. լաւ կլինի, ես կարծեմ. ուրեմն սայլս բարձեմ: Տփիսից մեր—ձեր բարեկամն եկաւ, մի գիշեր մնաց ու դարձաւ, գնաց: Թղթեր եմ տպում, երկար չեմ գրում, ներումն եմ խնդրում:

30 Սեպտեմբերի 1900 թ.

Շատ այսպիսի նամակներ կան.
Թող լինի այսքան բաւական:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Հասաւ ծաղկազարդ, դաշտերն են անզարդ

Բարով երթաս, զատկաբեր պաս.
Ամեն տարի դու բարով գաս.
Բարով շուտ-շուտ անցնես, գնաս,
Յուրան էլ հետդ շուտ տանել տաս,
Էլ երկար դու հիւր չմնաս,
Լորով, բակով չտաս փաս.
Դեղն է գինի ամբողջ կարաս,
Հազիւ ձեռք ենք բերում մաս-մաս:

Դէ, գնա, թող գայ շուտ Զատիկը,
Լցնենք գինու դատարի տիկը,
Վայելենք համեղ գառնիկը,
Խմենք մեծ-մեծ բաժակ լիքը.
Քաղենք նոր բացուած ծաղիկը,
Հոտոտենք կարմիր վարդիկը
Ասենք «բարով եկար՝ դարձն,
Ծաղիկներովդ զարդարուն»:

21 Մարտի 1904. Վաղարշապատ.



«ԵՍ ԵՍ ԵՄ, ԵՍ»

Եսը մի օր շատ զայրացած
Դու-ին, նա-ին դարձաւ, ասաց.
«Դէ, լուեցէք, ես ես եմ, ես,
Լաւ իմացէք, դու, նա չեմ ես»:

Էլ ի՞նչ արած, խեղճ դուն, խեղճ նան
Եսի առաջ ո՞նց լուռ մնան.
Ասացին «ո՛վ եսդ հպարտ.
Դուն, նան միթէ չեն քեզ պէս մարդ»:

Եսդ ինչո՞վ ես աւելի.
Ասա՛, տեսնենք, ո՞յ սիրելի.
Ինչ եսդ անէ, է ներելի,
Ինչ դուն, ինչ նան աններելի»:

Եսդ եսով մի պարծենար.
Դու-ին, նա-ին մի մերձենար.
Եսդ միայն անձն է մէն մի,
Իսկ դուն, նան մէկով աւելի»:

Եսն իր եսով բարձրանալով,
Ասաց սաստիկ բարկանալով.
«Դէմք առաջին, երկրորդ, երրորդ.
Եսի առաջ դուն ո՞վ, նան ո՞վ»:

Դէ, դէ, լուիր, լուիր, ո՞վ «ես».
Ամենքի էլ դէմքն է քեզ պէս
Դու-իս, աչք, քիթ, բերան, ծնօտ,
Միւս մասերն էլ նմանապէս»:

Եսն աւելի բարձր ձայնով
Իրան ես եսը կրկնելով,
Ասաց «ես ցոյց տուի դէմքեր,
Դուք դարձրիք մարդկանց պատկեր»:

Իմ ասածս չէր մարդկանց դէմք.
Այլ էր Չամչեան արհեստի դէմք.
Զօր օրինակ ես, դու և նա,
Նոյն է ինչպէս և սա, դա, նա»:

Լուիր, լուիր, ի՞նչ ես ասում.
Մեզ էլ էդ կարգումն ես դասում.
Եսիդ հետ մի խառնիր «դու, նա».
Միայն եսդ է հենց սատանայ»:

23 Մարտի 1904. Վաղարշապատ.

Վ Ա Տ Փ Ե Ձ

Եթէ վատ է չինուած փեշ,
Ինչքան կուգես, վառիր, հէշ.
Թէ լաւ է, ութ կտոր փայտ
Բաւ է այրել նորա մէջ»:

Լաւ փեշի լաւ յատկութիւն
Է նորա լաւ տաքութիւն,
Որ երկար տաք է պահում
Սենեակներ երկու կողմում»:

Վատ, անպէտ փեշի փորը
Փայտի յիսուն կտորը
Տաքացնել չէ կարում:
Տան մէջ ցուրտն է լաւ պարում:

Փեշերի այս տեսակներ
էժան դնով շինուածներ
Վաղարշապատում շատ են.
Լսում եմ միշտ դանգատներ:

Բայց ձմեռն էլ շատ խիստ էր
Խիստ ու շատ անհանգիստ էր.
Քսան ու հինգ աստիճան
Ցուրտն անում էր իր շրջան:

Այդ ցուրտն ամեն ծակերից
Մտնում, քշում է տանից
Եղած տաքութեան կէսը.
Խոչ անի խեղճ անտեսը:

Դրպանումը փող չկայ,
Անփող փայտ տուող չկայ.
Եղած փայտը հերիք չէ.
Ցուրտը երկար կփչէ:

Փողատիրոջ համար էլ
Հեշտ չէ նոյնպէս վճարել
Մէկին երկու փայտի դին.
Զմրան փայտն է թանկագին:

Բառ ինչ անեն այն մարդիկ,
Որ ճղուած շապիկ, վարտիկ
Ու վերարկու բարակ, հին
Հենց միայն հազած ունին:

Խելօքներ փորձ արեցին,
Քարածուխը վառեցին.
Տեսան փայտից էժան է,
Թանգիցը աղատուեցին:

Ոմանք էլ նոր շարժական
Փեշեր առան պատուական.
Դրանց մէջ նաւթ է վառում,
Տունը շատ լաւ տաքանում:

Ինչ և իցէ ցրտաշունչ
Ձմեռն անցաւ կիսաշունչ,
Գարունն եկաւ ծանրաքայլ,
Բայց ոչ արեգակնափայլ,
Որ բացուին պատուհաններ,
Տաքանան սառն տներ:

Մինչ երբ երկինքն ամպամած
Տայ ճանապարհ անձրևաց.
Սուրբ Զատիկը գայ բարով
Իրան պայծառ օրերով,
Պարտէզների, դաշտերի
Կանաչ, կարմիր զարդերով:

25 Մարտի 1901. Վաղարշապատ.



ՄԵՂԱԴՐԱՆՔ

Մարդիկ մարդկանց մեղադրում են այն գործում,
Որ գործը որ իրանք էլ են միշտ գործում.
Դորա համար էլ ինչ ասենք, ինչ անենք.
Ուրիշ ոչինչ, միայն պէտք է համարենք
Այդ իսկ աշխարհիս օրէնքն:

Թէ չես ուզում գործեն քո դէմ մի վատ գործ,
Դու էլ այլոց դէմ մի գործի այնպէս գործ.
Թէ չես ուզում մեղադրուես այն գործում,
Դու էլ այլոց մի մեղադրի նոյն գործում:

Թէ չունի մէկն իրաւունք վատ գործելու,
Միւսն էլ չունի իրաւունք այն գործելու.
Թէ նա, թէ դու, թէ ես գործենք միշտ բարի,
Զհետեւենք, չժառայենք մենք չարի.
Դորանով էլ չենք լինի
Պահած օրէնքն աշխարհի:

Ո՞րն է օրէնքն աշխարհի.
Մէկն իրաւունք ունի քեզ լաւ մտրակել,
Դու իրաւունք չունես նորան ապտակել.
Մէկն անտեղի կարող է քեզ բամբասել,
Դու չես կարող աչքով տեսած վատն ասել.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Վատ գործողին եթէ կանչես, խրատես,
Նորա աչքում դու վատերից էլ վատ ես.
Նա ուզում է իւր վատը լաւ համարուի,
Իւր ցանկացած ամեն բանը կատարուի.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Մէկը միւսից օգնութիւն է պահանջում,
Բայց նոյնն անել ինքը չէ բարեհաճում.
Մէկն ուզում է հասցնել այլոց չարիք,
Բայց փոխարէնն սպասում է միշտ բարիք.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Դու իրաւունք ունիս խնդիր չլսել,
Իսկ այլք պարտ են հրամանդ շուտ լսել.
Դու կարող ես մէկի վերայ բարկանալ,
Նա պարտական է քո առաջ լուռ մնալ.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Դու իրաւունք ունիս մէկին վրասել,
Նա իրաւունք չունի ոչ մի բան ասել.
Դու կարող ես փայտով նորա գլխին տալ,
Նա չէ կարող քեզ վերայ մատը թափ տալ.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Մէկն իրաւունք ունի ինձ, քեզ անպատուել,
Ես, դու պարտ ենք նորան սիրել ու պատուել.
Մէկի փոքր սխալն անգամ չէ ներում,
Միւսի մեծ մեղքն աննշան է երկում.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Մէկն իրաւունք ունի առած պարտքը յետ չտալ,
Միւսը պարտ է նորա ուզածն իսկոյն տալ.
Դու ասում ես— եղիր բարի, ողորմած,
Բայց չես ուզում տալ քաղցածին պատառ հաց.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Մէկն իրաւունք չունի ասել քո վատը,
Դու իրաւունք ունիս անել քո դատը.
Ինձ յայտնապէս դու կարող ես անարգել,
Ես պարտ եմ քեզ խոնարհաբար միշտ յարգել.
Այդ աշխարհիս օրէնքն է:

Մէկը միւսից լաւ վարմունք է պահանջում,
Բայց այդ կարգից ինքը յետ է նահանջում,
Մէկն ուզում է իրան ամեն մարդ դովէ,
Բայց իւր առաջ ես ո՞վ, դու ո՞վ, նա ո՞վ է:

Այդ աշխարհիս օրէնքն է:

Միով բանիւ, ինչ դործ դու ես կատարում,
Վատ էլ լինի, այն հէնց լաւ ես համարում,
Իսկ ինչ որ ես, և սա, և նա ենք անում,
Լաւ էլ լինի, վատ է. այն չես հաւանում:

Այդ աշխարհիս օրէնքն է:

Անկարգ դործեր դործողներից եթէ մին
Բարեկամդ է, նորա վերայ ինչ կամին,
Հաստատապէս թող ասեն. չես քնդունի.
Կաշտապանես, կասես «նա վատ դործ չունի»:

Այդ աշխարհիս օրէնքն է:

Ձրպարտողին թէ չես առում, սիրում ես,
Նորա ասածն ինքդ էլ հենց հաստատում ես.
Մեղադրում են զուր տեղը անմեղներ,
Պաշտպանում այս և այն մեղաւորներ:

Այդ աշխարհիս օրէնքն է:

Վարք ու բարքի տեսակներին չկայ վերջ.
Այս գրուածքին երկու տողով հենց տամ վերջ.
Ճկէք, եղբարք, սիրով սրբով միանանք,
Այս աշխարհիս օրէնքն իսպառ մոռանանք»:

Պահենք օրէնքն ըստ բանի

Մեր սուրբ աւետարանի:

5 Ապրիլի 1904. Վաղարշապատ.

ՄԵՂԱՅ, ՄԵՂԱՅ, Է՛՛Լ ՁԵՄ ԱՆԻ

Պէտք է պահել դիւանատան կարգ ու կանոն.
Ով չպահէ, քարտուղարից կուտէ քանոն.
Մի անգամ ես նորա դործը խանդարեցի.
Մեղայ, մեղայ, էլ չեմ անի, խրատուեցի:

Նա ինձ ասաց. «գիր եմ գրում, չայն մի հանիր.
Թող աւարտեմ, միտքս ուրիշ տեղ մի տանիր».
Խոստովանիմ, շատ տեղին էր լսածս այդ բան.
Երանի՜ միշտ լաւ պահուի կարգ դիւանատան:

8 Ապրիլի 1904. Վաղարշապատ.

Գարեգինդ (Էօֆսիւզեան) այսուհետեւ ոսկեգին

Աշխատասէր, գործունեայ, ժիր, լաւ մասնագէտ,
Ոսկեգին.

Ինչո՞ւ քեզ վաղ ճանաչողներ միշտ կոչում են Գարեգին.
Արդէն ես կարճ ժամանակում տեսի ունիս դու թանգ գին,
Եւ կոչեցի քեզ ոսկեգին, ոչ նրանց պէս Գարեգին:

Իմ նոր դրած այդ անունը պահիր, պահիր, անփոփոխ,
Յառաջ գնա՛ լաւ գործերով, վատերն արա՛ ոտնակոխ.
Թող Գարեգին կոչողների յառաջ դուրս դամ պարզերես,
Եւ այդպէս էլ հենց կլինի, անկասկած յոյս ունիմ ես:

Դէ, միշտ յառաջ դու գնա՛,

Շնորհքդ անյայտ չի մնայ.

Շուտով ամենքն էլ ինձ պէս

Ոսկեգին կանուանեն քեզ:

12 Ապրիլի 1904. Վաղարշապատ.

ԱՆՏԵՂԻ ՏՐՏՈՒՆՁ

Սովորաբար բարեկամներ ու ծանօթներ
Գնում, գալիս են երբեմն միմեանց տներ,
Ասում, խօսում, լսում, ժպտում, զուարճանում,
Ու գոհ սրտով իրանց տեղեր վերադառնում:

Այդ գնալ գալն է կամովին, այդ է բարին,
Եւ այդպէս է լինում նաեւ տօն օրերին.
Պատահում է գնալ նոյնպէս և հրաւերով,
Ուտել, խմել, երգել, պարել շատ ժամերով:

Գնում են և օրը մի կամ երկու անգամ,
Երբ հիւանդ է լինում ծանօթ կամ բարեկամ.
Այդ գնալը չէ համարում զուարճութիւն.
Այլ հիւանդին այցելութիւն և օգնութիւն:

Եղել է միշտ և լինում է գնալ ու գալ
Նոյնպէս և այլ պատճառներով անակնկալ.
Գնալ գալը պէտք է լինի միշտ փոխադարձ,
Բայց լինում է ոմանց կողմից անվերադարձ:

Այդ կախուած է ասեմք իրանց ազատ կամքից
Կամ որ և է արգելաօրթ հանգամանքից.
Դորա համար պէտք չէ երբէք մեղադրել.
Իրանց հաճոյքն ունին իրաւունք կատարել:

Զարմանալին այն է միայն, որ շատ անգամ
Այցելողին այցելողը դեռ մի անգամ,
Ասում է «հը՛, մեր տուն շուտ-շուտ էլ չես գալիս.
Երևի, մեզ մոռացել ես, ո՛վ բարեկամ»:

Գոնէ ասէ այդ կատակով, ծիծաղելով,
Բայց ասում է մի կերպ տրտունջ հենց ցոյց տալով.
Մորա համար ինչ ասենք, ինչ խօսք յարմարենք.
Ոչինչ, միայն անտեղի տրտունջ համարենք:

29 Ապրիլի 1904. Վաղարշապատ.

ՀԻՒՐԱՍԷՐ ՏԻԿՆՈՋ

Ո՛վ առատ, անգին,
Հիւրասէր տիկին.
Լսել եմ ունիք
Լաւ գինի շատ հին.
Ուստի և յաճախ
Համարձակ, անվախ
Դալիս եմ, Ձեզ հետ
Դատարկել շիշ բիւր:

1 Մայիսի 1904. Վաղարշապատ.

ԲԻՒՐԱԿԱՆՈՒՄ

Ա՛խ, սիրելի բարեկամ.
Ասա՛, մինչ երբ ես մնամ
Քեզնից հեռու մի տան մէջ
Նոր շինուած, շատ խոնաւ, գէշ:

Խոնաւ տունը ծանր ցաւ՝
Այն է՝ տանջող ոսկրացաւ.
Հասցնում է կենողին
Կօզնէ՛ արդեօք թունդ օղին:

Ձէ, ոչ օղին, ոչ այլ դեղ
Ձի բժշկի ցաւող տեղ.
Այդ ցաւովը հնացած
Քանի մէջը են կռացած:

Թէև շատ եմ ծերացել,
Բայց տես, դեռ չեմ կռացել.
Շուտով խոնաւ տան յատակ
Մէջըս կանէ երկու տակ:

Աբասթուման էլ գնալ,
Տաք ջրերում լողանալ
Քո հաշուովդ որ լինի,
Ո՞րքան դժուար կլինի:

Դէ, շուտ հնարը գտիր,
Ինձ էն տանից ազատիր,
Ոչ դու ընկնես պարտքի տակ,
Ոչ ինձ անես նահատակ:

Մի կողմ մնայ խոնաւ տուն.
Ձունիմ գոնէ հանգիստ քուն.
Չարչարում են ինձ տանջում
Ցերեկը ճանճ, գիշեր լուն:

Դէպ հիւսիս է բալկոն տան.
Բաց են միշտ դուռ, պատուհան.
Ներս չէ մտնում բնաւին
Ոչ արև, ոչ հով քամին:

Տան առաջին կայ պարտէզ.
Հեշտ չէ միջից անցնել թեղ.
Ծառերի շատ կախ ճիւղեր
Կալկեն քիթ, երես:

Թէև ճիւղերի տակից
Ես միշտ զգոյշ եմ անցել.
Բայց դարձեալ թեթև պատժից
Էլ ազատ չեմ մնացել:

Քանի անգամ գլխարկս
Թուցրել են ճիւղերը,
Ու փաթաթել են վիզս
Գործարարի փառերը:

Մի անգամ էլ խիստ քամին
Գլխիս խփեց ճիւղքից մին.
Իսկոյն կաշին չանկուեց,
Մազերս արիւնով ներկուեց:

Միով բանիւ չկայ տեղ
Ազատ անց-դարձ անելու.
Տունկեր ծուռ մուռ ու տգեղ
Արմատից են հանուելու:

Ծուռն է տնկել տանուտէր,
Որ պտուղներ շատ ուտէր.
Չկայ ոչ մի ուղիղ բա՛ւ.
Ծուռն են դրուած և պատեր:

Երբ պարտէզը ջրում է,
Ջուրն այնքան շատ լցում է,
Մինչ պատերից դուրս գնում.
Էլ ոտ դնել չի լինում:

Բակի դրան առաջ կան
Տեսարաններ պատուական.
Դրանք են տարթի մեծ դէզեր.
Ուրիշ բաներ էլ չկան:

ԲԻԻՐԱԿԱՆԻՑ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Պարոն Աբեղեան, այստեղ լսեցինք մի շատ ուրախ լուր,
 Որ պինդ գրկել էք նորածին որդի մի աստուածատուր.
 Մայրիկդ և ես օրհնում ենք ասում «աչքներդ լոյս».
 Ապրի բաղդաւոր, լինի ծնողաց օգնական և յոյս:

Մեզնից շատ բարեւ նորածին մանկան պապին ու տատին
 Ու մօրաքուրին, գիրկ առնողներին, համբուրողներին.
 Մինչ նոր դարամուտ ապրի երջանիկ այդ անդրանիկը,
 Լաւ թողներ գրկեն դորա հայր Մանուկ, մայր Շուշանիկը,
 Ամէն:

Նոյնպէս մեր բարեւ և մեր օրհնութիւններ պաշտօնակցին՝
 Նոր ամուսնացած, նոր քաջ այր դարձած ժիր Մանանդեանցին.
 Մօրն ու քրոջը տուէք աչքալոյս, ասէք շնորհաւոր,
 Նոր պսակուածներ լաւ որդւովք, թողամբք ապրին բաղ-
 դաւոր:

3 Օգոստոսի 1904.

ՍԻՐԵԼԻ ՅՈՎՀԱՆՆԵՍ

Վաղարշապատից այստեղ Բիւրական
 Աւետեաց երեք լուրեր մեզ եկան,
 Նաւ ուրախացանք ու շատ օրհնեցինք,
 Կենաց բաժակներ շուտ դատարկեցինք:

Երեքից մեկը այդ լաւ լուրերի
 Նշանդրէքն է մեր Խաչատուրի.
 Իսկ երկուս մնայ քո դուշակութեան,
 Մինչ արժանանանք միմեանց տեսութեան:

Դէ, Խաչատուրին մեր տեղ համբուրիր,
 Բոլորին մեզնից շնորհաւորիր.
 Հարսանեաց սեղան բարով երբ բանաս,
 Միտ բեր, հրաւիրել մեզ չմոռանաս:

Ուրախ լիր. ունիս խելօք զաւակներ.
 Դորանց մօտ ինչ են թանկագին ակներ.
 Դէ, դէ, լաւ պահիր կեանքիդ ընկերին,
 Նա է քեզ տուել այդ խելօքներին:

Բարով բոլորին փառքով պսակէք,
 Բարով գեղեցիկ թողներ պինդ գրկէք.
 Երկուսդ իրար հետ միշտ ուրախ ապրէք,
 Իրար հետ պարէք, իրար համբուրէք:

Մատթէոս աղին և Խօսրով տիկնոջ
 Հասանին խնամք, օգնութիւն Տիրոջ.
 Աչքալուսի հետ տնւր մեր շատ բարեւ.
 Դուստր շնորհալի ունին արդարեւ:

Բարեւ, շատ բարեւ հարցանողներին,
 Բարեկամներին, Տիգրան նօտարին,
 Բարի ամուսնոյն, երեխաներին,
 Բարի զոքանչին, բարի աներին.

Այ Տեառն հովանի
 Լինի բոլորին:

9 Օգոստոսի 1904.



ՍԻՐԵԼԻՒ ՅՈՎՀԱՆՆԷՍ

Կարգացել ես նամակն ու ինձ մեղադրել,
Որ ծիկոյի համար ոչինչ բան չեմ գրել.
Շատ տեղին է, գոհ եմ, ոչ թէ դանդաղաբար.
Ձեռքիցս գար, կկարգէի քեզ դատաւոր:

Այդ նամակը շուտով բերող մարդ չերեաց.
Ամբողջ շաբաթ ծոցումս խոր քնած մնաց,
Մինչ յաջողեց բարեկամին այդ տեղ գալը.
Որ անպատճառ կը հասցնէր նոյն իսկ օրը:

Յայտնեմ ահա ծիկոյի այժմեան ապրուստը,
Որ իմանաս հաւի աղքատն ու հարուստը.
Այս ամսից նա մտաւ կենաց երրորդ տարին.
Էլ չի ուտում առաջուան պէս ցորեն, դարին:

Նա սիրում է կարագով հաց, անոյշ փլաւ,
Խորոված միս, կակուղ պանիր, կաթնառնեց լաւ.
Խորովով դաթայ, ձու, ձուազեղ ու դաւուրմայ,
Իսկ մրգերից չամիչ, նոխուտ, բադամ, խուրմայ:

Սիրում է և խնձոր, ծիրան, ընկոյզ, վարունգ,
Քիչ է ուտում չլոր, խաղող, սեխ, ձմերուկ.
Խմում է սառն աղբիւրի ջուր, ածում է ձուն,
Երեկոյեան յոգնած մտնում նոր շինած բուն:

Եթէ բերենք խեղճ ծիկոյին Վաղարշապատ,
Միևնոյն է, թէ փոխադրենք մի անապատ.
Նա չի կարող այստեղի պէս ազատ ապրել,
Սենեակ մտնել, ուտել, խմել, ճեմել, քնել:

17 Օգոստոսի 1904.



ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻՆ

Կեցցեն, կեցցեն երաժշտական խմբեր.
Շատ անգամ ես սպասում եմ անհամբեր,
Նրանց տեսնել, լսել քաղցրաձայն երգեր,
Քաղցրահնչիւն նուագարանաց ձայներ:

Այդ ձայները կեանք են տալիս լսողին,
Եւս առաւել նուագողին, երգողին.
Առանց երգի ու նուագի կեանքն ի՞նչ է.
Ամեն մարդ էլ անշուշտ կասէ «ոչինչ է»:

Երգէք, խմբեր, ձեզ երկար կեանք կմաղթեմ.
Ձեր երգ, նուագ լսեմ, քնին կյաղթեմ.
Թո՛ղ մարդիկ ձեր անոյշ երգով, նուագով
Յնձան, բերկրին, ձեզ միշտ լինին ջատագով:

Բաղմաթիւ էք, խմբեր, շատ տեղ տարածուած.
Ձեր միջից մի խումբ վեց հոգուց բաղկացած,
Ճանաչում եմ, ամեն տեղ շատ եմ դուրած,
Նորա երգով ու նուագով զմայլած:

Այդ վեցից մին ջութակահար Աւետիս,
Մին թառ ածող Մարկոս, մրցող միշտ ընդ իս,
Մինը Մեխակ, լաւ թմբկահար է նա էլ,
Երկուսն երգիչք՝ Հայկազուն և Ռափայէլ:

Վեցերորդը Գէորգ անուն զուարճաբան,
Խմբից յարգուած կատակերգու ինձ նման.
Կեցցէ այս խումբ ուրախ, զուարթ շատ տարի,
Ու միշտ լինի լաւ գործերում ժիր, արի:

3 Հոկտեմբերի 1904. Վաղարշապատ.

Խոյլու Վարդանի թուրքերէն երգի թարգմանութիւնը.

ՍԿԻՋԵՆ ՈՒ ՎԵՐՁ

Աշխարհ գալուց յառաջ իմ մօր արգանդում
Գոյացայ ես Աստուծոյ սուրբ հրամանով.
Եփուեցի ու հաստատուեցի այն տեղում,
Կոյուղեցի, կացայ մի գունդ արիւնով:

Երեք ամիս քնած էի, արթնացայ,
Չորս ամսումը կեանք առնելով շարժեցայ.
Հինգերորդում պորտի նշանն ստացայ,
Վեցերորդում մէջքս պնդուեց սակարով:

Իննը ամիս ու իննը օր, իննը ժամ
Մօրս արգանդում Աստուած տարաւ ինձ խնամ.
Էս հասակում չէի կարող որ մնամ,
Հասաւ ժամը, աշխարհ եկայ ես մարմնով:

Մի ծեր կնիկ, հենց որ եկայ ես աշխարհ,
Ամեն բանով եղաւ մանկանս հոգատար.
Երկու ծծից կերայ կաթ սննդարար,
Ուրախացան ծնողքս իմ աշխարհ գալով:

Դէմքիս ընկաւ լուսնի, արեւի շողը,
Թււիլըսցի, ուրախացայ խնդալով.
Երեսովս քաշեցի լալու քօղը,
Գիշեր ցերեկ մօրս հանգիստ չտալով:

Ութ օրից յետ կնքահայրս ինձ գրկեց,
Քահանայն ինձ եկեղեցում մկրտեց.
Երեք անգամ տաք ջրի մէջ ընկղմեց,
Սուրբ միւռօնը ճակատիս գրոշմելով:

Մի տարուան մէջ սիրուն ծաղկի նմանեցայ,
Տարուկիսում չորս ձեռքերով ման եկայ.
Յեխի, հողի, գետնի վերայ քաշ եկայ,
Ո՛չ սաստողի, ո՛չ խնդրողի նայելով:

Երկու տարում տեղս դադարում չէի,
Մեծ ու փոքր, մէկ մէկուց ջոկում չէի.
Քարից, ջրից կըրակից վախում չէի.
Դարձել էի իշխան իմ յիմար խելքով:

Երեք տարում դարձայ կոկոմիկ վարդի,
Բացուեց լեզուս նման ինչպէս սոխակի.
Եկող, դնացողն ինձ սիրում էր ուղղակի,
Քաղցր լեզուս մեղրածօրի նման տալով:

Չորրորդ տարում ես սանձս կրծոտեցի,
Հինգերորդում շատ համարձակ շարժուեցի.
Վեցերորդում ընկերի հետ խաղացի,
Ութերորդում ջրի նման սահելով:

Տասներորդում մանկութիւնից դատուեցի,
Մեծի փոքրի մէջտեղում համարուեցի.
Եռանդովս ամենքին գրաւեցի,
Տեսնողներից խելագար համարուելով:

Տասն և մէկում փոքր ինչ աւելցաւ խելքս,
Տասներկուսում գործ գրեցի շնորհքս.
Տասներեքում չկորցրի կոպէկս,
Տասն և չորսում լաւ անուն վաստակելով:

Տասն և հնգում լրացած լուսին դարձայ,
Հօրս, մօրս միանգամայն յոյս դարձայ.
Մէջքս պնդուեց, նետի նման ձգուեցայ
Ինչպէս շիմշատ երիտասարդ փոխուելով:

Քսան տարում անվախ, անվեհեր դարձայ,
Սիրտս եռաց, թուլըռացի, զուարթացայ,
Բազուկներիս ուժով սահմանից անցայ,
Չէի յաղթուիլ առիւծի հետ կռուելով:

Երսուն տարում հում բանի տեղ դրեցի,
Ասպետ եղայ, տմարդութիւն չարեցի,
Վրէժ առի, ոչ ոքի չընեցի,
Վեհանձնաբար ամեն դործ կատարելով:

Քառսուն տարում զինուորի պէս կրթուեցայ,
Աշխոյժս անցաւ, ճանապարհին յոգնեցայ,
Հեղեղի պէս պղտորուեցի, լճացայ,
Ալիքս այստեղ գաղարեց վայր իջնելով:

Յիսուն տարում զուարճութիւնս պակսեց,
Կեանքիս ջղերի կապ քայքայուել սկսեց,
Մի աստիճան ոտս սանդուղքից սահեց,
Աշխարհ մարդուն չմնալն ինձ յիշել տալով:

Վաթսուն տարում անցան ոսկի ժամերս,
Շատ տընեցի ձեռքս չընկան որսերս,
Անճարացած զսպեցի ես կրքերս
Թշնամու հետ բարեկամ ձեռնալով:

Եօթանասուն տարում ցաւն ինձ գլորեց,
Կեանքիս պարիսպ քանդեց, սիրտս տրորեց,
Հասկս վառեց, մոխիրը քամուն տուեց,
Շատ տանջուեցի ատամի ցաւ կրելով:

Ութսուն տարում որդիս խօսքիս չլսեց,
Ո՛չ դրացիս, ոչ էլ եղբայրս ինձ օգնեց,
Ուզած տեղս գնալ ոտս չգորեց,
Նեղում էր ինձ այս կողմն այն կողմն ընկնելով:

Իննսունի մէջ մահն արդէն մօտեցաւ,
Հարիւրի մէջ իսպառ շունչս փակուեցաւ,
Աշտարակի պէս ամուրս փլուեցաւ,
Հողիս գնաց, մարմինս հողին պահ տալով:

Հողին մարմնիս հրաժեշտ տալով հեռացաւ,
Ճանապարհին այս-այն արգել շատացաւ,
Հրեշտակներն օգնեցին ուղին բացաւ,
Ի՛նչ սե օրով այն կողմն անցայ տանջուելով:

Մահից յետոյ հագուստներս հանեցին,
Բարեկամներ, եղբայրներ արտառուեցին,
Դիակս հինգ գազ կտաւով պատեցին,
Տարան ինձ մութ բանդին յանձնեցին լալով:

Չար ու բարի գործերի գիրք կարդացին,
Ինչ կար, բոլոր մանրամասն գիտացին,
Որին դրախտ, որին դժոխք քշեցին,
Ամեն մէկին մի-մի կողմը տանելով:

Խոյլու Վարդան թող լեզուով երգող լինի,
Լսողներին հասկանալի թող լինի,
Ամեն մէկին ինքն Աստուած օգնող լինի,
Նրանց շնորհիւ և այս երգս յօրինողին:

Աշխարհիս ինչք բոլոր աւանդ են մարդին,
Մարդն էլ որ կայ, հենց աւանդ է էս երկրին,
Իմաստունը քաջում է հոգսն աշխարհին,
Ո՞վ կաշխատի, ո՞վ կուտի, չգիտէ ոչ մին,
Նոր իմացայ, ոչ գանձ կմնայ Հարունին,
Եւ ոչ գահ Սողոմոնին:

Յառաջարան	2
Պարոք անելը վառ բան է	1
Տալը հեշտ, առնելը դժուար	3
Հիւանդ պահելը	4
Բարի է յուսալ ի Տէր, քան յուսալ ի մարդիկ	5
Առ վաղամուսն պատանեակ Դատարն Տէր-Յովհաննիսիան	6
Տխրութեան ժամեր	7
Անակնկալ դէպք	9
Գիտեմ ով ես դու	16
Նրեանայ քահանայք	17
Ծխաբաժանութիւն	20
Միաբանութիւն, անմիաբանութիւն	21
Մարդ և փոր	24
Ռափայէլ Խոջայեանցի կոչիկները	30
Նրեանայ կոնսիստորիայի մէկրատի յայտարարութիւնը	32
Պանդուխտն առ սոխակ	34
Լիքը տկճոր	37
Հայր Հմայեակին	38
Հաղարծնի վանքի չափերը	39
Սպիտակ մի մազ	41
Խոչ է արգիօք մտածում նա	43
Գիւղացու վիճակն ու ողբը	47
Ծխախոտ	50
Եջմիածնի հիւրընկալ վարդապետին	53
Դաշն	57
Նրեանայ վաճառականական ընկերութեան նուիրում	58
Նոյն ընկերութեան նուիրում	59
Նոր պալատ	60
Ֆուրգոն	62
Նուէր Մամուլեանց Տէր-Յովսէփին	67
Զղջումն	69
Իմ մօրուքը	71
Պօղոսեան ջուր	73

Գալոցի մանկանց բերանից	78
Հայրը իւր անդործ որդուն	79
Նուէր մեծապատիւ Միքայէլ Սթանասեանցին	81
Աչքներս լոյս	82
Հին Սինօդ	83
Հին դիւան Սինօդի	84
Ի դիւանապանէն առ կարգապահն և ծախսարարն նոյն Սինօդի	86
Առ նոյն ծախսարարն (Յովակիմ աղայ)	88
Բողոք դրասեղանի աստեղադրի Սինօդի	89
Թանաք	92
Կատունների ամառանոց	93
Սարոսփելի երազ	94
Տէր-Հայրապետի գլխարկը	98
Հարուստ մահառու խրատը իւր միակ որդուն	100
Միայն իւր անձին բարիք ցանկացողին	101
Յանկարծ բախտաւորութիւն	104
Դատարկ տկճոր—Զատիկի շաբաթ օր	105
Զատիկ, մի հատիկ	107
Խնամախօսութիւն	107
Քաղցած մուկը առ փոխ տան	114
Էլի իմ մօլ ուրը	117
Փոշի	119
Մարտի դանձիլ	123
Նոր-Բայազիտումն և՛ ընտանեօր	123
Գիւղացու կեանքից	139
Ուժեղն է ո՛ր մին, անձրեւ, թէ բամբին	144
Մօղա	146
Հենց ամեն մարդ էլ իրան արածին է հաւանում	148
Նոր դարադլիսի ամառն	150
Վաղարշապատի եկեղեցւոյ երեսփոխանի ընտրութիւնը	152
Օգոստոս ամսի 13-ի շոգը	154
Աշնանամուտ	157
Աշնան անձրեւ	158
Շիրակ օրացոյցներ 1902 թուականի	160
Ծերութիւն	162
Երազ	165
Զմբան փոշի (1902 թ.)	169
Անվերջ դանդա	170
Պոչաւոր հագուստ	171
Անփող դաղար	172

Բարեգործութիւն, թէ չարագործութիւն	174
Մի կողմէկանոց հուս	175
Հին սրտաշամբ	177
Լուսն ուղտ են շինուս	178
Իմ խնդիրը	181
Ներսիսապետութեան ժամանակ ամառութեան մէջ	182
Տէր-Մարգարի քարոզը	185
Մի քանի յանգուստի և ստանաւոր նամակներ հին—նոր	189

Յանելուած

Հաստա ծաղկազարդ, դաշտերն են անգարդ	209
«Ես ես եմ, ես»	210
Վատ փեշ	211
Մեղադրանք	214
Մեղա, մեղայ, էլ չեմ անի	217
Գարեգինդ (Եօքսիւզեան) անուհեան ասկեղին	217
Սնտեղի տրտունջ	218
Հիւրասէր տիկնոջ	219
Բիւրականում	219
Բիւրականից Վաղարշապատ	222
Նրոժառական խմբերին	225
Խոյլու Վարդանի թուրքերէն երգի թարգմանութիւնը	226



ՀՀ Ազգային գրադարան



NL0378253

60098

891.99
4-55